1017
1 – II:6

1904 № 4 ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

ՀԱՅԿ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1904 № 4 ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ա. Քութաթելաձէի
1904

Дозволено цензурою, Тифлисъ, 8-го Сентября 1904 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I *Ծնունդ Ռուսական զահի Թագաժառանգի։*

II *Ազէրֆէզա. վէպ պարսկական կեանքից.* Վ. ՓԱՓԱԶԵԱՆ. 5

III *Խնդիր.* Ա. Չեխովի. *Թարգմ.* Ա. Կ. . 92

IV *Միքայէլ Նալբանդեանցը Հնդկաստանում.* ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ. 101

V *Կոտրած գդալ։* 124

VI *Ցիշողութիւններ.* ՔԱՋԲԵՐՈՒՆԻ. . . 146

VII *Ներսէս Ե.-ի կոնդակներ.* ՄՈՒՇԷ. ՎԱՐԴ. 163

VIII *Կանանց հարցի մասին.* Ա. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ. 172

IX *Առուն անցաւ.* ԱՐՇԱԿ ԿԱՑԾՈՒՆԻ . . 185

X *Գրողը հայերի մէջ.* Գ. Ց. . . . 186

XI *Տուրինի պաստառակալը.* Թարգմ. ՀՐԱՆՏ ՄԵԼԵԱՆ 193

XII *Մեր ուժից վեր.* Բեօրնստէյրնէ Բեօրնսօնի. *գերմ.* Թարգմ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ 201

VIII ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ։

1. *Ամուսնութիւն, ամուսնալուծութիւն եւ քաղաքացիական պսակ։* 2. *Միջազգային իրաւունք։* Արսէն վարդ. Ղլտճեանի։ ԸՆԹԵՐՑՈՂ։—Die Beziehungen der Armenischen Kirche zu den Syrischen

bis zum ende des 6. Iahrhunderts, von Ervand Ter-Minassiantz. — Х. А. Вермишевъ. Матеріалы для исторіи Грузино-Армянскихъ отношеніи. Շ։—*Ստացուած գրքեր։* 226

XIV ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ։

1. Քայծաղի հիւանդութեան բժշկութիւնը բեօնտգէնեան ճառագայթներով։— 2. Դիֆտէրիտի բացիլը առողջ եւ առողջացող մարդոց մէջ։ — 3. Նոր տեսութիւն։—4. Նկարներ եւ ձեռագիրներ հերագրով հաղորդելը։ — 5. Ռադիի ճառագայթների ազդեցութիւնը խլիրդային գոյացութիւնների վերայ։—6. Մորֆիտ գտնելու հարիւրամեակ։—7. Մեռեալների կենդանացնելու փորձ։ — ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆԵՑ։ 236

XV ԱՑԼ ԵՒ ԱՑԼՔ։

Ներքին գործերի նորընտիր նախարար։ —Թիֆլիզի թեմի նորընտիր առաջնորդ։ — † Ա. Զեխով։—Օր. Ալիս Ստոն Բլակուէլի հայագիտական գործունէութեան տասնամեակ։ — Սանասարեան վարժարան։—Նամակ Վեննայից։ ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆԵՑ։—Ս. Էջմիածնի Սինոդի անդամներ։ —Ցեսական երաժշտական դասընթացներ Պ. Բուրգում։— Վանքի ա. եկեղեցու նորընտիր երեցփոխան։ — Նամակ Շուլաւէրից։ ՄԽԻԹԱՐԻԿ։—Նալտայում Հայկական եկեղեցի։—Պ. Շիրվանզադէի նոր պիեսը։ . 240

XVI ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ։ . . 248

XVII ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

XVIII ՅԱՒԵԼՈՒԱԾ։

Նոր կուրք. Ֆրանսուա դը Կիւրէլի. թարգմ. Տ. Վ. 1—32

ԾՆՈՒՆԴ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱՀԻ ԹԱԳԱԺԱՌԱՆԴԻ

—

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

«Տեառն ողորմութեամբ, Մենք, ՆԻԿՈՂԱՅՈՍ երկրորդ, Կայսր և Ինքնակալ համայն Ռուսիոյ, Արքայ Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլեանդիոյ և այլն, և այլն, և այլն, յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին, սոյն յուլիսի 30-ին Մեր ամենասիրելի Ամուսին Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնան յաջողութեամբ ազատուեց և ծնաւ Մեզ Որդի, որ տնուանուեցաւ ԱԼԷՔՍԻՅ։ Այս ուրախալի իրողութիւնը համարելով Տիրոջ բարեհաճութեան նշան առ Մեզ, և Մեր Կայսրութեան, Մեր հաւատարիմ հպատակների հետ վերառաքում ենք ջերմագին աղօթքներ առ Բարձրեալն Մեր անդրանիկ Որդու բարեյաջող մեծանալու և աճման համար, որ կոչւում է լինել ժառանգ Աստծուց Մեզ յանձնուած պետութեան և Մեր մեծ պաշտման։ 1899 թուի յունիսի 28 ի հրովարտակով Մենք հրաւիրեցինք Մեր ամենասիրելի եղբայր Մեծ Իշխան Միխայէլ Ալէքսանդրովչին ժառանգ լինել Մեզ մինչև Որդի ծնելը Մեզ։ Այսուհետև, ըստ զօրութեան Կայսրութեան հիմնական օրինաց, Մեր Ալէքսիյ Որդուն է պատկանում թագաժառանգի բարձր կոչումն ու տիտղոսը՝ նրա հետ

կապուած բոլոր իրաւունքներով։ Տրուածէ Պետէրհոֆում, յուլիսի 30-րդ օրը, Փրրկչի Ծննդեան հազար իններհարիւր չորրորդ, իսկ Մեր թագաւորութեան տասներորդ տարին»։ Իսկականի վերայ Նորին Կայսերական Մեծութեան Սեպհական ձեռքով ստորագրած է

«ՆԻԿՈԼԱՅ»։

ՍԶԼԷՐՖԷԶԱ [1])

(Վէպ Պարսկական կեանքից)

(ՎԵՐՋ)

VI

Երբ դուռը բացուեց, երեան եկան նախ երկու ոստիկանական ֆէրրաշները և անգլիական դեսպանատան մի կաւազ (ծառայ)։ Բայց նրանց ետեում կային երկու ուրիշ մարդիկ ևս, որոնք հեռու կանգնած՝ սպասում էին։

Մովբէդը բիչ ետ մղեց տանտիրոջ, առաջ գնաց և հարցրեց.

—Ի՞նչ էք ուզում։

Ֆէրրաշներից մէկը խօսել ուզեց, սակայն կաւազը արգելեց նրան ձեռքով և պատասխանեց ծերունուն.

—Սըր Մքէնզին, դեսպանատան երկրորդ թարգմանը, խնդրում է շնորհ բերել իր մօտ, որովհետև ոստիկանապետը եկել, ուզում է խօսել ձեզ հետ։

—Լաւ, սակայն ինչու աղմկել. երբուանից է որ Նորին Մեծութեան թագուհու հպատակների տան դռները ջարդել են կամենում նրա դեսպանատան ծառաները։

Ծերունու խիստ ձայնը և պատկառանք ազդող կեցուածքը շփոթեցրեց ծառային։

—Ներեցէք, թոթովեց նա—այս ֆէրրաշները...

—Սըր Մքէնզին ուղարկեց նրանց...

—Մեզ ոստիկանապետը հրամայեց. փորձեց խօսելու ֆէրրաշներից մէկը։

---

[1]) Տես «Լուսոյ» № 3, 1904 թ.

—Լաւ. կարճ կտրեց Ժերունին—այնտեղ մենք կը տեսնենք թէ դուք ինչ իրաւամբ ջարդում էք իմ դռները... Սակայն այդ երկու մարդիկ ով են, ինչ են ուզում։

—Այդ մենք չը գիտենք. խօսեց Ժառան—երբ դուռն էինք բաղխում, Նրանք երկուսն էլ վրայ հասան։

—Մէկին ես ճանաչում եմ. ասաց Ֆէբրաչը—Աղալար խան սարդարի բժիշկն է։

Մովբէդը դէմքը կնճռեց։ Այն կինը շարունակում էր դեռ հետևել Խոսրէվին իր անկոչ խնամքներով։ Սակայն բժիշկը, որ շատ մարուր հագնուած և ինտելլիգենտի դէմքով երիտասարդ պարսիկ էր, յառաջ եկաւ, բարևեց ու ասաց.

—Զրադաշտականների յարգելի դենպետի հետ արդեօք պատիւ ունիմ խօսելու։

—Այո, այդ ես եմ. ասաց Ժերունին և իսկոյն աւելացրեց—սակայն աւելորդ է ասել թէ ինչու էք եկել։ Ես այդ գիտեմ. բայց, ինչպէս տեսնում էք, անհնարութեան մէջ եմ ձեր փափագը կատարելու։ Եւ յետոյ, գիշերով... եթէ ցերեկը շնորհ բերէիք...

—Ներեցէք. նոր միայն իմացայ ձեր տեղը. ինձ պատուիրուած է առանց լուրերի չը վերադառնալ։

—Լաւ լուրեր կարող էք տանել...

—Այո, սակայն ես յանձնարարութիւն ունիմ...

—Այդպէս, շտապմամբ միջահատեց Ժերունին—լաւ ուրեմն, բարի եղէք ներս մտնել և եթէ չէք ձանձրանալ՝ սպասել մինչև դալս... Ուրիշ կերպ անհնար է։

Բժիշկը լուռ՝ խոնարհուեց։

—Իսկ դուք. մի քայլ մօտեցաւ միւս մարդուն Մովբէդը։

Օա մի տարօրինակ տեսքով Ժերունի էր, որ կուզ ու կարճահասակ, մինչև վիզը պարուրուել էր մեծ աբայի մէջ, գլխի երկար, կճուճաձև գլխարկն էլ սովորականից աւելի խրել մինչև ականջների արմատը։

Տեսնելով որ իրեն են ուղղում խօսքը, նա բոլորովին մօտ դնաց Մովբէդին և ասաց.

—Գէբրերի դենպետի հետ առանձին խօսելիք ունիմ ես։

—Ո՞վ ես դու։

—Ինձ Մուստաֆա են կոչում—ձեզ ծառայ։

—Ինչ՞ մասին է խօսելիքդ։

Մուստաֆան պահ մի լռեց, ականջ դնողներին նայեց աչքի տակով և գլուխը խոնարհելով՝ ասաց.

—Ձեր ծառան չէ շտապում. թող դէբրերի մեծ մովբէդը անհանգիստ չը լինի ինձ համար։ Ես այստեղ հէնց, դռան մօտ պատի տակ կը նստեմ և կը սպասեմ, մինչև ձեր վերադարձը.

Մովբէդը սկսեց կասկածանօք նայել այդ այլանդակ մարդուն, որի դէմքն իսկ լաւ չէր տեսնւում։

—Աջայ՛ը... [1]) ասաց մի ֆէրրաշ - կարծես խէսփուշ լինի... պիտի որ մի տեղ տեսած լինիմ այս դէմքը...

Այդ խօսքերը աւելի մեծացրին Մովբէդի կասկածները և մինչ խէսփուշը, յիրաւի, կկզել՝ կուչ էր գալիս պատի ստուերի մէջ, նա մօտ գնաց այգետիրոջ, տարաւ հեռու, մի քանի խօսք փսփսաց նրան, յետոյ առաջ անցաւ և ասաց ծառային.

—Գնանք այժմ։

Ֆէրրաշները քայլեցին։ Դէբր այգետէրը ձեռքով նշան արաւ բժշկին, թողեց ներս, դուռը դղրդիւնով փակեց նրա ետևից և փողոցը դարձեալ ընկաւ լռութեան մէջ։

Սև, անշարժ կոյտի նման, պատի մութ ստուերի մէջ կծկուած մարդը և ոչ իսկ երերում էր։ Մովբէդը քանիցս դարձաւ նայեց և մինչ բայլում էր, խառն ու վրդովեցուցիչ մտքեր համակում էին նրան։

Մտածեց խօսեցնել այն ֆէրրաշին, որ տարօրինակ անձին խէսփուշ էր համարել։ Խուլ կերպով զգում էր, որ այդ բոլորը - թէ ոստիկանապետի և թէ խէսփուշի գալը վերաբերում էր Խոսրէվին։ Սկսում էր վախենալ, որ մի վտանգ էր սպառնում երիտասարդին։

Դեսպանատան մեծ պարտիզի դռան մօտ՝ ծերունին մեկէն դարձաւ և ասաց ֆէրրաշին.

—Դու... ասում էիր թէ ճանաչում ես այն մարդուն։

---

[1]) Զարմանք...

Ֆէրրաշը յանկարծակիի գալով՝ պահ մի չը հասկացաւ հարցը, բայց շուտով կռահեց։

—Պէտք է որ ճանաչեմ. ասաց—ինձ թւում է թէ խէսփուշ է. բաղարներում շատ եմ տեսել իր ցնցոտիներով։

— Աբա ունէր մարդը. դիտեց Ծառան։

—Իրենը չէր. ժպտեց Ֆէրրաշը—իսկոյն երևում էր, որ ուրիշի փալանն է իր վրայ առել։

Ծերունին այլ ևս ոչինչ չասաց և շտապեցրեց քայլերը։ Ծառան առաջնորդեց նրան դէպի ընդարձակ պարտիզի մէջ այս-այն կողմ շինուած շէնքերից մէկը, ուր, դռան առաջ կիտուած, նստոտել էին հինգ-վեց ոստիկանական ֆէրրաշներ ևս։

Դեսպանատան երկրորդ թարգմանը, որ ինքն էլ մի ասորի թարգմանով էր խօսում ոստիկանապետի հետ, ծերունի կրօնապետին ընդունեց ժպտուն ու սիրալիր, պարզեց նրան ձեռքը և ասաց անգլիերէն.

— Դուք կը ներէք, յարգելի, որ ձեզ անհանգիստ արինք, այն էլ գիշերով. . բայց, ինչպէս դիտէք, շոգերի պատճառով ցերեկները ոչ մի ընդունելութիւն և ունկընդրութիւն չէ լինում... Սա պետութեան ոստիկանապետն է և չը գիտեմ ինչու պնդում է, որ դուք պիտի ճանաչէք մի ինչ որ գէբր մարդասպանի, որին փնտռում են։

Մովբէդի սիրտը տրոփել սկսեց. թէև վաղօրօք զգում էր, որ խնդիրը Խոսրէվի մասին էր, սակայն յուզմունքից պահ մի խօսել չը կարողացաւ, այլ բաց թողեց թարգմանի ձեռքը և դողդոջուն՝ ասաց.

—Մի գէբր մարդասպան... և ինչ գործ ունիմ ես մարդասպանների հետ, կամ մի՞թէ կարող եմ ճանաչել ամեն մի զրադաշտականի։

Յետոյ, թարգմանի տառաջարկութեան վրայ՝ նստեց, ընդունեց սառնութեամբ ոստիկանապետի կեղծ-խոնարհ բարևը և լուռ՝ սպասեց։

—Ահա, խօսեց թարգմանը՝ ոստիկանապետին դառնալով—ինքը զրադաշտականների գենպետ Բարուն Մանքեջին. եթէ ասելիք ունիք...

Ոստիկանապետը դարձեալ յարգալիր խոնարհուեց և ասաց.

— Ի հարկէ նեղութիւն չէի տալ այս իմաստուն և յարգելի ծերունուն, եթէ խնդիրը ծանրակշիռ չը լինէր... Ծպանուած է մի մեծ պաշտօնեայի որդին, կասկածը ընկնում է մի կրակապաշտի վրայ, տեսնողներ եղել են... բայց, դժբաղդաբար ոչ ոք չէ ճանաչում, չը գիտէ նրա անունը...

Ծերունի մովբէդը, որ սրտատրոփ լսում էր, ակնոցներն ուղղեց և ժպտուն՝ հարցրեց.

— Իսկ կարելի՞ է իմանալ թէ այդ՝ տեսնողներն ինչից իմացան, որ մարդասպանը զրադաշտական է և ոչ թէ պարսիկ, հրէայ կամ այլ ազգ, քանի որ ոչ մի հագուստ չէ տարբերում զրադաշտականը միւսներից և ոչ էլ մի այլ նշան։

Ցեռոյ, դարձաւ թարգմանին և աւելացրեց.

Այնպէս չէ՞, սը՞ր, զարմանալի վարպետ պիտի լինել իմանալու համար, որ սպանող և ձեռք չընկած անձը պատկանում է այս կամ այն ազգութեան և կրօնի։

— O, yés... չոր ծիծաղով ոստիկանապետին նայեց թարգմանը — ամենայն հաւանականութեամբ մարդասպանը իր այցետոմսը պիտի ուղարկած լինի յարգելի ոստիկանապետին։

Պարսիկ պաշտօնեան գունատուեց, կրճտեց ատամները, բայց զսպեց իրեն, ծիծաղեց բռնազբօսիկ կերպով, խոնարհուեց և ասաց.

— Յարգելի ծերունին իրաւունք ունի, ոչ մի արտաքին նշան չէր մատնում մարդասպանի զրադաշտական լինելը, սակայն մենք հաստատ գիտենք այդ... և, եթէ պատկառելի գենպետը բարեհաճէ մեր հարցերին ճշտօրէն պատասխանել... մենք ունինք մարդասպանի նկարագիրը...

— Ներեցէք. պատասխանեց մովբէդը — ես ոչ մի հարցի չեմ կարող պատասխանել, մինչև որ չը հաստատեն փաստերով նախ, թէ ինչու, ինչ հիման վրայ մարդասպանին ենթադրում են զրադաշտական...

— O, yés... խօսեց թարգմանը — և դրանից առաջ, հարկաւոր է որ խանը մեզ յայտնէ թէ ո՞վ է սպանուածը, ո՞ւրտեղ, երբ և ինչ հանգամանքներում...

Ու մատիտը ձեռքն առաւ, առջևը դրուած թղթի

կտորի վրայ նշանակելու համար պարսիկի ասելիքները։

Ոստիկանապետը, որ երևի կարծել էր թէ կարող պիտի լինէր դիւրութեամբ վարել գործը և իմանալ ուզածը՝ առանց անուններ տալու, պահ մի վարանեց, շրթունքը կծեց, հաղաց։ որոնեց վաքպետ պատասխաններ տալու, յետոյ, միչտ իր կեզծ— յարգալիր ժպիտը դէմքին՝ ասաց.

—Ինչու ոչ, ես կասեմ բոլորը... Սպանուած է Շահի մեծ գանձապահ Նասրուլլահ խանի աւագ որդին, Շահաբդիւլազիմ թաղում գտնուող մի աւերակի մէջ գիշերով... Մարդասպանը, որ մտել էր գանձապահի տունը, անշուչտ գողութեան համար, չէ կարողանում ծածկուելու. տանուտիրոջ որդին ընկնում է նրա ետեից՝ բռնելու, սակայն աւերակներին հասած՝ մարդասպանը ընկնում է նրա վրա և դաշոյնը խրում կուրծքը և ինքն էլ փախչում...

—Եւ այդ բոլորը անշուչտ տեսնում են մարդիկ ու անշարժ՝ թողնում որ մարդասպանը փախչէր.. ծաղրեց թարգմանը։

—Ո՛չ. զսպեց իրեն դարձեալ պարսիկը— սպանութիւնը ոչ որ չէ տեսնում.

—Եւ ոչ էլ սպանողին անշուչտ. ասաց մովրէպը։

—Ոչ էլ Նրան։

Թարգմանը մի մեծ քրքրիչ արձակեց, մատիտը նետեց սեղանի վրայ, ոտքի ելաւ և ասաց.

—O, yes, որքա՜ն խորամանկ են այս պարսիկ պաշտօնեաները... երևակայեցէք, ոչ սպանութեանը վկայ կայ, ոչ սպանողին տեսնող կայ և սակայն սրանք գուշակում են, որ յանցաւորը մի զրադաշտական է... և սպանողն էլ փախել է, մինչև այժմ էլ անգտանելի է մնում... իսկ վաղուց է այդ, յարգելի ոստիկանապետ...

—Եօթ կամ ութն ամիս է...

—Ստուած իմ... և դուք դարձեալ պնդում էք թէ սպանողը զրադաշտական է... և ինչպէս է նա, ծեր, երիտասարդ...

—Սիրուն երիտասարդ, սեաչեայ, քիչ խօսող, ամաչկոտ...

—Օ՛յ, օյ... այդ էլ գուշակել էք... ուրեմն դուք

Նրան ոչ միայն տեսել էր, այլ խօսել էր նրա հետ, ա՜...

Ու զարձեալ մի մեծ բրբիչ արձակեց։ Յետոյ մէկէն լրջացաւ, բռնեց մովբէդի թևը, շեշտակի նայեց ոստիկանապետին ու խիստ՝ խօսեց.

— Բարեհաճեցէք ծիծաղելի գործերի համար անհանդիստ չանել Նորին Մեծութիւն թագուհու դեսպանատունը, այլ և նրա հպատակներին .. խուդաֆիզ... [1])

Ասաց, թեթև գլուխ տուաւ և մովբէդի հետ անցաւ միւս սենեակը։

Ոստիկանապետը մի բոպէ սառած մնաց զուլատ, յետոյ կատաղի՝ նայեց ասորի թարգմանի ծաղրող դէմքին և դահավիժաբար դուրս նետուեց սենեակից։

— Ետևիցս եկէք, շներ... օռնաց նա խռպոտ շշուկով՝ իր առաջ վազող ֆէրրաշներին։

Յետոյ արագ քայլերով կտրեց պարտէզը, դուրս գնաց դեսպանատնից, բուռերը սեղմած կանգ առաւ քիչ հեռու և դառնալով իրեն հասնող ֆէրրաշներին՝ գոչեց.

— Լսեցէք, չա՛ն որդիներ, ձեզ բոլորիդ ես *դարաղաջի* [2]; քաշել կը տամ, կաշիներդ ողջ ողջ քերթել կը տամ, մինչև վզներդ՝ չեփած կրի մէջ թաղել կը տամ... լսո՞ւմ էք, չա՛ն ծնունդներ... էյ, Ալի, դու, հոտած խոզ, քեզ կտոր-կտոր կանեմ իմ ձեռքով, եթէ մի վայրկեան հեռացել ես այդ անհաւատ ծերունու մօտից... Ծածուկ կը հետևես նրան, ետևից կերթաս՝ ուր գնայ, կը մտնես նրա տունը ականջ կը դնես, կը լրտեսես և վա՛յ քեզ, եթէ մինչև երկու օր ինձ լաւ լուրեր չը բերես .. Դու՛, Կասը՛մ, այստեղ կը մնաս, Ալիի հրամանները կէտ առ կէտ կը կատարես, որտեղ ուզարկի՝ կերթաս... և եթէ երկուսիդ էլ տեսնեն ու չա՛ն պէս սատկեցնեն՝ փոյթս չէ... Կարող էք՝ ազատուեցէք, երեսիս չերևաք միմչև որ լուրեր չը բերէք... Տուէք այստեղ ձին...

Ասաց, աշտանակեց բերուած ձին և առանց ուշք

---

[1]) Երթաք բարև։

[2]) Մի պատիժ, որ կատարւում է Պարսկաստանում։ Կռացնում են երկու միմեանցից երկու արշինաչափ հեռու ծառերի հաստ ճիւղերը, յանցաւորի մի ոտը մի ծառի ճիւղին, իսկ միւսը երկրորդի ճիւղին կապում և ճիւղերը մէկէն բաց թողնում...

դարձնելու, որ Ֆէրրաշները ոտքով էին, մտրակեց։

Ֆէրրաշները ստիպուած եղան ոտները շարժել և վազելով հետևել իրենց կատազի հրամանատարին, որ արագ քայլերով գնում էր դէպի քաղաք։

VII.

Մովբէդի և Ֆէրրաշների հեռանալուց յետոյ, թէև պատի մութ ստուերի մէջ անշարժ կծկուել էր Մուստաֆան, սակայն աչքից չը փախցրեց ոչ դուռը, որ բժշկի և այգետիրոջ ետևիցը փակուեց և ոչ էլ հեռացող ծերունուն, որի մի քանի անգամ դառնալն ու իրեն նայելը նա շատ լաւ նկատեց։

Եւ հազիւ փողոցը ամայացել էր, զգուշութեամբ, գրեթէ սողալով մութ ստուերի մէջ, որոնեց պտրտիզի մի ցած պատ, ելաւ, այնտեղից ուշադրութեամբ ջանաց զննել ներսը, յետոյ նորից դարձաւ իր տեղը, կուչ եկաւ ու սպասեց։

Ըստ երևոյթին այդ երեկոյ վիճակուած էր զրադաշտականների մովբէդին՝ այցելութիւններ շատ ընդունելու, որովհետև Մուստաֆան քիչ յետոյ նկատեց թէ ինչպէս ճերմակ գիւա հագած մի երկարահասակ մարդ— որի դէմքը դեռ որոշ չէր հեռուից — ամենայն զգուշութեամբ, դարձեալ պատերի և նրանցից դէպի դուրս կռացող ծառերի մութ ստուերների տակով՝ սահում էր դէպի այգին։

Խէսփուշը պահ մի մտածեց թաղնուել. շուրջը նայեց, բայց լայն փողոցում պահուելու տեղ չը կար։ Աւելի կպաւ պատին և մի կոյտ քարի նման՝ արձանացաւ։

Եկողը երևի նրան քար կամ թուփ համարեց և յառաջանում էր դէպի նա։ Շատ տնգամ, գիշերուայ աղօտ լուսնկային հեռուից թփերը մարդիկ և անշարժ նստած մարդիկ՝ թփերի են նմանում։

Մի քանի քայլ հեռուում, Մուստաֆան, որ արան գլուխն էր քաշել, փոքրիկ բացուածքից նկատեց որ եկուորը նախ՝ ներքինի էր և յետոյ, հարուստ տան ներքինի, կողքին մի լայն սուր կապած։

Վախեցաւ. մի բոպէ մտածեց թէ չը լինի այգետի-

բոլ Ներքինին էր, տեսել էր իր՝ այգիից Ներս նայելը և, երևի այնտեղ հարեմխանան էր, այժմ եկել էին անխոհեմ լրտեսողին պատժելու։

Սակայն եկուորը նման չէր տանու մարդի. զննում էր այգիները, վարանողի և գնալու տեղը լաւ չը ճանաչողի նման շուրջն էր նայում. մի վայրկեան շփոթուած՝ կանգ առաւ. մովրէդի տան առաջ, յետոյ վեր գնաց, դարձեալ իջաւ և հուսկ ուրեմն ճանապարհի մէջ տեղ կանգ առաւ, երևի սպասելով մի անցորդի, որ հարցնէր ուզած տեղը։

Մուստաֆան վճռեց ցոյց տալ իրեն։ Հետաքրքրութիւնից այրւում էր։ Քիչ շարժուեց և հազաց։

Ներքինին ցնցուեց ու շուրջը նայեց. յետոյ, նկատելով խէսփուշին, բայլեց դէպի նա և ասաց.

—Ո՞վ է այն։

—Անցորդ... յոգնել էի, քիչ նստեցի հանգստանալու։

—Դէմքդ ինչու՞ ես ծածկել։

—Քնել էի... Համեցէք նստիր, եթէ յոգնել ես։

—Դու այստեղացի՞ ես։

—Ո՛չ, բայց ամբողջ գուլահէքը մատներիս պէս գիտեմ։

—Իսկ գիտե՞ս թէ որտեղ է այստեղ անհաւատ դէբրերի մոլլայի բնակուած տունը։

—Գիտեմ։

—Ցոյց տուր։

Մուստաֆան արան իջեցրեց գլխից, հանեց գրպանից չիբուխը, լցրեց, վառեց ու ասաց.

—Նստիր, ա՛յդ. այստեղ քիչ նստիր, յետոյ երբ չիբուխս ծխեմ՝ գնանք ցոյց կը տամ։

—Հեռու է. նստեց Ներքինին Մուստաֆայի կողքին— ինձ ասացին որ այս փողոցումն է։

—Այո... Հը՛մ, բայց դու մի՞թէ գէբր ես, աղա՛...

—Գէ՞բր... Աստուած ոչ անի... ես ճշմարիտ միւսիլման եմ։

—Համեցէք չիբուխ... պարզեց դէպի նա Մուստաֆան չիբուխի փողը-գիտէի որ գէբրերը Ներքինի չեն ունենում, բայց մտածեցի թէ՝ ո՞վ գիտէ, կարելի է ունենան էլ... ասում են որ այդ անհաւատները մեզ նման

շատ կին չեն ունենում, այլ մի մի հատ... Ոչինչ, մի քիչ էլ ծխիր, ես շատ էլ սիրահար չեմ չիբուխի...

— Չէ, բաւական է, առ...

— Ինչպէս կուզես. ետ առաւ Մուստաֆան չիբուխը, ծխեց և գետնի վրայ դատարկեց մնացորդը։

— Դէհ, այժմ ցոյց տուր նրա տունը, ուզեց ոտքի ելնել Ներքինին—ուշ է արդէն։

— Մի շտապիլ, նստիր դեռ... իսկ ինձ հետաքրքրում է այն թէ դու, որ միւսիլման ես, ինչ գործ կարող ես ունենալ զէբրերի մոլլայի հետ... երևի տոկոսով փող ես առել հա, կամ գուցէ տուել...

— Հա, այդպէս մի բան է...

— Մոլլան տանը չէ... նոր դուրս գնաց։

— Իրա՞ւ... ոչինչ, ինձ դու նրա տունը ցոյց տուր։

— Լաւ, ինչու՞ չէ. սակայն, եթէ մոլլան տանը չը լինի...

— Ոչինչ, հէնց այնպէս... ուզում եմ տունը ճանաչել, որ վաղը նորից գամ։

— Ճիշտ է. այդ լաւ ասացիր... ցոյց տամ, ինչու չէ. միայն գիտես, ինձ զարմանալի է որ այս մոլլան ծանօթ լինի քեզ հետ. զէբրերը Ներքինիների չեն սիրում... Ներողութիւն, որ այդպէս իմ կոչում քեզ...

— Ի՞նչ ներողութիւն, այ մարդ, ես Ներքինի եմ, ճիշտ է...

— Եւ երևի Նէջէֆ աղայի Ներքինին... կարծես մի տեղ տեսած լինեմ քեզ։

— Չէ, Նէջէֆ աղայինը չեմ։

— Ուրեմն Միրզա Հասան խանինը.. ասում եմ ախը, որ տեսել եմ քեզ, հէնց Նրանց տան առաջը տեսել... մինթէ չես յիշում, քեզ հետ թէյ անգամ խմեցինք. .

— Ո՞չ, միջահատեց Ներքինին—Նրանն էլ չեմ։

Ու ոտքի ելաւ անհամբեր։

— Աջայիր.. ասաց Մուստաֆան սառնութեամբ—ապա ո՞րտեղ եմ տեսել քեզ... այ, այ, գուցէ... այո՛, հէնց դա է, Շահզադա Մահմուդ միրզայինը...

— Մարդ, միջահատեց նեղացած Ներքինին—քեզ ինչ թէ ով եմ ես. խնդրածս կարող ես ցոյց տալ՝ ցոյց տուր, ապա թէ ոչ՝ ես գնամ։

—Ի՞նչ բարկացկոտն ես եղել, աղա, խոսեց ամենայն հանդարտութեամբ Մուստաֆան. յոգնած մարդ եմ, մի՞թէ դու խիղճ չունիս... և յետոյ, գիտես (աւելացրեց նա ծանր ու խորհրդաւոր) այդ մոլլան շատ կծանն է հա՜... եթէ բան է ուզում ես...

—Ոչինչ էլ չեմ ուզում, այլ միայն տունը իմանալ, գոչեց բարկութեամբ Ներքինին—մրն է, կասես թէ ոչ... գոնէ նշաններով հասկացրու... այս դուռը չէ՞...

—Ո՛չ, դա չէ. . ասենք հէնց եթէ դա լինէր, ի՞նչ պիտի անէիր... մի պարզ տուն է էլի, տեսար և վերջացաւ. դու ուզում ես իրեն—մովբէդին տեսնել, չէ՞ ..

—Մովբէդ է նրա անունը...

—Հը՛մ, աղան նրա անունն էլ չը գիտէ... զարմանալի է... որ ասեմ որդի ունի ծերունին՝ չունի, աղջիկ՝ չունի... ապա էլ ի՞նչ բանի ես եկել դու... Հը՞, դու քո Աստուածը, արի ճիշտն ասա, դու խո Մահսուդ Միրզայի...

—Ո՛չ, ոչ .. ես Ադալար խան սարդարի...

Մուստաֆան զարմանքի մի շարժում գործեց և ոտքի ելաւ։ Քիչ առաջ, նա լաւ էր լսել այն ֆէրրաշին, որ անուանել էր բժիշկին։ Բժիշկը մտել էր այնտեղ, Ադալար խան սարդարի բժիշկը. այժմ էլ նրա հարեմի Ներքինին էր եկել, այն էլ ծածուկ, լրտեսելով... Հէ՞, այստեղ մի բան կար, որ հարկաւոր էր իմանալ

Եւ նա մի բայլ արաւ դէպի Ներքինին, մօտեցաւ բոլորովին ու ասաց ցած ձայնով.

—Լսիր, Ներքինի, մինչև որ չես ասիլ թէ ինչ գործ ունիս մովբէդի հետ, ես քեզ նրա տունը չեմ ցոյց տալ. իսկ եթէ կասես, այն ժամանակ ես էլ քեզ մի շատ կարևոր բան կասեմ, որ ուրախանաս։

Ներքինին, որ զղջացել էր իր ով լինելը յանկարծակի բերնից դուրս թռոցած լինելուն համար, ուշադրութեամբ զննեց իր հետ խօսողին և ասաց խստութեամբ։

—Ո՞վ ես դու։

—Քեզ ծառայ Մուստաֆան, Սէրզէ մէյդանի խէսփուշ Մուստաֆան...

—Խէսփուշ. իսկ ինչ գործ ունիս դիշերով այստեղ։

—Երբ դու կասես քո ինչ գործ ունենալը...

—Հեմ ասիլ...

—Դու գիտես... երթաս բարև ուրեմն, զրկուեցիր մի շատ լաւ բան իմանալուց... օրինակ հէնց քո տիրոջ կողմից մովբէդի մօտ եկող մի մարդու մասին....

—Իմ տիրոջ։

—Այո, Ալալար-խան սարդարի.

—Ասա, ով...

—Ասա դու ինչու ես եկել։

—Ուզում եմ իմանալ թէ այդ մոլլայի մօտ է ապրում և կամ նրա ծառան չը գիտէ թէ ուր է ապրում մի գէրը երիտասարդ, որ...

Ու լռեց։ բայց Մուստաֆան ցնցուեց ու ականջները սրեց՝ լսելով վերջին բառերը։

—Որ ինչ... մօտեցաւ նրան բուռն հետաքրքրութեամբ ասա, չես զղջալ՝ եթէ ասես։

—Որ դժգոյն է մեռեալի նման, բայց շատ սիրուն է, սևաչեայ...

—Եւ ամաչկոտ, քիչ խօսող...

—Ամաչկոտ՝ չը գիտեմ, բերնով քիչ խօսող՝ այո, սակայն լաւ բռունգք ունեցող...

—Հը՛մ, չը լինի՞ այդ երիտասարդը քորել է մէջքդ... լաւ, տես որ իզուր չէր հետաքրքրութիւնս, ես էլ որոնում եմ մի այդպիսի երիտասարդի, բայց... դու ասում ես դժգոյն մեռեալի նման...

—Հը՛մ, հը՛մ... ով գիտէ, շատ կարելի է... Եւ՝ այդ երիտասարդին վաղուց է որ դու տեսել ես։

—Մի քանի օր առաջ...

—Այդպէս... Մովբէդի հետ...

—Նրա հետ։

—Կը պատմեմ ինձ թէ ուրտեղ, ինչպէս և ինչ հանգամանքներում... Քեզ առաջուց կասեմ, որ եթէ որոնածդ իմ որոնածը լինի, դու չես կարող գտնել, իսկ ես կարող եմ... աշխարհիս ծայրն էլ լինի նա՝ կը գտնեմ...

—Ի՞նչու, քո մէջքն էլ տաքացրել է նա։

—Ո՛չ, բայց եթէ գտնեմ՝ նա իմ գրպանը կը տաքացնի։

—Ուրեմն քեզ վարձել են։

—Ճիշտ՝ ինչպէս քեզ։

—Ո՛չ, ես իմ կողմից. վրէժխնդրութիւն. ինձ ծեծեցին նրա պատճառով։

—Երևի սպանել ես ուզում։

Ներքինին լռեց։

—Այդ մէկը իմ բանիս չի գալիս, խօսեց Նորից Մուստաֆան—գոնէ ոչ այսօր և ոչ էլ վաղը... իսկ յետոյ՝ գու գիտես։

—Ուրեմն միասին որոնենք... բայց նախ պատմիր եղածը։

—Դու էլ պատմիր թէ ո՞րի կողմից ես վարձուած։

—Մի ինչ որ հարուստ գէբրի, որի եղբօր որդին է նա. ինքը հիւանդ է, մեռնում է, ուզում է գտնել նրան, որ իր ունեցածը կտակի...

—Ստում ես...

—Շատ կարելի է... Դու քոնը ասա։

—Ես էլ աղայիս հետ գնում էի, հայհոյեցի նրան, աղաս բարկացաւ և ծեծել տուաւ ինձ։

—Ստում ես դու էլ։

—Շատ կարելի է...

—Լաւ, սակայն, եթէ ասեմ որ աղայիդ բժիշկը եկաւ մովբէդի մօտ և այս բոպէիս նրա տանն է...

—Մեր բժիշկը, ոստնեց ներքինին ուրախութիւնից—ուրեմն երիտասարդը նրա տանն է... ցոյց տուր տունը։

—Ինչից եզրակացրիր։

—Պարզ է. անպատճառ այդ երիտասարդը նրա մօտ է ապրում...

—Հաստատ...

—Հաստատ...

—Լաւ ուրեմն, բարի գիշեր...

—Ինչպէս, գնում ես արդէն։

—Այո՛, ես գործ ունեմ... որոնածս գտայ։

—Սպասիր, բռնեց խէսփուշի թեը ներքինին—տունը գոնէ ցոյց տուր ինձ։

—Ո՛չ. ինձ հարկաւոր է որ այդ երիտասարդը չը սպանուի մինչև մի քանի օր։

—Ես չեմ սպանիլ նրան. միայն առ այժմ տեղը իմանամ։

—Ի՞նչ պէտք կայ, ես գիտեմ—այնքանն էլ հերիք է։

Ներքինին ուժգնութեամբ սեղմեց խէսփուշի թեը մի ձեռքով, միւսով բռնեց սրի կոթը և ասաց.

—Դու ծաղրում ես ինձ, անպիտան, շուտ տունը ցոյց տուր։

Խէսփուշը արագ շարժմամբ կորզեց թեը, յետոյ վայրկենապէս ոտով այնպէս մի խաղ սարքեց, որ Ներքինին մէջքի վրայ փռուեց գետին։ Այդ անելուն պէս նա սահեց ստուերների մէջ և մի բոպէից յետոյ անհետացաւ հեռուներում։

Ներքինին, որ ոչ մի տեղը չէր ցաւացրել, կատաղութեամբ ու հայհոյելով վեր թռաւ, վազեց այս-այն կողմ, բայց խէսփուշի հետքն անդամ չկար։

Եւ ահա թշուառ ծաղրուածի այդ կատաղի որոնման ժամանակն էր, որ ոստիկանապետի Ալի Ֆէրրաշը դէմ առ դէմ եկաւ նրան։

Ներքինին մթան մէջ հեռուից կարծեց թէ խէսփուշն էր նա. քաշեց սուրը, վրա վազեց, սակայն երբ մօտեցաւ, ապշած կանգ առաւ, տեսնելով որ դէպի իրեն է պարզուած մի ատրճանակի սպառնագին փող։

—Է՛յ, կանչեց Ֆէրրաշը—հարբել ես, չ

, որ սուրը ձեռքիդ դատարկ փողոցում վազվզում ես և անցորդների վրայ յարձակւում.

Ներքինին սուրը իջեցրեց.

—Ո՞վ ես դու, մօտեցաւ նրան Ֆէրրաշը։

Ներքինին ճանաչել էր ոստիկանին և սուրը ջանաց պատեանը դնել ու թոթովեց.

—Ես... ես...

—Չան զաւակ... դեռ Ներքինի՞ էլ է... կորիր շուտ, քանի գլուխդ չեմ ջախջախել... որտե՞ Ներքինին ես դու և ինչ գործ ունիս այս կողմերը։

—Միրզա Հասանի... մոլորուել էի... վախեցրին ինձ ..

—Ձնե՞ը... փէս անասուն, չե՞ւտ, կորիր, հետդ չը տեսնեմ...

Եւ ոտքով մի աքացի կպցրեց հեռացող Ներքինուն, որ չտապեց փախչել։

Յետոյ Ֆէրրաշը կանգ առաւ պահ մի, նայեց նրա ետեից մինչև նրա անյետանալը և շուրջը դարձաւ մի

թագստոց որոնելու, սպասելու համար Մովբէդին, որն անշուշտ չը պիտի ուշանար դեսպանատնից ելնել և դուն վերադառնալ։

Գործերը այսպէս դրութեան մէջ էին Մովբէգի բնակուած տան այգիի առաջ, երբ ծերունին՝ դեսպանատան մի լապտերաւոր ծառայի ընկերութեամբ երևաց փողոցի ծայրից։

Ֆէրրաշը երկու ոստիւնով մօտեցաւ այգիին, արագութեամբ բարձրացաւ պատի վրայից և մի բոպէից յետոյ ծածկուեց ներսում բուսած խոտերի և թփերի մէջ։ Փողոցում ոչ մի թագստոց չէր յաջողուել գտնելու։ Ծերունին գալիս էր, կանցնէր, իսկ իրեն պէտք էր աչքից չը փախցնել նրան։

VIII.

Աղալար խան ոարդարի բժշկին, Մովբէդի դեսպանատուն մեկնելուց յետոյ, տանտէրը տարաւ սենեակ հրաւիրեց նստելու և ինքը հեռացաւ։

Բժիշկը այդպիսով մնաց մենակ։ Նախ՝ զննեց սենեակը, սեղանի վրայ դրուած Զենդավեստայից փորձեց մի քանի կտոր կարդալ, բայց որովհետև զրադաշտականների սուրբ գրքի Վենիդատ կոչուող և ամենադժուար հասկանալի մասն էր, այն էլ հին պարսկերէնով – փակեց և ցած դրեց, ելաւ, լուսամուտից պարտէզը դիտեց, բաց դռնից պատշգամն անցաւ, որոնեց մէկին՝ հետը խօսելու զոնէ, ոչ որի չը գտաւ և մտածեց պարտէզ իջնել։

Շատ լաւ մշակած այգի էր։ Տան առաջ՝ բանջարանոց, քիչ հեռու ծառեր, ապա մի քանի խաղողի թփեր և աւելի մութ կողմերում, դէպի փողոցը նայող պատերի տակ՝ թթենիներ, սալորիներ, 5—6 թաւուտ նռնենիներ և թփերի խուշոր, խիտ կոյտեր, որոնք կրկնակի պարսպի նման շրջապատում էին պարտէզը։

Բժիշկն այդ բոլորը զննեց մի ծիրանենու տակ կանգ առած, ուր և նստաւ, մտածելով, զոնէ զով տեղ սպասել ծերունուն։

Լռութիւնը կատարեալ էր ամեն կողմ։ Ըստ երևոյթին տանտէրը տիտի մի ուրիշ բաց էլ ունենար Մով-

բէդի սենեակների հետում։ Նրա մուտքը նկատել էր բժիշկը։ Եւ այժմ, երեւի այնտեղ ընտանիքը քնել էր, իսկ տան տղամարդը սպասում էր ծերունի դենպետին։

Ճների հաչոց կար, բայց երբ փողոցից մարդկային ձայներ էլ լսեց, մտածեց որ անցորդներ պիտի լինէին։

Ծառի մութ ստուերներում թիկն տուած երբ այդպէս մնացել էր նա 15–20 րոպէ, յանկարծ մի տարօրինակ բան տեսաւ։

Նախ նկատեց որ մի ինչ որ ստուեր, սև բան, երեսաց պատի վրայ, յետոյ, երբ ուղղուել էր և կծկուել մութ կողմում, պարզ տեսաւ թէ ինչպէս մի մարդ բարձրացաւ, պատի գլուխն ելաւ, առանց այլեայլութեան ներս պարտէզի մէջ ոստնեց և տեղն ու տեղ կծկուեց թփերում։

Բժիշկը շունչը պահած, աչքերը մեծ բացած և լիովին անշարժ՝ ջանաց տեսնել թէ ուր պահուեց մարդը։

Բայց մարդը և ոչ իսկ շարժում էր գործում։ Ուրեմն գող պիտի լինէր, որ երեւի ներս էր մտել պահուելու, գիշերով սխրագործութիւնը սկսելու համար։

Այդ իսկ միջոցին էր որ դուռը բաղխուեց։ Բժիշկը ցնցուեց. մոռացել էր Մովրէդի գալը։

Սակայն տանուտէրը, որ լսել էր բաղխումը, դուրս թռաւ ներքին բակից և վազելով դէպի դուռը՝ կանչեց.

—Գալիս եմ...

Բժիշկի դրութիւնը վատանում էր։ Չէր կամենալ պահուող գողին թողնել փախչելու։ Գուցէ գող էլ չէր, այլ Մովրէդին, կամ հէնց Խոսրէվին թշնամի մի մարդ, գուցէ և լրտես, որ իրեն էր հետեւում։ Պէտք էր բռնել տալ նրան և տեսնել թէ ով էր։ Բայց ինչպէս անել։ Չէ՞ որ եթէ ելնէր իր տեղից և դէպի տուն գնար, գողը, որ անշուշտ ի դէտ էր նստել թփերի մէջ, պիտի տեսնէր նրան։ Իսկ եթէ չը գնար, չէ՞ որ Մովրէդը կարող էր հարցնել նրա մասին և գալ տանտիրոջ հետ՝ որոնելու։

Մնում էր դէպի սենեակները գնալ մի կերպ։ Եւ բժիշկը միայն մի վարկեան մտածելուց յետոյ, ափսոսանքով նայեց իր լաւ շորերին, նայեց աղտոտ, նոր ջրած լինելուն համար գրեթէ ցեխոտ գետնին, ապա զգուշութեամբ պառկեց փորի վրայ, ընտրեց ծառերի և թփե-

բի ձդած մութ ստուերները և սողաց ամենայն հանդարտութեամբ դէպի տուն։

Մինչ այդ, դուռը բացուել էր։ Մովբէդը ուղարկեց ետ իրեն ընկերացող ծառային և երբ դուռը նորից փակուած ներս էին մտնում, հարցրեց տանուտիրոջ.

—Նե՞րսն է բժիշկը։

—Ձեր սենեակումն է։

—Իսկ Խոսրէվը։

—Մեզ մօտ է նստել։

—Ի՞նչպէս, տնից դուրս չը գնա՞ց։

—Ո՛չ. որքան խնդրեցի՝ անկարելի եղաւ. ուզեց մընալ... Տարօրինակ կերպով լրջացել է։

—Այսինքն...

—Աչքերը փայլում են և լուռ, ուշադիր՝ սպասում է. այլ ևս այն դանդաղը չէ։

—Այդպէ՞ս...

Հասել էին տան մօտ։ Բժիշկը հազիւ հասել էր բանջարանոցի ծայրին, ուր ստիպուած էր պտոյտ գործել, թփերի միջով անտեսանելի սողոսկելու համար։

—Լաւ, ասում էր ծերունին տանուտիրոջ—դու ներս գնա և Խոսրէվը թող չերևայ դեռ։ Ես կը կանչեմ։

Ու բարձրացաւ պատշգամբը, մտաւ սենեակը, սակայն իսկոյն դուրս եկաւ և գոչեց տանուտիրոջ։

—Այս ի՞նչ է, ո՞ւր է բժիշկը։

—Այդտեղ է. ասաց տանուտէրը կանգ առնելով։

—Չը կայ սակայն։

Բժիշկը, որ յաջողուել էր հասնել պատշգամբին, ոտքի ելաւ, առաջ գնաց և ասաց։

—Այստեղ եմ, դռան ծեծելու ձայնը լսեցի և այս րոպէիս դուրս եկայ։

Ու բարձրաձայն ասաց նա այդ խօսքերը, մտածելով, որ պահուող գողը կը լսէր իրեն ու կապահովուէր, եթէ կասկած իսկ ունենար։

Սակայն պահուող Ֆէրրաշը, որ սողոսկելով հետզհետէ մօտենում էր, լսեց բոլոր խօսակցութիւնը, լսեց և այդ, ու ոչ մի ուշադրութեան էլ չարժանացրեց։

Բժիշկն ու Մովբէդը ներս մտան։ Բժիշկն իսկոյն քիչ ետ մնաց, դուռը փակեց ետեից և մօտենալով ծե-

բունուն, շատ ցած ձայնով ասաց.

—Ասացէք խնդրեմ, այս կողմից դուռ չունէք դէպի ետևի բագը բացուող։

Մովբէդը, որ զարմացել էր, տարօրինակ գտաւ բժշկի հարցն ու չը պատասխանեց իսկոյն։

—Ձիւտ, աւելացրեց բժիշկը—ասացէք, ապա թէ ոչ՝ մի փորձանք կը յառաջանայ. այդում մարդ է մտել և պահուած ոչ միայն կարող է լսել մեզ, այլ և կարող է գալ։

—Ինչպէս, ասաց Մովբէդը—մարդ է մտել։

—Այո, պահուեց թփերում, աչքովս տեսայ. այժմ գուցէ առաջ է գալիս... դուրս գնանք, եթէ դուռ կայ դէպի ներքին բագը։

Ծերունին պահ մի դէմքը կնճռած մտածեց, յետոյ աչքերը փայլեցին և նա մի մեծ քայլ անելով դէպի սենեակի ետևի լուսամուտը, բաց արաւ նրան, ցոյց տուաւ բակն ու ասաց բժշկին.

—Ահա. եթէ վախենում էք, իջէք այդտեղ. իսկ ես ուզում եմ դուրս գնալ և տեսնել թէ ով է մտնողը։

Ու քայլեց դէպի դուռը։

—Սպասեցէք, բռնեց նրա թևը բժիշկը—ձեր արածը քաջութիւն չէ, այլ անխոհեմութիւն. նա կարող է փախչել, դուք բռնել չէք կարող, ուրեմն և ոչինչ իմանալու չէք... Հետևեցէք ինձ և պիտի տեսնէք... ես աւելի լաւն եմ մտածել. ուզում եմ բռնել նրան և տեսնել թէ ով է. իմ ետևից է եկել թէ ձեր...

Ծերունին լռութեամբ հետևեց նրան։ Երկուսն էլ ոտնեցին դէպի բագը։ Նրանց ոտների ձայնից մի քանի ծառաներ, տանուտէրն ու Խոսրէվը դուրս նետուեցին սենեակից, բայց լուսընկային, զարմացած, ճանաչեցին երկուսին էլ ու մոտեցան։

—Ձայն չը հանէք, ասաց նրանց բժիշկը խուլ շշուկով—այդիում մարդ կայ պահուած, որ անշուշտ այժմ միւս կողմից մոտեցած կը լինի տանը...

—Ուրիշ տղամարդ չունէք այստեղ...

—Բոլորս ենք. ասաց տանուտէրը։

—Լաւ. իսկ դէնք.

—Ահա, մէջ մտաւ Խոսրէվը և գրպանից մի ըէ-

վօլվէր հանեց։

—Այժմ գնանք... իսկ դուք, ոչ մի զէնք։

Տանուտէրը ներս մտաւ և մի անգլիական կարճ հրացան դուրս բերեց. Մովբէդը ժպտուն՝ իր կեռ գլխով մեծ գաւազանը ցոյց տուաւ—հնդկական բամբուկից մի փայտ։

Բժիշկը լռութեամբ առաւ տանուտիրոջ ձեռքից հրացանը, ստուգեց որ լիքն էր, գնաց դէպի այգին հանող բաղի մուտքը և դարձաւ միւսներին շշուկով.

—Ոտքի ծայրերով եկէք ետևիցս. բայց, ի սէր Աստուծոյ, ոչ մի ձայն և ոչ էլ զէնքի գործածութիւն, մինչև ես չասեմ. պիտի ջանալ կենդանի բռնելու լրտեսին։

—Ես անգլիական հողի վրայ եմ ապրում. ասաց տանուտէրը—և անգլիահպատակ եմ. տունս մտնողին կարող եմ ուղղակի զարնել։

—Այո, բայց մենք ոչինչ չենք իմանալ, եթէ սպանենք նրան։

—Ո՛չ մի սպանութիւն... ասաց խստութեամբ Մովբէդը։

—Ուրեմն թողէք ինձ անելու ամէն բան և լուռ՝ ետևիցս եկէք... եզրակացրեց բժիշկը։

Յետոյ, հրացանը ուղիղ պահած, ոտների ծայրերով քայլեց դէպի պարտէզ և երբ հասել էր դռան՝ գլուխը քիչ դուրս հանեց ու գննեց դուրսը։

Ոստիկանական Ֆէրրաշը, որ երևի կարծում էր թէ տնեցիք սենեակումն էին, այժմ մօտեցել էր սենեակի պատշգամբին և կռացած՝ ականջը սրել, սպասում էր ներսում խօսածները լսելու։

Ջանացել էր ստուերի մէջ մնալ, սակայն բժիշկը նկատեց նրան։ Ու մէկէն, մի ոստիւնով դուրս թռաւ այգին, հրացանի փողը պարզեց դէպի Ֆէրրաշը սպառնագին ու գոչեց.

—Չը շարժուես, խփեցի...

Ֆէրրաշը բնազդմամբ ետ ոստնեց, ձայնի կողմը դարձաւ, տեսաւ զէնքն ու թարացաւ սարսափից, մանաւանդ երբ նկատեց, որ հրացանի կողքին փայլում էր բէվօլվէրի փող ևս. այլ և առաջ էին գալիս ուրիշ երեք հոգի ևս։

Ազատուելիք չունէր։ Շատ լաւ գիտէր, որ եթէ ողջ թողնէին իրեն նոյն իսկ և կամենային դատարանի յանձնել, ոստիկանապետը, անգլիական դեսպանատան ահից՝ կախել կը տար նրան, ոչ որպէս լրտեսող ոստիկանի (որի մասին և ոչ իսկ կը թողնէր ակնարկութիւն անելու) այլ որպէս գողի, մարդասպանի։

Մնում էր մի կերպ խուսափել այդ բոլորից, փախնել և կամ սպանուել։ Կամացուկ ձեռքը ետևում, վերարկուի տակ պահուած ատրճանակին տարաւ և ճգնեց հանել։ Մինչ այդ, բժիշկը բայլ առ քայլ մօտենում էր և հարցնում.

—Ո՞վ ես դու, խօսիր. և ինչ գործ ունիս այստեղ։

—Գող եմ. ասաց Ֆէրրաշը։

—Ստում ես. ճիշտը խօսիր, ապա թէ ոչ՝ ծանր կը նստի քեզ պատից ուրիշի այդին իջնելը։

—Մարդասպան եմ. ուզում էի ծերունի մոլլային սպանել։

—Գուցէ... սակայն նախ ինձ հարկաւոր է դէմքդ տեսնել...

Բայց այդ իսկ բոպէին Ֆէրրաշը կարողացաւ ատրկանակի կոթը գտնել և միաժամանակ համարեա, թընդաց երկու զէնք։ Բժիշկն էլ էր արձակել հրացանը։ Ոչ մէկի գնդակը նպատակին չէր հասել, սակայն Ֆէրրաշին յաջողուեց անմիջապէս յետոյ երկու ոստիւն գործել և անցնելով բանջարանոցից՝ ընկնել ծառերի տակ։

Բժիշկը կատաղութիւնից մի ծանր լուտանք արձակեց և հետապնդեց։ Խոսրէվը, որ լաւ նկատել էր Ֆէրրաշի գնացած ուղղութիւնը, հսկայ թռիչքով մէկէն անցաւ բանջարանոցից ու միմեանց ետևից ատրճանակը պարպեց Ֆէրրաշի վրայ։

Թփերի մէջ շարժումը սաստկացաւ, լսուեց սուր ճիչ և մի մարմին ծանրութեամբ ընկնելով՝ կբեց թփերի ամբողջ խումբ։

Խոսրէվը մի ոստիւն ևս գործեց, ընկաւ այնտեղ և մի վայրկեան յետոյ լսուեց նրա ձայնը, որ գոչում էր.

—Լոյս բերէք. բռնել եմ...

Այդ բոլորն այնքան արագ կատարուեց, որ Մովբէդը և ոչ իսկ կարողացաւ քայլ անել ու ապշած մնացել

էր, տեսնելով երիտասարդի այդ յանկարծական կենդանութեան ցոյցը։

Ցիրաւի շատ տարօրինակ էր։ Ամիսներից ի վեր կիսապուշի պէս մնացած երիտասարդը, որի մէջ կարծես կեանք, հետաքրքրութիւն և աշխոյժը ընդ միշտ մեռել էին, վերջերս սկսել էր աղօտ նշոյլներով կենդանանալ, իսկ այժմ արդէն ծայրահեղ լարման ոյժով արտայայտւում էր նա ծերունի Մովբէդի առաջ։

Զարմանքի մէջ էր նաև երիտասարդի տան ծառան —Եաղդգերտը, որ մի վարկեան սառած մնալուց յետոյ՝ շտապեց վազել իր տիրոջ ձայնին, հանեց գրպանից լուցկին, վառեց և աղօտ լոյսի մէջ տեսաւ, թէ ինչպէս Խոսրէվը ջլապինդ բազուկներով սեղմել էր Ֆէրրաշի վիզը և ծունկը դրել նրա կուրծքին։

Բժիշկն էլ տեսել էր։

—Չը խեղտէք, գոչեց նա երիտասարդին։

—Սպասեցէք, առաջ վազեց տանուտէրը— թողէք ես քիչ կարգի բերեմ դրան։

Յետոյ մէջքից քանդեց շալը, մթան մէջ մի քանի բոպէ ինչ որ շարժումներ գործեց, ոտքի ելաւ, բռնեց Խոսրէվի թևը և ասաց.

—Թողէք այժմ. ոտներն ու ձեռները կապեցի։

Մինչ այդ, Մովբէդը մտել էր ներս, վառել մոմը և դուրս եկել պատշգամբի տակ։ Տանուտէրը բռնեց կապուած Ֆէրրաշի գլխից, քարշ տուաւ մինչև ճրագը, շուռ ու մուռ տուաւ մարած վիրաւորին և ասաց.

—Ոտքերից է. աչ աղդրն է. արիւն է գնում։

—Ջուր և շորեր բերէք. նկատեց բժիշկը։

Եւ երբ կապում էին վէրքը, Մովբէդը ծնօտը իր փայտին յենած, լուռ և ուշադիր զննում էր Ֆէրրաշի դէմքը, ջանալով մտաբերել թէ արդեօք որև է տեղ տեսել է նրան։

Խուլ կերպով զգում էր, որ այդ մարդը ոչ գող պիտի լինէր և ոչ էլ մարդասպան, այլ լրտես՝ վարձուած ոև է անձից, այն էլ, հաւանականօրէն, ուղարկուած Խոսրէվի համար։

Եւ դա զայրացնում էր, նրան։ Դեռ պարզ չէր նրա համար թէ ինչու են այդքան լրտեսում, այդքան ճգնում

Խոսրէվին գտնելու։ Ի՞նչ գործի մէջ էր խառնուել այդ երիտասարդը, ինչո՞ւմն էր գաղտնիքը։ Արդեօք այժմ պիտի պարզուէր։

Այդ իսկ բոլէին յիշեց, որ դեսպանատուն գնալուց առաջ մի ինչ որ խէսփուշ ուզել էր խօսել իր հետ, խոստացել էր սպասել, կծկուել էր պատի տակ ու մընացել, ոակայն վերադառնալիս չէր գտել նրան։

Արդեօք այդ իսկ խէսփուշը չէր իր առաջ վիրաւոր ընկածը։ Ինչո՞ւ էր գաղտնի մտել, բանի որ կարող էր ուրիշ կերպ անել։

Ու հետաքրքրութիւնից յուզուած ծերունին, ջանաց զսպել իրեն, մինչև որ բժիշկը վէրքը կապեց։ Կապելու ժամանակ նա կցկտուր ասում էր.

—Անծանօթ է ինձ այս անպիտանը... վէրքը խոր չէ, անվնաս է, բայց գնդակը մսի մէջն է... թող սատանան տանի սրան, ում ուզում է՝ թող հանել տայ, փոյթս չէ... ջուրը տուէք... լաւ, բռնիր ոտը, բարեկամ... այդպէս... լոյսը մօտ բեր .. Ուշքի կը գայ, ոչինչ... ափսոս քիչ նշադիրի ոգի չունիմ հետս... բայց սպասէք, ուրիշ բան կանենք...

Եւ երբ դադարել էր խօսելուց, ջրով լուաց վիրաւորի դէմքը, շիւղով խտղեցրեց քիթը, ծիծաղով նրա ականջներիցը քաշեց, ցնցեց ու գոռաց.

—Է՛յ, անիծեալ շուն, վեր կաց նստիր, քանի չեմ դաղել քեզ կրակած երկաթով...

—Հանգիստ թողէք քիչ, բժիշկ, ասաց Մովբէդը— թողէք ուշքի գայ։

—Չի սատկիլ, ոչինչ. այսպէս շների հետ փափկութեամբ վարուելու պէտք չը կայ... Է՛յ, վեր կաց ասում եմ է... բերէք կրակած երկաթը... շուտ, վեր ու նստիր, փէղէր-սուխտա, փէղէր-սէ՛գ... [1])

Ու այնպէս ցնցեց վիրաւորին, որ սա սկսեց ուշքի գալ և շարժուել։

Բժիշկը շարունակեց իր հայհոյանքը, ցնցեց, շարժեց և ուշքի բերեց վիրաւորին, յետոյ մի լաւ ապտակով կնքեց ուշաբերութեան այդ բոլոր վայրենի գործո-

---

[1]) Հայհոյանքներ։

ղութիւնները և գոռաց Ֆերրաշի երեսն ի վեր։

—Խոսիր այժմ, ո՞վ ես դու. խոսիր թէ չէ կրակած երկաթով լեզուդ կը դպրեմ,

—Ֆէրրաշ եմ. թոթովեց վիրաւորը։

—Ա՜ա... և ո՞րի Ֆէրրաշը։

—Ոստիկանապետի։

—Ոստիկանապետի. խոսեց Մովբէդը դէմքը կնճռելով—ուրեմն ուղարկուած ես լրտեսելո՞ւ։

—Այո՛...

—Դո՞ւ էիր, որ ինձ հետ խոսել էիր ուզում և խէսփուչ էիր ձևացնում քեզ։

Վիրաւորը գլուխը բարձրացրեց, նայեց ծերունուն և ասաց.

—Ո՛չ, ես եկայ միայն այն ժամանակ, երբ ոստիկանապետը դեսպանատնից դուրս ելաւ,

—Այդպէ՞ս... ինչո՞ւ եկար, ինչ իմանալու...

—Ամէն բան... իմանալու թէ այստեղ է ապրում այն գեբր երիտասարդը, որ սպանել է...

Խոսրէվը ցնցուեց։ Մովբէդը չը թողեց որ Ֆէրրաշը խոսքը վերջացներ, այլ փայտովը խփեց նրա գլխին և գոչեց զայրոյթով.

—Լռիր...

—Զարնելու պէտք չը կայ. ասաց Ֆէրրաշը—ահա այդ փնտռուած երիտասարդը... Այժմ, եթէ կը թողնէք ինձ, ես այլ ևս անհանգիստ չեմ անիլ ձեզ...

—Շատ միամիտն ես կարծում մեզ. մէջ մտաւ Եազդվերտը—բաւական յիմար պիտի լինենք քեզ բաց թողնելու համար։

—Եթէ սպանէք ինձ, վատ կը լինի ձեզ համար...

—Իսկ եթէ դու մտել ես իբր գող մի անգլօհպատակի տունը, ասաց տանուտէրը—պիտի իմանաս, որ քեզ սպանելը ոչ մի հետևանք չի ունենալ...

Ամենքի մէջ բժիշկն էր, որ զարմացած իր լսած նորութիւններից՝ սրան-նրան էր նայում։ Խոսրէվը լուռ թոյլ տուաւ, որ խոսեն ամէնքը, յետոյ յանկարծ մօտ գնաց վճռական քայլերով՝ Ֆէրրաշին, ձեռքը նրա ուսի վրայ դրաւ ու հարցրեց.

—Ասա, բարեկամ, այդ որքն էր որ ես սպանեցի...

Հերթն այժմ Ֆէրրաշին էր զարմանալու։

—Ինչպէ՞ս, ասաց նա—դուք չը գիտէ՞ք այդ։

—Ո՛չ...

—Ծիծաղում էք ինձ վրայ... գուցէ և ձեր մտածմո՞ւնն էլ չը գիտէք։

—Չը գիտեմ...

Ֆէրրաշը այժ տուաւ ոտքի ելնելու և ասաց.

—Կամ ծաղրում էք դուք ինձ և կամ դուք չէք ուրնածս...

—Ես եմ. խօսեց երիտասարդը—ես սպանեցի, մի ինչ որ աւերակի մէջ, դաշոյնով և մի երիտասարդի, որ իր հօր հարեմից էր ելնում. տեսաւ ինձ, ետևիցս ընկաւ, բռնեց...

—Այո՛, սպանութիւնը կատարուել է Սէյիդ-Համզայի աւերակներում. ասաց Ֆէրրաշը։

—Իսկ թէ ո՞վ էր սպանուածը, ում տունն էր, որ մտել էի, տեղացրեց Խոսրէվը—այդ ես չը գիտեմ, չիմացայ...

Ֆէրրաշը պահ մի ուշադիր՝ կնեց երիտասարդին։ Այժմ, որ ուշքի էր եկել, փորձեց ելնելու, բայց չը կարողացաւ։ Դրա համար էլ նա նորից նստաւ, կռթնեց պատին և ասաց.

—Այստեղ մի ինչ որ բան կայ, որ ես չեմ հասկանում... սպանուողը Նասրուլլահ-խան, Շահի մեծ դանձապահի որդին է...

Բժիշկը ևս առաւել զարմացած, սկսեց խորապէս զննել երիտասարդին և երբ Ֆէրրաշի խօսքերից յետոյ ամենքը քիչ լուռ մնացին, ասաց, դառնալով Մովբէդին.

—Սա չէ՞ Խոսրէվը։

—Սա է... կարճ պատասխանեց ծերունին։

—Լաւ ուրեմն, ինչ որ անելու էք այս վիրաւորին—արէք. իսկ ինձ հարկաւոր է երիտասարդին մի քանի խօսք ասել և գնալ. գիշերը յառաջանում է։

Յետոյ բռնեց Խոսրէվի թևից և տարաւ նրան սենեակ։

Եւ մինչ նրանք գնում էին, Մովբէդը մի վայրկեան մտածելուց յետոյ, դարձաւ Եազդգերտին և ասաց.

—Ի՞նչ ես կարծում, Եազդգերտ, հարկաւո՞ր է ա-

զատ թողնել սրան։

—Ցանձնեցէք ինձ, պատասխանեց Ծառան—իմ տէրը գիտէ, որ ես չէի կամենալ երիտասարդի կորուստը։

—Հետևապէ՞ս...

—Սա ապրել չէ կարող. ասաց վճռականօրէն Եազդերտը—Դախմէն է սրա տեղը...

Մովբէդը դէմքը կնճռեց։

—Ո՛չ. ասաց նա—պիղծ անհաւատների տեղը չէ Դախմէն...

—Թողէք ինձ սրա հոգսը...

Ծերունին մտախոհ մնաց, ոյժ դրած դրեց հնարք գտնել արիւն չը թափելու, բայց երբ աչքի առաջ բերաւ թէ Ֆէրրաշի ապրելը ինչ հետևանքներ կունենային, ասաց.

—Եազդգերտ, մեզ հարկաւոր է, որ մի շաբաթ այս լրտեսը ոչ ոքի երես տեսնել չը կարողանայ։

—Ցանձնեցէք ինձ, պնդեց Ծառան։

—Արիւն թափել չը լինի... միայն մի շաբաթ բանտարկութիւն... լսո՞ւմ ես։

—Լսեցի, տէ՛ր... սա չի խօսիլ...

—Թող մի շաբաթ յետոյ գիտցածը ասէ. . Տարէք այժմ դրան...

Ասաց և քայլեց դէպի տուն։

Ծառան և տանուտէրը սպասեցին մինչև Ծերունու հեռանալը, յետոյ իրենք էլ մի կողմ քաշուելով, առանց աչքները Ֆէրրաշից հեռացնելու, մի քանի րոպէ փսփսացին, ապա մօտ եկան, մտան վիրաւորի թեները և լուռ՝ տարան նրան դէպի փողոցի կողմը։

Այդիի դռնից զուրս մի րոպէ սպասեցին տեսնելու թէ չը կա՞ր անցորդ։ Դիշեր էր, լռութիւնը կատարեալ էր ամեն կողմ և ոչ իսկ շներն էին հաչում, ոչ իսկ ճրագ էր երևում։

Այն ժամանակ երկուսն էլ տարան վիրաւորին մինչև փողոցի ծայրը, առանց մի բառ արտասանելու՝ հասնեցին մեծ ճանապարհի վրայ, անցան դէպի քաղաք տանող ուղին բաւական տեղ և երբ հասել էին մի հողաթմբի, տանուտէրը կռացաւ, խլեց Ֆէրրաշի սուրն ու տրճանակը և սկսեց հեռանալ։

Լուռ ամայութեան մէջ մնացին մենակ վիրաւորն ու ծառան։

Օա նախ քանդեց Ֆէրրաշի ձեռքն ու ոտքը, յետոյ մի աքացիով գլորեց նրան ճանապարհի կողքում երևցող խրամի մէջ և ասաց.

—Քայլել չես կարող, քեզ սպանել էլ չեմ ուզում. եթէ այժմ, ինչ որ կանեմ, նրանից յետոյ ապրեցիր—քո բաղտն է...

Ասաց, կռացաւ, արագութեամբ մի ինչ որ բան կոխեց Ֆէրրաշի բերանը, յետոյ արագ շարժմամբ մի գործողութիւն կատարեց և երբ վերջացրել էր, դուրս թռաւ խրամից ու վազնիվազ վերադարձաւ գիւղ։

Վիրաւոր Ֆէրրաշը միայն մի քանի թեթև ցնցումներ գործեց, ձեռքերը բերնին տարաւ, ջանաց դուրս հետել մէջն եղածը, բայց ընդհակառակն կուլ տուաւ։ Յետոյ փորձեց գոռալ, բարձրանալ, բայց կաթուածահարի նման ընկաւ կողքի վրայ, կամաց կամաց թուլացաւ, աչքերը փակուեցին և նա այլ ևս մնաց անշարժ...

Ու գիշերուայ խորին լռութեան մէջ, դէպի Ջիմրան տանող ճանապարհի այդ փոսի մէջ, ոստիկանապետի Ալի Ֆէրրաշը մեռածի նման փռուած գտնուեց միւս օրը։

Գտնողը նրա ընկեր ոստիկան Կասըմն էր, որ ամբողջ գիշերը թափառել էր, լսել էր ատրճանակների ձայները, պահ մի մտածել էր գնալ ձայնի կողմը, յետոյ ենթադրել էր թէ դա պարտիզպանների սովորական գործերն էին՝ անասունների և գողերի վախեցնելու համար և հուսկ ուրեմն յաջողուել էր խրամի մէջ տեսնել իր թշուառ հրամանատարին։

Ֆէրրաշը չէր մեռել. շնչում էր, սակայն աչքերը փակ էին քնածի նման և ամէն ջանք նրան զարթեցնելու՝ անհնար եղաւ։

Երեք օրից յետոյ շունչն էլ դադարեց և ոստիկանապետի հրաւէրով եկած տեղական բժիշկները հաստատեցին, որ Ալին չափից աւելի օպիում էր կուլ տուել ու դրանից էլ մեռել...

IX

Խօլերան հնձում էր գերանդի նման, ամայացնում

մայրաքաղաքը։ Օդոստոսի այդ շոգերին, աղտոտ, անխնամ թողուած, շատ վատ ջրաբաշխութեամբ քաղաքի մէջ օրական մօտ 800 մարդ ճանճերի նման կոտորւում էին խօլերայից։

Բժշկական ոչ մի օգնութիւն, ոչ մի միջոց համաճարակի դէմն առնելու։ Մայրաքաղաքը դատարկւում էր։ Ով կարողանում էր—փախչում էր, ելնում քաղաքից, իսկ օրապահիկով ապրողները իրենց գիակներով լցնում էին փողոցները։

Սոսկալի էր տեսնել այդ միջոցին քաղաքի ետ ընկած, տղմաթաթախ և աղբակոյտների մէջ ճղփացող փողոցները։

Օկզբում, յուլիսի մէջ նոյն իսկ, երբ դեռ աղէտը նոր էր և կոտորածներ էր անում խուլ թաղերում, երբ դեռ օրական 100 200 մեռեալ էր տալիս մայրաքաղաքը, պարսիկ ժողովուրդը զիջողաբար գլուխ էր ծռում՝ «Աստծոյ ուղարկած պատուհասի» առաջ։ Յետոյ սակայն այդպէս չեղաւ։ Նախ մի խուլ բողոք սկսեց. յայտնի չէր որտեղից ձայն տարածուեց, որ մեծ Մարգարէի հասցրած պատիժն էր այդ՝ մենավաճառի գործի համար. ապա՝ որ այդ «պատիժը» յառաջացնում էին օտարահաւատները. իսկ թէ ինչու կամ ինչպէս—ոչ ոք չը կամեցաւ քննել. օտարականների դէմ կուտակուած զայրոյթը դարձեալ բորբոքւում էր խուլ կերպով. կրօնաւորութեան Ֆանատիկ մասի կողմից դարձեալ սկսեցին գաղտնի դըրդումներ, ապա՝ համարձակ քարոզներ շուկաներում, մզկիթներում։

Բայց փաստն այն էր, որ համաճարակը եկել էր Մէշէդից և տարածւում էր քաղաքում բնակիչների աղտոտութեան, փողոցների և ջրերի ապականութեան շնորհիւ։

Աղտոտութեան մասին գաղափար կազմելու համար, բաւական է ասել, որ պարսկական մայրաքաղաքի փողոցները երբէք ազատ չեն լինում աղբակոյտներից, լինի նոյն իսկ Շահի պալատի փողոցը և դռան երկու կողքերը։ Բացի դրանից, խմելու ջուրը անցնում է փողոցներով, տների բակերի միջով և բաց է շատ տեղերում։ Այդ բաց տեղերում լուացւում են, նոյն իսկ շորեր լուանում, իսկ քիչ ցած, խմում են, որովհետև ըստ մահմե-

դականների՝ «ջուրը ազատ չի վերցնում»։

Եւրոպացիք պատմում էին օրինակ, որ Մէշէդից եկող մի ուխտաւոր, այդ քաղաքում մեռած մի քանի հաջիների հագուստներ էր բերել հետը և Թէհրան հասնելիս, լուացել էր նրանց մայրաքաղաք մտնող ջրի առուակի մէջ, որից յետոյ խօլերան նախ սկսել էր ջրի ամենամօտ տներից և տարածուել սկզբի թաղերում, տալով բազմաթիւ զոհեր։

Փաստն այն է սակայն, որ Օգոստոս ամսին մեռածների թիւը հասնում էր օրական 7—800ի, որ ահագին էր, ի նկատի ունենալով ազգաբնակութեան կիսից աւելի փախուստը մայրաքաղաքից։

Ամէն գործ գրեթէ դադարել էր, շուկան դատարկուել, կիսից աւելին փակուել և նրա նեղ անցքերից սկսած մինչև փողոցների ծառերի տակ՝ ընկնող-ընկնողի էր։ Ո՛չ թաղող կար, ոչ ոև է բժշկական օգնութիւն հասցնող։ Բժիշկներ կային. քիչ բժիշկներ չը հարստացան այդ օրերում՝ շնորհիւ իրենց մասնաւոր դեղատների, կարբոլեան թթուատի 10—20 կաթիլները 2—3 լումանի (5—6 ռուբլի) ծախելով... սակայն ոչ մի համախմբական շարժում, ոչ մի հասարակական ձեռնարկութիւն համաճարակը մեղմացնելու և կամ վարակուածներին ժողովելու և խնամելու, նոր վարակումների դէմն առնելու...

Անիշխանութիւնը կատարեալ էր։ Շահը, բոլոր պաշտօնէութիւնը հեռացած էր քաղաքից՝ զօրքի հետ։ Մնացել էր փոխ-կառավարիչ Միրզա—Իսա խանը, նա էլ խօլերայից մեռաւ և մայրաքաղաքը մնաց անգլուխ, անկարգ։

Ու խուլ շշուկը մեծանում էր, օտարականների դէմ զայրոյթը գրգռւում։

Հետզհետէ լուրեր գոյացան, որ ջրերը թունաւորւում են, որ բաբիները, ինգլիզները թոյն են ցանում ամէն ինչի վրայ և որ առհասարակ ոչ-միւսիլմանները վճռել են ոչնչացնել բոլոր միւսիլմաններին։

Ահա այդպիսի օրերումն էր, որ ոստիկան Կասըմը իր ընկեր Ալի Ֆէրրաշին մի ջորիի վրայ կապած՝ բաղաք էր բերում։ Հանդիպողները նախ կարծում էին թէ

խօլերայի զոհ էր, յետոյ, հետաքրքրուած՝ հարցնում էին և Կասրմը ամէնքին ասում էր թէ «գէբրերն էին այդ օրի հասցրել» իր ընկերոջ։

Ի հարկէ ոչ մի նշանակութիւն չէին կարող ունենալ այդ խօսքերը, եթէ միայն չը լինէին ուրիշներն էլ։

Ոստիկանապետը կատաղած Ալիի դրութեամբ, երդուեց մի խիստ վրէժ լուծել Մովբէդից և նրա ժողովրդից։ Աղալար խան սարդարի ներքինին նոյնպէս իր կողմից մտածեց այդպէս։

Այդ օրերը յարմար էին ամէն տեսակ անկարգութիւնների։ Ցրէտ և տառապող ժողովուրդը վշտից կուրացած՝ պատրաստ էր իր զայրոյթը թափելու համաճարակը պատճառողների վրայ։ Նրան յանցաւորներ էին պէտք, որոնցից կարելի լինէր իրենց տուած զոհերի վրէժն առնել, որոնց պատիժը կարողանար քիչ սփոփել կորուստների վիշտը։

Դործերի այդպիսի դրութեան ժամանակ Ջիմրանի ամարանոցներում բոլոր ապաստանողները վարում էին առանձնակի կեանք, առանց յարաբերութիւն ունենալու քաղաքի և կամ նոյն իսկ միմեանց հետ։ Կողիացրած էին մանաւանդ Ռուսական և Անգլիական դեսպանատան գիւղերը — Զարգէնդէ և Գուլահէք։

Այս վերջնումն էր, որ կատարուեց մայրաքաղաքը այդպիսի ծանր օրերում բաւական վրդովող գործերի սկզբնաւորութիւնը։

Հազիւ ազատուած Ալի Ֆէրրաշից, ծերունի Մովբէդը ցաւ ի սիրտ տեսաւ, որ Խոսրէվին սպառնում է վը տանգ Աղալար խան Սարդարի մի կնոջից։

Բժշկի այցելութիւնն առ այժմ այն հետևանքն ունեցաւ, որ երիտասարդ գէբրը նկատուեց առողջ, միայն թէ փորը ինչ շշմած անցեալ դէպքերից։

Ալի Ֆէրրաշին զարնելու գիշերուանից Մովբէդը այլ ևս չէր ճանաչում երիտասարդին։ Խոսրէվը կատարելապէս փոխուում էր, զգալի յանկարծականութեամբ էր փոխուում։ Ցնցող մի դէպք կարկամեցրել էր նրան 7 - 8 ամիս, թողնելով կիսաղանդաղ կեանքի մէջ և այժմ մի երկրորդ նոյնատեսակ դէպք երիտասարդին հանում էր թմրութիւնից լիովին։

Խոսրէվը այժմ ժպտում էր, խօսում երկար, յաջողում էր մտածութիւնների մէջ կապ դնել. ցանուցրիւ, կցկտուր, անմիտ չէին այլ ևս նրա ասածները. մինչև իսկ մի տեսակ անսովոր խելամտութիւն էր գոյացել նրա մէջ։ Եաղդգերտը — երիտասարդի ծառան իսկ գտնում էր, որ Խոսրէվը շատ աւելի լուրջ էր դարձել այժմ, շատ աւելի խելացի և լաւ դատող։ Այլ ևս երես առածի, չափազանց սիրող մօր զգուանքների, տան միակ զաւակի փչացած ձևերը թողել էր և կատարեալ տղամարդի վարմունք էր ստացել։

Դէպքերը, տարիքից առաջ, խելամիտ էին դարձրել երիտասարդին։

Այդ բաւական չէր, այժմ Խոսրէվը ինչ որ երկար և լուռ խորհում էր. ըստ երևոյթին որոճում էր մի նոր բան, որ ով գիտէ՝ որտեղից մուտք էր գործել նրա գլխում։ Եւ այդ՝ Մովբէդն էլ էր նկատում։ Հարցնում էր, բայց երիտասարդը ժպտելով պատասխանում էր, որ ոչինչ չը կար, որ դեռ ոչինչ ասել չէր կարող։

Եւ, որ առաւելն է, դրա հետ կապուած էր մի յամառ ու երկարատև, ամփոփուած ընթերցանութիւն երկու գրքերի.—Զէնդաւեստայի և Փիրդուսիի «Շահնամէի»։ Մովբէդը ուրախանում էր տեսնելով այդ։ Երբեմն հետաքրքրւում էր, թէ երիտասարդը հասկանում էր արդեօք կարդացածը։ Ու գտնում էր որ ոչ միայն նա հասկանում էր, այլ և նորօրինակ, ինքնուրոյն ու աչքի ընկնող բացատրութիւններ էր առաջադրում։

Այս բոլորը սկսել էր նոյն իսկ յիշուած դէպքերի միւս օրը։ Զոհրա խանումի բժիշկը գնացել էր լաւ լուրերով։ Մովբէդը սպասել էր դրանից յետոյ ոև է նոր արկածի, սակայն ամէն ինչ լուռ էր և մօտ 20—25 օր ոչ մի ձայն, ոչ մի եկող, ոչ մի անհանգիստ անող չեղաւ նրանց խաղաղութիւնը։

Ու Խոսրէվը, որ երբէք գրեթէ տնից չէր դուրս գալիս, օրուայ մեծ մասը նստած մի ծառի տակ՝ կարդում էր Զենդաւեստայի բոլոր գրքերը և կամ լուռ՝ ընկողմանած՝ խորասուզւում խորհրդածութիւնների մէջ։

Զարմանալին այն էր (դա երբեմն յիշում էր Մովբէդը), որ այն երեկոյեան խէսփուշը այլ ևս չերևաց։

Զոհրա-խանումից էլ ոչ մի լուր. իսկ ոստիկանապետը, ըստ երևոյթին, ձեռքնթափ էր եղել գործից։

Եւ շատ հասկանալի էր։ Ամեն գործ, ամեն ձեռնարկութիւն, ամեն շարժում կանգ էր առել խօլերայի առաջ։ Ծօթը անտանելի, բազարի հետ ամէն յարաբերութիւն դադարած, խօլերան հնձում էր առատօրէն և և տանուտէր գէբրն էր, որ երբեմն լուր էր բերում, թէ որքան մեծ կոտորած է լինում մայրաքաղաքում։

Եազդգերտը — ծառան ուղարկուած էր քաղաք, տունը պահպանելու. նրա փոխարէն վարձուած էր տանուտիրոջ փոքր եղբայրը, իբր առժամանակեայ ծառայող՝ երիտասարդին և ծերունուն։

Եազդգերտը, միայն շաբաթը մի անգամ գալիս էր գիւղ, տալիս էր նոր լուրերը, նոր հրամաններ ստանում և դարձեալ քաղաք վերադառնում։

Այսպէս անցել էր մօտ 15 օր, երբ մի առաւօտ յանկարծ, անսպասելի կերպով այգիի դուռը ծեծուեց և Եազդգերտի ձայնը լսուեց, որ գոչում էր.

—Շուտ, բացէք, կարևոր լուրեր...։

Խոսրէվը և ծերունին մի ծառի տակ թէյ էին խըմում։ Երկուսն էլ դողացին և բիչ գունատուեցին, նախազգալով որ գալիս է վտանգի հոտը։

Նոր ծառան դուռը բաց արաւ։ Եազդգերտը ցատկեց ցած ձիուց, սրանալով ներս ընկաւ և հարցրեց ծառայից.

—Որտեղ են ազաները։

Ծառան ցոյց տուաւ։ Եազդգերտը վազելով մօտ գնաց ոտքի ելած և նրան դիմաւորող ծերունուն ու երիտասարդին և ասաց յուզմամբ։

—Քաղաքում՝ մեր հասարակութեան կոտորած է սպառնում. .

—Ինչպէս... բացականչեց ծերունին ապշած—ինչ ասացիր... ինչու, ինչ է եղել... խօսիր...

—Ոչինչ որոշ չեմ կարող ասել... ժողովուրդը տուած զոհերի մեծ թուից վշտացած և վշտից կուրացած... լուրեր էին տարածել որ քրիստոնեաները, յետոյ՝ հրէաները, ապա՝ բարիները իբր թէ թոյն են խառնում աւազանի ջրերի մէջ և դրանով ուզում են ոչնչացնել, ջնջել

միւսիլմաններին... Յետոյ յանկարծ, յայտնի չէ որտեղից, յայտնուել են մարդիկ, որոնք ժողովրդին սկսել են գըրգռել զրաղաշտականների դէմ... Այժմ արդէն ամբողջ քաղաքի ամբոխը սկսում է յուզուել, լսում են հայհոյանքներ, ոպառնալիքներ մեր հասարակութեան դէմ... Երէկ երեկոյ Նուշրիւանի որդի Փէրուիզը եկաւ ինձ մօտ և հասարակութեան կողմից խնդրեց, աղաչեց զալ ձեզ մօտ, յայտնել սպասող վտանգը, ապաչել, որ անձամբ Շահի մօտ գնաք, օգնութիւն և ապահովութիւն...

— Բայց այդ ինչեր ես խօսում, գոչեց Մովբէդը դողդողալով յուզմունքից— ճիշտ են բոլորը, թէ ոև է մի սրիկայի կամ արբածի հայհոյանքն է ձեզ դողի մէջ ձգել...

— Ո՛չ, տէր իմ, լուրջ բան է սա... ես ինքս այսօր, երբ ձիով անցնում էի քաղաքի փողոցներից, ենթարկուեցի մի քանի տեղ հայհոյանքի, մի տեղ էլ մէկը քար նետեց ետևիցս, իսկ մի երրորդ տեղ էլ մէկը գոռաց թէ «սպասէր, թունաւորող շուն գէբրեր, շուտով ձեզ բոլորիդ կը կոտորենք»... Պատմում են, որ ոչ մի զրապաշտական այլ ես փողոց ելնել չէ համարձակւում ծանօթ տեղերում, որ բազարի մէջ ծեծել են մէկին...

Խոսրէվը, որ աչքերը բոցավառ ու խորին ուշադրութեամբ լսում էր բոլորը, ընդհատեց Նրան ու ասաց.

— Իսկ ինչու են զրաղաշտականները ճգնում իրենք իրենց այնպէս պահելու, որ զանազանուեն միւսներից։

— Նրանց ճանաչում են ամեն տեղ, ասաց ծառան— և ասում են, որ վերջին օրերս մի ինչ որ Ներքինի, յետոյ մի քանի կրօնաւորներ՝ բազարից-բազար ընկած կրգռում են ժողովրդին մեր դէմ...

Մովբէդը սառած, առանց մի բառ արտասանելու նայում էր Եազդգերտին։

Եւ երբ սա ասել էր բոլորը, երեքն էլ մի բոպէ լուռ մնացին։ Յետոյ Ծերունին շարժուեց, դարձաւ ծառային ու ասաց.

— Իսկ քաղաքապետին չեն իմացրել այդ մասին. ինչու Արտաշիրը, իմ փոխանորդը...

— Փոխ-քաղաքապետը խօլերայից մեռաւ... ընդհատեց Եազդգերտը— ոստիկանապետը, ասում են, հեռա-

ցել է քաղաքից, մի խումբ սրիկաներ յարձակուել են բանտերի վրայ, բանտերից դուրս են թողել բոլոր աւազակներին, խառնակիչներին և քաղաքում այս բոպէիս օր կամ գիշեր չի լինում, որ տեղի չունենան թալաններ, սպանութիւններ... ոչ մի իշխանութիւն, ոչ մի ապահովութիւն... ամէն ինչ տակն ու վրայ է... իսկ փողոցներում խօլերայից մեռած դիակներ՝ ամէն տեղ, ամէն անկիւնում, ջրի առուակի մօտ, տների պատերի տակ...

Մովբէզը դարձեալ քիչ լուռ ու դէմքը կնճռած մընաց, յետոյ տխուր՝ ասաց.

—Ճանն Լլ փախել է... անիշխանութիւն է... ինչ անել...

Յետոյ պահ մի խորունկ կերպով մտածեց և նստաւ տեղն ու տեղը՝ խոտերի վրայ։

—Հայր, ասաց նրան յանկարծ Խոսրէվը— գնանք քաղաք՝ մերայիններին պաշտպանելու .. նրանց գինենք, խմբեր կազմենք անձնապաշտպանութեան և կամ... և կամ նրանց հետ մեռնենք...

Մովբէզը զարմացած՝ երիտասարդին նայեց և ծանր՝ ոտքի ելաւ։

—Էջ որ, հայր, շարունակեց Խոսրէվը—Շարի և շարութեան դէմ կռիւը մեր սուրբ և ամենամեծ պարտականութիւնն է... Դու, վնասակար անասունները ոչնչացնելու համար գէնք ես կրում քեզ հետ. այդ նոյնը անում է ամէն մի բարեպաշտ զրադաշտական... շարը պիտի ոչնչացնել—սա Եազդանի ամենառաջին և մեծ պատուէրն է... Սակայն, դրանից առաջ հարկաւոր է չը թոյլ տալ, որ շարութիւնը գոյանայ... Ես մտածում եմ, որ փոխանակ ոչնչացնելու շարը՝ պիտի ջանալ, որ նա չը գոյանայ .. և դրա համար պիտի հասկացնել վշտից, ցաւից կուրացած տգէտներին շատ բան, որպէս զի նորա գործիք չը դառնան շարութեան... և երբ չը հասկանան, այն ժամանակ միայն պիտի հասկացնել նրանց աւելի ազդու կերպով... Ես չեմ կարողանում հասկացնել միտքս, բայց զգում եմ, որ քեզ և ինձ պէտք է անմիջապէս գնալ մերայինների մէջ... առանց ուշանալու գնայ...

Ասաց և քիչ շփոթուած՝ բայց շրթունքները սրկած ու վճռական՝ նայեց ծերունուն։

Սա մի քայլ արաւ դէպի երիտասարդը՝ մի տեսակ զարմացած դէմքով, խորունկ հայեացքով զննեց նրան և ասաց մի առ մի, շեշտելով.

—Դու, դու այդ բոլորը նոր... միայն նոր մտածեցիր, այս բոպէին...

—Ո՛չ... ես վաղուց սկսել եմ մտածել... Քեզ, օրինակ, պէտք չէր թողնել քո ժողովրդին նրա ծանր օրերում... և, ներիր ինձ, քո անձը միայն մտածելով՝ փախչել ազէտից, ապահովութեան մէջ ապրելու այստեղ...

Ծերունին լռեցաւ ու քիչ կարմրեց։ Յետոյ յանկարծ դարձաւ Եազդգերտին ու ասաց.

—Լսեցիր, Եազդգերտ... Լոյսը, ինքը—Եազդանն է խօսում երիտասարդ տիրոջդ բերանով... Եթէ չեմ մեռնիլ, պիտի տեսնեմ լոյսի նոր վարդապետների գալուստը. անցել է արդէն 3000 տարին... Գնանք քաղաք, ասա Զապուհին, որ իսկոյն մեր ձիերը պատրաստի, իսկ վաղը կը գաս և մեր ունեցածները կը բերես... Եւ թող օրհնուի ու փառաւորուի լոյս սփռող Միհրը, բարութեան ստեղծող ու Չարիքի հալածող Ահուրա-մազդան... Գընանք ուրեմն, երիտասարդ, թող քո ասածը լինի, գնանք մերայիններին մօտ...

Ասաց, առաջ անցաւ վճռական քայլերով և դիմեց դէպի տուն։

X.

Գուլահէրից դէպի Զէրդէնդէ իջնող և այնտեղից Զիմրանի մեծ ճանապարհին խառնուող գծի կէտին, Մովբէդը, Խոսրէվը և ծառան պատահեցին քարակոյտի ետևում նստած մի ինչ որ, մուրացիկի նմանող պարսիկի և անցան ուշադրութիւն չը դարձնելով նրան։ Սակայն մուրացիկը նրանց տեսնելուն պէս ոտքի ելաւ, թողեց որ անցնէին, յետոյ արագ վազքով Զէրդէնդէ իջաւ և երբ Մովբէդն ու երիտասարդը դիւղից բաւական հեռացել էին, նրանց ձիերի հանած փոշու միջից, ետևում երևան եկաւ մի ուրիշ ձիաւոր ևս սրարշաւ քշելով։

Այդ ձիաւորն էր ահա, որ նրանցից միշտ բաւական հեռու, ջանալով նրանց աչքից չը փախցնել, հետևում էր անընդհատ։

Բայց Մովբէդն ու երիտասարդը, նոյն իսկ ծառան՝ ոչինչ չը նկատեցին. տեսան, պարզ ճանապարհորդ համարեցին և այլ ևս մինչև քաղաք հասնելը՝ մոռացան նը-բա գոյութեան մասին։

Ճոգն սկսել էր, չը նայելով որ հազիւ դեռ ժամը 10-ը լինէր։ Ճանապարհում անցուդարձը շատ սակաւ էր. երբեմն գիւղերն իջնող ազնուականներ՝ ձիերով, երբեմն մի գլորուող փակ կառք և ապա՝ միշտ միենոյն փոշեծածկ ճանապարհը, որ մինչև փողերանոցը հազիւ հովանաւորւում էր ճոճիմ ծառերի շարքերով։

Եազդդերտը գնում էր շատ առաջից, ծերունին և Խոսրէվը քայլում էին միասին՝ հանգարտ քայլերով։

Արրունի փողերանոցից յետոյ, ճանապարհը սկսեց գեղեցկանալ փոքր ինչ։ Ծառերն աւելի բարձր և տերևախիտ, թէև ստուեր էին սփռում, սակայն այդտեղ էլ փոշին, տաք և խորշակի նմանող քամուց մղուած՝ ծածկում էր ճանապարհը և սպիտակ փոշի մաղում ամեն ինչի վրայ։

—Օ՛հ... կանչեց Մովբէդը գրպռուած և նեղացած շողուց ու փոշուց.—Ահրիմանի դևաները շրջում են օդի մէջ կառաղաբար... Չար ոգու շունչն է, որ այդ անիծեալ քաղաքից փչում ծածկում է ամեն կողմ...

—Է՛հ, հայր *ատարուան* [1]) խօսեց Խոսրէվը յանկարծ —քամին և արևն են մեղաւոր, ինչ արած...

Ծերունին բաշեց ձիու սանձը և երիտասարդին դարձաւ։ Հեղինակաւոր ձայնը, ծերունուն—առաջին անգամը լինելով—պարզ *ատարուանի* կոչում տալը, այլ և Արեդական—այդ ամենասուրբ աստծուն վերագրել տալը (որ ըստ Աւեստայի՝ Ահրիմանի, միմիայն Ահրիմանի գործն է)—զարմացրեց Մովբէդին։

Մի վայրկեան լուռ նայելուց յետոյ երիտասարդին ուղղեց ակնոցները, սրբեց ճակատի քրտինքը և ասաց.

—Ճոգը, իմ որդի, փոշին, որ աղտ է բերում, ինչպէս և ամէն տանջող ու աղտոտող բան միմիայն Ահրիմանի գործերն են... Սուրբ է արևը, ջերմութիւն և ուրախու-

---

[1]) Պարզ քուրմ կրակապաշտների, սակայն լայն մտքով՝ նշանակում է կրօնաւոր, կրօնի պաշտօնեայ։

թիւն է միայն նրա տուածը և քո ասածները դէմ են Աւեստային...

Խոսրէվը ուսերը թոթուեց և պատասխանեց անվրդով, յոգնածի նման

— Անբնական են, հայր, անբնական՝ ասածներդ... Ջերմութիւնը արևից է— այո դու ես ասում. իսկ շոգը՝ ջերմութեան սաստկութիւնից... ուրեմն շոգն էլ արևից է... փոշին հող է. իսկ հողը երբէք ապտոտ չէ— դա Աւեստայի խոսքերն են. հողը սուրբ է... Հետևապէս քամին, որ բարձրացնում է արևի չորացրած և փոշի դարձրած հողը՝ կապ չունի Ահրիմանի կամ նրա դեևների հետ...:

— Քամին չար չէ. առարկեց Մովբէդը— բայց նրան գործադրողը չար բանի համար՝ Ահրիմանն է... փոշին՝ հողի ապտոտ մասն է, մարդկային ոտներով պղծուած ..

— Ուրեմն ման գալը մեղք պիտի լինի .. ժպտեց երիտասարդը...

Ծերունին լուռ՝ ցնցեց գլուխն ու այլ ևս չը խոսեց։ Սիրտը սակայն սեղմուեց։ Հփոթուում էր. չը գիտէր ինչ պատասխանել այդքան պարզ տրամաբանութեան դէմ։ Զգում էր, որ այլ ևս չէր կարելի նախապաշարումներով կերակրել այդ երիտասարդին, քրմային խոսքերով համոզել նրան, և որ Խոսրէվը, իր անպաճոյճ ու կտրուկ սրամտութեամբ անցել էր մի պարզ, կուրօրէն և առանց քննելու հաւատացողների շարքից շատ աւելի վեր։

Սիրտը սեղմուեց. որովհետև այլ ևս վերջանում էր իր բոլոր ազդեցութիւնը երիտասարդի վրայ։ Ոչ միայն ազդեցութիւնը կորչում էր, այլ մինչև իսկ ինքը— բազմամեայ Մովբէդը մի տեսակ կծկումն էր զգում զօրեղապէս տրամաբանողի առաջ։

Եւ դա այդ օրը երկրորդ անգամն էր արդէն։ Ի՞նչ էր լինում երիտասարդին։ Ներշնչումն էր այդ Ահուրամազդայի։ Ընթերցումներն ու լուռ խորհրդածութիւնները էին, թէ սարսուղ կրակի յետին բոցեր, մի նոր և գօրեղ կեանքի առաջին հնչեղ քայլեր էին թէ կատարեալ խելայեղութեան տանող փայլուն մնացորդներ, որոնք արտայայտուում էին այդքան ուժգնաբար՝ թշուառ երիտասարդի ուղեղային գործունէութեան որպէս վերջին

նշոյլներ...

Եւ մինչ խորհում էր նա լուռ, մեծ ճանապարհին միացող մի շաւիղից երևաց մի ձիաւոր և եկաւ ընկերանալու նրանց՝ դէպի մայրաքաղաք։

Ծերունի էր եկողը։ Բաց, շատ համակրելի, ժպտուն և զուարթաղին մի դէմք։ Հագել էր մարուր և պարզ, նստած ձին շատ լաւն էր և արդուկարդն էլ հարուստ։ Վաճառականի կերպարանք ունէր։ Անշուշտ պարսիկ էր, այն էլ կրթուած, որովհետև ոչ մազերն էին հինա դրած և ոչ էլ ձեռքերը կամ եղունգները։ Մինչև իսկ մահմեդականների, ճկոյթ մատերին միշտ երևցող արծաթ մատանին աջիք բարով – չը կար. մի մատանի, որ նուիրական է համարւում և ամեն բարեպաշտ միւսիլման սիրում է ունենալ։

Երբ մեծ ճանապարհի վրայ եկաւ, նայեց փոքր ինչ Ծերունի Մովբէդին, հարիանցի զննեց երիտասարդին և խօսքն ուղղելով նրանց՝ ասաց.

—Բարև եղբայրներիս...

Բարևն իսկ մահմեդականի չէր, այլ ողջոյնի մի նոր ձև «Սալամ ալէյքումի» փոխարէն նա ասել էր «Սալամ ըրաղարհա» (ողջոյն, եղբայրներ)։

— Ողջոյն. պատասխանեց Ծերունին՝ կարճ։

—Ինձ թոյլ կը տաք ընկերանալ քաղցր ժպիտով խօսեց Նորեկը—ասում են և փորձով էլ գիտեմ, որ թէ վատ ճանապարհ և թէ վատ վիշտը, ընկերաբար կրելու ժամանակ. կիսովին թեթևանում են։

—Համեցէք. ասաց Մովբէդը—միասին բայլենք. մենք քաղաք ենք գնում։

—Եւ ես, եղբայրներ... Ասում են, որ վատ ցաւն այնտեղ կոտորածներ է անում և հնձում դուցէ շատ բարի, լաւ մարդկանց կեանքը։

—Դուք չէք վախենում, որ գնում էք այնտեղ. հարցրեց Խոսրէվը նրան։

Ծերունին ժպտեց, նայեց քաղցրութեամբ ու. ասաց.

—Ո՛չ, երիտասարդ... եթէ դու, որ կեանքի մէջ նոր ես մտնում չես վախենում, ինչու վախենայ մի ծերունի, որի մի ոտը գերեզմանումն է արդէն... Սա ձեր որդին է. դարձաւ նա Մովբէդին։

—Ո՛չ... չփոթուեց Մովբէդը—իմ բարեկամի որդին է։

—Նոյնն է այդ... իսկ դուք, ներեցէք ինձ, թւում է, որ մի կրօնաւոր էք, արդեօք հրէական...

—Ո՛չ, զրադաշտական...

—Արևապաշտների՞... հետաքրքրութեամբ նայեց նրան նորեկը.—Լսել էի ձեր մասին։ Ձերայինք ձեզ կոչում են մեծ ատարուան, մեծ մովբէդ ..

—Մովբէդ՝ այո... իսկ դուք...

—Ես վաճառական եմ, անունս Միրզա Ասադ... Այժմ գնում եմ քաղաք՝ գործերիս համար...

Շոգը սաստկանում էր. չը նայելով, որ փողերանոցից յետոյ բամին ու փոշին դադարել էին, ծառերի ստուերները երկարացել և հոսող ջրերն ու զովութիւնը առատ էին ծառուղու երկու կողմերում, սակայն արևն ուղղակի էր և այրում էր նրանց։ Ստիպուած էին երբեմն կանգ առնել ջուր խմելու. մի անգամ էլ մի սրճատան առաջ իջան և թէյ պահանջեցին, իսկ երբ փողերանոցից բաւական անցել էին և հեռուից Ղասրը Ղաջարն էր երևում, Միրզա Ասադը մէկէն Մովբէդին դարձաւ ու հարցրեց.

—Ասա՛ ինձ, եղբայր... Ասացիր, որ զրադաշտական ես... Զբաղուել եմ ես այդ կրօնով... գիտեմ քիչ ձեր գրքի լեզուն և կարդացել եմ... Ասա՛ ինձ, մթթէ այն բոլորը, ինչ որ գրուած է Աւեստայում, անկեղծաբար դուք ճշմարտութիւն էք համարում...

Մովբէդը զայրացած՝ դարձաւ ձիու վրայ. Խոսրէվը զարմացմամբ նայեց Միրզա Ասադի ժպտուն դէմքին։

—Մի՛ նեղանաք, շարունակեց ծերունին.—Կան բաներ, որոնք ճշմարտութեան անունն են միայն կրում և այդ անունը նրանց վրայ դրոշմել է կրօնը... և եթէ, խորը մտածելով, մի բոլէ խորհես թէ կրօնն էլ կարող է սխալուել—և կամ աւելի ճիշտը՝ կրօնի հիմնադիրը—այդ բաներից շատերը քեզ թւում են այնքան անհիմն, այնքա՛ն...

—Բաւական է. միջահատեց խստութեամբ Մովբէդը—միմիայն անպատկառ միւսիլմանութիւնն է, որ ընդունակ է քո հասակի մարդկանց իսկ յիմարութիւններ

ասել տալ...

Եւ բարկութիւնից դողում էին կրօնապետի ձայնն ու ակնոցները։

Միրզա Ասադը լրջացաւ, պահ մի լուռ քայլեց, յետոյ մեղմութեամբ ասաց.

— Ես չը գիտէի, որ ազատ մտածութեան, իմաստութեան և այլ լաւ բաների անունով խօսող կրօնը այնքան աններողամիտ պաշտօնեայ կարող է ունենալ... Սակայն .. (և նա, շարունակելուց առաջ՝ շուրջը նայեց) սակայն. . ես միւսիլման չեմ, ոչ. իմ միտքը կաշկանդուած չէ Ղուրանի և մոլլաների մութ կապերով, փառք Աստծոյ...

— Ուրեմն հրէայ էք. ասաց նոյն խստութեամբ Մովբէդը — հրէան իսկ այդքան անպատկառ չի լինիլ դէպի կրօնը և նրա ճշմարիտ պատուէրները...

— Ներեցէք ինձ, աղա. խօսեց նոյն մեղմութեամբ Միրզա Ասադը — ինձ թւում է, որ եթէ ընդունենք բոլոր կրօնների պատուէրների ճշմարիտ լինելը, այն ժամանակ հէնց մենք շուարումի մէջ պիտի ընկնենք և չը կարողանանք որոշել, թէ ո՞ր ճշմարտութիւնն է իսկական ճշմարտութիւնը — մահմեդականի՞, հրէայի՞, քրիստոնեայի՞, կռապաշտի՞...

— Միմիայն Աւետարանի և Օրմուզդի... գոչեց Մովբէդը վարդապետօրէն։

— Այդ նոյնը ասում են ուրիշները — մահմեդականը՝ Ղուրանի և Մահմէդի, քրիստոնեան՝ Աւետարանի և Քրիստոսի. . և բոլոր այդ գրքերի մէջ շատ քիչ բաներ կան՝ որ չը հակասեն միմեանց... Բայց ես հրէայ էլ չեմ ..

— Քրիստոնեայ էք ուրեմն...

— Ո՛չ։

— Կռապաշտ

— Ո՛չ։

— Ի՞նչ էք ուրեմն... Ասացէք մեզ, թէ որո՞նք են ձեր ճշմարտութիւնները։

Միրզա Ասադը լուրջ և խոհուն՝ գլուխը պահ մի կրծքին իջեցրեց, յետոյ նայեց ներշնչուած հայեացքով միւսներին և խորունկ շեշտով ասաց.

— Կասեմ ես ձեզ այն, ինչ որ ինձ ճշմարտութիւն

է թւում... «Ամէն բանում և միշտ՝ ամենագլխաւորը առողջ դատողութիւնն է» — այս առաջին։ «Գիտութիւնը և ուսումը ամենամեծ երջանկութիւնն են»... «Թողէք հպարտութիւնը և ձգտեցէք այն բոլորին, ինչ որ բոլոր մարդկանց իրար եղբայր դառնալու է օժանդակում»... «Հպարտանանք միմիայն լաւ գործերով, լաւ բարքերով և լաւ գիտութիւնով»...

—Դուք քաջի էք [1])... ընդհատեց Մովբէդը լիովին մեղմացած—այդ ես տեսնում եմ, որովհետև ինչ որ խօսում էք, կարդացել եմ «Քիթաբը-Աղդասի» [2]) մէջ....

Միրզա Ասադը վախեցած՝ նրան նայեց, յետոյ շուրջը դիտեց թէ արդեօք լսող չեղաւ Մովբէդին, և երբ ստուգել էր որ մենակ էին [3]), ասաց.

Այո, ես Բէհա—Ուլլահի աշակերտ եմ, նա, որ սովորեցնում է եղբայրութիւն, բարութիւն և հաւասարութիւն. .

—Ա՛յն, ինչ որ վայրուց ի վեր սովորեցնում է Աւետարանը և ինչ որ կրակի տառերով դրոշմուած է իւրաքանչիւր զրադաշտականի սրտի վրայ... Դու նորութիւններ չես խօսում մեզ, ծերունի. իսկ ես, գիտցածներիդ վրայ կաւելացնեմ և այն, որ բարութեան ու հաւասարութեան հետ՝ մարդիկ պիտի գիտենան գործադրել բացարձակ մաքրութիւն սրտի և մարմնի... կռիւ մղեն չարի դէմ, ոչնչացնելով նրա գործակալներին ամէն տեղ, ամէն ժամ...

—Կատարելապէս իրաւունք ունիք. Բէհա-Ուլլահը նոյնն է կրկնում... Բէհա Ուլլահը նա է, որի մասին Զէնաւեստան իսկ խօսում է, աւետելով նրա գալուստը։

Մովբէդը և Խոսրէվը զարմացած նրան նայեցին։

—Դուք զարմանում էք. ժպտեց ծերունին - սակայն ես ճշմարտութիւն ասացի... «Երբ հազար երկու հարիւր

---

[1]) Աղանդ Պարսկաստանում հիմնուած 1848-ից ի վեր։ Նորա ներկայացուցիչը և աղանդի զօրեղացնողն է Բէհա-Ուլլահ, որ այժմ կենդանի է և համարւում է մարգարէ։

[2]) Բաբիների սուրբ գիրքը, հեղինակութիւն Բէհա-Ուլլահի։

[3]) Որովհետև բաբիութիւնը սաստիկ հալածւում է Պարսկաստանում։

և դարձեալ մի քիչ տարիներ կանցնեն արաբների կրօնի հիմնուելուց, նրանց հաւատը այնքան կաղաւաղուի, որ հիմնողն իսկ նրան այլ ևս չի ճանաչիլ, և, ահա՛ այդ ժամանակ՝ կը յայտնուի Հուշիդուրը»... Այս խօսքերը ես կարդացել եմ ինքս Աւեստայի մէջ։

—Ճշմարիտ է, հաստատեց Մովբէդը խիստ հետաքրքրուած—յետոյ, ինչ կապ Հուշիդուրը՝ Բէհա Ուլլահի հետ։

—Կայ. միւսիլմանական կրօնի հիմնուելուց անցել էր ճիշտ 1200 և մի քանի տարիներ, երբ երևան եկան Բաբն ու Բէհա-Ուլլահը, որ պիտի վերանորոգէին մահմեդականութիւնը և մաքրէին կրօնը նրա մէջ մտած ստութիւններից ու այլանդակութիւններից...

—Բայց, բորբոքուեց Մովբէդը—այդ ինչե՞ր ես ասում, ծերունի, ինչի՞ց գիտես, որ Հուշիդուրը նոյնն է, ինչ որ Բէհա-Ուլլահը և ոչ թէ այն, որ շուտով գուցէ յայտնուի և ջնջելով պարսիկ ժողովուրդն հիմնովին ապականող կրօնը—մահմեդականութիւնը, կանգնեցնի մեր հայրենիքում Աւեստայի վարդապետութիւնը, կրակով և ջրով մաքրելու համար դարևոր անմաքրութիւնը ..

—Կրակով և ջրո՞վ... ժպտեց տխրութեամբ Միրզա Ասադը—Դա չէ՛, որ մաքրում է անմաքրութիւնը, այլ սէրը, մեղմութիւնը, քաղցրութիւնը ու ոգեորուած նուիրուելը իր գործին... Ասուած է. «Երանի նրան, որ անդադար ողորմած է և բարի և հեռու է բարկանալուց ու նեղանալուց»...

—Ո՛չ. պնդեց Մովբէդը—Անրիմանի, չարութեան, խաւարի և ապականութեան միակ ոչնչացնողը Միհրան է և նրա մարմնացումը—կրակը. որ արագ և առանց հետք թողնելու՝ ջնջում է ամեն աղտ, լուսովը հալածում խաւարը, ջերմութիւնով՝ սպանում սառնութիւնը, աճեցնում, բեղմնաւորում... Որովհետև, ասուած է.—Այն բոլորը, որոնք արգելք են բնութեան և մարդուս զարգացման—չար են և Միհրան կը մաքրի նրանց իր կայծով, կը ոչնչացնի չարը իր բոցով, կը ջնջի անմաքրութիւնը իր մի ակնարկով»...

Խոսքէվը, որ մինչ այդ լուռ՝ լսում էր երկու ծերունիների տաք վիճաբանութիւնը և քայլում էր երկու-

սից քիչ ետ, քշեց ձին, առաջ եկաւ և յանկարծ միջամտելով՝ ասաց.

—Այդպիսի դէպքում, հայր ատարուա՞ն, ջուրը չէ կարող մաքրող լինել, որովհետև նա ինքը ապականուող է. կրակը, այո՛, ոչ մի աղտ, ոչ մի մթութիւն, խաւար՝ չէ վերցնում...

—Ջուրը աղտ չէ վերցնում. ասաց Միրզա Ասադը —սա միւսիւլմանների հաւատալիքն է. սակայն սխալ է ասուած. պէտք էր ասել ջուրը աղտը մաքրում է, բայց և ինքը աղտոտւում է. աղտին կպած ջուրը անմաքուր է...

—Եւ նրան պղծողը՝ համրիդ (մեղաւոր)... Զը պէտք է ապականել ջուրը աղտոտութեամբ։

—Ուրեմն և չը պիտի՞ լուացուել. հարց տուաւ Խոսրէվը։

Մովբէդը մի զայրացած շարժում գործեց. երկրորդ անգամն էս, որ երիտասարդը իր սառը. կտրող տրամաբանութեամբ շփոթեցնում էր նրան։ Բարեբաղդաբար Խոսրէվը—ինքը եղաւ նրան ազատող՝ պատասխանել չը կարողացողի դրութիւնից։

- Ես մտածում եմ. շարունակեց նա—որ կրակը, յիրաւի, այն մեծ. կենսատու, շանթիչ, մաքրող, կեանք տուող և ոչնչացնող զօրութիւնն է, որ բղխում է արևից... և արևը, ահա այն, որ այրում է մեզ այժմ և որ գուցէ այս իսկ այրելով՝ օգտակար է լինում մեզ - այն մեծ զօրութիւնը, մեծ ոյժն է, որից գոյացել է ամեն արարած և դէպի որը պիտի դառնայ ամէն սիրտ... Միհրան—ահա միակ աստուածը... Թող ամէն մարդ զօրեղացնէ Միհրի թագաւորութիւնը և արծարծէ, մեծացնէ նրա սրբազան մարմնացումը—կրակը մեր կեանքի, երակների, սրտի և մտքի մէջ .. Ա՛յս է աղօթքներից մեծագոյնը... Կրակ, ամէ՛ն տեղ, ամէ՛ն բանում և ամէ՛ն ժամանակ...

Յետոյ, երբ երկու ծերունիները մի տեսակ զարմացած հետաքրքրութեամբ լսում էին երիտասարդի ոգևորուած այդ խօսքերը, սա կանգ առաւ պահ մի, դէմքը կնճռեց, տրորեց ճակատը, նայեց Մովբէդին ու ասաց շեշտելով.

—Եւ այդ պատճառով, հայր ատարուան, ես ուզում

եմ ազէրՓէզա [1]) դառնալ...

Դու .. գոչեց Մովբէդը ապշած — ատրուշանի սպասաւոր... ատրաւան...

— Ո՛չ. ասաց Խոսրէվը աւելի հանդարտ — ոչ սպասաւոր, այլ սրբազան կրակը վառող, արծարծող՝ լինէր դա խոսքով, արիւնով և կամ մտքերով... կուզէի այնքան արծարծել, մեծացնել կրակը, որ լափէր ինչ որ անմաքրութիւն է, չար, խաւար, ինչ որ վիշտ է և արցունք...

Մովբէդը չէր կարողանում դեռ սուչքի դալ զարմանքից։ Երբէք այդ լուռ, ամաչկոտ և վերջերս միայն քիչ «խելքի եկած» երիտասարդից չէր սպասում այդպիսի խօսքեր, այն էլ այդքան վճռականօրէն, այդքան խորունկ ասուած։

Զգում էր, որ մի մեծ շունչ կարծես մեծացնում էր երէկուայ խղճուկ տղային ու պատկառելի, ուշադրութեան արժանի դարձնում նրա թռիչքները։

Սակայն փորձեց — աւելի իր շփոթութիւնը ծածկելու համար — հանդարտեցնել նրան։

— Հանդարտիր, իմ որդի. ասաց նա մեղմ — զուցէ շողը նեղում է քեզ, գրգռում...

Երիտասարդը մտրակը շառաչեցրեց օդի մէջ, զայրալիր մի շարժում գործեց և խիստ ձայնով առաց.

— Թող, հայր ատարուան, բաւական է ինձ երեխայի տեղ դնելը... ես հիւանդ չեմ... ձշմարիտ է, շշմած էի, ուղեղս յոգնած, մշուշապատ, բայց Զենտաւեստան և մեծ վարդապետի խօսքերը պարզեցին մտքերս.. Ուզում եմ ազէրՓէզա դառնալ — միակ մեծ գործը, որն ինքը Զրադաշտը չէր ղլանալ կատարելու... Ուզում եմ անձամբ կանգնել սրբազան կրակի առաջ — և ոչ իսկ բերանս փակել [2]). ուզում եմ հօմի [3]) ճիւղերի, հարկ եղած ժամանակ իսկ մարդկային դիակների ճարճատիւնով մեծացնել նը-

---

[1]) Սրբազան կրակը արծարծող, աւելացնող։

[2]) Կրակապաշտների քուրմերը սրբազան կրակի առաջ աղօթելիս միշտ կապում են բերանները, որպէս զի բերնի աղտոտ շունչը չը պղծի Նրան։

[3]) Նուիրակտն մի բոյս, որի ճիւղերից ձեռքերն են բռնում աղօթելիս։

բան, ժողովրդի համար աւելի պայծառ և զօրեղ լոյս հանել նրանից, աւելի մեծ ջերմութիւն տալ կեանքին և կամ... և կամ այրել, մրկել մարդկանց կրակի կայծերով, ուռճացնող մոխրի վերածել՝ նրանով մի նոր, աւելի ուժեղ, կենդանի և շարժուն ու տիրապետող ցեղ գոյացնելու համար... Այդպէս արաւ Զրադաշտը, այդպէս է ասում Աւեստան... Ես ուզում եմ մեծ վարդապետի քայլերն ու կռիւը շարունակել խաւարի դէմ, ես ևս ուզում եմ Ահուրա-Մազդային հարցուփորձել, հարցնել և դեռ շատ բաներ իմանալ...

Մոլրէդը բերանը բաց, յուզմունքից՝ մեծ ակնոցները ճակատին հանած, կարմրած ու դողդոջուն՝ ականջ էր դնում։ Եւ նրան թւում էր թէ խօսողը այլ ևս Խոսրէվը չէր, այլ մի ինչ որ զօրեղ և հսկայ ոգի, որ լեռներից ժայռեր էր գլորում ճահիճի մէջ՝ ցնցելու համար մինչև ամենախոր տիղմերի շերտերը... Եւ նրան թւում էր, որ ինքը փոքրացել է, աննշան մի բան դարձել և երիտասարդը Զրադաշտի ոգիով լեցուած՝ որոտում է հինաւուրց մեծ կրօնի վարդապետութեան խօսքերը այնքան ուժգին, այնքան լուսապայծառ, որի նման նա երբէք չէր ըմբռնել տարիներով անգիր կրկնած ժամանակ..

Ու կարկամած, ոչ իսկ մի բառ արտասանեց. ոչ իսկ կարողացաւ շնչել, այլ լուռ, վախեցած՝ նայում էր երիտասարդին։

Ծերունի *քաջին* էլ զարմացած էր։ Մեծացած Բէ. հա-Ուլլահի մեղմ, բարի և սիրալիր վարդապետութեամբ և «Քիթաբը-աղդասի» ողորմասէր. խաղաղասիրտկան ոգով՝ առաջին անգամն էր լսում այդքան կատաղի և այդքան զօրեղ խօսքեր, որոնք, չը նայելով իրենց խրատութեան գրաւիչ էին, ոգևորող և մարդու սիրտը տաքացնող։

—Ուզում եմ դառնալ... շարունակեց Խոսրէվը՝ աչքերը դէպի հորիզոնը և առանց լսողներին նայելու—ուզում եմ Ահուրա-Մազդային հարց տալ *Վօհու-Մանօի* [1])

---

[1]) *Մեծ-միտքը*. Օրմուզդի գործակալ հրեշտակապետներից—ամշասպանդներից մէկը, որի միջոցաւ Զրադաշտը գնաց Օրմուզդի մօտ և նրան հարցեր տալով՝ ստացաւ իր հիմնած կրօնի բոլոր պատուէրները։

միջոցաւ. այն Վօհու-Մանօն, որ ամէն մի ազէրֆէզայի, ճշմարիտ և անձնազոհ գործողի սիրտն ու միտքն է գըրաւում և ամէն ցանկացողի՝ երես առ երես է անում ստեղծող բարութեան... Ուզում եմ հարցնել թէ ինչու են մարդիկ միմեանց բզկտում, երբ նրանք կարող էին ձեռք ձեռքի տալով՝ մի օրուայ մէջ կործանել Զարն ու խաւարը .. հարցնել թէ ինչու կայ յաջորդաբար լոյս և խաւար, երբ մարդիկ յարատև լոյսի պէտք ունին... և վերջապէս, որը գլխաւորն է, ինչու կան խոնարհած գլուխներ, կրուած ողնաշարներ և նրանց վրայ դրուած ոտներ ու ինչող մտրակներ... Այս բոլորը, այլ և շատ ուրիշ հարցեր ուզում եմ Ահուրա Մազդայի ոտքերի մօտ դնել և սրբազան կրակն արծարծելով, խաւարի դէմ այնքան մեծացնել նրան, որ այլ ևս վերջը գայ Զարի, կեղտի և մութի թագաւորութեան. .

Ու լռեց։ Բայց շրթունքներ դեռ շարժում էին, աչքերը դեռ հորիզոնին էին յառած։

—Հուշիդուր... [1]) մռմռաց Մովբէդը գլուխը խոնարհեցնելով—փառք քեզ, Եազդան, չը պիտի մեռնեմ, առանց տեսնելու մի նոր Զրադաշտի առաջին քայլերը...

—Բաբի ոգին է... ասաց Միրդա Ասադը – ճշմարտապէս Բաբի ոգին, թող օրհնեա՛լ լինի նրա յիշատակը...

Իսկ քամին ժողովում էր ներքիներից՝ ճանապարհի ամբողջ փոշին և պտոյտներ գործելով, դեղին ու շարժուն սիւնակներով, գալիս էր սուրալու նրանց կողքից՝ մշուշի մէջ ողողելու համար ամբողջ շրջակայքը...

XI.

Զլրգէնդէից սկսած, Մովբէդի և երիտասարդի հետևից, առանց ինքն իրեն երեսն հանելու կամ իր վերայ ուշադրութիւն հրաւիրելու, պնդում էր մի ձիաւոր։ Նրան նկատել էին, բայց համարել էին պարզ ճանապարհորդ, որ յիրաւի, միշտ հեռու էր մնում, քայլում հանդարտ և աչքերը փակ՝ կարծես ննջում էր ձիու վրայ։

---

[1]) Զրադաշտականների սպասած մեսսիան։

Մայրաքաղաքի դարբասը երեալու ժամանակ սակայն, այդ ձիաւորը քիչ աւելի մօտ եկաւ, դռան առաջ խրամի վրայ ձգուած կամուրջի կամարին կռթնած մի մարդու ձայն տուեց, մի քանի խօսք փոխանակեց նրա հետ շշուկով, յետոյ թողեց որ այդ մարդը արագ քայլերով քաղաք մտնէր ձիաւորներից առաջ անցնելով և ինքը բաւական մօտից հետեւեց խմբին։

Դարբասը, նրա լայն, ծածկոցաւոր դաւիթը, այլ և կամուրջը գրէթէ դատարկ էին։ Չէին երևում նոյն իսկ դուռը պահպանելու պաշտօնն ունեցող պահակները։ Խօլերան աւերել էր կարգապահութիւն, ցրիւ տուել առանց այն էլ անկարգ պարսիկ զինուորներին, իսկ եթէ մնացել էին մի քանիսը, նրանք էլ երևի շոգից էին փախել։

Գաւիթի խորքում միայն մի ինչ որ շապկանց մարդ երեսի վրայ փռուել քարերի վրայ՝ մնացել էր։ Խոլերայով բռնուած էր և կամ ննջող, ոչ ոք չուզեց իմանալ։ Պառկած լինելը բաւական եղաւ կասկած յարուցանելու և Մովբէդը մտրակեց ձիուն։

— Անցնենք շուտ, ասաց նա զուցէ խօլերայից զարնուած է...

Ու քշեցին։ Սկզբի թաղերում դարձեալ ամայութիւն էր։ Իսկ յետոյ, երբ երևեցան քիչ ու շատ կանոնաւոր փողոցներ—տեսարանը քստմնելի դարձաւ։

Այս-այն պատի տակ, այս-այն ծառին կրթնած և կամ դռների մօտ, փողոցներում ընկած տեսնւում էին դիակներ, ցաւից գալարուողներ, ցնցոտիների մէջ պարուրուած հիւանդներ՝ որոնք «ջուր» էին հայցում... յետոյ՝ լաց, կական, տների խորքերից՝ ճիչեր... Ապա դարձեալ ամայութիւն և քիչ յետոյ էլի ընկածներ, ճիչեր և փողոցի մէջ, ջրերի եղեբքներին մնացած անտէր դիակներ, որոնք կեցել էին անթաղ, որովհետև բոլորը փախել - խուսափել էին սոսկալի աւերիչից...

Քանի խորն էին մտնում մայրաքաղաքի կրծքում, այնքան աւելանում էին այդ բոլորը կամ կատարեալ ամայութեան և կամ ճիչ, դիակ, լաց և փախուստ...

— Կողմնակի փողոցներից, Եպոդգերդ, գոչեց Մովբէդը՝ առջևից գնացող ծառային քշիր կողմնակի փո-

զոցներից, անգլիական դեսպանատան կողքով, Եւրոպական թաղերից...

Ծառան ձիու սանձը դարձրեց և մտաւ մի նեղ փողոց։

—Աղան շատ խելօք մտածեց... լսուեց մի ձայն ետևից—այդպէս թէև երկար կը լինի, բայց աւելի ապահով։

Ծերունին դարձաւ։ Խօսողը իրենց ետևից եկող ձիաւորն էր, ով յարմար առիթը գտել էր մօտ գալու և նրանց հետ քայլելու։

—Ես էլ վախենում եմ, ինչ մեղքս պահեմ. շարունակեց խօսողը։

—Խօլերան հնձում է անաստուած կերպով... օխ, օխ, օխ... Ով գիտէ ինչ հալի մէջ է այժմ բազարը... բաց կը լինի՞ նա...

—Որ վախենում ես, ինչու ես քաղաք մտել. հարցրեց Խոսրէվը։

—Ի՞նչ արած, իմ աղա, հաց պիտի ուտի՞լ թէ ոչ... Դէ՛հ, ես էլ ծառայ մարդ եմ, երբ իմ աղան ինձ դժոխք էլ ուղարկի, գնալ պարտաւոր եմ... չը գնամ կը սպանի... ի՞նչ արած։

—Դու ո՞րի ծառան ես. հարցրեց Մովբէդը։

—Օ՛խ, օխ, յարգելի ծերունի, մի սարսափելի, խիստ և անօրէն աղա ունեմ ես... տեսէ՛ք չի խնայում ինձ, կաոես ես էլ մարդ չեմ... ուղարկում է որ բաղաքից բերեմ, երևակայեցէք ինչ... խանումի համար կտորներ... Ահա՜, այսպէս են դրանք... թէկուզ մեռիր, հիւանդութիւնը թող խեղտէ քեզ, բայց խանումի բէֆը մախմար, ատլաս է ուզում... պիտի գնաս, սատկես էլ պիտի գնաս...

—Ուղածներդ չես գտնիլ այժմ. բազարն ամբողջ փակուած կը լինի. միջամտեց Միրզա Ասադը։

—Այո՛... ասաց ձիաւորը քիչ շփոթուած—ցաւում եմ, որ իզուր եկայ... բայց գնամ անձամբ տեսնեմ, էլի... Դուք էլ երևի բազարում գործ ունիք. իսկ այս աղանեՐը որ կողմն են շնորհ տանում... նո՞յնպէս բազար... ցոյց տուաւ նա Մովբէդին և Խոսրէվին։

—Շրաղ-զազի—խիաւանը... ասաց Խոսրէվը։

—Իրաւ... ուրեմն միասին ենք դեռ. ես էլ այն կողմն եմ գնում, գոնէ գնամ մէկ մերոնց տեսնեմ. ողջ են մնացել, թէ մեռել են և տուն ու տեղը անտէր թողել...

Բայց Մովբէդը չը թողեց այլ ես շարունակելու, ակնոցների տակով նայեց նրան խստութեամբ և ասաց.

—Ծառայ ես, ծառայութիւնդ իմացիր... առաջ գնա։

Յետոյ ձիու սանձը քաշեց, նշանացի արաւ Խոսրէվին՝ նոյնպէս կանգ առնելու, ձեռքով ցոյց տուաւ ձիաւորին ճանապարհը և ասաց իշխանաբար.

—Գնա...

Ձիաւորը փորձեց ժպտել, կատակի պէս հասկանալ ձեացնել, սակայն Մովբէդի սառը և խիստ դէմքը ստիպեց նրան լրջանալու, յետոյ մտրակեց ձիուն և անհետացաւ նեղ փողոցի պտոյտների մէջ։

- Այսպէս լաւ է. խօսեց ծերունին, երբ ձիաւորն այլ ևս չէր երևում—այժմ քայլենք. կասկածելի մարդ էր երևում այդ անպիտանը։

- Լրտես... ասաց Խոսրէվը։

—Չը գիտեմ. խօսեց Մովբէդը— ինձ անկեղծ չը թուեցին նրա խօսքերը... աւելի լաւ է հեռու մնալ...

Յետոյ լուռ՝ քայլեցին ու քիչ անցած՝ հլնում էին անգլիական դեսպանատուն իջնող փողոցի վրայ, որ լայն և ուղիղ՝ գնում էր միանալու կրոպական մեծ փողոցին։

Այդտեղ ոչ մի ձայն, ոչ մի դիակ։ Փողոցը մաքուր դռները փակ, անցուդարձ՝ բոլորովին։ Դեսպանատան մեծ դուռն իսկ փակ էր և խումբը մարդկանց հանդիպեց միմիայն ծառուղին մտնելուց յետոյ։ Այն էլ հազիւ մի քանի պարսիկների, որոնք ծառերի տակով շտապմամբ անցնում էին։

Ամէն բան, ըստ երևոյթին լաւ էր գնում։ Մովբէդին թէև ամէնքը ճանաչում էին մայրաքաղաքում, բայց դեռ ոչ մի անցորդ չը համարձակուեց ոև է բառ ուղղել նրանց, ոչ ոք չը հայհոյեց գէբրերին, ինչպէս պատմել էր Նազդերտը։

Այդպէս չեղաւ սակայն փողոցի այն ծայրում, որից

յետոյ Թոփխանէի մէյդանը պիտի դուրս գային։ Այդտեղ միշտ լինում են պատերի տակ, ստուերների մէջ խումբ խումբ զինուորներ, որոնք նստած շապկանց՝ ծխում են. և կամ զանազան մանրավաճառներ, որոնք մրգեղէն են պտտեցնում բազմութեան մէջ։

Այդտեղ անցուդարձը աւելի շատ էր, չը նայելով որ դարձեալ, պատերի տակ, անկիւններում, երևում էին ընկած հիւանդներ, այլ և յանկարծ մէկը երերում էր, կռթնում ծառի և տեղն ի տեղը նստում։

Մովբէդն զգաց, որ մէյդան դուրս գալուն պէս, յայտնուելու էր ամեն ինչ։ Այդպէս էլ եղաւ։

— Տեսէք, գոչեց մի զինուոր պառկած տեղից— գէբրերի մօլլան է անցնում։

— Նահլաթ... աղաղակեց մի ուրիշը, որ շապիկի մէջն էր զննում—շուն գէբրեր...

— Թունաւորողներն են դրանք... ասաց դարբասի հովին իր շամիչը ծախող մրգավաճառը— ասում են, որ դրանք թոյն են խառնում ջրերի հետ և այդ թոյնն էլ իրենց կռատներումն են շինում գիշերով...

— Իրա՛. գոչեց առաջին զինուորը— թոյ, որ այդպէս է, մի քարով ջախջախեմ թունաւորողների մեծին...

Մովբէդը, որ լսել էր նրան, դարձաւ, ուղիղ զինուորին նայեց իշխանարար և ասաց.

— Դու երևի սիրում ես երբեմն յիմար լինել, բարեկամ... ինչու՞ ես այդպիսի խօսքեր խօսում...

— Դուք թունաւորում էք մեզ... գոչեց մրգավաճառը։

— Եւ դուք նրան հաւատո՞ւմ էք, տխմարներ, ասաց Մովբէդը— ինչ շահ ունինք մենք այդպիսի չարագործութիւն անելու մէջ։

Ծերունին, խօսելու համար, կանգնեցրել էր ձին և դա մի մեծ սխալ էր նրա կողմից, որովհետև անցորդները, այլ և դարբասի կողքի խանութների առջև գտնուողները անմիջապէս կիտուեցին նրա շուրջը։

— Մտրակեցէք ձին, տէր, կանչեց Եազդգերտը այլայլուած և վախեցած.— մտրակեցէք, մի կանգնէք։

Մովբէդը շարժեց սանձը, զգաց, որ անխոհեմութիւն էր արել, սակայն, քայլելուց առաջ, նա դարձաւ

կիտուող ամբոխին և ասաց սիրալիր.

—Ձեզ խաբել են, բարեկամներ... ես և իմ ժողովուրդը երբէք ձեզ վատ չենք կամեցել...

—Ստո՛ւմ ես. կանչեց մէկը, մի պատանի—չուն գէբրերը թունաւորուում են բոլոր ջրերը։

—Ցիմար էք դուք. կրկնեց Ծերունին—միթէ գէբրերը չեն մեռնում խոլերայից... մահը ձեր աղտոտութիւններից է յառաջանում, չար ոգին աղտոտում է ձեզ և աղտը սպանում... մաքուր եղէք և մահը ձեզ չի մօտենալ...

Ու մտրակեց ձիուն։ Խոսրէվը հետեւեց նրան։ Միրզա-Ասադը վաղուց անհետացել էր։ Նա քշել էր ձին և շտապել էր խուսափելու, վախենալով որ իրան էլ գէբր չը համարեն։

Սակայն քիչ հեռու, նրա փոխարէն, լուռ և ժըպտուն կանգնել էր նրանց հետեւող ձիաւորը։

Երբ Ծերունին և Խոսրէվը սկսեցին հեռանալ, ամբոխը, որ հետզհետէ սառուարանում էր, նախ սկսեց շուացնել նրանց ետեւից, յետոյ հայհոյել և հուսկ ուրեմն, մի պատանի վերցրեց գետնից քար և շպրտեց։

Այդ նշանը բաւական եղաւ։ Քարերի կարկուտ, աղաղակների հետ՝ սլացան Ծերունու կողմը։

—Սպանեցէ՛ք գէբրերին!..

—Մահ թունաւորողներին!...

—Միւսիլմաններ, մի թողնէք, որ այդ շները շարունակեն կոտորել Մուհամմէդի զաւակներին։

Ու ճիշ, լուտանք, բարեր՝ նախ հեռուից, ապա, մի քանի սրիկաների շնորհիւ մօտեցած՝ գնացին շրջապատելու երեք ձիաւորներին։

Լրտես ձիաւորը, որ տեղիցը չէր շարժուել, այդ տեսնելով՝ նախ շուարած շուրջը նայեց, յետոյ մէ՛կէն արշաւակի գնաց դէպի պահակները և գոչեց սպային.

—Ձէ՞ք տեսնում ինչ է կատարուում այնտեղ... Ձահը ձեր հոգին կը հանի, եթէ թողնէք որ և է վնաս հասնի այդ Ծերունուն... իսկ անգլիական սէՓիրի ձեռքից չէք ազատուիլ...

Սակայն ի զուր եղաւ ամէն ջանք։ Պահակներն իսկ վախեցան միջամտելու և Զրաղը-գազ-խիաւանի դռան

մօտ, պարսկական—պետական բանկի առաջ, հայհոյանքների և քարերի կարկուտի տակ, ծերունին, երիտասարդը և ծառան ստիպուեցին ձիերից ցած իջնել։

Շրջը-գազի փողոցից էլ, Նասրի-խիաւանից նոյնպէս, դուրս եկան խմբեր, միացան առաջիններին, իմացան բանն ինչումն էր, աղմուկն ու հայհոյանքը սաստկացաւ, պահակները կծկուած և ոչ իսկ շարժում գործեցին...

Այդ միջոցին էր, որ համարձակներից մէկը բռնեց Եազդգերտի օձիքից և գոռաց նրա երեսն ի վեր.

—Ձէ՛ն դէբբ, իմ որդիներին, իմ կնոջն էլ քո թոյնը սպանեց, երևի դեռ ինձ էլ ես ուզում մահացնել...

Եազդգերդը մի զօրեղ ցնցումով աղատեց օձիքը և իրեն նետեց դէպի բանկի դուռը։

—Այս կողմը, տէ՛ր, գոչեց նա Մովբէդին, ապա դարձաւ դէպի բանկը և նրա առաջ կանգնած երկու պահակներին ասաց.

—Պաշտպանեցէք Բարուն Մանուկջիին, նրան ուզում են սպանել...

Ահա այդպիսի բոպէին էր, որ յանկարծ ամբոխի մէջ երևան եկաւ մի երիտասարդ, ուժգին հրամաններով ճանապարհ բաց արաւ իրեն, մօտեցաւ ծերունուն, ձեռքերը պարզելով պաշտպանեց նրան իջնող կռուփների դէմ և որոտալից ձայնով գոռաց ամբոխին.

—Դադարեցէ՛ք, շներ, հեռու քաշուէք իսկոյն...

—Բժիշկն է, Ձիր Ալի խան բժիշկը... կանչեցին մի քանիսը ետ քաշուելով։

—Ետ քաշուէ՛ք, ժողովուրդ. լսուեցին աղաղակներ—մեր բժիշկն է, նրա դադաստանին թող յանձնենք դործը։

—Այո, ես եմ գոռաց երիտասարդը—ետ քաշուէք և մի դպչէք այս ծերունուն ու երիտասարդին, ապա թէ ոչ՝ կը թողնեմ, որ ամէնդդ էլ շների պէս սատկէք, ոչ դեղ կը տամ, ոչ ձեր տները կը գամ...

Ամբոխն սկսեց շրջանը մեծացնել։ Բժշկին միացան շատերը. որոտալից ձայներով ու հայհոյանքներով ետ մղեցին սրիկաների, մի քանի կռուփներ տեղացին սրա նրա վրայ և քիչ յետոյ, կազմուած մեծ շրջանում մնացին ազատ՝ երեքը միայն։

Այն ժամանակ բժիշկը ժպտուն՝ ձեռքը պարզեց նախ ծերունուն, յետոյ Խոսրէվին և ասաց.

— Ցոյս չունէի տեսնել ձեզ այս օրում, բարեկամներս... բայց, հոգ չէ, տգէտ, սոսկալի տգէտ և վշտացած է այս ամբոխը... ներեցէ՛ք...

Նրա վարմունքը թողեց իր ազդեցութիւնը։ Ամբոխից մէկը, որ աւելի մօտ էր, ասաց բժշկին.

—Բժշկապետ, այս յիմարները ասում են իբր թէ դրանք գէբրեր են, թունաւորում են ջրերը և ուզում են միւսիլմաններին ջնջել... ճիշտ է...

—Յիմարներ էք դուք, անասուններ, կանչեց բժիշկը զայրագին՝ ամբոխին դարձած.— ես հազար անգամ ասել եմ ձեզ, որ մեղաւորը դուք էք, թունաւորում էք ձեզ միմիա՛յն դուք, իսկ դուք դարձեալ այս և այն անմեղի օձիքից էք բռնում... Այս ծերունին շատ աւելի լաւ մարդ է, քան ձեզնից շատերը և ով ձեզ ասել է այդպիսի տխմարութիւններ, նա շուն է և ստախօս...

—Հաւատում ենք բեզ, հէքիմբաշի [1]), ասաց մէկը.— դու մեզ միշտ լաւութիւն ես անում, մեր վատ օրերին հասնում ես առանց ցաւից վախենալու, դու մեր պահապանն ես, սակայն ինչու հէնց ինքդ արգելում ես մեզ առուի ջուրը խմելու, եթէ նա իսկապէս թունաւորուած չէ...

—Դու խելքդ կորցրել ես, Փէրա՛ջուլլահ, կորցրել ես... ես արգելումեմ, որովհետև ջուրը կեղտոտւում է նրա մէջ լուացած հիւանդների շորերով, իսկ եթէ հրամայումեմ եռացնել յետոյ խմել—դա նրա համար է, որ եռացած ջուրը մաքուր է լինում...

Մինչ այդ, օգտուելով ամբոխի քիչ խաղաղուելուց, Եաղգերտին յաջողուել էր մօտենալ Մովրէդինու Խոսրէվին և քարշ տալ դէպի բանկի փակուած դռան ծածկոցի տակ։

Բժիշկն այդ նկատել էր և դրա համար էլ աշխատում էր խօսակցութեան բռնել ամբոխին, որ այժմ հետաքրքրուած, սեղմում էր միմեանց, նրա ասածները լսելու։

---

[1]) Բժշկապետ։

Ազատուել էին Մովբէդն ու Խոսրէվը։ Բժիշկը ազատել էր նրանց։ Մնում էր այժմ եթէ ոչ ցրուել ամբոխը, գոնէ իրեն դուրս նետել նրա միջից։

Եւ բժիշկը աչքի տակով երբ նկատեց, որ հեռացել էին ամբոխի միջից Մովբէդն ու ընկերները, մէջքը դարձրեց ամբոխին ու ասաց.

—Դէ՛հ, այժմ կորէք, գնացէք։ Ժամանակ չունիմ ես ձեզ մի բանը հարիւր անգամ ասելու... Թողէք ինձ գնամ, հիւանդներ ունիմ... Ֆրանգ հիւանդներ...

—Ուրեմն անհաւատներն էլ են մեռնում, կանչեց մի պարսիկ։

—Եւ ինչպէ՞ս... ծիծաղեց բժշիկը.—աւելի շատ. դուք ձեր կեղտերով նրանց էլ էք թունաւորում, անպիտաններ...

—Իրաւունք ունի հէքիմբաշին. ձայնեց մէկը—մենք ենք անպիտանները, ինչու ենք իզուր մեղադրում սրանցնրան։

Յետոյ ամբոխը լուծուեց, ցանցառացաւ և տասը րոպէ չանցած՝ բանկի առաջը դատարկուել էր։ Հրապարակում այս այն կողմ, ստուերների մէջ միայն մանր խմբեր մնացին, որոնք քիչ յետոյ հեռացան այլ ևս։

Բժիշկն անմիջապէս բանկի դռան մօտեցաւ, բաշեց դէպի մի անկիւն Մովբէդին և Խոսրէվին ու ասաց.

—Իզուր էք բաղաք եկել, բարեկամներ. բայց քանի որ եկել էք, համեցէք ինձ մօտ գնանք առ այժմ, տունը մօտ է...

—Ո՛չ, խօսեց Մովբէդը—ինձ հարկաւոր է իմ ժողովրդի հետ տեսնուել նախ...

—Եւ որտեղ կը գտնէք նրանց այժմ. ծիծաղեց բժիշկը— ով գիտէ ո՞ր ծակը մտած կը լինեն...

—Եապգերտը կը գտնէ...

—Լաւ ուրեմն, թողէք, որ Խոսրէվը գոնէ ինձ մօտ լինի այսօր։

Մովբէդը դէմքը կնճռելով՝ նայեց նրան կասկածանքով։ Բայց բժշկի ժպտուն ու պարզ դէմքը անմիջապէս փարատեցին ամէն մտահոգութիւն և նա ասաց.

—Դուք ի հարկէ կը պաշտպանէք նրան ամէն փորձանքից...

Խոսրէվը նայեց Մովբէդին մի այնպիսի հայեացքով, որ ծերունին դարձեալ զգաց այն, ինչ որ ճանապարհին զգացել էր. երիտասարդը մարդ էր եղել, խելահաս և աւելի ոյժի տէր։

—Գնա ուրեմն, բժշկի հետ, որդիս, միայն մի մոռանալ, որ ազէրՔէզան պարտաւոր է միմիայն սրբազան կրակին նուիրել իրեն... ուրիշ ոչ որի...

—Չեմ մոռանում. ասաց Խոսրէվը— երեկոյեան, երբ պէտք կունենաս, պիտի տեսնես ինձ իմ ծառայութեան մէջ...

Յետոյ երկու երիտասարդները քայլեցին դէպի Նասրի—խիաւանը, մինչ Մովբէդն ու Եագդկերտը արագութեամբ գնացին Զրաչ-գազի փողոցի ուղղութեամբ։

Քայլելիս երիտասարդ կրակապաշտը մի տեսակ նոր յուզմունքով էր գնում։ Բժշկին տեսնելուն պէս՝ յիշել էր Զոհրայի կողմից իրեն եկած խօսքերը և բժշկի բերնով ուղարկած յանձնարարութիւնը։ Այժմ, թուեց, որ գնում էին նրա մօտ։

Չը նայելով դրան, զգաց որ շուկայից, Այիշէին հետևող և Նասրուլլահ խանի հարեմում, գեղեցիկ կնոջ զգուանքների տակ հաճոյքը վայելողը չէր այլ ևս ինքը. այժմ այլ ևս սիրտը չէր տրոփում։ Նախկին Խոսրէվը չէր, որ խօսում էր նրա մէջ, այլ մի ինչ որ նոր մարդ, որ աւելի սառնութեամբ և աւելի սակաւ հաճոյքով էր գնում, աւելի հետաքրքրուելուց, տեսնելու, թէ ինչ էր ուզում իրենից Զոհրան։

Ճգնեց պահ մի յիշել նրա դէմքը մանրամասնօրէն։ Գեղեցիկ կին էր, այո, բայց այնքա՞ն գեղեցիկ, որպէս Այիշան, անքա՞ն կրքոտ և այնքա՞ն գրաւիչ...

Չէր յիշում. երազի նման էր գալիս աչքի առջև Դովշան-թէփէի ճանապարհը, կանգ առնող կառքը, ծեծուող ներքինին...

Որքա՞ն վաղ էր այդ. կարծես տարիներ անցած լինէին։ Մինթէ այդքան շուտ փոխուեց։ Եւ ինչու, ինչն էր, որ նրան հանեց մէկէն իր թմբութիւնից, հանեց կիսամեռ կեանքից և մղեց նրա մէջ հաստատութեան մի այնպիսի ոյժ, որ կարծես տասնեակ տարիներ անցած լինէին փորձառութեան, խորհրդածութեան բազմաթիւ

տարիներ...

Աւեոտան էր. նրա խորունկ կերպով ընթերցումը։ Ու չը կարողացաւ բացատրել։—Տարօրինակն այն էր, որ Զոհրայի վրայ միայն մի բոպէ էր մտածել և ահա այժմ միտքը ուրիշ բանով էր զբաղուած։ Դա՝ մի տեսակ բաւականութիւն պատճառեց նրան։ Ո՛չ. չէր ուզում այլ ևս նախկին անմիտ, պատանի Խոսրէվը լինել, որ սիրային արկածների, կանացի մեղկ զգուանքների համար էր միայն ապրում և հալւում էր Այիշայի մէն մի համբոյրի տակ...

Այդ միջոցին էր, որ բժշկի ձայնը դիպաւ ականջին և ընդհատեց խորհրդածութիւնը։

—Գիտէք. ասում էր նա—ձեր աջ ձեռքի ճկոյթին մի թանգագին մատանի եմ տեսնում... Դրա տէրը խնդրել է ինձ ձեզ յայտնելու, որ ետ է ուզում իր տուածը։

Խոսրէվը ցնցուեց և ուղղուեց։

—Դուք զարմանում էք, ժպտեց բժիշկը,—բայց ինձ ասել են, որ մատանին ուղարկուած է ձեզ պահելու այնքան, «մինչև որ նրա տէրը ուզի ձեզնից»... Մոռացել էք այդ։

—Յիշում եմ... թոթովեց Խոսրէվը—այնտեղ, մեծ ճանապարհի վրայ։

—Այո...

—Տարէք, ահա. ասաց Խոսրէվը և կամեցաւ մատանին հանել մատիցը։

—Ո՛չ այդպէս. ժպտաց բժիշկը—անձամբ պէտք է տալ...

Խոսրէվը սպասում էր դրան, սակայն յուզմունքը մեծացաւ և սիրտը սկսեց ուժգնապէս բաբախել։ Այդ զայրացրեց նրան։ Դէմքը կնճռեց, ջանաց զսպել իրեն և ասաց սառնութեամբ։

—Լաւ... այնտեղ, իրենց մօտ...

—Ո՛չ, մեր տանը, կինս նրա բարեկամն է։

—Ինչպէս կուզէք...

Բժիշկը զարմացմամբ զննեց Խոսրէվին։ Չէր սպասում, որ իր յայտնութիւնը այդքան սառը կերպով ընդունուէր։ Խոսրէվը զգաց, որ զննւում է և աւելի ոյժ տա-

լով, լիովին անտարբեր կերպարանք ստացաւ։

Բժիշկը այլ ևս ոչինչ չասաց, վառեց մի պապիրոս և սկսեց ծխել։

Հասնում էին Ճէմս-իլ- իմարէթին։ Ձէին իսկ նկատում, թէ ինչպէս մի ձիաւոր առանց ետ մնալու հետեւում էր իրենց և ձին բշելու ժամանակ, մի տեսակ շփոթուած, իրեն կորցրած մարդու պէս, այս—այն կողմն էր նայում և ճգնում էր խանութների, սրճատների առաջ նստողների մէջ որոնել ծանօթ դէմքի։

Ձէրգէնդէից Մովբէդի և Խոսրէվի ետևից եկողն էր։ Ձէր սպասում գործի այդպիսի ելքին և այժմ որոնում էր մէկին, երևի իմացանելու համար ուր հարկն էր, թէ երիտասարդը բոլորովին ուրիշ ուղուութեամբ էր գնում, քան ինչ որ ինքը կարծել էր։

XII.

—Այստեղ է. կանգ առաւ բժիշկը մի մեծ դռան առաջ և դարձաւ Խոսրէվին։—Համեցէք...

Երիտասարդը մտաւ։ Հետապնդող ձիաւորը մի ուրախ շարժում գործեց, յետոյ բաշուեց հեռու, սպասեց, որ բժիշկն ու Խոսրէվը ներս մտնէին, ապա մտրակեց ձին և ի զարմանս փողոցից անց ու դարձ անողների, սրընթաց գնաց նախ դէպի մէյդանը, ապա դէպի Շահ-Աբդիւլ-ազիմ թաղը։

Մինչ այդ, բժիշկը առաջնորդեց Խոսրէվին մի կոկիկ սենեակ, որի բաց պահարանները լի էին սրուակներով ու շիշերով, հրամցրեց նստել ու ասաց.

—Ներեցէք, որ առ այժմ իմ ընդունարանումս եմ նստեցնում ձեզ. սակայն, գիտէք, ես բժիշկ եմ մէկ և երկրորդ՝ թէ դուք և թէ ես ամբոխից ելանք, կպել ենք նրանց... չէի կամենալ հիւանդութիւն մտցնել տանս մէջ...

—Ի՞նչ էր ուզում ասել։

—Միայն մի քանի րոպէ... ախտահանել մեզ... ահա, փոքր ինչ կարբոլեան թթուատի խառնուրդ ջրի մէջ... սպասեցէք սրսկեմ ձեզ վրայ... ոչինչ, մի վախենաք... այդպէս... այժմ դուք ինձ նոյնը արէք... լաւ, ձեռներնիս լուանանք մէջը... վերջացաւ, համեցէք ներս

ուրեմն...

Ժպտելով ու ամենայն արագութեամբ ասածները կատարելուց յետոյ, բժիշկն առաջ անցաւ, կտրեց մի փոքրիկ բաց և երկուսն էլ մտան մի վարագոյրից ներս։

—Գիտէք. խօսեց նա, երբ անցել էին—մենք մըտնում ենք իմ հարեմխանան... ինչու կանգնեցիք... մի վախենաք, ես միայն մի հատ կին ունիմ, մի լաւ և խելօք կին, որ թէև երեսը ձեզ չի ցոյց տայ, —ինչ արած, դեռ չը կարողացայ համոզել նրան հակառակը—բայց, դռան վարագոյրի ետեից կը խօսի ձեզ հետ... իսկ փոքրիկ-սիրունիկ աղջկաս... օ, դուք նրան կը տեսնէք... Համեցէք... ահա իմ էնդէրունը... տեսնում էք, վարդի թփեր, աւազան... Ահա և աղջկանս ընկերը, եղջերուն... նկ այստեղ, մարդ... չես գալիս... այ դու անպիտան, օտար մարդ տեսար՝ զարմացել ես, հա... ոչինչ... ապա, ուր է տիրուհիդ... էյ, Սուսամբար, գայլ դառնաս դու, չես տեսնում, որ մարդ եմ, ներս եմ մտնում... այդպէս ես պահպանում հարեմխանաս, քեաֆթառ...

Այս վերջին խօսքերն ուղղեց նա մի պառաւ կնոջ, որ դուրս էր նետուել սենեակներից և օտար մարդ տեսնելով, շտապում էր ծածկուել վրայի վարդագոյն սաւանով։

—Լաւ, լաւ, այդքան մի ծածկուիլ, շատ էլ մէկ նայելու բան չես... Գնա՛, գնա խանումիդ ասա, որ հիւր ունիմ, որ թող թէյ, սուրճ, հաց, գինի... մի խօսքով, ամէն բան ուղարկի... Այս միւս, իմ սենեակը մաքուր է...

Պառաւը գլխով արաւ։

—Չի էլ խօսում անպիտանը, ծիծաղեց բժիշկը—ամաչում է, կարծես 16 տարեկան աղջիկ լինի... 16-ը շուռ տուր և ճիշտ դրա տարիքն է .. Համեցէք այժմ ներս գնանք... բայց, հը՞, գուցէ կուզէիք հէնց այստեղ, այս ստուերի մէջ, վարդերի մօտ...

—Այո, ներսը շոգ կը լինի։

—Դէ, ի հարկէ... էյ, քեաֆթառ... սպասիր, ուր ես գնում... ասա Մուրթուզային թող աթոռներ, սեղան քարշ տայ այստեղ... իսկ մենք առ այժմ մեր երկրի սովորութեան պէս կկզենք պատի տակ...

Ասաց, վերարկուի բղանցքը ժողովեց և կկզեց

տուերի մէջ։ Խոսրէվը տեղ բռնեց նրա կողքին։

—Քիւշիւկ խանումին ուղարկիր, էյ Սուսամբար... ասա հայրիկն է եկել... խանումին էլ ասա մէկ թող այս մեր գլխի վրայի սենեակը կայ և եթէ չի ուզում բարեկամիս տեսանելի մնալ, այդ վարագոյրը իջեցրու և այնտեղից թող խօսի մեզ հետ... Շուտ...

Յետոյ մի քրքիջ արձակեց և դառնալով Խոսրէվին ասաց.

—Այսպէս եմ ես, ինչպէս տեսնում էք... սիրում եմ ազմկել տանս մէջ... փառք Աստուծոյ, տանս մէջ ոչ մի դէպք չէ պատահել, ոչ հիւանդութիւն, ոչինչ... ամեն ինչ մաքուր է. ինչ որ գնում ենք, առանց եփ տալու՝ ոչինչ չի ուտուում իսկ պտուղ՝ երբէ՛ք... յարաբերութիւն՝ քիչ, մտնողը ախատահանում է նախ... ծառաների վրայ խիստ հսկողութիւն... ասենք միայն երկուսն են. այս քեաֆթառը և այն տղամարդը որ, տեսէք, ահա բերում է մեզ աթոռներ...

—Իսկ ինչպէս բան է, որ եթէ ոչ դուք, գոնէ ձերոնք ամառանոց չեն գնացել...

—Ամարանոց... Զիմրան, գիւղերը... Աստուած ոչ անի... Հաւատացէք ինձ, այդ գիւղերն ու Զիմրանն են աւելի, որ բերում են մեզ խօլերան... բազմութիւն, աղտ, անհոգութիւն մաքրութեան... Եւ յետոյ, մենք հարուստ էլ չենք... ես Զոհրա խանումին էլ խորհուրդ տուի տեղիցը չը շարժուելու... Ախր ինչու... Նրանց տունը մանաւանդ, որ մի ամբողջ շքեղ պարտէզ է, աւազաններով, շատրուաններով, զով, սքանչելի... իսկ Զիմրանի զանազան մարդկանցով, պտուղ, անհոդ և անգգոյշ կեանք... Նստենք այժմ աթոռի վրայ... դէ՛հ,

—Մուրթուզա, շուտ՝ որ անօթի ենք...

—Ո՛ւհ, ուհ, անհանգիստ մարդ... լսուեց յանկարծ նրանց գլխի վերևի լուսամուտից, որի առաջ իջեցրած էր մեծ բարակ վարագոյրը—ուհ... ինչ անհամբերն ես, մի՞թէ սպասել չես կարող քիչ...

—Ա՛հ, այդ դու ես, խանումս... գլուխը բարձրացրեց ժպտելով բժիշկը—վարագոյրի ետեւից... էլի... ախր ինչ կը լինի, խօ գեղեցկութիւնդ չեն խլիլ և կամ քեզ ուտիլ... ինչ որ է... ահա, ծանօթացիր բարեկամիս

հետ... գէբր է, գիտես...

—Գէբր... լսուեց տիկնոջ ձայնը—դու կատակ ես անում...

—Ինչու կատակ, կին, գէբր է, մի ճշմարիտ, իսկական գէբր, այս խաշող ու այրող արևին պաշտող գէբրը... ինչ է, խլտնեցիր... ամօթ է, ամօթ... քանի անգամ քեզ ասել եմ, որ գէբրերից լաւ մարդիկ, լաւ պարսիկներ չը կան այս երկրում, չէ...

—Գէբրը միւսիլման չէ, ասաց տիկինը,—և մեր մոլլաները ասում են, որ դրանք պիղծ են...

—Պիղծը իրենք—մոլլաներն են. ասաց խստութեամբ բժիշկը - ապա, մէկ լաւ նայիր, ով է կեղտոտը, սա, գէբրը թէ քո ամենամեծ մոլլան... ով է աւելի քաղաքավարի... և գիտես, մենակ սա չէ, որ այսպէս է, այն բանջարներ մշակողը, որի մասին ես քեզ պատմել եմ նրանք—բոլորն էլ մաքուր, բարի, խաղաղ... մի հատ հայհոյանք չես լսի բերաններիցը... ինչ անենք, որ արևն են պաշտում... ինչ է, դու չես պաշտում, ես չեմ պաշտում... որ արևն ու կրակը չը լինեն, ով կարող է մի բոպէ իսկ ապրել, հը... արևն է ամէն բանի ստեղծողը, մեծացնողը, կենդանացնողը և կրակը... Այս մարդիկ էլ պաշտում են. .

—Դարձեալ սկսեցիր շատախօսութիւնդ. ասաց կինը—չես թողնում, որ բարեկամդ էլ մի երկու խօսք խօսի...

—Հը՞, ինչ է, հաւանեցիր բարեկամիս... սիրուն է, չէ... տես կը նախանձեմ հա՜...

Եւ քրքջաց զուարթութեամբ ու աւելացրեց։

—Ահա՛, ես լռեմ... այժմ թող նա խօսի... բայց ինչ խօսի քեզ հետ ախր... նա գէբր, դու միւսիլման, նա «պիղծ», դու «մաքուր», նա դժոխքի բաժին, իսկ դու արքայութեան միակ տէրը... Ո՛ւֆ այդ մոլլաները, որ մեր էշի չափ խելք չունեն գլխների մէջ ..

—Աղան հայր ու մայր, քոյր կամ կին չունի... հարց տուաւ տիկինը։

—Ոչինչ չունիմ, խանում, խօսեց Խոսրէվը—մի մայր ունէի, նա էլ մեռաւ։

—Կին էլ չունիր... ինչու ուրիմն չէք պսակւում... գուցէ աղքատ էք... ինչ գործի էք...

—Դէ՛հ, արի և պատասխանիր. ծիծաղեց բժիշկը—աղան, խանումս, չի ուզում պսակուել, որովհետև չի ուզում. ադքատ չէ, որովհետև հարուստ է. ո՛չ մի գործ չունի, որովհետև փող ունի... իսկ մենք ճրը մի բան կուտենք և կը խմենք, թէ Աստուածդ կը սիրես...

—Սպասի՛ր... ձայնեց յանկարծ տիկինը—ասա ինձ, Զիր-Ալի, չը լինի՞ սա այն երիտասարդն է, որի մասին Զոհրան...

—Հա՛, գտար... ծիծաղեց բժիշկը—խելքդ ո՞րտեղ էր այսքան ժամանակ... չե՞ս տեսնում. մէկ լաւ նայիր... սիրուն, գեղեցիկ...

—Բայց չէ՞ որ նրա ասածը հիւանդոտ, լուռ...

—Ինչպէս տեսնում ես սխալուել է...

—Ապա ինչու՞ մինչև այժմ չասացիր ինձ... ը՛հ, անպիտան մարդ. սիրում ես չարչարել. . լաւ ուրեմն, դուք խօսէք, ես մի բոպէով ներս գնամ...

—Իսկ ուտելի՞ք, խմելի՞ք, խանումս... ծարաւ ենք ախր...

—Կը տան օշարակ... ես ուզում եմ Զոհրային իմաց տալ...

—Խելօք խօսեցիր. ես ինքս ուզում էի խնդրել բեկ... բայց տես, զգոյշ եղիր. հարկաւոր չէ ասել ճշտութիւնը. հէնց այնպէս, հրաւիրիր...

-Գիտեմ, լաւ, դու ինձ բան մի սովորեցնիլ...

Յետոյ լսուեց շորերի շփումն, վարագոյրը, որ կըծկուած էր՝ ուղղուեց և տիկինը հեռացաւ։

Մինչ այդ՝ ծառան ներսից սառոյցով օշարակ բերեց, և նրա ետեւից սենեակներից դուրս վազեց մի փոքրիկ, սիրուն աղջիկ, որ շտապով ցած իջաւ սանդուխներից գոռալով

—Հայրիկ, այդ դո՞ւ ես... չա՞ր հայրիկ, ո՞րտեղ էիր այսքան ժամանակ...

—Իմ փոքրիկ Նարգէզ... արի, մօտ արի...

Եւ այսպէս երկու երիտասարդները նախ օշարակ խմեցին, յետոյ ճաշեցին, բժշկի կինը դարձեալ եկաւ մասնակցելու նրանց խօսակցութեան ու ժամերը սահում էին անկատելի բոլորի, նոյն իսկ փոքրիկ Նարգէզի համար, որ շուտով բարեկամացաւ ու սկսեց խաղալ և

զուարճանալ Խոսրէվի հետ։

Բագի ստուերը մեծանում էր, կէսօրն անցել էր, երբ տիկինը, լուր ստանալով ուղարկուած մարդուց, ընդհատեց պահ մի իր խօսակցութիւնը, ներս գնաց և քիչ յետոյ եկաւ յայտնելու, որ Զոհրան խոստացել էր—մի ժամ յետոյ անպատճառ գալ։

—Ափսոս, որ հնարը չը գտայ հասկացնելու թէ ով կար այստեղ, ապա թէ ոչ՝ իսկոյն կը վազէր։

—Իսկ եթէ բոլորովին չը գայ. ասաց բժիշկը։

—Կը գայ. իմացրել եմ, որ մի տիկին է եկել ինձ մօտ և սպասում է իրեն՝ շատ կարևոր բաներ ասելու համար։

—Ա՛յ, այստեղ խելօք չես եղել. եթէ իմաց տայիր, որ իր կորցրած մատանին գտնողը այստեղ է...

—Ի՞նչ կորցրած մատանի...

Բժիշկը ժպտեց ու պատմում էր դէպքը, երբ յանկարծ արտաքին դռան վրայ իջնող կռանի մի քանի ուժգին բախումներ ցնցեցին տունը։

Բժիշկը ոստնեց տեղից, Խոսրէվը գունատուեց, իսկ ծառան նախ վախեցած՝ տիրոջը նայեց, ապա սլացաւ դէպի դուռը։

—Ա՞յս ինչ էր, գոչեց տիկինը.— ո՞վ է այսպէս բաղխողը։

—Տեսնենք, տեսնենք. խօսեց յուզուած բժիշկը։

Թէ նա և թէ Խոսրէվը ոտքի ելած քայլեցին դէպի դուռը։ Ծառան դեռ ներս չէր գալիս։ Բժիշկը անհամբեր՝ ուզում էր դուրս թռչել, երբ վերջապէս դռան վարագոյրը շարժուեց և ծառան ներս մտնելով՝ ասաց.

—Ոչինչ չը կայ. մի ինչ որ մարդ է, որ հարցնում է այստեղ Խոսրէվ անունով մէկին... իսկ ես...

—Դու ի՞նչ. գոչեց բժիշկը—ասացիր որ...

—Ասացի, որ այդպէս անունով մարդ չը կայ այստեղ... պնդում էր, որ այստեղ պիտի լինի... Ազալարխան սարդարի բժիշկը չէ՞ այս.—այո, ասում եմ...

Խոսրէվը այլ ևս ոչինչ չուզեց լսել և վարագոյրը ուժգնութեամբ մի կողմը նետելով, դուրս ոստնեց։

Փողոցի դռան առաջ շուարած՝ կանգ էր առել Եազդերտը և շուրջն էր նայում։

—Եազդգերտ... գոչեց Խոսրէվը։

—Ահա. ահա և դուք, տէր, որքան փնտռեցի ձեզ... ձայնեց ուրախացած ծառան՝ առաջ վազելով—ասացին, որ այստեղ չէք... Մեծ Մովբէդը հրամայեց ինձ ձեզ յայտնել, որ ձեր ներկայութիւնը իր մօտ՝ անհրաժեշտ է և որ եկել է ժամանակը՝ ձեր պաշտօնի մէջ մտնելու...

—Ի՞նչ է կատարուում այնտեղ, խօսիր, ասաց Խոսրէվը։

—Վատ բարեր, տէ՛ր, շատ վատ բաներ... մեր հասարակութիւնը խռնուել է Մովբէդի տանը... խօլերայից բացի, միւսիլման ժողովրդի սպառնալիքը... գրգռողներ մեր դէմ...

—Դարձեա՛լ, դարձեա՛լ. գոչեց բժիշկը, որ հասել էր և լսում էր - ի՞նչ կայ ուրեմն գնալու այդ բոլորի մէջ... Ասա Մովբէդին՝ թող գայ ինձ մօտ պատսպարուի, իմ տանը...

—Ո՛չ, ասաց Խոսրէվը.—ինձ հարկ է գնալ մերայիններին մօտ. ինձ հարկ է լինել այնտեղ՝ ուր կրակն է, այնտեղ՝ ուր կեանքեր կան պաշտպանելու...

Եւ մինչ խօսում էին նրանք դռան առաջ կանգնած, մի փակ կառք, որ սլացումով գալիս էր վերից, կանգ առաւ ճիշտ այնտեղ, յետոյ դուռը բացուեց, մի կին դուրս թռաւ կառքից, մի ուրիշն էլ ետևից, երկուսն էլ արագ շարժմամբ մօտ եկան և կանանցից առաջինը ձայնեց քոռի տակից.

—Ա՛հ, վերջապէս, գտայ քեզ...

Խոսրէվը սաստիկ գունատուեց այդ ձայնը լսելով և բնազդմամբ ներս թաչուեց, թողնելով բժշկին և Եազդգերտին մօտեցող կնոջ դիմաց։

—Ի՞նչ էք ուզում, կին, ասաց բժիշկը փակելով դռան մուտքը՝ ներս մտնել կամեցող կնոջ առաջ—ո՞ւմն էք ուզում. .

—Ահա, գոչեց կինը—այդ մարդուն... թողէք ինձ նրա հետ երկու բոպէ խօսելու...

—Կին, դու խենթ ես երևի. ասաց բժիշկը միշտ արգիլելով նրան մտնելու.—սա մի վէրր երիտասարդ է. որ հիւանդ՝ եկել է ինձ մօտ բժշկուելու...

—Թողէք ինձ, ես գիտեմ նրա ով լինելը, նա էլ

ինձ գիտէ...

Բժիշկը ետ նայեց Խոսրէվին։ Սա գունատ և շուարած՝ կռթնել էր գաւիթի պատին և մի բառ իսկ չը կարողացաւ արտասանել։

Սակայն Եազդգերտը իսկոյն զուշակեց թէ բանը ինչումն էր։ Կռահեց, որ դա Այիշան պիտի լինէր, տեսաւ իր տիրոջ գունատութիւնը և վճռականօրէն մի քայլ անելով դէպի դուռը՝ ասաց բժշկին։

-Հէքիմբաշի, ներս մի թողնէք այդ կնոջը...

Յետոյ մօտ գնաց բժշկի ծառային, որ արտաքին բազի սկզբումն էր և կամաց ձայնով հարցրեց նրան.

—Ասա, բարեկամ, հարեմխանային ներսի կողմից, ուրիշ փողոցի վրայ դուռ չունի...

—Կայ...

—Լաւ...

Ապա դարձաւ Խոսրէվին, բռնեց թևից ու ասաց.

—Գնա՛նք, տէր, եթէ չէք կամենում, որ ամէն ինչ կորսուի և դուք դարձեալ առաջուայ պէս լինէք... Մովբէդը և ժողովուրդը սպասում են ձեզ...

Այս բոլորը նա այնքան կտրուկ, այնքան արագ կատարեց, որ մինչև բժիշկը կը նշմարէր, մինչև Այիշան կը շարունակէր պնդել, որ իրեն ներս թողնեն—Եազդերտը դրեթէ ոյժով քաշ տուաւ երիտասարդին և երկուսն էլ մտան հարեմխանան։

Այդտեղ Եազդգերտը դարձաւ ետևից եկող բժշկի ծառային և հրամայաբար հարցրեց.

—Դո՞ւռը...

—Ահա. ցոյց տուաւ ծառան։

—Իսկ ո՞րտեղ է հանում նա։

—Բազար։

—Բա՛ց արա և գնա...

Ծառան մի վայրկեան շուարեց, բայց Եազդգերտի կատաղի հայեացքից վախեցած, բանալիով բաց արաւ դուռն ու ետ քաշուեց.

Մի բոպէից յետոյ երկուսն էլ իրենց գտան հազիւ երկու արշին լայնք ունեցող կրճի մէջ, որի դիմացը երևում էր ամայի բազարը։ Այնտեղ, խօլերայի աւերումների պատճառով՝ խանութներից մեծ մասը փակուած

էր և սովորական խաժամուժից ու աղմուկից հետք անգամ չէր մնացել։

Դուռը նրանց ետեից փակուելուց յետոյ, Խոսրէվը ընկճուածի նման կռթնեց փողոցի պատին և մռմռաց.

—Այն կինն էր... եկել էր ինձ սպանելու...

—Այիշան էր, այո՛. ասաց Եաղդգերտը— և ով գիտէ, գուցէ...

—Բայց ինչպէս նա գտաւ ինձ և այն էլ բժշկի մօտ...

Ծառան պահ մի լուռ մնաց, յետոյ յանկարծ յիշեց Մովբէդի և զէրը հասարակութեան դրութիւնը, ցնցուեց, բռնեց նորից երիտասարդի թեն ու ասաց.

—Քայլենք, տէր... այնտեղ սպասում են քեզ... մերայիններին մօտ գնանք...

—Այո՛... սթափուեց Խոսրէվը— գնանք .. հեռու, հեռու այս բոլորից...

Ու արագ քայլերով երկուսն էլ մտան քաղաք։

XIII.

Ահա թէ ինչեր էին կատարուել Մովբէդի տանը— կրակապաշտների դպրոց ատրուշանում, մինչ Խոսրէվը բժշկի մօտ նստած հանգստանում էր։

Իսկապէս ասելով Եաղդգերտը, չնայելով Մովբէդի իրեն տուած պատուէրին, չատ էր ուշացել և դրա պատճառն այն էր, որ ամբողջ երկու ժամ փողոցից-փողոց թափառելով՝ չէր գտել ոչ է մարդու, որ գիտենար Աղալար խան սարդարի բժշկի ով լինելը կամ ուր բնակուելը։

Եաղդգերտը չէր էլ համարձակուել ամէն հանդիպողի հարցնել։ Նախ, որ փողոցներից անցնողները սակաւ էին. ոչ միայն սակաւ՝ այլ և անցնողն էլ փախնելու պէս էր գնում։ Իսկ անցորդների փոխարէն՝ ընկած դիակներ, ճիշ, վայնասուն, կիսամեռների օգնութեան կոչեր, ապա՝ արտասուող ազգականներ, վշտացած, վշտից խենթացած հայեացքներ և ամայութիւն...

Այդպէս նա գնացել էր մինչև Դարուագա—Ղազվին։ Այնտեղ միայն մի հայ կարողացել էր իմանալ, որ Աղա-

լար խան սարդարի բժիշկը Ջիր-Ալի խանն է և նրա տունը Նասրրի-խիաբանումն է, — Եազդգերտի գտնուած տեղից մօտ երկու վերստ հեռու։

— Դու շատ ես հեռացել. ասաց հայը — դարձիր։

Եազդգերտը դարձել էր, գտել տունը, գտել տիրոջ. բայց ահա թէ ինչու նա ուղարկուել էր որոնել — բերելու Խոսրէվին և թէ ինչ էին կատարուել նրա հեռանալուց յետոյ։

Խոսրէվի՝ բժշկի հետ գնալուց յետոյ, երբ ծերունի կրօնատլետը Եազդգերտի հետ տուն էր հասել — այնտեղ գտել էր հինգ-վեց կրակապաշտների և իր փոխանորդ ատարուան (քուրմ) Արդաշիրին, որոնք լսել էին Թօփխանէի արկածը և շատ ուրախացան, երբ իրենց իշխանապետին ամբոխի ձեռքից ազատուած և ողջ առողջ տեսան։

Հետզհետէ կրակապաշտների այդ միակ հասարակական շէնքն եկան Թէհրանի մի բուռը զրադաշտականները և գործերի դրութիւնը պարզեցին Մովբէդին։

Խօլերան սաստկանալու ժամանակ, յայտնի չէ թէ ինչ չարամիտ մարդիկ և կամ ինչու, տդէտ, վշտացած և համաճարակին բազմաթիւ զոհեր տուող թաղերի մէջ սկսել էին լուրեր տարածել թէ գէբրերը թունաւորում են գիշերով՝ մայրաքաղաքի բոլոր ջրերը, որպէս զի միւսիլմաններին ջնջեն։

Ոմանք ասում էին թէ պարսիկ կրօնաւորներ էին գրգռողները։ Տեսնուել էին ինչ որ մուրացկանների նըմանող սէյիդներ, որոնք բազարներում, փողոցների խանութներում և սրճատների մէջ՝ առասպելական սուտերով գրգռում էին միամիտ ժողովրդին։ Պատմեցին նոյն իսկ, որ քիչ էր մնացել քարերի տակ սպանէին Նուշրիվանի կնոջը, որ կուժով ջուր էր կամեցել վերցնելու Սար-Զէշմէի մի առուակից, բայց մի ինչ որ սէյիդ հեռուից ձայնել էր թէ գէբրը կինը թունաւորում է ջուրը...

Մի քանի օր էր, որ ոչ մի գէբր չէր համարձակուում փողոցներում երևալ։ Առևտուր, բազար, ամէն ինչ թէև կանգ էր առել, սակայն հարկ էր օրապահիկով ապրողներին՝ տնից դուրս հնել։ Պաշար չունէին. մանուկները և կանայք ուտել էին ուզում. գոնէ միջոց

գտնուէր քաղաքից դուրս գնալու... Մի քանիսն օրինակ փորձել էին այդ, բայց ծեծուած ու հալածուած՝ ներս էին փախել։

Եւ յուզումը, դայրոյթը զէրբերի դէմ մեծանում էր, համակում բոլոր պարսիկներին։ Ի՞նչ անել։ քաղաքը տակն ու վրայ, ոչ ոստիկանութիւն, ոչ քաղաքապետ և ոչ իսկ պահակ կարողանում էր կարգը պահպանել։ Մրիկաները նոյն իսկ պալատի շրջավայրն էին մտել, բանտերի դռները ջարդել, այնտեղ գտնուող բոլոր կատաղի աւազակներին դուրս թողել և այժմ խմբեր կազմած, օգտուելով համաճարակի մեծանալուց, խաղէ-թաղ էին ընկել՝ թալանում էին, ծեծում, կողոպտում և նոյն իսկ սպանում...

Բայց, աւելի ծանրակշիռն այն էր, որ կրօնաւորները օգտուելով հանգամանքից, միշտ մտադիր դերակշռելու ոյժի կողմից մարմնական իշխանութեան հետ՝ ժողովրդեան վրայ ազդելու, դարձեալ, ճիշտ մենավանքի օրերի նման, մզկիթներում, հրապարակներում—ամէն տեղ բարձրաձայն ու համարձակ գրգռում էին ամբոխին բոլոր օտարհաւատների դէմ, առարկելով որ նրանք եկել են միւսիլմանութիւնը իսպառ ջնջելու, որ նրանք, ֆրանգստանից բերել տուած դեղերով կոտորում են ժողովրդին և որ նրանց հարկաւոր է բնաջինջ անել՝ Պարսկաստանը մի անգամ ընդմիշտ ազատելու և միմիայն մեծ Մարգարէին երկրպագուներին թողնելու։

Եւրոպացիք, հայերը խաղել էին իրենց տուն ու տեղը, բոլոր գործերը և խուսափել էին կամ դեսպանատների շուրջը ապաստանելով և կամ լեռները քաշուելով. բաբիները, ինչպէս միշտ, թագնուած էին. մէջ տեղում մնում էին կրակապաշտները և ժողովուրդը, չը կարողանալով, իրենց կրած սոսկալի ազէտներից խենթացած, ո և է օտարհաւատի դիպչել, այժմ միահամուռ՝ մտածում էին զէբերին կոտորել ..

Օրէցօր, ժամ առ ժամ սպասելի էր, որ ամբոխը, ո և է գրգռող սրիկայի կամ մոլեռանդ Սէյիդի առաջնորդութեամբ, խուժէր թաղերը ու նշան տար կոտորածի։

Մովբէդը դէմքը թախծալից, մտատանջ ու յուզուած լսեց այդ բոլորը ու տեսաւ, որ ոչինչ չէր կարող ա-

նել՝ իր ժողովուրդը փրկելու համար։

Հարցրեց ոստիկանապետի համար, բայց նրան յայտնեցին, որ տեսնուել են իսկ ոստիկան կրգռոզներ։ Ու մտածեց, որ Զահն էլ հեռուից ոչինչ չէր կարող անել, որովհետև զօրք, սպայ, կարգ ու կանոն — ամէն ինչ լիովին խանգարուած ու ցրուած էր և միմիայն դիակներ կային մայրաքաղաքի փողոցներում ու պահակատներում, միմիայն վշտից կատաղած, այս և այն կողմից գրգռուած մի ամբոխ, որի ընթացքը դիմադրելու ամէն յոյս իսպառ ոչնչացել էր...

Ինքնապաշտպանութեան մասին — զէնքով դէմ դնելու ամբոխին — մտածել անգամ աւելորդ էր։ Ինչ կարող էր անել հարիւրից ոչ աւելի խաղաղասէր, երբէք զէնք չը գործածած մի խումբ՝ հազարաւոր գրգռուած ամբոխի դէմ...

Մնում էր փախչել... և սակայն այդ իսկ անհնար էր դարձել։ Մեռնելու սահմանուածների նման՝ ստիպուած էին սպասել և համբել բոպէները, մինչև որ կը գային ու կը խողխողէին նրանց մի առ մի։

Ու լուռ, թէ Մովբէդը և թէ բոլոր կրակապաշտները մնացին շուարած, յուսաբեկ և նկուն։

— Աղօթենք... արտասանեց գողգոջուն ձայնով ծերունին — աղօթենք Ահուրա-Մազդային, աղօթենք Միհրային... մեր յոյսը միայն այդ է մնացել... Ահրիմանը չափազանց լաւ է լարել իր որոգայթը և մեզ շրջապատում են գարշ, չար ու արիւնարբու ոգիներ...

Ասաց, մօտեցաւ մի վարագոյրի, սեղանի վրայ դըրուած բերնակապով նախ կապեց բերանը, վերցրեց ձեռքին հօմի մի ճիւղ, յետոյ մէկէն վարագոյրը ետ քաշեց և խոնարհուեց նրա ետևում եղած բարձրադիր հնոցի առաջ, որի մէջ վառուում էր սրբազան կրակը, թոյլ ու արիւնաներկ փայլով։

Բացուած վարագոյրի ետևում կանգնեցրած էր զըրադաշտականների ատրուշանը։ Պարզ խորան էր այդ հնոցաձև, որի գլխին արևի պատկերն էր նկարուած և մէջը կրակն էր վառուում։

Բոլորը լուռ, բերանները փակուած՝ խոնարհուեցին խորանի առաջ ու մօտ երեք բոպէ այդ դրութեան մէջ

կքուած՝ մնացին։ Յետոյ Մովբէդը վարագոյրը փակեց, բերանակապը [1]) ցած դրաւ, դարձաւ ժողովրդին և ասաց խուլ ձայնով.

—Ամբողջ սիրտս ու միտքս դրի աղօթքիս մէջ, խնդրեցի Օրմուզդին ներշնչել ինձ մի փրկութեան միջոց առաջարկելու իր հալածական, թշուառ և կորուստի մօտ ժողովրդեան, բայց Վոհու—Մանոն լուռ մնաց և, իմ թշուառ եղբայրներ, ձեր Մովբէդը յուսարէկ ձեզ նման, միայն իր ծեր հասակի արտասունքները ունի ձեր առաջ թափելու...

Եւ արտասունքի կաթիլները՝ յուզուած ծերունու ակնոցների տակից գլորուեցաւ նրա խորշոմած այտերի և երկար ճերմակ մօրուքի վրայ։

Ահուրա—Մազդան չը կամեցաւ Վոհու—Մանոին ուղարկել իր ծերացած ստրուկ պաշտօնեայի վերջին օրերը վշտաբէկ շանելու համար... շարունակեց Մովբէդը արտասուալից ձայնով—իմ սիրտը կսկծում է, բազուկներս թոյլ են, իմ անձը ես պատրաստ եմ զոհ բերել Միհրային՝ միայն թէ փրկութիւն լինէր ձեզ—իմ թշուառ եղբայրներիս՝ պիղծ անհաւատներից, Ահրիմանի զարշ դևներից... բայց միտքս չէ խօսում... ու չը գիտեմ, երդւում եմ, որ ոչինչ չեմ կարող ասել, ոչ մի հնարք...

Բայց մէկէն, կարծես յանկարծակի ներշնչուած, ցնցուեց, բարձրացրեց գլուխը, աչքերը փայլեցին և նա գոչեց.

Ա՛հ... սպասեցէ՛ք... Ահուրա—Մազդան ընդունեց իմ զոհը... իմ արցունքը... նա խօսում է... Վոհու—Մանոն իջել է ինձ վրայ...

Կրակապաշտները շունչերնին պահած վախախառն յոյսերով նայեցին ծերունու փայլող դէմքին։

—Այո... շարունակեց Մովբէդը—այդպէս է... Օրհնեալ լինի Միհրան...

Ապա յանկարծ աչքը շրջեց ժողովրդեան վրայ և և գոռաց։

---

[1]) Զրադաշտականները այդ կապին կոչում են *պայտիդանա—բայդիդահանա*, որ բառացի նշանակում է բերանակապ։

—Եազդգերտ, ուր է Եազդգերտը...

Ապշած ծառան, լսելով իր անունը, դողաց և վախեցած առաջ եկաւ։

—Այստեղ ես... դարձաւ նրան ծերունին—շուտ, գնա դուրս, կեանքիդ գնով՝ որոնիր Աղալար խան սարդարի բժշկի տունը, գտիր տիրոջդ, Խոսրէվին և ինչպէս որ լինի, տես նրան, ասա որ նրա ներկայութիւնը այստեղ անհրաժեշտ է և որ եկել է ժամանակը նրան՝ իր պաշտօնի մէջը մտնելու... Միհրան կոչում է նրան իր սեղանի առաջ ..

Ապա դարձաւ ամէնքին և երբ Եազդգերտը դուրս էր գնում, զոչեց ժպտելով.

—Ահուրա-Մազդան լսեց իմ աղաչանքը, Վոհու-Մանոն ահա իմ մէջն է և նա ներշնչում է ինձ, որ Միհրայի սեղանի, սրբազան կրակի նոր «ազէրֆէզա» Խոսրէվը պիտի փրկութեան ճանապարհ ցոյց տայ այս ժողովրդին և պիտի հալածի Անրիմանի դևաներին հեռու, դէպի աւազների ամայութիւնը, դէպի ծովերի խորքերը... Հօմի խմելիք պատրաստենք [1]), Ահուրա-Մազդայի երկրպագուններ, և թող այդ ամենամեծ զոհաբերութիւնը մեր երախտագիտութեան նշանը լինի Միհրային և ամենաբարի Օրմուզդին... Աշխարհ է գալիս նոր Զրադաշտը, Հուշիդուրը [2]). այն, որին, սպասւում է, մի անգամ ևս խարխլելու համար Անրիմանի—խաւարի և Չարութեան պիղծ գահը... Հօմի խմելիք պատրաստենք, Ահուրա-Մազդայի ճշմարիտ հաւատացեալներ...

Ասաց, ուղղեց հասակը, բարձրացրեց երկու ձեռքերը, տարածեց նրան դէպի ժողովուրդը և վսեմ ձայնով, ակնարկը երկնքին, մի վայրկենի խոր լռութեան մէջ, խոնարհուող ղլուխների առաջ արտասանեց Աւեստայի նուիրական աղօթքներից մէկը, Յասնա դրքից.

---

[1]) Հօմ կոչուած բոյսից կրակապաշտները պատրաստում են «զգուարթացնող» ոսկեգոյն խմելիք և խմում իրենց ծիսակատարութիւնների ժամանակ։ Այդ պատիւոտութիւնը համարւում է զոհաբերութիւններից ամենամեծը։

[2]) Մեսիան որի մասին գուշակել է Աւեստան։

—Ցարգանը Հոմին [1]), որ թշուառի ոգին հաւասարեցնում է զօրեղի հոգու բարձրութեան. յարգանը Հոմին, որ թշուառի զգացմունքները մեծացնում է... խաղաղութիւն ձեզ, իմ հալածուած եղբայրներ...

Եւ ծերունի Մովբէդը սկսեց հագնուել զոհաբերութեան համար։ Նրա օգնականը, ատարուան Արդաշիրը, պարզեց նրան մի սպիտակ պատմուճան, որ կոչւում է *սաթրա*, յետոյ տուաւ չորս հանդոյցներով գօտին (քուստի), ապա մի տեսակ գլխարկ, որ երկար ականջակապերով՝ պիտի դային կապուելու բերանի դիմացը, որպէս զի մարդկային պիղծ շունչը, զոհաբերութեան արարողութեան ժամանակ՝ չը կպչէր սրբազան կրակին։

Այդ բոլոր նախնական պատրաստութիւնները կատարւում էր ծերունու արտասանած աղօթքների մէջ և ժողովուրդը լուռ, պատկառանօք ակընդէտ մնում էր, երբ յանկարծ մի վայրենի աղաղակ, որ գալիս էր փողոցի կողմից, եկաւ տակն ու վրայ անելու ամէն ինչ։

Բոլորը դարձան, Մովբէդը լռեց ու մնաց անշարժ. ապա, երբ աղաղակը կրկնուեց, բոլոր դէմքերը գունատուեցին։

—Գալի՞ս են... կանչեց մէկը։

Բոպէական քարացումից յետոյ մի այնպիսի իրարանցում, յուսահատ աղաղակների խառնուրդ և փախչող—փախչողի սկսեց, որ դռների մօտ միմեանց սկսեցին կոխոտել։

—Կանգնէք, գոռաց Մովբէդը մի կողմը ձգելով գլխարկը, գօտին և պատմուճանը—ուր էք գնում, անմիտներ. չէ՞ որ փողոց ելնելուն պէս ամենքիդ կը կոտորեն... Դռները ամրացրէք և ոչ որ թող դուրս չը գնայ...

Յետոյ, մի քանի ոստիւններով նետուեց դէպի դուռը, հրեց, գերբնական ոյժով դէն նետեց դռան առաջ խռնուողներին, դուրս թռաւ բակը և մի քանի հոգու հետ փողոցի դուռը փակեց, նիպն ամրացրեց ու կանչեց.

---

[1]) Հոմը, ըստ ոմանց Համեմ բոյսն է (anomum), իսկ բուսաբանները ենթադրում են, որ դա խաղողի ողկոյզների նման պտուղ տուող մի այլ բոյս է, որ լատիներէն կոչւում է Sarcostema Yiminalis։

—Ե՛տ, բոլորդ բազի մէջ. . թողէք տեսնենք ովքեր են և ինչ են ուզում մեզնից։

Ամէնքը խոնուեցին բազի դիմացի պատի մօտ ու Մովբէդը մի քանիների հետ մնացին կանգնած փողոցի դռան մուխ նախագաւթի մէջ։

Աղաղակը չը երրորդուեց, սակայն փողոցում տիրում էր մի խուլ շշուկ և ապացուցանում էր, որ այնտեղ ամբոխ կար և այդ ամբոխը այժմ զբաղուած էր երեի լսելով մի ինչ որ խօսողի։

Ցիրաւի, կրակապաշտների դպրոց – ատրուշանից ցած, մի խուռն ամբոխ, առաջնորդուած սրիկաներով ու մի քանի կապոյտ փաթոց ունեցող սէյիդներով, կանգ էր առել չինարի ծառի ստուերին ու լսում էր մի ինչ որ ցնցոտիապատ, գարշելի դէմքով սէյիդի, որ ցցուել էր խանութների առաջ չինուած պատուանդանի վրայ և այնտեղից, յախուռն շարժումներով խօսում էր։

Նրա խռպոտ ձայնը, որ սկզբում նման էր պատռուած թմբուկի վրայ իջնող հարուածի ձայնին, սկսում էր հետզհետէ մռնչիւնի նման մեծանալ ու տարածուել հեռուները։

Այժմ Մովբէդն ու նրան ընկերացողները լսում էին այդ զզուելի օռնոցը, թէև հաղիւ մի քանի բառեր էին հասնում նրանց ականջին՝ հասկանալի կերպով։

Բայց, ժամանակ կորցնել չէր կարելի։ Խոսրէվը և ոչ իսկ Եաղդերտը երևացին. պէտք էր մի բան մտածել. կամ փախչել և կամ գոնէ պաշտպանուել, ոչ թէ թողնել, որ ամբոխը գար՝ ոչխարների նման իրենց մորթելու։

Ծերունի Մովբէդի մէջ սկսեց արիւնը եռ գալ։ Ինչ որ չէր արել վախը, այժմ կատարում էր յուսահատութիւնը. այժմ նա զգում էր, որ այլ ևս խաղաղութեան վարդապետ չէր, այլ գալիս Զարուրթեան առաքեալների դէմ մարտնչելու հրաւիրուած Օրմուզդի մի զինուորը և որ իր պարտաւորութիւնն էր անցնել ժողովրդեան գլուխը և փշրել սիրդ անհաւատների ամբոխը...

Այդպիսի մտածութեամբ ոգևորուած նա դարձաւ միւսներին ու գոչեց.

—Թող իւրաքանչիւր զրադաշտական մեծ-վարդա-

պետից օրինակ վերցնել .. գալիս են Ահրիմանի չար ոգիները, կռուենք նրանց դէմ, պաշտպանենք մեզ և կամ թանգ ծախենք մեր կեանքը... ով ինչով կարող է, թող գինուի, թող տաս հոգի ելնեն տանիքի վրայ, քարեր ու փայտեր տանեն, մի խումբ թող դուռը պաշտպանէ և եթէ ջարդեն՝ ամէն մտնողի գետին տապալէ — լինի փայտերով, բահերով... կոտորենք չար ոգիների գործակալներին և թող Միհրան իր սրբազան կրակը վառէ մեր մէջ, նրանով ոչնչացնելու համար մեր թշնամիներին... Եկէք ետևիցս, տասը այնպիսիներ, որոնք պատրաստ են իրենց կեանքը դնել իւրայիններին և բարուքեան ծառայելու համար...

Իսկոյն տասը-տասնհինգ հոգի միացան նրան։ Ծերունին ունէր մի քանի զէնքեր իր սենեակում։ Մի ատրճանակ ինքը ձեռքն առաւ, զինուեց, միւսները ցրուեց երիտասարդների մէջ, յետոյ հրամայեց քարեր, այլիսներ կիտել տանիքի վրայ և երբ այդ կատարուել էր ամենայն արագութեամբ, ելաւ վեր ու փողոցին նայող կարճ պատից դիտեց եղածը։

Սէյիդը դեռ խօսում էր, այս անդամ Մովբէդը լաւ լսում էր։ Քիչ թագնուեց պատի ետևը, կծկուեց և սկսեց ականջ դնել։

—... Ի՞նչ էք դուք, աղաղակում էր կատաղի սէյիդը ամբոխին՝ ճգնելով ձայնը մինչև վերջին ծայրին հասցնել — միւսիլման էք, թէ անհաւատներ... եթէ Ղուրանն է ձեր գիրքը և մարգարէն ձեր ուսուցիչը — թող օրհնեալ լինի նրա անունը — ինչու էք հանդուրժում, որ անհաւատներ իշխեն մեր երկրին, խլեն մեր ունեցածը, մեր հողը, մեր հարստութիւնը և ապա կոտորեն մեզ ճանճերի նման... Այսօր մեր քաղաքի փողոցները լի են դիակներով. բազարը փակուած է, մի կտոր հաց ձեռք ձգել չէ կարելի, ջուրը թունաւորուած է, միւսիլմանները ջարդւում են և մենք թողնում ենք, որ նոքա — մեզ ջարդողները ապրեն մեր մէջ... Ահա, այս յարգելի ներքինին թող ասէ ձեզ, թէ ինչպէս անիծեալ գէրրերը մեր կանանց ետևից են ընկել և այս ֆէրրաշը թող պատմէ թէ ինչպէս թունաւորեցին, սպանեցին իր մի ընկերոջ...

Մովբէդը լսելով այդ, սոսկումով նայեց տեսնելու

սէյիդի ակնարկած անձերին և տեսաւ խանութի առաջ Զոհրայի ներքինուն ու մի Ֆէրրաշի, որի դէմքը ծանօթ չէր։

—Ահա թէ ինչ... մռմռաց նա—դարձեալ Խոսրէվի կողմից են այս բոլորը...

—... Կոտորենք, վերջ տանք, արմատախիլ անենք բոլորին... շարունակեց սէյիդը - և նախ, անհաւատների բունը, նրանց մեծ շանը, նրանց պիղծ մզկիթը աւերենք նրանց գլխին, իսկ, եթէ դուք մարդարէի հաւատացեալներ էք, եթէ ճշմարիտ միւսիլմաններ էք, չը պիտի թողնէք մեր սուրբ երկիրը պղծելու ոչ մի գէբր, բաբի, եահուդի, քրիստոնեայ կամ այլ անհաւատ շներ... գոչեցէք սալաւաթ...

Այդ միջոցին էր, որ Խոսրէվն ու Եազդգերտը հասնում էին շէնքի ախոռի դռան առաջ, որովհետև տեսել էին ամբոխը և չէին համարձակուել մեծ դռանը մօտենալ։

Նրանց բաղխումը նախ վախեցրեց ներսը կիտուած ազգակիցներին, յետոյ, երբ անուանեցին իրենց, իսկոյն ներս առնուեցան ու Խոսրէվը ամբոխի «սալաւաթ» օռնոցը լսեց բակի մէջ։

Մի գէբր պարզեց նրան դորձերի դրութիւնը և երիտասարդը իսկոյն տանիք բարձրացաւ։

Ծերունի Մովրէդի դէմքը պարզուեց, երբ տեսաւ երիտասարդին։ Բռնեց նրա ձեռքից, իջաւ իւրայինների մէջ, կանգնեցրեց աւազանի կողին և ասաց.

—Ահա, Միհրան ներշնչեց ինձ, որ այս երիտասարդը պիտի ազատէ մեզ՝ Ահուրա-Մազդային երկրպագուներիս և որ սա է այն Հուշիդուրը, որին բոլորս սպասում ենք դարերից ի վեր . Յարգանք նոր Զրադաշտին...

Խոսրէվը ոչինչ չէր հասկանում և շփոթուած ու զարմացած նայում էր սրան-նրան։

—Ինչպէս... բացականչեց նա - ես, Հուշիդուր, նոր Զրադաշտ... խենթացել էք դուք... խելքներդ կորցրել...

—Վոհու-Մանոն խօսեց իմ մէջ. ասաց ուժգնութեամբ Մովրէդը—դու պիտի փչրես Ահրիմանի և նրա չար ոգիների դաւերը, դու պիտի ազատես այս յուսահատ ժողովրդին... Գնա, ազօթիր սրբազան կրակի ա-

ռաջ և թող Միհրան ներշնչէ քեզ քո անելիքը...

Ասա բռնեց ձեռքիցը ու մտաւ ատրուշան։

Մինչ այդ, դրսում ամբոխը «սալաւաթ» ձայնելուց յետոյ, մի բոպէ լռել էր։ Յառաջընթաց սրիկաներն ու կրօնաւորները խորհրդակցութեան մէջ էին։ Յարձակման ծրագիր էին կազմում, քննում էին թէ ո՞վ ինչ դէնք ունէր և թէ ինչ կերպով կարելի էր հեշտութեամբ ոչընչացնել տունը և ջարդել նրա մէջ ապաստանողներին։ Գիտէին որ գէբրերը եկել—ապաստան էին որոնել այնտեղ, գիտէին նաև, որ Մովբէդը չէնրի մէջն էր։

Երկար չը տևեց խորհուրդը, հինգ բոպէ վիճելուց ու դուդուռալուց յետոյ, մի խումբ յանդուգն *լութիներ* յառաջ խաղացին, նոցանից մէկը մի խոշոր քար վերցնելով ուժգնութեամբ շպրտեց հեռուից դէպի դուռը և երբ հարուածի դղրդիւնը դադարել էր, գոչեց.

—Է՛յ շուն գէբրեր, մեր ջրերը թունաւորողներ, հասել է ձեր վերջին օրը, յանձնուեցէք շուտով...

Դրան հետևեց լռութիւն. ամբոխը շունչը պահած սպասում էր լսել որև է պատասխան։

Եւ յիրաւի, թիչ յետոյ տանիքի կարճ պատից երևաց ծերունի Մովբէդը, նայեց ամբոխին համարձակ հայեացքով և մեղմ, բայց խրոխտ՝ ասաց.

—Ի՞նչ էք ուզում, ինչու՞ էք վրդովում մի խաղաղ ժողովրդի, որ ոչնչով ձեզ վնաս չէ տուել...

—Գէբրերի մոլլան է... ձայնեցին ամբոխից մի քանիսը։

Սէյիդներից մէկը ձեռքը տարաւ դօտին, քաշեց ատրճանակը, պարզեց դէպի Մովբէդն ու ասաց.

—Ը՛ն ծերունի, որ մարդկանց մոլորեցնում ես քո պիղծ հաւատքով և միւսիլմաններին կոտորում քո թոյներով... դուռը բաց արա, թէ չէ՝ գլուխդ կը ջախջախեմ։

—Սպասիր, սէյիդ, կանչեց ամբոխից մէկը ինչ ես հայհոյում, մարդը քեզ ինչ արաւ, թող խօսի առաջ և տեսնենք ինչպէս կարդարանայ..

—Ի՞նչ արդարանալ... ձայնեց կատաղի՝ մի ուրիշ սէյիդ—ո՞վ է նա, որ արդարանայ... մի շուն է, որին պիտի սատկացնել .. խփիր, սէյիդ աղա, խփիր դրան...

Սակայն Մովբէդի կեցուածքը, սառը և անվախ անշարժութիւնը ազդել էր ամբոխի վրայ և նրանից մէկը կանչեց հեռուից.

—Չը խփէք. . մեղք է ձեր մարդու սպանելը, թողէք խօսի...

—Այո, այո, թողէք խօսի... կանչեցին այս-այն կողմից շատերը։

Թէ՛ ես ձեր... գոռաց սէյիդը—դուք տղամարդիկ չէք, դուք շներ էք և ոչ միւսիլմաններ... թող արիւնը իմ գլխի վրայ թափուի... ահա..

Եւ ատրճանակը արձակեց։ Մովբէդը վայրկենապէս գլուխն իջեցրեց և երբ գնդակը սրացել անցել էր, անմիջապէս ցցեց նորից հասակը և գոչեց.

—Սէյիդ, խնայում եմ քեզ... նայիր...

Ու ցոյց տուաւ բէվոլվէրի փողը՝ ճիշտ ուղղած նրան։ Սէյիդը գունատուեց. իր ունեցածը մի հատ ատրճանակ էր, այն էլ հին տեսակից, մի գնդակոյ։

—Չը շարժուես տեղիցդ, չար մարդ... շարունակեց Մովբէդը—պիտի զարմանամ եթէ շարժուել ես. դու պարտաւոր ես լսել ինձ անշարժ և եթէ ուրիշ մէկն էլ համարձակուի ոնէ գնդակ ուղարկել այստեղ, դու դիակ կը դառնաս... Այժմ լսիր ինձ, և դուք լսէք, պարսիկներ. լսէք ու ձեր ականջին օղ շինէք ասածներս, որովհետև երդուում եմ ամենակարող Աստծոյ սուրբ անունով, որ իմ բերանս ոչ մի ստութիւն չի ասիլ ձեզ, այլ միմիայն ճշմարտութիւնը...

Յետոյ, հայհացքը միշտ սէյիդին, ասաց վսեմութեամբ.

—Սուտ են այն բոլորը, ինչ որ դուք— սէյիդներդ տարածում էք. ոչ մի դէբր չի համարձակուիլ պղծել ջուրը ոչ միայն թոյնով, այլ նոյն իսկ աղտով... ջուրը, կրակը և հողը ամէն մի կրակապաշտի համար, մեր սուրբ գրքի օրէնքով, սուրբ են. յանցաւոր է նա, ով նոյն իսկ կաղտոտի խմելու ջուրը... Վերջապէս, մթթէ մենք նոյն ջուրը չենք խմում՝ ինչ որ դուք, տխմարներ... Հարցրէք այժմ ձեր բժիշկներին, ինչու է որ դուք կոտորուում էք հիւանդութիւնից. եահուդիները կոտորուում են, իսկ մենք, հայերը և ֆրանգիները շատ քիչ զոհեր ենք տալիս... Հարց-

բէք և պիտի տեսնէք, որ միակ պատճառը ձեր կեղտոտութիւնն է... Այդ ինչ է շորերիդ, ձեռքերիդ և երեսիդ կեղտը, դու, սէյիդ... ուտում ես՝ ինչ պատահում է վարունգ, սեխ, աղտոտ-հոտած պտուղներ և կուզէիր, որ իսլերան խնայէր քեզ... Դուր խմում էք այն ջուրը, որը ինքներդ էք աղտոտում ձեր լուացքներով, ապականութիւններով...

—Ջուրը աղտ չէ վերցնում, անհաւատ մոյլա... ընդհատեց մի սէյիդ—այդպէս է ասում մեր օրէնքը...

-Նա սխալւում է, տխմար... ժպտեց ծերունին—եթէ ջուրը աղտ չէ վերցնում, ինչ է ուրեմն, որ ձեր շորերը նրա մէջ լուացուելուց յետոյ, հոսում է նրա երեսի վրայից և գնում խմողներին հիւանդացնելու, սպանելու...

Ամբոխը, որ լուռ էր մինչև այդ, սկսեց աղմկել, որովհետև մի սէյիդ դարձաւ դէպի նա և ձայնեց.

—Լսում էք, միւսիլմաններ, այդ շուն գէբրը սխալ է համարում մեր օրէնքը, նա հոյհոյում է, իսկ մենք լուռ, էշերի նման լսում ենք .. բաւական է թողնել նրան խօսելու... Կանչեցէք «սալաւաթ» և ջարդենք դրանց...

Լուլթիները, որ անհամբեր սպասում էին, այդ լսելուն պէս, սոսկալի օռնոց բարձրացրին և քարերի ու գաւազանների մի կարկուտ գնաց դէպի տանիքը, այլ և դէպի տան դուռը...

XIV

Այլ ևս անհնար դարձաւ Մովբէդի բոլոր ջանքերը։ Ամէն յոյս կորաւ։ Ամբոխը կատաղել էր, թալանելու ցանկութեամբ բռնկուած լուլթիները, գրգռող սէյիդները, ներքինին ու փէրրաշը մղեցին բոլորին դէպի դուռը։ Սկսեց մի սոսկալի յարձակում դռան դէմ։ Քարեր ու փայտեր էին, որ սլանում էին, տանիքը լեցնում, բազը մտնում։ Յետոյ՝ օռնոց, աղաղակ, հայհոյանք...

Գէբրերը նախ չփոթուեցին, յետոյ, Մովբէդի նշանի վրայ, սկսեցին աղիւս ու փայտեր տեղալ տանիքից ամբոխի վրայ։ Վիրաւորուողների, հարուած ստացողների ճիչերը աւելի զայրացրին յարձակուողներին... Երևան ե-

կան տապարներ, կացիններ և դուռը սպառնում էր փշրուելու բուռն հարուածների տակ, չը նայելով որ վերից եկող քար ու փայտը շատերին էր ստիպում հայհոյանքը բերնին՝ հետ թաշուելու...

—Կոտրեցէք դուռը, աղաղակում էին սէյիդները։

—Պատը քանդէք...

—Դրացիների տներից ներս մտէք...

—Այրէք, կրակ տուէք...

Այսպիսի աղաղակների մէջ էր, որ տանիքի վրայ յայտնուեց Խոսրէվը։

Նրա ատրուշանից ելնելը, կտուր բարձրանալը մի այնպիսի լռութեան մէջ կատարուեց, գէբրերի այնպիսի պատկառանօք սպասողութեան մէջ, որ ամէնքը կանգ առին տեսնելու, թէ ինչ կը լինէր։

Եւ յիրաւի, երիտասարդը այն աստիճան փոխուել էր, որ Մովբէդն իսկ զարմանքով ու հիացքով հետևեց նրան դէպի տանիք։

Հագած ատարուանի (բուրմի) սպիտակ պատմուճանը, բայց առանց խոյրի և երկար մազերը ցրուած ղլխի վրայ, գունատ, բայց փայլող, ոգևորուած դէմքով, լուռ, մի ինչ որ տարօրինակ ժպիտ դէմքին, նման մի մարդու, որ լի էքստազով, այլ հս հեռու է աշխարհային ոև է բանի մասին խորհելուց,—բայլեց Խոսրէվը կարկտող քարերի և փայտերի միջով առանց իսկ հարուած ստանալու, մէկէն երևացուց իր ամբողջ հասակը պատի մի փլուածքի առաջ, ձեռքը պարզեց դէպի ներքևի ամբոխը և աղաղակեց.

—Դադարեցէք, դուք. թշուառ մարդիկ...

Ամբոխը ապշած, յիրաւի, կանգ առաւ։ Երիտասարդի ճերմակ հագուստը, գեղեցիկ դէմքը և հպարտ կեցուածքը կարկեցրեց ամէն բերան, իջեցուց ամէն ձեռք...

—Խաղաղութիւն ձեզ, բարեկամներ... խօսեց Խոսրէվը ձեռքերը պարզած—դոք եկել էր մարդկային անմեղ արիւն թափելու, սակայն գերագոյն Աստուածը, որ նայում է այս բոլէիս այնտեղ – վերևից, ասում է ձեզ իմ բերնով. – «Խաղաղութիւն ձեզ, բարեկամներ, ինչու էք ձեր ձեռքերը թաթախում եղբայրների արիւնի մէջ»...

Զոհ էք ուզում, ձեր վշտերի վրէժը, ձեր տանջանքերի փրկանք... ահա, ես գալիս եմ ձեր մէջ՝ ձեզ յանձնուելու, թափէք իմ արիւնը և նա թող ընկնի ձեր և ձեր որդիների գլուխների վրայ...

Ասաց, շարժուեց, ժպտուն դէմքով նայեց ամբոխին և աւելացրեց.

—Միայն մի բոպէ... և ես ձեր մէջը կը լինեմ անզէն, անպաշտպան... թափէք իմ արիւնը և նա թող գոհացնէ ձեզ...

Յետոյ դարձաւ, ժպտելով նայեց գունատ Մովրէդին ու զէրբերին, քայլեց իջաւ ցած, մօտեցաւ փողոցի դռան և ասաց նրաց պահողներին.

—Բացէք դուռը և ինձ դուրս թողէք...

—Տէր... բռնեց նրա թևից Մովրէդը...

—Թող, բարի Մովրէ՛դ, ժպտեց նրան Խոսրէվը — այս բոլորը զոհ է պահանջում... Միհրան ներշնչեց ինձ ելնել Զարուլթեան դէմ և իմ անձի գնով փրկել իր անմեղ ժողովուրդը...

Յետոյ դարձաւ դուռը պահպանողներին և ասաց իշխանաբար.—բացէ՛ք դուռը և մի վախենաք...

Նիգը քաշուեց, դուռը բացուեց և ապշած ամբոխի առաջ, փողոցում յայտնուեց ժպտուն երիտասարդը, որ ձեռքերը կրծքին դրած՝ նայեց կատարողներին ու ասաց.

—Ահա ես, զարկէ՛ք...

Բայց ոչ մի ձեռք չը բարձրացաւ, ոչ մի շրթունք չը շարժուեց։ Այնպիսի խոր լռութիւն էր տիրել, որ կարծես փողոցը լիովին ամայի լինէր։

Դուռը երիտասարդի ետևից փակուել էր, բայց ոչ կղպանքով և ոչ էլ նիգով։ Հինգ—վեց երիտասարդ գէրբեր, զինուած ցուպերով, Եաղդգերտը գտել էր մի ինչ որ սուր և բոլորը դռան ճեղքից դիտում էին, վճռելով դուրս նետուել Խոսրէվին պաշտպանելու, եթէ նրա վրայ յարձակուողներ լինէին։

Բոպէի լռութեան մէջ լսուեց մի ձայն, որ ասում էր.

—Գէրբ երիտասարդն է... խենթ է նա...

Ներքինին էր, Աղալար—խան սարդարի ներքինին։

—Խենթ է... լսուեցան մի քանի ձայներ—մի դիպչէք, խենթին չեն հարուածում...

Խոսրէվը լսեց այդ, ժպտեց, մի քայլ էլ առաջ գընաց դէպի սէյիդները, որոնք ետ քաշուեցին՝ ու ասաց.

—Ինձ խենթ էք համարում.. լաւ, լսեցէք ուրեմն թէ այդ խենթը ինչ կասի ձեզ, թշուառ, տգէտ և անմիտ մարդիկ... դուք բոլորդ, սկսած ձեր այս սէյիդներից, մինչև ամենայետին երեխան՝ խոցալու մարդիկ էք, որովհետև չարն ու խաւարը հանգցրել է ձեր մէջ լոյսի ամէն կայծ, աստուածային կրակի յետին նշոյլը... Դուք դժբաղդներ էք, որովհետև ամէնքդ տգէտ էք, սկսած, ձեր այս կրօնաւորներից... տգէտ, աղտի մէջ մեծացած, սովոր նրան, մտրակների տակ կքուել է ձեր ողնասիւնը, ճնշումների տակ այլանդակուել՝ ձեր միտքն ու զգացմունքները և այդ իսկ սէյիդների շնորհիւ բթացել է ձեր մէջ այն բոլորը ինչ որ բարի, ինչ որ ազնիւ...

—Ի՞նչ է բարբանջում այդ խենթ անհաւատը. ձայնեց ետևում գտնուող սէյիդներից մէկը՝ ընդհատելով Խոսրէվին։

—Սէյիդներին է հայհոյում. ասաց ծիծաղելով մի լուլթի—ասում է, որ դուք յիմարներ էք։

—Զա՛նդ, լիրբ. գոռաց սէյիդը, յետոյ բուռն ոյժով ճղեց ամբոխը, համարձակ մօտ գնաց երիտասարդ գէբրին և գոչեց էյ, դիւանէ [1])... դո՛ւ ես սէյիդներին չը հաւանողը։

Ապա դարձաւ ամբոխին և աւելացրեց.

—Եւ դուք, վա՛տ միւսիլմաններ, մի ինչ որ խենթից վախեցած՝ կանգ առիք... թիւ, նէհլէ՛թ ձեր նամուսին... եկէ՛ք...

Ասաց, ուժգնութեամբ ջանաց դէն հրել Խոսրէվին և գնաց դէպի դուռը։

Լուլթիները, որ կարկամել էին առաջին անակընկալի շնորհիւ, Սէյիդի վարմունքից սթափուեցան և գրոհ տուին։

Երիտասարդ գէբրը գունատ՝ ետ ետ քաշուեց մինչև դուռը, մէջքը տուաւ նրան, ձեռքերը տարածեց և և այս անգամ խրոխտ ու բարձր ձայնով կանչեց.

—Ձեզ զոհ է հարկաւոր, զարկէ՛ք, սակայն ներս

---

[1]) Խենթ.

չը պիտի մտնէք առանց իմ արիւնը նախ թափելու։

– Եւ կը թափենք, չուն խենթ, գոռաց մի ոչիդ փայտը բարձրացնելով— հեռու կաց...

Ամբոխը, որ նոյնպէս սթափուած, վերստացել էր յօշոտելու, աւերելու և ոտնատակ տալու նախկին տենչը, ետևի կողմից այնպէս մղում էր, այնքան ուժգնութեամբ գրոհ տալիս, որ յառաջընթաց սէյիդներն ու լութիները գրեթէ ճզմելու նման կպել էին Խոսրէվին։ Ոմանք ճգնեցին նրան ետ քաշել, բարձրացան փայտեր, սակայն և ոչ իսկ զարնելու միջոց կար։ Մնում էր դաշոյնել կամ խեղդել երիտասարդին։

Բայց այդ միջոցին, էր որ փողոցից լսուեց նախ մի երկար սուլոց, յետոյ յանկարծ մի զիլ, շատ զիլ ձայն, որ գոչում էր.

— Խէսփուշներ, ինձ մօտ...

Լսելով այդ ձայնը, ամբոխի մէջ իրարանցում ընկաւ, լութիներից շատերը ոտները կետնին սեղմելով՝ ետ մղեցին վրայ ընկնող ամբոխին, յետոյ մի խառնաշփոթութիւն յառաջացաւ և գրոհը կանգ առաւ Խոսրէվից մի քայլ ետ։

—Խէսփուշնե՛ր... շարունակում էր զիլ ձայնը—այստեղ, շո՛ւտ...

Բայց նրան իրը պատասխան կարծես, փողոցի մի ուրիշ կողմից երևան եկան մի խումբ փայտերով և սրերով զինուած մարդիկ, որոնք վազն ի վազ վրայ տուին ամբոխին և գոռացին

- Ե՛տ, շուտով ետ... հեռացէք...

Ու խմբի ետևում երևաց մի կառք, որի լուսամուտից, երեսը բաց, նայում էր մի ինչ որ շատ սիրուն տիկին։

Այս բոլորը տակն ու վրայ արին յարձակուող ամբոխին։ Զիլ ձայնը, որ լսել էր մի բոպէ, նորից լսուեց։

— Խէսփուշնե՛ր, ցրուել ամբոխը... զարկէ՛ք... գոչում էր նա։

Յետոյ երևացին ցնցոտիներ և չէր անցել մի բոպէ, որ մի սոսկալի խառնուրդ ձայների, հարուածների, ճիչերի և աղաղակների՝ բռնել էր ամբողջ փողոցը։

Ամբոխի վրայ յարձակուել էին փայտուորների խում-

բը մի կողմից և խէսփուշները միւս կողմից։ Սկսեց կռիւ. նախ փայտերով, յետոյ փայլեցին սրեր. այլ ևս ոչ մէկը միւսին չէր լսում. փախչողներ, ընկնողներ, արիւն ու հայհոյանք խառնուեցին իրար։

Այդ խառնուրդի մէջ Խոսրէվը զարմացած՝ կանգնած էր. մնացել դռան առաջ, բայց ընկնելու չափ ջարդուած, զունատ և յոգնած։ Զարմացել էին նաև տանիքից դիտող Մովբէդն ու կրակապաշտները։

Յանկարծ ամբոխի խառնիճաղանճի մէջ երևան եկան երկու խմբեր, որոնք ոտնատակ տալով, զարնելով հանդիսդողին, երկու կողմից ճգնում էին դռան մօտենալ։

—Ցառաջ, խէսփուշներ. գոչում էր զիլ ձայնը։

—Ցառաջ, աղայք, ազատենք երիտասարդին. լսում էր մի ծանօթ ձայն։ Եւ Խոսրէվը այն կողմը դարձաւ։ Շիր-Ալի խան բժիշկն էր, որ անցել էր փայտուոր ծառաների գլուխը և մեծ ճիգեր էր գործ դնում հասնելու երիտասարդին։

Սակայն խէսփուշներն էլ նոյնն էին անում։ Եւ դա՛ էր, որ անհասկանալի էր դառնում Մովբէդին։ Խոսրէվը այլ ևս կարծես ոչինչ չէր լսում— այնքան նա թուլացել էր։ Ներս չէր մտնում, չը նայելով որ Եաղդերտը և գէրերը բաց էին արել դուռը և խնդրում էին մտնել։ Ամբոխի մի մասը դեռ սպառնալից՝ յառաջանալ էր ուզում դէպի դուռը... երիտասարդը իր մարմնով պատուար էր դարձել նրանց։

Ու այդ խառնուրդի ժամանակ միմեանց ետևից լսուեցին ատրճանակի պայթիւններ։ Փողովուրդից էրլութիներն էին, այլ և այս և այն կողմից հետզհետէ վրայ հասնող թաղեցիները։

Ատրճանակի առաջին ձայնը մի ցաւագին ճիչ հանեց քրտինքի մէջ մտած բժշկի բերանից և նա գոչեց կատաղի.

– Տղա՛յք, չո՛ւտ...

—Խէսփուշներ, վրայ տուէք և չո՛ւտ .. լսուեց դարձեալ զիլ ձայնը։

Ներս մտէք, տէր, ի սէր Աստուծոյ, ներս մտէք... քաշում էին Եաղդերտը և գէրերը Խոսրէվին։

Բայց երիտասարդը լուռ՝ դիմադրում էր։

Բժիշկն այդ նկատեց հեռուից և ձայնեց.

—Ներս մի գնաք, տունը վառում են... Ներս մի գնաք... եկէք իմ կողմը .. Խոսրէվ, այս կողմը...

Ատրճանակների, ճիչերի և հայհոյանքների ձայները հետզհետէ շատանում էին. ամբոխը երկուսի բաժանուած ետևի կողմից՝ կուրծք էր տալիս խէսփուշներին և բժշկին, իսկ միջին մասը փայտեր և հայհոյանքներ էր նետում դէպի Խոսրէվն ու դէբրերը, տանիքի վրայ յուզուած կանգնող Մովբէդն ու կրակապաշտները...

Վերջապէս բժշկին յաջողուեց հասնել դռան։ Նոյն այդ միջոցին այնտեղ էր ոստնում մի կարճահասակ մարդ, որ իսկոյն ձեռքը պարզեց Խոսրէվին և ասաց.

—Գնանք, երիտասարդ, ազատուիր, մենք քո բարեկամներն ենք...

—Ինչպէ՞ս... գոռաց բժիշկը—դու ո՞վ ես, մարդ...

—Խէսփուշներ, վերցրէք սրան... դարձաւ մարդը իր ետևից եկողներին—բոլորիդ կը խեղտեմ եթէ ողջ տանողջ չէք հասցրել մինչև կառքը...

Եւ Մովբէդը յանկարծ ճանաչեց այդ խօսքերն ասողին։ Գուլահէր եկող խէսփուշն էր, որ պիտի սպասէր իր հետ խօսելու, բայց վերադարձին՝ անյետացել էր։

Գունատ, կռացաւ դէպի փողոց, իր կեանքումն առաջին անգամը լինելով՝ ձեռքն առաւ մի աղիւս և ուժգնութեամբ նետեց խէսփուշի գլխին։

—Ա՜հ.. գոռաց խէսփուշը ետ ետ գնալով—անիծեալ ծերունի...

Օգտուելով դրանից, բժիշկն և իւրայինները շրջապատեցին Խոսրէվին, գրեթէ վերցրին ուսերի վրայ և շտապեցին հեռանալ։

—Մովբէդ, ձայնեց բժիշկը գնալիս— շուտով դատարկեցէք տունը. պիտի հրդեհեն... փախէք...

Բայց խէսփուշը, որ մի բոպէ չշմել էր գլխին եկած հարուածից, շուտով ուշքի եկաւ և գոռաց.

—Խէսփուշներ, մի թողնէք, շներ... միթէ որսը պիտի փախցնենք...

Ու յարձակուեցաւ, բռնեց բժշկի օձիքից։

—Ի՞նչ ես ուզում, մարդ, դարձաւ նրան վերջինս։

— Երիտասարդին...

— Բայց ինչու, ով ես դու, նրա ինչն ես։

— Ոչինչը, սակայն նրան պէտք ունիմ... Այնտեղ մի խանում հազար թուման ունի ինձ տալու դրա համար...

— Ասա խանումիդ, որ ապրանքը ծախու չէ... կորէր...

Ապա ուժգին թափով ետ հրեց խէսփուշին։

— Կամաց, հէրիմքաշի... պոկ չեկաւ խէսփուշը — հազար թումանը հեշտ չէ աշխատել... և վերջապէս այդ կինը սիրում է նրան... խէսփուշներ, մի թողնէք տանել...

Բժիշկը հասկանում էր։ Գռահեց որ Այիշէն էր, այդ։ Նասրուլահ-խանի կինը, երբ յաջողուել էր գրեթէ ոյժով ներս ընկնել բժշկի տունը և տեսել, որ Խոսրէվը այս անգամ էլ խուսափել էր իրենից, անմիջապէս կառք էր նստել և հրամայել տանելու Մոլբէդի մօտ։

Հասնելով կրակապաշտների տան փողոցին, ամբոխի խանումից ստիպուած՝ կանգ էր առել և այդտեղ նրան պատմել էին ամէն ինչ։ Սաստիկ վախեցած և մտածելով, որ անշուշտ Խոսրէվն էլ տան մէջը պիտի լինէր, իսկոյն իր ծառային ուղարկել էր, կանչել տուել իր լրտեսին, հազար թուման խոստացել եթէ կարող լինէր նա աղատել երիտասարդին և մինչև իր կառքը բերել։

Խէսփուշը անմիջապէս հաւաքել էր ընկերներ և եկել. յետոյ, մտածելով որ յարձակուող ամբոխի մէջ էլ կը լինէին ընկերներից, ձայնել էր նոցա, յաջողուել շփոթութիւն ձգելու և ահա այժմ կատաղում էր, որ որսը խլում էին իր ձեռքից և հազար թումանը ջուրն էր ընկնում։

Մինչ այդ, ամբոխին յաջողուել էր անցէն խէսփուշներին ցրուել, բժշկի և Զոհրայի մի բուռը ծառաներին վռնտել և այժմ աւելի կատաղի բան առաջ, օռնալով, զարնելով, ոպառնալով և այլ ևս անդիմադրելի՝ զրոհ տուաւ դռան վրայ։

Վերջացել էր։ Բժիշկը մի հայեացքով հասկացաւ կացութեան ծանրութիւնը և վճռեց մի վերջին ճիգ ևս գործել, Դուռը աւելի մօտ էր, ամբոխը վրայ էր տալիս Խոսրէվին բռնող ծառաներին։ — Անմիջապէս ձայնեց նրանց դառնալ, մի քանի ահեղ կռուիներով տապալեց

խէսփուշին, արմունկներով ջարդեց աւելի մօտ գտնուողների մէջքն ու դէմքերը և իրեն նետեց Եաղդերտի բաց արած դռան մէջ՝ հինգ-վեց ծառաների հետ։

Գէրերը անմիջապէս ներս քաշեցին բոլորին և դուռը դղրդիւնով փակեցին նրանց ետեւից խուժող ամբոխի քիթին ու նեղերը դրին։

—Ազատուեցաք, փառք Օրմուզդին... ձայնեց Մովբէդը, որ շտապել էր ցած...

—Այո... մռմռաց բժիշկը ընկնելով դռան կողքի պատուանդանի վրայ, գաւթում—այո, ազատուեցինք առ այժմ, բայց, վայ մեզ, այժմ ամէն ինչ վերջացաւ և ես էլ ձեզ հետ մեռնելու եմ...

Նոր միայն իսկապէս ամէն ոք անդրադարձաւ եղածի վրայ։ Ամբոխը աւելի կատաղած, այժմ յոյս չը կար ոչ էլ կերպով նրանից ազատուելու, տունը հրդեհելու սպառնալիքի տակ և ներսի դռների թիւը աւելացած վեց հոգի հոգով ևս։»

—Հնարը չեղաւ... շարունակեց բժիշկը—խե՜ղճ Զոհրա... ի... և խե՜ղճ իմ կին ու մորքիկ Նարդէգ... այլ ևս ոչ Խոսրէվ պիտի տեսնէք և ոչ էլ Ջիր-Ալիին...

—Հանդարտեցէք. ասաց Խոսրէվը որ քիչ ուշքի էր եկել և մօտեցել բժշկին—դեռ ամէն ինչ կորսուած չէ։

—Կորսուած է, բարեկամ, կորսուած ենք մենք բոլորս էլ.. լսեցէք մէկ...

Եւ յիրաւի սոսկալի էր այն, ինչ կատարուում էր դրսում։ Նախ սկսել էին դարձեալ քարեր ու փայտեր նետել դռան դէմ և պատերից՝ դէպի բադը։ Դրանց հետ՝ հայհոյանք ու աղաղակ այնքան շատ էին և մեծ, որ բժիշկը ստիպուած էր՝ մի բան հասկացնելու համար՝ գրեթէ գոռալ... Յետոյ սուլեցին դռան դէմ մի քանի գնդակներ, որոնք ուժգնութեամբ բաղխում էին հաստ և երկաթապատ փեղկերին և ցնցում նրան և վերջապէս տապարների ու կացինների խուլ ձայները հասկացրին ներսինների, որ միայն կէս ժամ՝ շատ-շատ, և ոչ միայն դուռը պիտի կործանուէր, այլ և նրան բռնող պատերը...

—Եւ դեռ, ասաց բժիշկը—հսկեցէք, Մովբէդ, դրսացի տներից կարող են բարձրանալ ձեր տանիքների բայ... լինի սանդուխտներով, լինի այլ միջոցով։

—Ո՛չ... այդ կողմից ապահով եղէք... պատերը շատ բարձր են և տունը գրեթէ կղզիացած է ամէն կողմից... ետեւում մի բանի տներ կան այո, աջ կողքին և նոքա բոլորը մերոնցից են, դռները ամուր փակուած, կանայք ու մանուկներ քաղաքից ելած, իսկ տղամարդիկ՝ ահա, այստեղ են բոլորը..

—Ուրեմն վառել էլ չեն կարող։

—Ո՛չ... փայտից ոչինչ չը կայ... Աղիւս է և քար... դռներն են, այն էլ մի դուռ կարող են վառել—միայն այս... ու չենք թողնիլ... ընկոյզի փայտ է, երկաթապատ...

—Բայց մինչև երբ... կը փչրեն, պատը, փողոցի ատը կը փլեցնեն...

Բոլորը լռեցին։ Կացիններին ու տապարների հարուածները կարկտում էին անխնայ, կարծես հաստատելու համար բժշկի վախը։

Պաշարուած տան մէջ, առանց որի է պաշարի, Մովբէդն էլ նոր տուն մտած, նոյն իսկ անօթութիւնը բաւական էր սոսկացնելու ամէնքին։

Կրակապաշտները սկսել էին յուսահատուել։ Մովբէդի ներկայացրած Հուշիդուրը, նոր Զրադաշտն էլ չը յաջողուեց ազատել նրանց. ոչ Միհրան, ոչ նրա ներշնչումը... Ի՞նչ էր մնում անել։ Անձնատուր լինելու մասին մտածել իսկ պէտք չէր—կը կոտորէին բոլորին։

—Ինչ անել ուրեմն. ձայնեց Մովբէդը։

Յետոյ մէկէն Խոսրէվին դարձաւ ու ասաց.

—Խոսիր... Վոհու Մանօ՛ ինձ ներշնչեց որ դու միայն կարող ես ազատել այս մահամերձ հասարակութեանը... Խոսիր, ասա՛ մեզ, ազատիր այս թշուառներին՝ թէկուզ իմ—ծերունուս կեանքի գնովը...

—Զոհ չէ նրանց ուզածը, ասաց դիւրութեամբ Խոսրէվը—այլ զոհեր, աւերուածութի՞ւն... Ազատութեան գործը չէ բաւականանում մէկ կամ երկու զոհով... Դուք աեսաք, չը կամեցաւ նա միայն իմ արիւնովը գոհ լինել... Մնում է մի բան...

—Ասա՛... գոչեցին յոյս առած գէբրերը բոլորը մօտ գալով—հրամայիր և մենք պատրաստ ենք։

Երիտասարդը պահ մի լուռ, գլուխը խոնարհած՝

մտածեց։ յետոյ, մէկէն ուղղուեց, բոցափայլ աչքերով նայեց ամենքին, բայց առանց մի խօսք ասելու՝ արագ քայլերով մտաւ ատրուշան, մի վայրկեան ուշանալուց յետոյ այնտեղ՝ դուրս եկաւ և բազի մէջ տեղ, վեր ցցելով ձեռքը, ցոյց տուաւ հօմի խմելիքի ոսկեայ մի բաժակ, որ լի էր կրակով և գոչեց.

— Ահա... սրբազան կրակն է այդ, որ Միհրան տալիս է ձեր ձեռքը, նրանով կամ ոչնչացնելու Հարութիւնը և կամ ինքներդ – ձեզ ոչնչացնելու. .

Կրակապաշտները սարսափած՝ ետ քաշուեցին նրանից։ Մովբէդը կարկամած՝ կռթնեց պատին։ Բժիշկը ոչինչ չը հասկանալով այդ բոլորից՝ ապշած նայում էր տեսարանին։

— Սրբազան կրակը... բացագանչեց վերջապէս ծերունի քրմապետը—դու խենթ ես, Խոսրէվ... սրբազան կրակը իր տեղից չարժել...

—Եւ ինչ օգուտ ունի նա այնտեղ, ծերունի, գոչեց երիտասարդը բորբոքուած—ինչու նա անշարժ՝ վառուի հնոցի մէջ և մարդիկ գան միայն երկրպագելու նրան... ինչու է նա, երբ չը պիտի մարդկային ձեռքերով նետուի Հարութեան դէմքին և չը պիտի՝ կարողանայ փրշրուելով ամէն մի բռնութեան գլխին՝ հազարաւոր կայծերով խանձել ու մրկել բոլոր գայլերին ու վագրերին և ոչնչացնել իրեն մարել կամեցողներին... Միհրայի երկրպագուներ, եթէ դուք կամենում էք ապրել՝ գործածեցէք կրակը, կայծեր հանէք նրանից, շանթեր կռեցէք նրա իւրաքանչիւր կայծից, խորը, խորը մղէք Հարութեան և բռնութեան կրծքին և թող նա, լափելով գարշն ու աղտեղին, գաղանն ու բռնաւորին՝ արծածուի, մեծանայ... Սրբազան կրակը ժամանակ է արծարծելու այլ ոչ թէ հօմով կամ փայտով, այլ դիակներով... Քայլենք Հարութեան դէմ կռուելու. թող ընկնեն մեզնից գոնէ շատերը. բայց Միհրան կանգուն կը պահէ մեզնից գոնէ մէկին և նա թող արծարծէ կրակը ու մեծացնէ նրան ապագայի համար... Քայլենք, գինուեցէք ինչով կարող էք և բացէ՛ք դռները ..

XV.

Այսպէս խօսեց զրադաշտականների նոր առաքեալը։

Եւ նա ապրեց ինքնապաշտպանութեան կռուի մէջ, ապրեն մի բուռը բաջերի հետ, որոնք յանկարծ բացին դուռը, գրոհ տուին կատաղի ամբոխի վրայ, շփոթեցրին, խառնեցին իրար, ոտնատակ տալով ջարդ ու փշուր արին իրենց դէմ եկողներին և յաջողուեցին անցնել նրանից։

Դրսում նրանց օգնութեան հասան մի կողմից խէսփուշները, միւս կողմից Զոհրայի և բժշկի մնացած ծառաներն ու կազմած խմբի մասը։

Եւ բժշկին յաջողուեց վիրաւորուած Խոսրէվին աբիւնոտ ու ջարդուած՝ ձգել Զոհրայի կառքի մէջ։

Կառքը սլացաւ, խէսփուշները վրայ տուին, սակայն, նրանց հաղար թումանը կորսուեց, երիտասարդ զէրը չընկաւ Այիշէի ձեռքը, որովհետև Զոհրայի ձիերը յաջողուեցին առնել—տանել և օլորապտոյտ փողոցներով անյետացնել նրան։

Կռուի մէջ առաջին ընկնողներից մէկը Ծերունի Մովբէդը եղաւ։

Երբ ամբոխը ցրուել էր, նրան գտան մի պատի տակ ընկած մէջքի վրայ, կուրծքը գաշոյնով պատռած։

Ու բարի ծերունու սառած դէմքն և հայեացքը այնքան երանութիւն էին արտայայտում, որ գտնողները, մինչև Դախմէն, լուռ արտասուում էին, ափսոսալով կորցրած լինելուն համար մի թանգագին իշխանապետի...

Աւելի քան տասը կէրը մտան Դախմէ և նոյնքան էլ վիրաւոր՝ տարուեցան մայրաքաղաքից դուրս։

Նրանց տունն ու ատրուշանը թալանուեց և աւերուեց հիմնովին։

Իսկ Խոսրէվը, Շիր—Ալի խան բժշկի և Զոհրայի խնամքների տակ—հեռու, Շիմրանի լեռնոտ գիւղերից մէկում երկար պառկելով՝ տառապում էր, առանց սակայն մտածելու, որ իրեն սիրող կինը թողել էր ամէն ինչ և սպասում էր նրանից պատասխան։

Երիտասարդի սիրտն ու միտքը հեռու, շատ հեռու էր։ Նա դեռ ևս հարցեր ունէր Վոհու—Մանոի միջոցով՝

Ահուրա—Մազդային տալու, նա դեռ նոր միայն խորհում էր սրբազան կրակը հանելու ատրուշաններից և վառել նրան մարդկանց սրտերում, պատրաստելու համար մի նոր, այնպիսի սերունդ, որին յաջողուէր, մանկութիւնից սկսած, զինուել խաւարի, չարութեան դէմ և որ սնանուէր կրակով և նրա սփռուած լոյսով։ Լոյս, որ ի պահանջել հարկին արեան գոյնով ցոլար և որ կարողանար իր թշուառ ու տառապող հայրենիքին ազատել վերջապէս Ահրիմանի և նրա բոլոր դևաների, այսինքն հոգեբրի, տանջանքների, ճնշողների, տգիտութեան և ապականութեան ձեռքերից...

Ու այսպիսի մեծ մտքերով համակուած՝ ոչ Այիշան էր նրան զրաղեցնում և ոչ Զոհրան նրան գրաւում...

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԽՆԴԻՐ

Ա. ՉԵԽՈՎԻ

—

Ուսկովների տոհմական գաղտնիքը որ և է դէպքում դէպի փողոց չսայթաքելու համար՝ պահպանուած էր շատ խիստ միջոցներ։ Ծառաների մի մասը թոյլտուութիւն առած թատրոն ու կրկէս էին գնացել, բայց միւս մասն անշարժ նստել էր խոհանոցում։ Հրամայուած էր ոչ-ոք չընդունել։ Գնդապետ-հօրեղբօր կինը, նրա քոյրը և դաստիարակչուհին թէպէտ և մասնակից են գաղտնիքին, սակայն իրանց այնպէս են ցոյց տալիս, իբր թէ ոչինչ չգիտեն։ Նրանք միշտ նստում են սեղանատանը, ուստի և չեն երևում ոչ ընդունարանում և ոչէլ դահլիճում։

Սաշա Ուսկովը քսանուհինգ տարեկան երիտասարդ, որի պատճառով առաջ էլ եկել բոլոր խառնակութիւնը, վաղուց էր տուն եկել։ Իւր քեռի—բարի Իւան Մարկովիչի խորհրդով նայուում ու հանդարտ նստել էր դահլիճն ու առանձնեակը բաժանող դրան մօտ ու ինքն իւր մտքի մէջ պատրաստւում էր ամեն ինչ բաց և անկեղծօրէն բացատրել։

Դրան ետևում—առանձնեակում տեղի ունէր ընտանեկան խորհուրդ։ Խօսում էին ինչ որ անախորժ, սակայն զգուշաւոր նիւթի մասին։

Սաշա Ուսկովը բանկերից մէկում մի կեղծ մուրհակ էր գեղջել, որի վճարման պայմանաժամը երեք օր առաջ էր լրացել և այժմ Սաշայի երկու հօրեղբայրներն ու քեռին—Իւան Մարկովիչը վճռում են խնդիրը,—վճարել, արդեօք, պարտատէրերին և անաղարտ պահել իրանց տոհմի պատիւը, թէ ձեռք լուանալ ու գործը յանձնել դատաստանական իշխանութեան։

Կողմնակի և ոչ մի առնչութիւն չունեցող մարդկանց համար այդպիսի հարցերը շատ հեշտ են թւում, սակայն այն

մարդկանց համար, որոնք խրուած են անբախտութեան մէջ, այդպիսի խնդիրների լրջօրէն վճռելու դժուարութիւնները մեծ են։ Եւ երիտասարդի քեռին ու հօրեղբայրները շատ վաղուց են խօսում, սակայն խնդիրը ոչ մի կերպ չէր վճռւում։

—Պարոններ, խօսում է գնդապետ հօրեղբայրը յոգնածութիւնով ու տրտմութիւնով լի ձայնով.—պարոններ, ով է ասում թէ՝ տոհմական պատիւը նախապաշարմունք է։ Ես ձեզ միայն նախազգուշացնում եմ սնոտի հայեացքներից և աններելի սխալմունք գործելու կարելիութեան ապացոյց եմ բերում։ Դուք, ինչպէս չէք հասկանում։ Ես հօ չինարէն չեմ ասում, ես ռուսերէն եմ խօսում։

—Սիրելիս, մենք հասկանում ենք. հեզ ձայնով ասում է Իւան Մարկովիչը։

—Ինչպէս էք հասկանում, մինչդեռ ասում էք, իբր ես չեմ ընդունում տոհմական պատիւը։ Կրկնում եմ մի անգամ ևս. *Սնոտի հասկացողութեամբ ընդունուած տոհմական պատիւը նախապաշարմունք է... կեղծ հասկացողութեամբ...* Մի ինչ որ չարժառիթով ծածկել և անպատիժ թողնել խաբեբային, ով և նա լինի, այդ տոհմական պատուի փրկութիւն չէ, այլ քաղաքացիական վախկոտութիւն։ Դուք օրինակ առէք զօրքը... Զօրքի պատիւը աւելի թանգ է, քան մի ուրիշ պատիւ, այսուամենայնիւ մենք չենք ծածկում մեր յանցաւոր անդամներին։ Մենք դատապարտում ենք նրանց. և մթթէ այսպիսով վնասւում է զօրքի պատիւը։ Ընդհակառակն...

Միւս հօրեղբայրը պետական պալատի ատիճանաւոր լրռակեաց, սահմանափակ զարգացմամբ և ոսկրացաւոտ մի մարդ՝ լուռ նստած էր։ Եւ եթէ խօսում էր, միմիայն ասում էր, որ Ուսկովների տոհմի դատական գործը լրագրերի նիւթ կդառնայ, ուստի և նորա կարծիքով այդ գործը պէտք է հենց սկզբից հանգցնել և չհասցնել հրապարակական խօսակցութիւնների։

Քեռին—բարի Իւան Մարկովիչը խօսում է մեղմ և դողդոջուն ձայնով։ Նա իւր խօսքն սկսում է ապացուցանելով, որ երիտասարդութիւնն ունի իւր որոշ արամադրութիւնը, որ զանազան զուարճութիւններով յափշտակուելը ուղիղ նորա յատկանիշնէ։ Այսպիսի հասակում մեզանից ով չի յափշտակուել։ Մի կողմ թողնելով սովորական մահկանացուներին, մինչև անգամ մեծ մարդիկն էլ երիտասարդ հասակում չեն խուսափել հրա-

պոյրներից ու զանազան սխալներից։ Երիտասարդ հասակում մեզանից ով չի խմել, ով չի փողեր ծախսել—չռայլութեամբ փչացրել և արժանացել առողջամիտ մարդկանց բարկութեան։ Եթէ Սաչան իւր զուարճութիւնները հասցրել է յանցագործութեան, այդ դէպքումն էլ նկատի պէտք է առնել նորա անկիրթ լինելը։ Չէ՞ որ նա ոչ մի տեղ կանոնաւոր ուսում չէ ստացել։ Նրան հեռացրել են գիմնազիոնի հինգերորդ դասարանից։ Ծնողներից զրկուել է դեռ մանուկ հասակում: Նա իւր վերայ հսկող աչք և բարի ազդեցութեան տակ պահող խրատատու չէ ունեցել։ Նա շատ ջղայնոտ է, դիւրագրգիռ և, որ գլխաւորը ն է, բախտից արհամարհուած։ Եթէ նա յանցաւոր է, դարձեալ պէտք է նրան ներել, ցաւել և ցաւակից լինել։ Այո, արժէ նրան պատժել, բայց նա արդէն պատժուած է, նա տանջւում է խղճի ամօթով, որով սպասում է տեսնել թէ ինչ դատավճիռ կլինի իւր ազգակիցների կողմից։ Զօրքի հետ արած համեմատութիւնը, որ յայտնեց գնդապետը, գեղեցիկ է և պատիւ է բերում իւր բարձրագին դատողութեան։ Հրաւէր կարդալ դէպի քաղաքացիական զգացմունքը, խօսել հոգու ազնուութեան մասին՝ աքանչելի են, սակայն չպէտք է մոռանալ, որ քաղաքացին իւրաքանչիւր անհատի մէջ ամուր կապով միացած է քրիստոնեայի հետ։—Եթէ յանցաւոր երեխային մահուան պատժի ենթարկելու փոխարէն օգնութեան ձեռք մեկնենք նորան, կդրժենք, արդեօք, մեր քաղաքացիական պարտականութիւնը. հոգոց հանելով բացականչեց Իւան Մարկովիչը։

Ապա Իւան Մարկովիչը խօսեց տոհմական պատուի մասին։ Թէպէտ ինքն այդ տոհմին չէր պատկանում, բայց շատ լաւ գիտէր, որ այդ նշանաւոր ցեղն իւր սկիզբն առել է 13-րդ դարում։ Նա ոչ մի բոպէ չէր մոռանում, որ իւր անմոռանալի քոյրը այդ տոհմի ներկայացուցիչներից մէկի կինն էր։ Մի խօսքով այդ տոհմի պատիւը նա թանկ էր գնահատում և նա ոչ մի կերպ չէր կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ թոյլատրելի է որ և է 1500 ռուբլու համար ստուեր ձգել ամեն գնից բարձր կանգնած դրոշմագիտական ծառի վերայ։ Երբ սեսաւ վերոյիշեալ պատճառաբանութիւնները համոզեցուցիչ չէին, այն ժամանակ նա սկսեց բացատրել իսկական յանցանքի նշանակութիւնը։ Յանցանքն անբարոյական գործողութիւն է, որի հիմքը չար կամքն է։ Բայց ազնիւ է մարդկային կամքը։ Այս հարցին գիտութիւնը դեռ դրական պատասխան

չի տուել: Գիտնականները զանազան հայեացքներ ունին: Օրինակ Լոմբրոզոյի նորագոյն չկոլան գտնում է, որ ազատ կամք չկայ և ամեն մի յանցանք նա վերագրում է անհատի անդամազննական յատկութեան:

—Իւան Մարկովիչ, խօսեց գնդապետը աղերսալի ձայնով. Մենք խօսում ենք լրջօրէն, իսկ դուք յիշում էք Լոմբրոզո: Խելօք մարդ, մտածեցէք թէ այդ բոլորն ինչու համար էք ասում: Միթէ դուք կարծում էք, որ ձեր հռետորութիւնը և այդ որոտագին խօսքերը կպատասխանեն մեր հարցերին:

Սաչա Ուսկովը դրան մօտ նստած լսում է: Նա ոչ երկիւղ է զգում, ոչ ամօթ, ոչ տաղտկութիւն: Նա զգում է միմիայն յոգնածութիւն և հոգու դատարկութիւն: Կներեն նորան, թէ ոչ. այդ մասին նա անտարբեր է: Եւ եթէ նա եկել է այդ տեղ իւր դատավճիռը լսելու և անձամբ բացատրութիւններ տալու, այդ արել է միմիայն բարի Իւան Մարկովիչի խնդիրը յարգելով: Ապագայից նա չէ վախում: Նորա համար միևնոյն է. թէ այդ դահիճում, թէ բանտում, թէ նոյնիսկ Սիբիրում.

—Սիբիր... Սիբիր կգնամ, միևնոյն է. մտածում էր նա:

Կեանքը նորա համար դարձել է զզուելի և անտանելի: Պարտքերի մէջ է խրուել, գրպանումն էլ գրօշ չկայ: Ազգականներն երես են դարձրել, վաղ—ուշ ընկերակիցներից ու կանանցից էլ պէտք է բաժանուի, որովհետև նրանք էլ ատելութեամբ են վերաբերուում հետը և այդ բոլորը իւր խառնափնթոր շարժմունքների պատճառով: Ապագան մռայլոտ է:

Սաչան անտարբեր է, նրան վրդովում է միայն միհանգանմանք—այն, որ դրան ետեւում իրան անպիտան յանցաւոր են հռչակում: Ամեն մի րոպէ նա պատրաստ էր հետեւել դէպ այն կողմը և գնդապետի ատելի, մետաղահնչիւն ձայնին պատասխանել:

—Դուք ստում էք:

Յանցաւոր խօսքը սարսափելի է: Այդ անունը տալիս են մարդասպաններին, գողերին, կեղեքիչներին, առհասարակ չար և բարոյապէս մեռած մարդկանց, բայց Սաչան այդ բոլորից հեռու է կանգնած: Ճշմարիտ է, նա շատ պարտքեր ունի և չի վճարում, բայց չէ՞ որ պարտք ունենալը յանցանք չէ: Քիչ մարդ կգտնուի, որ պարտք չունենայ: Գնդապետն ու Իւան Մարկովիչն էլ շատ պարտքեր ունին:

—«Էլ ի՞նչ յանցանք ունիմ ես. մտածում է Սաչան:

Նա զեղջիլ է կեղծ մուրհակներ, բայց չէ՞ որ այդպէս ասրել և անում են իւր բոլոր երիտասարդ ծանօթները։ Օրինակ Խանդրիկովը և փօն-Բուրօտը ամեն ժամանակ՝ երբ նրանց փող է հարկաւորւում, զեղջում են ծնողների կեղծ մուրհակները և ժամանակամիջոցը լրանալուց ազատում նրանց։ Սաչան արել է միևնոյնը, բայց չէ կարողացել մուրհակն իւր ժամանակին յետ առնել, որովհետև Խանդրիկովը խարեց և փոխարինաբար տալու խոստացած փողը չտուաւ։ Ուրեմն յանցաւորը ինքը չէ, այլ հանգամանքը։ Ճշմարիտ է կեղծ ճանապարհով ուրիշի ստորագրութեամբ օգտուելը աններելի է, բայց յամենայն դէպս դա յանցանք չէ, այլ ընդունուած սովորութիւն, տգեղ ձևականութիւն, որոնք և ոչ մէկին չեն կարող վնասել։ Սաչան գնդապետի ստորագրութիւնը կեղծելով, նկատի չէ ունեցել որ և է մէկին վնաս կամ չարիք առաջ բերելու։

—Չէ, այս չէ նշանակում թէ՝ ես յանցաւոր եմ. մտածում է Սաչան։ Յանցանք գործելու բնաւորութիւն էլ չունիմ։ Իմ սիրտը քնքոյշ է, զգայուն է։ Փող ունեցածս ժամանակ ես պատրաստ եմ չունևորին օգնել։

Սաչան այսպէս մտածում էր, իսկ դրան ետևում դեռ խօսում էին։

—Պարոններ, մեր խօսքին վերջ չեղաւ, տաքացած ասում է գնդապետը։ Երեկայեցէք, որ մենք ներել ենք և նորա պարտքերը վճարել, չէ՞ որ այնուհետև նա կգնայ և կշարունակէ իւր անկանոն կեանքը։ Շռայլել, պարտքեր անել, մանել մեր դերձակների մօտ և մեր անունով իւր համար հագուստներ պատուիրել։ Վերջապէս կարող էք երաշխաւորել, որ այս նորա վերջին յանցանքը կլինի։ Ես լիովին հաւատացած եմ, որ նա երբէք չի ուղղուիլ։

Իբրև նորան պատասխան պետական պալատի աստիճանաւորը ինչ որ չչնչաց, նրանից յետոյ Իւան Մարկովիչը խօսեց իրան յատուկ սահուն և մեղմ ոճով։ Գնդապետը անհանգիստ շարժում է աթոռը և խլացնում ընկերներին իւր ատելի, մետաղահնչիւն ձայնով։ Վերջապէս դուռը բացւում է և առանձնակից դուրս է գալիս Իւան Մարկովիչը։ Նորա նիհար և սափրուած այտերին առաջ էին եկել կարմրաթոյր բծեր։

—Գնանք, ասաց նա Սաչայի ձեռից բռնելով։ Եկ, և ան. կեղծ սրտով, առանց գոռոզութեան, այլ խոնարհ և հնազանդ հոգով բացատրուիր, սիրելիս։

Սաչան գնում է առանձնեակը։ Պետական պալատի աստիճանաւորը նստած է։ Գնդապետը ձեռները վարդիկի գրպանները խրած, մի ծունկը թեքած աթոռին, կանգնած է սեղանի առաջ։ Սենեակը լի է ծխախոտի ծխով։ Սաչան չի նայում ոչ գնդապետին, ոչ աստիճանաւորին։ Ամօթը յանկարծ սեղմում է նորան։ Նա անհանգստութեամբ նայում է Իւան Մարկովիչին և շշնջում.

Ես կվճարեմ... ես կտամ...

—Ինչ բանի վերայ յոյս դրիր, որ մուրհակ զեղջեցիր։ Լսեց նա մետաղահնչիւն ձայնը:

—Ես... ինձ խոստացաւ ժամանակաւորապէս պարտք տալու Խանդրիկովը։

Սաչան ուրիշ ոչինչ չկարողացաւ ասել։ Նա դուրս եկաւ առանձնեակից և կրկին նստեց դրան մօտ աթոռին։ Մեծ սիրով նա կամենում էր հեռանալ այդտեղից, սակայն ոխակալութեան ցանկութիւնը ճնշում էր նորան։ Նա ուզում էր անարգել գնդապետին և մի արհամարհական խօսք նետել նորա երեսին։ Սա նա նստած մտածում էր թէ ինչ տեսակ կծու խօսք ասէ տալի հօրեղբօրը։ Այդ միջոցին դահլիճում տիրած մթնշաղի մէջ երևաց մի կին։ Դա գնդապետի կինն էր։ Նա կանչեց իւր մօտ Սաչային և, ձեռներն իրար սեղմելով, լացախառն ձայնով ասաց.

—Ալեքսանդր, ես գիտեմ՝ դուք ինձ չէք սիրում, բայց լսեցէք ինձ, լսեցէք, խնդրում եմ Ձեզ։ Սիրելիս, այդ ինչպէս պատահեց։ Չէ՞ որ դա սարսափելի է, սարսափելի։ Իսէր Աստուծոյ խնդրեցէք նրանց, արդարացրէք ձեզ, աղաչեցէք...

Սաչան նայում էր նորա սառսառող ուսերին, տեսնում էր արցունքի խոշոր կաթիլները, որոնք ոռոգում էին նորա այտերը, իսկ իւր ետևում լսում էր յոգնած, նեղացած մարդկանց խուլ ու զրգռուած ձայներ և այդ ժամանակ ինքն էլ շարժում էր իւր ուսերը։ Նա ոչ մի կերպ չէր սպասում, որ իւր արիստոկրատ ցեղակիցները մի ինչ որ 1500 ռուբլու համար այդպէս փոթորիկ կբարձրացնեն։ Նորա համար անհասկանալի էին և արտասուքները և դողդոջուն ձայները։

Մի ժամից լսում է, որ գնդապետը յաղթում է քեռուն և որ վերջապէս վճռում են գործը յանձնել դատաստանական իշխանութեան։

—Վճռուած է, բաւական է... ասում է գնդապետը, խոր

հոգոց հանելով։

Այդպիսի վճռից յետոյ քեռին, աստիճանաւորը, մինչև իսկ դաժան գնդապետը հոգեպէս ընկճւում են։ Տիրում է լռութիւն։

—Տէր Աստուած, տէր Աստուած, հառաչում է Իւան Մարկովիչը։ Խեղճ իմ քոյր, խեղճ...

Եւ նա սկսում է հանդարտ խօսել. իբր թէ անչուշտ այդ պահուն առանձնեակում աներևոյթապէս գտնւում է իւր քոյրը —Սաշայի մայրը։ Նա հոգով զգում է, որ այդ սուրբ, անբախտ կինը լաց է լինում, հառաչում է և աղաչում է իւր որդու համար։ Եւ աւելացնում է, որ գէթ նորա հոգու հանգստութեան համար հարկաւոր էր խնայել Սաշային։

Լսւում են հեծկլտանքներ։ Իւան Մարկովիչը լաց է լինում և ինչ որ բան է ասում, որ դրան արանքով դժուար էր հասկանալ։ Գնդապետը անց ու դարձ է անում անկիւնից—անկիւն. խօսակցութիւնը սկսւում է նորից։

Ահա ընդունարանում ժամացոյցի զանգը երկու անգամ յարում է։ Ընտանեկան խորհուրդը վերջացած է։ Գնդապետը, որպէս զի իւր արիւնը պղտորող մարդուն չտեսնէ, անցնում է հաշտով։ Իւան Մարկովիչը մտնում է դահլիճ։ Նա յուզուած է, բայց ուրախ-ուրախ չփում է ձեռները, արտասուաթոր աչքերը նայում են խնդալով, շրթունքներն էլ ժպտում են։

—Շատ լաւ, ասում է նա Սաշային. փառք Աստուծոյ դու, իմ սիրելիս, կարող ես գնալ տուն և հանգիստ քնել, վճռեցինք պարտքդ վճարել, մուրհակդ ազատել, այն պայմանով միայն, որ դու ապաշաւես և վաղն իսկ գնաս մեր գիւղը և գործի կենաս։

Մի քանի րոպէից Իւան Մարկովիչը և Սաշան վերարկուները ու գլխարկները հագած իջնում են սանդուղքներով։

Քեռին խրատներ էր շշնջում, Սաշան չէր լսում։ Նա զգում էր, ինչպէս իւր ուսերը հետզհետէ թեթևանում էին մի ծանր, ճնշող ու սպմող բեռից։ Նորան ներել են, նա ազատ է։ Ուրախութիւնը քամու քնքշութեամբ զովացնում է նորա սիրտը։ Նա կամենում է շունչ քաշել, արագ շարժուել, պպրել... Նայելով փողոցի լապտերներին և սեացած երկնքին, նա յանկարծ յիշեց, որ փոն-Բուրար իւր անուանակոչութեան առիթով Աղջ ճաշարանում տօնահանդէս է սարքել, ուստի և խորին ուրախութիւնը ծփում է նորա սրտում։

—Կգնամ. վճռում է նա։

Եւ յանկարծ ուշքի է գալիս, որ իւր գրպանում կոպէկ չունի և որ իւր ընկերներն այժմ ատում են իրան, հենց անփող լինելու պատճառով։

—Պէտք է ինչպէս և լինի փող ճարեմ։

—Քեռի, իբրև պարտ ինձ մի հարիւր ռուբլի տուր. ասում է նա Իւան Մարկովիչին։

Քեռին զարմացած նայում է նորա երեսին և յետ է մըղում դէպի լապտերի սիւնը։

—Տուր, ասում է Սաշան, անհամբերութեամբ տրորուելով և սկսելով խոր հեալ։ Քեռի՛, ես խնդրում եմ, տո՛ւր հարիւր ռուբլի։

Նորա դէմքը ծամածռուել էր, նա դողում էր և արդէն պատրաստւում էր յարձակուել մօրեղբօր վերայ։

—Չե՞ս տալ, հարցնում է նա, տեսնելով, որ մօրեղբայրը ապշել է և ոչինչ չի հասկանում։ Եթէ չտաս, այն ժամանակ վաղն ես ինձ կմատնեմ։ Ես չեմ թոյլ տալ, որ դուք ազատէք իմ մուրհակը։ Ես մի նոր, կեղծ մուրհակ կգեղջեմ։

Իւան Մարկովիչը ցնցուած, երկիւղի մէջ, ինչ որ անկապ խօսքեր չընջալով, փողամանից հանեց մի հատ հարիւր-ռուբլիանոց թղթադրամ և մեկնեց Սաշային։ Նա առաւ և արագութեամբ հեռացաւ նրանից։

Կառք վարձելով, Սաշան հանդստացաւ և զգաց, որ սիրտը նորից վառւում է ուրախութեամբ։ Երիտասարդութեան պահանջները, որոնց մասին խօսում էր Իւան Մարկովիչը, զարթեցին և ապստամբեցին։ Սաշան պատկերացնում է աչքի առաջ առաջիկայ գինարբութիւնը և նորա գլխում շիշերի, կանանց և ընկերների արանքում ծփում է մի միտք ու նա չընջում է։

Այժմ ես տեսնում եմ, որ յանցաւոր եմ, այո՛, ես յանցաւոր եմ։

Թարգմ. Ա. Ե.

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ [1])

Գլուխ Ե

Մայիսի 30 ին Նալբանդեանցը ժամանում է Կալկաթա, անցնելով Մարսելի, Եգիպտոսի, Ադէնի, Սէյլոնի և Մադրասի վերայով, բազմաթիւ և ահարկու մրրիկների ու ալէկոծութեան ենթարկուելով և Սուէզից մինչև Կալկաթա հասելու համար միայն գործ դնելով 24 օր ժամանակ։ Ադէնում նա լիշում է հին արաբական թատմօրը, որ երբեմն շինել էր Սողոմոնը և որ վերջերը նիւթ էր եղել արաբ բանաստեղծներին, իսկ Սէյլոնում նա մտաբերում է Յիսուսեան կարգի պատմութիւնը, որովհետև, ինչպէս յայտնի է, ճեզուիթները հաստատուել էին այնտեղ, երբ նոր միայն կազմակերպուել էր այդ «դժոխային» կարգը։ Նա իջևանում է Կալկաթայի Դուրոմտուլլահ մասի Գալլայս հիւրանոցում—Hotel gallais, և մի օր հանգստանալուց յետոյ, միւս օրը, Մայիսին 31-ին, ձեռնարկում է գործին։ Նա նախնական տեղեկութիւններ հաւաքելու համար, գործի մասին ու տեղական հայերի հետ ծանօթութիւն կապելու համար որոնք կարող էին և պէտք է օգնէին նորան իւրեանց ունեցած տեղեկութիւններով և առաջնորդէին ու ղեկավարէին նորա առաջին քայլերը նոր երկրում, նոր պայմաններում իբրև տեղին ու հանգամանքներին ծանօթ մարդիկ, նախապէս այցելում է Յարութիւն Արգարեանցին, որ այդ ժամանակները 85 ամրեկան մի պատկառելի ծերունի էր և որ իւր հարստութեամբ ու մեծակշիռ առևտրական գործերով հռչակուած էր Ասիայում և Եւրոպայում։ Ծերունին Մասեհ Բաբաջանեանի կտակի մասին յայտնում է, թէ տունը և խանութները գրտնուում են Կալկաթայի ընդհանրական ադմինիստրասիո-

---

[1]) Տես «Լումայ» № 3 1904։

նի կամ վարչութեան ձեռքին, ուսաի և խորհուրդ է տալիս նախապէս ներկայանալու այդ վարչութեան նախագահին, այն է ռեգիստրատորին և ադմինիստրատորին, որի ազգանունն էր Հագ – hagge։

Յունիսի մէկին, Համբարձման օրը, Նալբանդեանցը ներկայանում է պ. Հագին, յայտնում է նորան իւր ով լինելը և ինչ նպատակով Կալկաթա գալը և ցոյց է տալիս իւր երեսփոխանութեան թուղթը։ Հագը պատասխանում է, թէ գործը պէտք է սկսել օրինական կարգով այսինքն այն օրէնսգէտի ձեռքով, որի մօտ գրտնուում է հանգուցեալ Մասեհի կտակագիրը, Այդ օրէնսգէտները պատկանում էին գլխաւոր դատարանի կազմին, որ կոչուում էր «Սուպրեմ-կորտ», և անգլիական պետական օրէնքով ամեն մի գործ սկսւում էր նոցա ձեռքով, նոցա քննութեամբ ու դատողութեամբ մրտնում էր ասեան դատաւորների վերաքննութեան և վախճանական վճռահատութեան համար։ Մասեհի կտակը գտնուում էր հայ օրէնսգէտ պ. Պետրոս Յակովբ Պօլի ձեռքին, որ կատարում էր Աբգարեանցի բոլոր դատարանական գործերը։ Այս պատճառով էլ Աբգարեանցը գնում է Նալբանդեանցի հետ իւր որդի Սէթին և ուղարկում է յիշեալ Պօլի մօտ, յանձնարարելով որդուն ասել իւր կողմից օրէնսգէտին, որ նա ամենայն ժրաջանութեամբ հետևի ու հոգաբարձու լինի գործին։ Պօլն առնելով երեսփոխանութեան թուղթը տալիս է իւր դիւանատան թարգմանին՝ Ֆրանսերէն բնագրից թարգմանելու անգլիերէն, և պատուիրում է Նալբանդեանցին գալ իւր մօտ երկու օրից։

Նշանակուած օրը, Յունիսի 5-ին, Նալբանդեանցը գնում է օրէնսգէտի մօտ, և նա առնելով երեսփոխանութեան թղթի անգլիական թարգմանութիւնը բնագրի և կտակագրի հետ միասին, հէնց նոյն օրը պաշտօնական գրութեամբ ուղարկում է պ. Հագին։ Այդ գրութեան մէջ օրէնսգէտը զեկուցանելով Հագին Նալբանդեանցի գալու և երեսփոխանութեան թղթի որպիսութեան մասին, պահանջում էր, որ, նախ, իրան մատուցուի մանրամասն հաշիւ անշարժ կալուածքի ելքի ու մուտքի մասին վարչութեան ձեռքն անցնելու

օրից և, երկրորդ, պատրաստ է տունը Նալբանդեանցին յանձնելու։ Հագն այդ գրի պատասխանն իսկոյն չի գրում, այլ յայտնում է Նալբանդեանցին, որ գնացել էր նորա մոտ փութացնել տալու գործը, թէ մի շաբաթից կգրէ պատասխանը։ Գործի այսպէս ուշացնելուց թէ Նալբանդեանցը, թէ Կալկաթայի Հայերը և թէ օրէնսգետն եզրակացնում են, թէ Հագը միտք չունի տալու տունը և հաւաքուած գումարն առանց դատաստանական երկար ու բարակ վիճաբանութեան, որովհետև կտակի զօրութեամբ ինքն օգտուում էր արդիւնքից «առ հարիւրն հինգ», նամանաւանդ որ նա, ինչպէս հարևանցի հասկացրել էր Նալբանդեանցին, առիթ էլ ունէր—Նախիջևանի հասարակութեան այդքան տարուայ լռութիւնը։

Օգտուելով այդ մի շաբաթ ժամանակամիջոցից, Նալբանդեանցը գնում է տեսնելու անշարժ կալուածքը և տեղեկութիւն հաւաքելու կալուածքի ընդհանուր արժէքի, տարեկան բերած եկամտի և մինչև այդ ժամանակ հաւաքուած գումարի քանակութեան մասին։ Մեծ տունը և խանութները գտնուում էին Հայոց Ս. Նազարէթ եկեղեցու մոտ «Չինի բազար» կոչուած փողոցում, որ համարեա թէ առաջինն էր Կալկաթայում ոչ իւր գեղեցկութեամբ, այլ իւր առևտրական բոնուկութեամբ։ Շինութիւնները բարեշէն էին և, պէտք է արդարութեամբ խօսել և իրաւունք տալ վարչութեանը, պահուած էին այնպիսի հոգացողութեամբ և խնամքով, որ, կարծես, միայն մի հինգ տարով դորանից առաջ շինուած լինէին։ Կալսուածքի ընդհանուր արժէքը, Հայերից և օտարներից քաղած տեղեկութիւնների համեմատ, հասնում էր մօտաւորապէս հինգ հազար ֆունտ սաերլինգի, այսինքն 50,000 ռուբլի արծաթ։ Մի ռուբլին պարունակում է իւր մէջ ճիշտ երկու անգլիական շիլինգ, ուստի և տասը ռուբլին անում էր մի ֆունտ ստերլինգ։ Մեծ տան և խանութների եկամուտը, Հայերի ասելով, հասնում էր ամիսը 225 ռուբլի, ուրեմն տարին—2700 ռուբլի, այնէ 270 ստերլինգ։ Այս գումարից վարչութիւնը ստանում էր «առ հարիւր հինգ», նոյնպէս և վճարուում էր տէրութեան գանձարանին

զետնի հարկը։ Իսկ մնացեալը հաւաքուում էր վարչութեան գանձարանում և աճում էր անդադար։ Իսկ ինչ որ վերաբերում էր մինչև այդ ժամանակները հաւաքուած գումարի քանակութեան,—սչ ոք ոչինչ չէր կարողանում ասել, որովհետև այդ հաշիւները չէին հրատարակում ի լուր հասարակութեան և ամեն բան պահուում էր վարչութեան մէջ ադմինիստրատորի հրսկողութեան ներքոյ։ Կմնար, ուրեմն, այդ մասին տեղեկութիւն ստանալու համար, համբերել, մինչև որ, օրէնսգէտի պահանջին համեմատ, պ. Հագը պաշտօնապէս հաշիւ ներկայացնէր։

Մի բան շատ զարմացնում է Նալբանդեանցին, և այդ մասին նա միտքն է դնում խօսել Կորտի ատեանում,—այդ եկամտի սակաւութիւնն էր. որքան ստոյգ էր, որ տան և խանութների տարեկան եկամուտը հասնում էր 270 ֆունտ ստերլինգի։ Նրան յանձնուած թղթերից երևում էր, որ 1825 թուի Ապրիլի 10-ին Կալկաթացի Տէր-Յովսէփ քահանան Եփրեմ կաթուղիկոսի ցանկութեամբ ստացել է Կորտից ի թիւս ուրիշ թղթերի և մի ելից ու մտից հաշիւ, որից յայտնուել է, թէ տան և խանութների տարեկան եկամուտը եղել է այն ժամանակ 215 ֆունտ ստերլինգ։ Սորանից, ուրեմն. պէտք էր եզրակացնել, որ այն ժամանակից մինչև 1861 թիւը, այսինքն 40 տարուայ մէջ միայն 10 ռուբլի էր աւելացել ամսական արդիւնքի վերայ, որ մի անկարելի բան էր, որովհետև Կալկաթայում ոչ թէ միայն տների ու խանութների, այլ և ամեն բանի գին ու վարձադրամ կրկնապատկուել էր, և այն ոչ 40 տարուայ մէջ, այլ մի տարուայ [8])։

---

[8]) Անցեալ տարի Նախիջևանի եկեղեցական հոգաբարձութեան ընդհանուր ժողովին, 1903 թուի ապրիլի 13-ին, խնդիր յարուցուեց Հնդկաստանից ստացուող գումարի քանակութեան մասին։ Հոգաբարձու պ, Մատթէոս Խըլջեանն իրավացի կերպով նկատեց, թէ իրան տարօրինակ է թուում, որ հանգուցեալ Մասեհ Բաբաջանի թողած տան Նախիջևանին հասնելիք եկամտի մասը 62 թուից սկսած համարեա միշտ միևնոյն քանակութեամբ է ստացած, այն ինչ Կալկաթայի անշարժ կալուածքների գնեը և նոցա տուած արդիւնքն այն ժամանակուանից մինչև դայսօր, անկասկած պէտք է որ շատ բարձրա-

Այս բոլոր տեղեկութիւնները վերաբերում էին Մասեհի մեծ տան և կրպակներին, որոնք նորա երկրորդ կտակի զօրութեամբ, ստորագրուած 1795 թուի Ապրիլի 1 ին, սեփականութիւն էին Ս. Սահակ և Մեսրոպայ դպրոցներին, որոնք, Նալբանդեանցի կարծիքով, եղած պիտի լինէին Նախիջևանում, որովհետև այդ և միւս կտակներն եղել էին Ստեփաննոս քահանայի թելադրութեամբ, որ, ինչպէս ասացինք, ժողովարարութիւն տնելու նպատակով գնացել էր Հնդկաստան։ Պէտք էր, ուրեմն, կարծել, որ եթէ նա, Տէր-Ստեփաննոսը, կտակներ էր անել տուել այդ անուններով դպրոցների օգտին, հետևապէս դոքա եղել էին. գոյութիւն էին ունեցել այն ժամանակները Նախիջևանում։

ցած ու աւելացած լինի։ Այդ առթիւ առաջարկուեցաւ հոգաբարձութեան, որ նա «փոյթ ունենայ ձեռք բերել Կարելի տեղեկութիւնները և դոկումենտները սոյն խնդրի մասին և ապա՝ վերջնական տնօրէնութեան համար՝ հոգ ունենայ արտակարգ ընդհանուր ժողով գումարելու»։

Թէ ինչ է արել այդ առաջարկութեան վերաբերմամբ հոգաբարձութիւնը մեզ լաւ յայտնի չէ, մենք միայն դիտենք որ նա նամակներ է գրել Կալկաթայ և մի յանձնաժողովի պէս բան է կազմել, որի նիստերից մէկին մենք էլ միանգամ առիթ ունեցանք ներկայ գտնուել։ Ահա այդտեղ, այդ նիստին մենք մի ընդարձակ զեկուցումն արիք հնդկական հրետակների մասին մասնաւորապէս, օգտուելով հէնց այդ ժամանակները մեր ձեռքին գտնուած վերոյիշեալ թղթերից։ Բացի զեկուցումից, մենք առաջարկեցինք այդ ժամանակ հոգաբարձութեան ընդարձակ միջոցներից մի փոքրիկ գումար յատկացնելու հնդկական հրետակներին վերաբերեալ բոլոր թղթերը մի վայելուչ յառաջաբանով և հարկաւոր ծանօթութիւններով տպագրելու, իբրև մի կարևոր պատմական նիւթ թէ հոգաբարձութեան, թէ Նալբանդեանցի կենսագրութեան և թէ ընթերցանութեան համար, հոգաբարձութիւնը չ՚մերժելով այդ առաջարկութիւնը, նոյն ժամանակ և մի որոշեալ եզրակացութեան էլ չեկաւ, և խնդիրը մնաց բաց, անորոշ։ Աւելորդ չենք համարում այստեղ վերստին կրկնելու հրապարակով մեր առաջարկութիւնը, ի նկատի առնելով, որ, նախ, գորա համար մի մեծ գումար հար-

Բացի այս տանից ու կրպակներից, հանգուցեալը Մասեհն իւր 1794 թուի Մայիսի 30-ին արած կտակով թողել էր այլ ևս երկու տուն, որոնց արդիւնքը պիտի բաժանուէր 16 մասի և կէսը, այսինքն 8 մասն ուղարկուէր Նախիջևանի վերոյիշեալ դպրոցներին, աղքատանոցին, որբանոցին և հիւանդանոցին, յատկացնուելով դոցանից ամեն մէկին երկու երկու մաս։ Օրէնսգէտ Պօլն իւր ադմինիստրատորին գրած թղթում պահանջել էր և այդ տների եկամտի հաշիւը։ Այնպէս էր երևում, որ այդ տները, որոնք փոքր և աննշան բաներ էին, պէտք է ընդ միշտ մնային վարչութեան ձեռքին, և նախիջևանցիք չպէտք է կարողանային տի-

---

կաւոր չի լինիլ, երկրորդ, այն ակներև օգուտը, որ կունենայ մեր կեանքում մի տյդպիսի հետաքրքրական նիւթի առանձին տետրակով հրատարակելը, որ ոչ թէ միայն մասնաւոր խորհուրդ ունի, այլ և ընդհանուր։

Ցանձնաժողովի անդամներից մի քանիսի առարկութիւնները, թէ այդպիսի հրատարակութիւնը դուրս է հոգաբարձութեան գործունէութեան նպատակից և թէ այդ նիւթերը հեշտութեամբ կարող են հրատարակուել մեր պատմական-հնագիտական հրատարակութիւններից մէկում, մեր կարծիքով, բանաւոր չէ, որովհետև, նախ, այդ նիւթերը հէնց ուղղակի վերաբերում են հոգաբարձութեան, քանի որ հնդկական գումարն ամենախոշորն է հոգաբարձութեան բոլոր գումարների մէջ և դորան վերաբերեալ բոլոր նիւթերի ի մի հաւաքելը և հրատարակելն անմիջական կապ ունի ընդհանուր ժողովում յարուցուած կաւոր խնդրի հետ. երկրորդ, մենք չունենք մի այնպիսի մասնագիտական ամսագիր, եղածների էջերն էլ սուղ են տյդպիսի նիւթերի հրատարակութեան համար։ Իսկ ինչ վերաբերում է այն խնդրին, թէ պէտք է հրատարակել, բայց միայն առանց յառաջաբանի, շատանալով ծանօթութիւններով միայն, որի մասին նոյնպէս խոսք ու գրոյց եղաւ,—այդ արդէն խնդրի մանրամասնութեան է վերաբերում։ Ցամենայն դէպս ընդարձակ ներածութիւնը, որ մենք առաջարկում ենք կցել նիւթերի հրատարակութեան, բացի օգուտից, վնաս չի ունենալ, որովհետև հասարակ, պարզ ծանօթութիւնները միայն բաւական չեն լինել գրծի լիակատար մեկնաբանութեան համար։

բել նոցա, որովհետև, բացի նախիջևանցիներից, կային և ուրիշ ժառանգներ։ Անգլիական օրէնքի զօրութեամբ այն անշարժ կալուածքը, որի արդիւնքը կտակուած էր զանազան մարդկանց, յաւիտենականապէս պիտի մնար վարչութեան ձեռքին և ժառանգները պիտի ստանային իւրաքանչիւրն իւր մասը։

Յունիսի 16-ին Նալբանդեանցը, վերջապէս, ստանում է ադմինիստրատորի պատասխանը։ Պ. Հագն իւր Յունիս 14-ին գրած պաշտօնական թղթում յայտնում էր օրէնսգէտին, թէ ինքը չի կարող կատարել նորա պահանջը, այսինքն մատուցանել հաշիւները, հատուցանել հաւաքուած գումարը և յանձնել տունը, մինչև որ գործը Կորտի ատեանը չհանուի և այդ մասին դատարանից դատավճիռ չարձակուի ու հրաման չստացուի։ Այնուհետև Նալբանդեանցը մի ամբողջ ամսից աւելի պարապում է թղթերը կարգի բերելու և ամեն բան պարզաբանելու գործով, անդադար դեգերելով օրէնսգէտի և փաստաբանների դռներում, որպէս զի ամեն բան լինի անգլիական օրէնքին համաձայն։ Այն միջոցում երբ օրէնսգէտը և փաստաբանը պատրաստում են թղթերը դատարանի համար, նա ներկայանում է Հագին և պահանջում է նորա ձեռքին գտնուած գումարի հաշիւը, որ կարողանայ մտցնել իւր գանգատագրի մէջ։ Հագն երկար պատճառաբանութիւններից, խոյս տալուց ու «թանգուզանելուց» յետոյ, վերջապէս, հանում է ընդհանրական հաշուեմատեանը և ցոյց է տալիս հաշիւները կալուածքի վարչութեան ձեռքն անցնելու օրից։ Ցայտնուում է, որ բովանդակ գումարը հասնում է 175,000 ռուփիի, այսինքն 17,500 ֆունտ ստերլինգ։

Դոյն իսկ միջոցին Նալբանդեանցն իմանում է, որ նախկին ադմինիստրատորներից մէկը Թէրթրը անունով վատնել է իւր ձեռքին գտնուած մի խոշոր գումար, որի մէջ եղել է և մի մասն այն տան արդիւնքից, որ պահանջում էր Նախիջևանը։ Բացի սորանից, փաստաբաններից և օրէնսգէտներից նա լսում է ու տեղեկանում, որ յիշեալ Թէրթրը վաճառել է փոքր տները՝ մէկը 6000 ռուփիով, միւսը—1600-ով, որ, ի հարկէ, հակառակ էր կտակին և օրէնքին։ Սակայն ինչպէս այդ

մասին նոյնպէս և վատնուած գումարի մասին նա չէր կարող բողոքել այդ ժամանակ, որովհետև այդ կլիներ մի նոր դատ, որ, ըստ անգլիական օրինաց, պէտք էր վարել առուակին, ինչպէս մի երկրորդական առարկայ, որ ուղղակի չէր վերաբերում արդէն իսկ սկսուած գլխաւոր դատին։ Այլ մեծ տունը և հաւաքուած գումարն օրինաւոր հաշուեգրով ստանալուց յետոյ, երկու տան պարականոն վաճառման և վատնուած գումարի մասին կարելի էր նոր դատ սկսել, որ դժբաղտաբար նա անձեռնահաս էր անելու, որովհետև, դատարանը ըստ օրինաց, չորս ամսով փակւում էր, սկսած սեպտեմբերի 14-ից մինչև ծննդեան և մկրտութեան տօների վերջերը, այսինքն մինչև յունուարի սկիզբը, և նա չէր կարող այդքան ժամանակ անգործ մնալ, սպասելու ատեանի բացման. երկրորդ, այդ նոր դատն երեք-չորս ամսից առաջ չէր վերջանալ, և նա ստիպուած պիտի լիներ մնալ Կալկաթայում դորա համար մինչև 1862 թուի մայիսի վերջը։

Քաղաքի կեանքի թանգութիւնը մի անհաւատալի բան էր. պանդոկի մի սենեակի և կերակրի համար միայն, առանց խմիչքի, Նալբանդեանցը վճարում էր օրական մի ֆունտ ստերլինգ։ Բացի բնակարանի, կերակրի և ուրիշ մանր ծախքերից, կառքի ծախքն էլ մեծ ու նշանաւոր էր իւր անչափ թանգութեամբ ու անմիտկարգադրութեամբ։ «Որգոն» կոչուած հասարակ կառքն օրական արժէր երեք ռուփի, սկսած առաւօտեան ժամից մինչև երեկոյեան 8-ը, և դոյն իսկ երեք ռուփին կառապանը պահանջում ու ստանում էր օրէնքով, եթէ վարձէին նորան նոյն իսկ երեկոյեան ութերորդ ժամին։ Իսկ առանց կառքի, ոտքով անհնարին էր շրջել քաղաքի մէջ սաստիկ յորդահոս անձրևների, դժոխային տաքի և քաղաքի շատ ընդարձակ տարածութեան պատճառով։ Ըստ այսմ Նալբանդեանցի ծախքի համագումարը Կալկաթայում սենեակի, կերակրի, խմիչքի, կառքի, լուացարարի (թափչի) և ուրիշ բազմութեան մանր ծախքերի համար հասնում էր ամիսը մօտաւորապէս 75 ֆունտ ստերլինգ խոշոր գումարին։ Պէտք չէր խօսել արդէն դատարանի ծախքերի այն զարհուրե-

լի թանգութեան մասին, որպիսին Նալբանդեանցը չէր տեսել Ռուսաստանում։ Գործը սկսելու միջոցին օրէնսգէտը թղթերը պատրաստելու և տպագրելու համար պաշտօնապէս պահանջել ու ստացել էր միայն Բաքաջանեանի գործի համար 400 ռուբլի, իւր աշխատանքի վարձ 1000 ռուբլի և փաստաբանի դատարանում մի օրուայ խօսելու համար կանխիկ վճար 160 ռուբլի։

Այս բոլորն ի նկատի առնելով, Նալբանդեանցը կարծում էր, որ լաւ կլինէր, եթէ մեծ տունը և դորա արդիւնքից հաւաքուած գումարը ստանալու յաջողելու և վատնուած գումարի ու փոքր տների վաճառման գործի մասին ստոյգ տեղեկութիւն ստացուելու դէպքում, իւր Եւրոպա վերադառնալու ժամանակ, ազգն ուղարկէր նորան մի ուրիշ երիսփոխանութեան թուղթ վերոյիշեալ նոր դատերի համար, տալով նորան լիակատար իշխանութիւն մի հաւատարիմ և հասկացող մարդ փոխանորդ կարգելու իրան Կալկաթայում։ Դատն այդպէս վարելով, ազգը, գոնէ, ազատուած կլինէր յատկապէս դորա համար ուղարկուած մարդու Կալկաթայում անելիք ծանր ծախքերից, տալով փոխանորդին փող միայն դատավարութեան համար, այս էլ եթէ միայն հաստատուէր, թէ վատնուած փողը և տների վաճառումից առաջ եկած կորուստն աւելի էր, քան թէ լինելիք ծախքը՝ դատը շահելու համար։

Երբ Նալբանդեանցի օրէնսգէտը պատրաստում է թղթերը և ուղարկում է Հագի օրէնսգէտին, որ նա ստորագրէ և համաձայնութիւն տայ տպագրելու բողոքագիրը, ինչպէս պահանջում էր օրէնքը, նա չի յօժարում, պատճառանելով, թէ Բաքաջանի առաջին կըտակն է միայն վաւերական, որովհետև այն վկայուած է երեք վկայի ստորագրութեամբ, իսկ երկրորդն անվաւեր է, որովհետև պահանջում էր անպատճառ երեք վկայի ստորագրութիւն։ Այս հիմանն վերայ ահա նա պահանջում է, որ Նալբանդեանցի բողոքագիրը յենուած լինի առաջին կտակի վերայ, որով հանգուցեալ բարերարի բովանդակ շարժական ու անշարժ կոյքը բաժանում էր 16 մասի, որի կեսը պատկանում էր Նախիջևանին, իսկ մնացեալն երկու մասի էր բաժանուում

չորս մասը Կալկաթա եկող պանդուխտ հայերին. չորսը «բանտարկելոցն ի փոքր ատենի վասն պարտուց»։ Սորա վերայ իսկոյն բացուում են Նալբանդեանցի աչքերը նա քննելով հրիտակների օրինակները, որոնք տպուած էին «Ազգասէրում», Արշալոյսում» և «Հիւսիսափայլում», և իւր ձեռքին գտնուած ուրիշ օրինակները, տեսնում է, որ ճիշտ որ երկրորդ կտակի տակ կայ միայն երկու վկայի ստորագրութիւն։ Սորանով էլ չբաւականանալով, նա գնում է Սուպրեմ-կորտ, կարդում է կտակների բնագիրը և հաւաստիանում է, որ երկու ստորագրութիւն կայ միայն։

Այսպիսի տագնապի մէջ նա դիմում է ֆրանսիական և բելջիական հիւպատոսներին, որոնց հետ նա ծանօթացել էր կալկաթայում, բերած լինելով այստեղից առաջնի անունով մի յանձնարարական թուղթ Արնօ զօրավարից։ Դոցանից, իբրև բարեկամներից, նա խորհուրդ է հարցնում։ Ֆրանսիական հիւպատոսը ծանօթանալով գործի մանրամասնութիւններին և կարդալով կտակների ֆրանսերէն թարգմանութիւնը, ասում է, թէ կարելի է այդ երկրորդ կտակը հրատարակել իբրև պարգևագիր, իսկ պարգևագրերը, ըստ անգլիական օրինաց, կարող են ունենալ երկու վկայի ստորագրութիւն։ Նալբանդեանցն ուրախանում է. նա դուրս գալով հիւպատոսարանից, ուղղակի գնում է օրէնսգէտի մօտ և, առանց յայտնելու նորան իւր հիւպատոսից խրատուած լինելու մասին, ամենայն սառնասրտութեամբ հարցնում է, թէ ինչ է արել նա գործի համար, և պատասխան է ստանում, թէ պատրաստում է թղթերն առաջին կտակի հիման վերայ, որովհետև երկրորդը վաւերական չէ։ Նալբանդեանցը պատասխանում է, թէ ո՞վ ասաց ձեզ, թէ այդ երկրորդը կտակ է. այդ լոկ մի պարգևագիր է, որ Մասեհն արել է իւր կենդկնութեան ժամանակ, պարգևներ, որով նա մեծ տունը հանել է կտակակատարների իրաւասութիւնից և ամբողջապէս պարգևել Նախիջևանի դպրոցներին, ասելով, թէ քանի ինքը կենդանի է, «ունի կառավարել զայն որպէս հաւատարիմ գործակալ Նախիջևանայ»։ Եթէ այն կտակ լինէր, ապա սուրեմն Մասեհը կամայ-ակամայ թողնելու

էր կտակակատարների իշխանութեան ու կառաւարութեան ներքոյ. եթէ կտակ լինէր, ապա ուրեմն այն տունը պէտք է պատկաներ Նախիջևանին կտակողի մահից յետոյ, և ոչ թէ նորա կենդանութեան ժամանակ, որովհետև նա ասում է, թէ «հանի զայն տուն ի սեպհականութենէ իմմէ և կատարելապէս վախմ աբարի դպրոցացն Նախիջևանայ» եթէ, վերջապէս, այն կրտակ լինէր, կտակողն իրան անուանելու էր ոչ «գոլ-ծակալ Նախիջևանայ», այլ «կտակակատար իւր ի կենդանութեան իւրում»։ Նա չի ընդունում հագի օրէնսգէտի պատճառաբանութիւնը, որով նա աշխատում է վնասել ազգի շահերին, հրատարակելով այն թուղթը կտակ, և ոչ պարգևագիր, ուստի և բողոքում է օրէնսգէտի առաջ և հրատարակում է յաւելուածը լոկ մի պարգևագիր, որ հանգուցեալ Մասեհն արել է իւր կենդանութեան ժամանակ և որ, անգլիական օրէնքով, վաւերական է երկու վկայի ստորագրութեամբ։ Այս բոլորը գրելով և կնքելով իւր ստորագրութեամբ, Նալբանդեանցը պահանջում է, որ դատը վարուի «ըստ զօրութեան կտակին և պարգևագրոյն» այն է պահանջել ծախուած տների արդիւնքի կէսը և մեծ տունը խանութների հետ ամբողջապէս այդքան տարուայ ընթացքում գոյացած 175, 000 ռուբլի գումարի հետ միասին։

Դուրս գալով օրէնսգէտի մօտից, Նալբանդանցը շտապում է փաստաբանի մօտ և խնդրում է բողոքել ընդհանրական դատախազին, որ նա ստիպէ Հագի օրէնսգէտին, օրէնքի համաձայն, համակերպելու իւր բողոքին «ըստ զօրութեան կտակին և պարգևագրոյն», և փաստաբանը փութով կատարում է նորա ցանկութիւնը։ Դատախազն այս բողոքի վերայ պատուիրում է յիշեալ օրէնսգէտին թոյլ տալ բողոքանքին ելնելու Սուպրեմ-կորտի դատաւորների առաջ, որովհետև, ասում է նա, նոցա գործն է վճռելու, թէ այն երկրորդ թուղթը կտակ է, թէ պարգևագիր։ Գործի այսպէս փոխուելու և նոր ընթացք ստանալու վերայ, որ ամենևին չէր սպասում Հագի օրէնսգէտը, նեղսրտում է նա և մինչև օրէնքով թոյլատրուած վերջին օրը պահում է իւր մօտ թուղթը։ Դորանից յետոյ Նալբան-

դեանցի խնդրագիրն ամբողջապէս տպագրում է և յանձնում Սուպրեմ-Կորտի ատեանին «ի վճռադատութիւն դատաւորաց»։ Թէև Նալբանդեանցը կարծում էր, թէ մինչև օդոստոսի վերջը կիմացուի հնդկական ծայրագոյն ատեանի վերջնական վճիռը, որի վերայ այնտեղ այլ ևս սուրիշ բարձր վճռաբեկ ատեան չկար և անիրաւութեան դէպքում գործը փոխադրուում էր Լոնդոնի Անգլիոյ գերագոյն ատեանի քննութեան, բայց սխալւում է։ Հնդկաստանում այն ժամանակները շատ դանդաղ կերպով էր կատարուում դատավարութիւնը, և Նալբանդեանցի գործն էլ այդ պատճառով քաշքշւում և յետաձգում է մինչև սեպտեմբերի կէսը։

Գլուխ Զ.

Միաժամանակ և զուգընթացարար Բաբաջանի կլատակի խնդրի հետ Նալբանդեանցը զբաղուում է և Կատարինէ խօջամալեանի և միւս հրիտակների խնդրով, ամեն տեսակ ճիգ թափելով, որ իւր ստանձնուած գործը յաջողութեամբ պսակուի և, ըստ կարելոյն, շուտ վերջանայ, որովհետև նա Կալկաթայում մի կողմից ընկճուում էր մեծամեծ ծախսերի տակ, միւս կողմից էլ նեղուում էր անսովոր կլիմայից։ Անձրևների յորդութիւնն անասելի էր, տաքութեան տուած նեղութիւնն անտանելի. ջերմաչափը նորա սենեակի պատուհանի վերայ միշտ ցոյց էր տալիս 48, երկնքից, կարծես, կրակ էր թափուում։ Եթէ այս բոլորի վերայ աւելացնենք և տեղական դատաստանական գործի յամրաքայլ ընթացքը և այն անընդհատ մտաւոր աշխատանքը և հոգեկան յոյզն ու վրդովմունքը, որ նա ստիպուած էր գործ դրնել և զգալ ամեն քայլափոխում այդ օտար երկրում, կեանքի անսովոր պայմաններում, դատավարական կնճռոտ, մանուածապատ խնդիրներ լուծելու գործողութիւնների մէջ, բոլորովին հասկանալի կլինի մեզ նորա այն ֆիզիքական թուլութիւնը և առողջութեան քայքայուելը, որի մասին նա միշտ գրում ու գանգատուում էր իւր պաշտօնական նամակներում քաղաքագլուխ Հայրապետեանցին։ «Առ այժմ ոչ աւելի քան զոր գրե-

ցի գիտեմ ինչ, գրում է նա, օրինակի համար, իւր նամակներից մէկում, զամենայն զոր միանգամ լուայ յայտնեցի մեկին, ոչ հայեցեալ յերկարութիւն նամակիս, ուրեմն և ծանրութիւն աշխատութեանս, յաշխարին՝ ուր գոգցես հուր տեղայ յերկնից։ Դատաստանական ընթացք տեղւոյս չեն ըստ Լոնդոնի, այլ յամրաքայլ յոյժ, ուստի մեծապէս ցաւ է ինձ մնալ աստէղ ի դժոխային եղանակի։ Աշխատել աշխատեցոյց ըստ հնարաւորութեան փութացուցանել զվախճան գործոյն և վերադառնալ ի Ռուսսիայ, քանզի ճանապարհորդութիւնս այս ծանր քան զվերջին իմ ոյժ»։

Կատարինէ Խօջամալի հանգուցեալ եղբայր Էլիազ Մինասեանի երջանկայիշատակ Եփրեմ կաթուղիկոսին 1818 թուի նոյեմբերի 27-ին Կալկաթայից գրած թղթից երևում էր, որ Նախիջևանին կտակած բաժինը նորա քրոջ մահուան ժամանակ եղել է 2,342 ռուփի։ Հանգուցեալ Էլիազ Մինասեանը, ինչպէս վերը մէկ անգամ արդէն յիշել ենք, մի բարեպաշտ և երկիւղած մարդ է եղել. նա, Կալկաթացի Հայերի վկայութեամբ, յիշեալ գումարն ամենայն հաւատարմութեամբ աճեցրել է և թողել իւր որդի Յովհաննէսին, պատուիրելով նորան շահեցնել գումարը և պահել խնամքով, մինչև որ երևեն ժառանգները, որովհետև միշտ կրկնում է եղել, թէ շատ անգամ գրեցի կաթուղիկոսներին, բայց նոքա մինչև անգամ և պատասխան չտուին։ Յովհաննէսն էլ կատարելով իւր հօր պատուէրը, երկար ժամանակ պահել է գումարը և իւր մեռնելու ժամանակ յանձնել է իւր կնոջը-Վառվառէ Էլիազին նոյն պատուէրով, որ ստացել էր հօրից։ Աբգարեանցի և ուրիշ Հայերի ասելով, կտակուած գումարն այդ ժամանակներն աճելով հասել էր 21,000 ռուփիի։ Այդ գումարը մի ընկերութեան տոմսակներով էր, որ այդ ժամանակներն անյաջողութեան պատճառով սեղանաւորներն ընդունում էին 20 առ հարիւր զեղչով։

Նալբանեեանցի առաջին գործն է լինում, յայտնի բան է, շտապել տեսնուել կտակակատար տիկնոջ հետ և խօսել կտակի մասին, բայց նորան քաղաքում չի գտնում։ Աբգարեանից տեղեկանալով տիկնոջ որտեղ

գտնուելու մասին, նա Յունիսի 14 ին գիմում է նորան մի երկտող նամակով [9]) և խնդրում է շնորհ անել նշանակել իրան ժամադրութիւն, որտեղ և նա կամենայ, որ ինքն իբրև Նախիջևանի երեսփոխան կարողանայ խօսել հանգուցեալ Կատարինէ տիկնոջ յօգուտ Նախիջևանի արած կտակի և թողած գումարի մասին։ Տիկինը, որ գտնուում էր ոչ հեռու, Կալկաթայի շրջակայքում, իսկոյն և եթ յաջորդ օրը, Յունիսի 15-ին, պատասխան է գրում նորա նամակին և խնդրում է գալ իւր մօտ վեց օրից, երբ ինքը վերադարձած կլինի Կալկաթա։

Նշանակուած օրը և նշանակուած տեղում նա գնում, ներկայանում է տիկնոջը և ցոյց է տալիս երեսփոխանութեան թուղթը։ Տիկինը պատասխանում է, թէ որովհետև այդ գումարն ինձանից պահանջում էր և Այվազովսկի վարդապետն իբրև տէր և որովհետև այժմ էլ դուք էք խնդրում, ցոյց տալով ձեզ ազգի երեսփոխան, որպէս և էք իսկապէս, այդ պատճառով էլ ես դժուարանում եմ կատարել ձեր պահանջը, մինչև որ չհրամայէ ինձ Սուպրեմ.Կորտը։ Չեմ կարող ես միևնոյն գումարն երկու անգամ վճարել, աւելացնում էր տիկինը, և՝ ձեզ, և Այվազովսկուն, որ իւր կողմից երեսփոխան կարգելով մեր առաջնորդին, պահանջում էր գումարը, և, որ, գուցէ, վերանորոգէ իւր պահանջմունքը դատարանով։ Նալբանդեանցը տիկնոջ այդ առարկութիւնների դէմ ասում է, թէ Այվազովսկին գաղտա-

---

[9]) Վարվառէ Էլիազին գրած այդ երկտող գրաբառ նամակի պատճէնը պահպանուել է հանգուցեալի թղթերի մէջ։ Այդ թուղթն էլ, ինչպէս նորա բոլոր թղթերը, պաշտօնական գրութիւններին յատուկ ձևն ունի. դորա ձախակողմեան անկիւնում վերը, ինչպէս սովորաբար լինում է պաշտօնական բլանկների վերայ, գրուած է՝ «Վիակատար երեսփոխան բովանդակ ազգին Հայոց ի Նոր-Նախիջևան ի մասին հրիտակացն ի Հնդիկս, հաստատեալ ի կարողութեան ի վեհափառ կաթողիկոսէ ամենայն Հայոց ի Տէր-Մաթէոսէ և ի պետութեանցն Ռուսսիոյ և Անգղիոյ, № 95. 14/26 յունիսի 1861 թ. ի Կալկաթա, Hotel gallais»։

գողի, Նախիջևանի հասարակութիւնից ծածուկ կազմել է այն երեսփոխանութեան թուղթը և թէ նա ամենևին և ոչ մի իրաւունք չունի։ Դուք այդ էք ասում, իսկ ես նորտ ուղարկած երեսխոխանութեան թղթի տակ տեսել եմ Նախիջևանի երևելիների ստորագրութիւնը պատասխանում է տիկինը։ Ի զուր Նալբանդեանցն աշխատում է համոզել կտակակատար այրին, որ այդպէս չէ, որ այդ ուղիղ չէ, որ Թէոդոսացիք են ստորագրուողները, գուցէ, Նախիջևանցիների անունով, և ոչ Նախիջևանի ատեանը, ոչ էլ վեհափառ կաթուղիկոսն են վաւերացրել այն թուղթը. իզուր նոյնպէս նա ճգնում է հասկացնել տիկնոջը, որ նա իւր այդպիսի վարմունքով ստիպում է իրան դիմել դատարանի միջնորդութեան և այդպիսով աւելորդ ծախսի տակ է ձգում ազգը։ Տիկին վառվռէն ոչ մի բանով չի համոզուում և բացարձակապէս հրաժարուում է խաղաղութեամբ վերջացնել, գործն առանց դատարանի, անդադար կրկնելով, թէ Այվազովսկին աւելի առաջ է պահանջել։

Երբ որ Նալբանդեանցը տեսնում է, որ տիկինն ոչ մի առարկութիւն, ոչ մի պատճառաբանութիւն այլ ևս չի ուզում լսել և բացարձակապէս զլանում է հատուցանել փոդը, ստիպուած է լինում և այդ գործի համար դիմել իւր օրէնսգէտին և փաստաբանին. նա «աու ժամս» 300 ռուբի հատուցանելով, խնդրում է փութով պատրաստել թղթերը, տպագրել և ներկայացնել Սուպրեմ-Կորտի ատեանին։ Այդ թղթերի հետ միասին նա խնդրում է ներկայացնել դատարանին և Նախիջևանի հասարակութեան եզրաղացութեան պատճէնի թարգմանութիւնը, որով Նախիջևանցիք բողոքում էին Այվազեանի անկանոն գործողութիւնների դէմ։ Նալբանդեանցը կարծում էր, որ այդ գործի համար ծախս կը լինի երկու հազար ռուբիից աւելի։ Ցաւ չէր լինիլ, ի հարկէ, եթէ դատարանը վճռէր յօգուտ ազգին, իսկ եթէ նա դժուարանար այդպէս վճռել և գործը թողնէր քննութեան տակ, մինչև որ տէրութիւնը ստուգէր գործի հանդամանքները և իմանար, թէ երեսփոխաններից ո՞րն է իսկականը—Նալբանդեանցը թէ Այվազեա-

նը... Ահա այս բոլորն ի նկատի առնելով, Նալբանդեանցն իրան իրաւունք էր համարում իբրև անդամ և երեսփոխան ազգի գրել Նախիջևան և բարձրաբարբառ բողոքել, թէ Այվազեանը թէև չի կարողացել իւր ճտնկը ձգել գումարը, բայց այնուամենայնիւ նա պատասխանատու է այն բոլոր ծախքերին, որ ինքը պիտի անէր նորա ձեռքով լարուած որոգայթերը ցրելու համար. իսկ եթէ նորան չյաջողէր ցրելու այդ որոգայթերը, այն ժամանակ նա, Այվազովսկին, պատասխանատու պիտի լինի և՝ ամբողջ վնասին, որ երկու հազար ֆունտ ստերլինգից աւելի էր։ «Թող, գրում է նա, այժմ փառաւորուեն Այվազովսկու երկդիմի կուսակիցները, ազգի յառաջադիմութեան դրական թշնամիները, որոնք նախանձից անխղճօրէն պահանջում էին, որ Այվազովսկին տէր լինի հրետակներին, թերևս իւրեանց «պարապետ» Խալիբեանի անունով, բայց եկեղեցական գումարներով հիմնուած դպրոցի պայծառութեան համար» [10]։

Նալբանդանցը մտածում էր այդ բոլոր հանգամանքներն իւր ժամանակին գրի անցնել և աւանդել ապագայ սերնդին, դրոշմելով իւր ողորմելի հակառակորդ-

---

[10]) Այն մեծ ատելութիւնը և զայրոյթը, որ Նալբանդեանցն այստեղ և ամեն մի պատեհ դէպքում իւր գրուածներում յայտնում է դէպի Այվազեան վարդապետը, հետևանք պիտի համարել այդ վերջինի նորա մասին Պետերբուրգի բարձր իշխանութեան արած բազմաթիւ քսութիւնների ու զըրպարտութիւնների, որոնց մասին հանգուցեալը պարզօրէն խօսում է իւր «Երկու տողում»։ Այվազեանն էլ, ի հարկէ յետ չէր մնում նորանից. նա էլ ընկած տեղը, թէև համեմատաբար աւելի մեղմ կերպով, բայց և այնպէս հատուցանում էր նորան նոյն չափով։ Մեր ձեռքին գըտնուում է Այվազեանի մի հայատառ և թրքաբարբառ նամակը գրուած Թէոդոսիայից իւր Նախիջևանի բարեկամներից մէկին, որի մէջ նա մինչև անգամ 1867 թուին, երբ արդէն Նալբանդեանցը մեռած էր, չի դադարում բարեր շպրտելուց հանգուցեալի հասցէին։ Աւելորդ չենք համարում այստեղ մէջ բերել այդ նամակից Նալբանդեանցին վերաբերեալ տողերը և դոցա թարգմանութիւնը։ «Կէլէլիմ սիզին վէրտիյինիզ հաւատիս-

ների ճակատին լաւիտենականութեան խայտառակութեան կնիքը։ Նորա ձեռքին առատ նիւթ էր հաւաքուել Կալկաթայում իւր թշնամիների գործողութիւնների մասին հրիտակների վերաբերմամբ։ Նորա ձեռքը հասած գրաւոր տեղեկութիւններից, ի միջի այլոց, երևում էր, որ Բաքաջանի փողերը հետամուտ է եղել ձեռք բերել մի ժամանակ և «փախստական» Կարտպետ Շահնազարեանց վարդապետը, Իէկնազարեանց Յովհաննես վարդապետի «ծայրապատիւ» ընկերը, Այվազովսկու «հոգիացեալ» բարեկամ Յակովբ Կռճիկեանի գործակցութեամբ, որ այն ժամանակները գտնուում էր Պարիզում և ծառայում էր Օսմանեան հիւպատոսարանում, որով նա կամեցել է մի դպրոց հիմնել Պարիզում։ Երևում էր և երջանկայիշատակ Ներսէս կաթուղիկոսի գործ դրած ջանքերը հրիտակները ստանալու համար,

---

լէրէ»։ - Նալպանտով մասլահաթը աճայըպ պիր գազէպ օլմուշ-ֆագրը Նախիջևանլըլարըն պաշընա. զահիր պու թարզ մատ-տէլէրէ տէ ուլար Սողոմոն իմառտուանուն տէտիյի քի, «Զի ո-րովը մեղանչէ ոք, նոքիմբք և տանջի». եանի պիր քիմսէ նէ՝ իշէն կիւնահ իշլէրսէ, ճէկասընը տա օնտան պուլուր։ Աճապա իշիթմիշ սինիզ շու ջիսսէյի քի նալլ էտէրլէր։ Կիւնիւն պե-ռինտէ էֆէնտինին պիրիսի եօլտա կիտէրքէն, աթլը հարամի-նին պիրիսի զարըշտան կէլիպ վէ եագլաշըպ, հոճա էֆէնդի տէր, պիր քիշի պիր կիւնահ իշլէրսէ, աճապա գազէպինի նէ՞ վա-գրթ ալըր։—Էֆէնտինի ճէվապընտա «գըրգ կիւնտէն» տէտիյի քիպի, հարամի տիր էֆէնտինին պաշընտան գավուղունու գափ-տըղընը վէ գազ տըղընը պիր էտէր։ Էֆէնտի պու նէ՞ տիր սէ-նին էթտիյին տէյի պաղըրարազ՝ աթլընը արտը սըրա դիւշուպ տուրտուրայըմ տէ՛ր իքէն, աթլը աթընտան տիւշէր, այալընը զըրար։ Էֆէնդի եագլաշըր, կէօրտի՛ւն միւ այօզուլ, իշթէ գա-զէպինի պուլտուն տէր։ Հարամի ճէվապընտա, Ամմա ճանըմ է-ֆէտիմ սիզ պույուրտունուզ քի քիշի քէնտի կիւնահընը ճէկա-սընը գըրգ կիւնտէն ալըր ըմըշ. պուհտա հալէ գըրգ տագիպէ տէ օլմատը։—Է՞յ այօզուլ, տէմիշ էֆէնտի. պոայալընընը գը-ռըլմասը էսկի կիւնահլարըն իշին տիր, իլլէ գավուղումու գափտըղընը գազէպինէ գըրգ կիւնտէն պէքլէմիշսին։ Արիֆէ

որ, ինչպէս ասացինք, լիազօր երեսփոխանի իրաւունք էր տուել Կովկասի փոխարքայ իշխան Մ. Ս. Վորոնցովին, և վերջինս սկսել էր այդ հիման վերայ և այդ մասին մի երկար թղթակցութիւն երկու տէրութեան նախարարութիւնների ձեռքով։ Նալբանդեանցին այդ բոլորի մէջ շատ էր զարմացնում նամանաւանդ մի հանգամանք — մեր հոգևորականներից մի քանիսի ձգտողութիւնը ձեռք բերելու ազգի սեփականութիւնը գաղտագողի, ծածուկ, առանց նորա, այդ ազգի գիտութեան, գոնէ, առանց մի բան յայտնելու նորան և կատարելապէս հակառակ կտակողների կամքին։ «Այո, զարմանալի է, ասում է նա, բայց անդը քան զայս տոժանի զար-

---

թարիֆ լաղը կէլ մէկ ալիկիմ»։—Այժմ դառնում եմ ձեր հաղորդած լուրերին։ Նալբանդեանցի գործն արդեօք մի պատիժ է դառել խեղճ Նախիջևանցիների գլխին։ Երևի Սողոմոն իմաստունի ասածը— »Ձի որովք մեղանչէ ոք, նոքիսրք և տանջի»— այս դէպքում էլ յարմար է գալիս, այսինքն մէկն ինչ բանով մեղք գործած լինի, նոյն բանից էլ կստանայ իւր պատիժը։ Արդեօք դուք լսած կաք այն պատմութիւնը, որ անում են։ Մէկ անգամ երբ մի պարոն ճանապարհի է գնում եղել, մի ձիաւոր աւազակ նորա առաջ դուրս գալով և մօտենալով նորան, ասում է. «պարոն, եթէ մի մարդ մի մեղք գործած լինի, պատիժն ե՞րբ կստանայ»։ Պարոնը պատասխանում է «քառասուն օրից»։ Հէնց որ նա այդ ասում է, աւազակը նորա գլխից գլխարկն առնելն ու փախչելը մէկ է անում։ Պարոնն երբ «այս ի՞նչ է քո արածը» կանչելով ընկնում է ձիաւորի յետևից և աշխատում է կանգնեցնել նորան, նա ձիուց վայր է ընկնում և ոտքը կոտրում։ Այն ժամանակ պարոնը մօտենալով նորան, ասում է. «տեսա՞ր, ա՜յ որդի, ահա՛ և դու պատիժդ ստացար»։ Աւազակը պատասխանում է. «բայց, պարոնս, դուք ասացիք, թէ մարդս իւր գործած մեղքի հատուցումը քառասուն օրից կստանայ, այն ինչ այս ահա դեռ քառասուն րոպէ էլ չանցաւ»։— «Էյ, ա՜յ որդի, պատասխանում է պարոնը, այս ոտքիդ կոտրուելը հին մեղքերիդ համար է, այն գլխարկիս յափշտակելուդ պատիժն էլ դեռ քառասուն օրից պիտի սպասես»։ Սիրելիս, այս պատմութիւնը բացատրութեան կարօտ չէ։

մանաց անյաջողութիւն նոցա»։

Տիկին խօջամալի կտակի խնդիրը վերջացնելուց յետոյ, Նալբանդեանցը դառնում է երկու միւս կտակին — Յակոբ Եղիայեանի և Սարգիս Ծատուրի, և դոցա վերայ է գլխաւորապէս կենդրոնացնում իւր ուշադրութիւնը։ Եղիայեանի կտակը, ինչպէս ասացինք, արուած ու ստորագրուած էր 1799 թուի մայիսի 9 ին Բատտաւիայում, որ Պատկանում է Հոլլանդացւոց և, Նալբանդեանցի ասելով, Կալկաթայից հեռու է տաս օրուայ ճանապարհ ծովով։ Այս կտակով հանգուցեալը թողել է Նախիջևանի տպարանին 5000 ռուփի և յայտնել է, թէ ինքը գնալու է ծովով Բատտաւիայից Կալկաթա կամ Մադրաս։ Նալբանդեանցը Կալկաթայում չի կարողանում տեղեկութիւն գտնել ոչ իւր Եղիայեանի և ոչ նորա առաջին կտակակատար Վարդան Գասպարեանի, ոչ էլ միւս կտակակատարների մասին։ Հանգուցեալ բարերարն իւր կտակում չի յիշում, թէ Վարդան Գասպարեանցն որտեղի բնակիչ է եղել իսկ իւր մասին թէև ասում է, թէ պէտք ունի իւր ունեցած-չունեցածն առնել ու գնալ Կալկաթա կամ Մադրաս, բայց ոչ ոքի յայտնի չէր, թէ արդեօք նա կատարել է իւր մտադրութիւնը, թէ ոչ։ Նալբանդեանցը չշատանալով իւր սորան-նորան բերանացի հարցուփորձ անելու համար գործ դրած ջանքերով, պաշտօնական թղթերով ևս դիմում է Կալկաթացի հասկացող Հայերին-Աբգարեանցին, օրէնսգէտ Պօլին, Ս. Նազարէթի աւագ քահանայ Տէր-Յովհաննէս Խաչիկեանին և միւսներին և խնդրում է, որ նեղութիւն քաշեն ի սէր ընդհանրութեան օգտի հաղորդել իրան իւրեանց ունեցած տեղեկութիւններն Եղիայեանի և նորա կտակի մասին, բայց ոչ մի օգուտ չի լինում. նա ամեն տեղից էլ բացասական պատասխան է ստանում։ Միայն Աբգարեանցը խոստանում է գրել իւր ծանօթներին Բատտաւիա և Մադրաս, որ նոքա այդ մասին տեղեկութիւն հաւաքեն և հաղորդեն Կալկաթա, բայց այդ էլ ոչ մի դրական հետանք չի ունենում։ [11])

---

[11]) Կալկաթայի Ս. Նազարէթ եկեղեցու աւագ քահանայ

Սարգիս Ծատուր Աղաւելեանի մասին առաջին անգամ գրել էր երջանկայիշատակ Եփրեմ կաթուղիկոսին Մադրասի Տէր-Յարութիւն քահանայ Եմաւոնեանը 1819 թուի Հոկտեմբերի 9-ին, տեղեկութիւն հաղորդելով նորա արած կտակի մասին։ Երկրորդ անգամ գրել է նորա մասին Կալկաթացի Պօղոս Որդանանեանը Ներսէս արքեպիսկոպոսին 1828 թուի նոյեմբերի 30-ին, աւելացնելով Տէր-Յարութիւն Եմաւոնեանի գրածների վերայ այն փաստերը, որոնց մասին մենք արդէն խօսել ենք, այսինքն թէ յիշեալ Սարգիս Ծատուրը 1808 թուին անելով իւր կտակը, չորս տարուց, այն է 1812 թուին, վախճանել է, թողնելով Նախիջևանին և Գրիգորուպոլին 250,000 ռուփի։ Նալբանդեանցը թէև արդէն իմացել էր Կալկաթացիներից, թէ Ծատուրի վերջին կտակակատար Յարութիւն Կիրակոսեան Յարութիւնեանը վատնել է իւր սեփական ստացուածքի հետ միասին և կտակուած գումարը, բայց և այնպէս դեռ ձեռնթափ չի լինում, դեռ խսպառ յոյսը չի կորցնում. Նա աշխատում է ուրիշ տեղեկութիւններ էլ հաւաքել թէ Կալկաթայում և թէ Մադրասում, որ, նորա ասելով, հեռու է Կալկաթայից չորս օրուայ ճանապարհ ծովով։ Նա մի մարդուց լսում է, թէ Ծատուրի կարողութիւնից մնացել է մի անշարժ կալուածք։ Եթէ այդ հանգամանքը ճշտուէր, նա միտքը դրել էր դատ բանալ, յայտնելով Նախիջևանի իրաւունքն այդ կալքի վերայ այն 125,000 ռուփիի փոխարէն, որ Աղաւելեանը թողել էր Նախիջևանին, որովհետև բարերարի թողած ամբողջ 250,000 ռուփիի կէսը պատկանում էր Գրիգորուպոլցւոց։ Նալբանդեանցի կարծիքով, Գրիգորուպոլցիք իւրեանց բաժինն ստացել էին Վրթանէս եպիսկոպոսի ձեռքով Գրիգոր արքեպիսկոպոսի առաջնորդութեան օրով Բեսարաբիայում։ Նա աղօտ կերպով յիշում էր Քիշինեւի թեմական ատեանում այդ մասին մի գործ, որ կրում էր «խռովութիւն Գրի-

---

Տէր-Յովհաննէս Խաչիկեանին և իրաւագէտ Պօլին գրուած թղթերի պատճէնները գտնուում են Նալբանդեանցի թղթերում։

գորուպոլցւոց ընդ Գրիգոր եպիսկոպոսի իւրեանց» խորագիրը։ Դժբաղդաբար յիշեալ լուրն էլ չի ճշտուում, և Աղաւելեանի թողած գումարն էլ Եղիայեանի կտակածի հետ միասին անդառնալի կերպով կորած է համարուում։

Առհասարակ այն անյաջողութիւնը, որին Նալբանդեանցը հանդիպում է վերջին երկու հրիտակի մասին մի որ և իցէ ստոյգ փաստ, կամ ճշգրիտ տեղեկութիւն ստանալու գործում, չարաչար յուզում ու զայրացնում է նորան։ Նա այդ բանում յանցաւոր և մեղաւոր է ճանաչում Նախիջևանի նախկին կառավարիչներին, քաղաքագլուխներին, գործի գլուխ կանգնած մարդկանց, որոնք այնքան անհոգ էին գտնուել և իւր ժամանակին հետամուտ չէին եղել ձեռք բերելու կտակուած գումարները, որ դոքա մատնուել էին կորստեան անդառնալի կերպով։ Հայ ազգը դոցա, Նախիջևանի այդ զարմանալի նախնիքների զարհուրելի անհոգութեան շնորհիւ, Նալբանդեանցի կարծիքով, երկու տեսակ վնաս էր կրել—եւ բարոյական և նիւթական։ Բարոյապէս նա վնասուել էր, որովհետև օտարների աչքին մինչև անգամ նա հռչակուել էր իբրև մի վերին աստիճանի անհոգ և անտարբեր ժողովուրդ, որ փոյթ չի ունեցել մատ շարժելու մինչև իսկ իւր ամենաէական շահերը պաշտպանելու համար։ Նիւթականապէս էլ նա վնասուել է, որովհետև նա զրկուել է մի այնպիսի խոշոր գումարից, որպիսին էր, օրինակի համար, Ծատուրի կտակածը։ 25, 000 ֆունտ ստերլինգը, որ բաժին պիտի ընկնէր Նախիջևանին, հայ հասարակութեան որ ցաւին դարման չէր տանիլ, որ պիտոյին ու հասարակաց կարիքին բաւարարութիւն չէր տալ։ Իզուր չէր, ուրեմն, որ Նալբանդեանցը, ակնարկելով Նախիջևանի նախկին քաղաքագլուխների վերայ, բացագանչում էր. «ժողովեսցէ ի գլուխ գլխոցն զլրիւ չափ արհամարհանս ապազայից»։

Նախիջևանն ի սկզբանէ անտի չէր ունեցել մի կարգին հայ դպրոց, և ժողովուրդը խարխափելով խորին տգիտութեան մէջ, հետզհետէ վայրենանում խոր-

թանում էր իւր մայրենի լեզուից ու եկեղեցուց։ Եկեղեցական խոշոր գումարներն ապարդիւն կերպով ծախսուել էին Խալիբեան դպրոցի վերայ, որ Նախիջևանում հիմնուած չ՝լինելով և իւր ուսուցման ծրագրով և դաստիարակութեան եղանակով էլ պէտքական չ՝լինելով, համարեա թէ օգուտ չէր բերել և չէր բերում նորան Բեսարաբիոյ թեմի այդ ամենահայաշատ կենդրոնին. առաջնորդները հոգ չէին տարել ժողովրդի բարոյական կրթութեան վերայ, Նախիջևանցիների միջից էլ մինչև այդ ժամանակները չէր դուրս եկել մի ունևոր հասկացող մարդ, որ իւր կարողութիւնը գործ դնէր իւր համաքաղաքացիների լուսաւորութեան գործի վերայ։ Այդ պատճառով էլ ահա Նալբանդեանցը չէր կարող լուռ մնալ ու չ՝դատապարտել նախնեաց անհոգութիւնը հրիտակների վերաբերմամբ, որոնց միջոցով նա միտքն էր դրել լրացնել լիշեալ պակասը։ «Ոչ կարեմ, գրում է նա այդ մասին իւր նամակներից մէկում, լուռ մնալ և ոչ կարդալ զարժանին դատապարտութիւն չարաչար անհոգութեան նախնեաց մերոց ի Նախիջևան, զորմէ թողումք զկորուստ ազգին, ապ ի բերան պապանձեմ առ մերազնեայս և առ օտարս մինչ հարցանին զպատճառն վաթսնհինգամեայ լռութեան։ Վաթսուն և հինգ ամ դժոխային անհոգութիւն։ Եւ մեք որդիքս անհոգ հարց զնոցայն զանհոգութեան զյանցանս պարտիմք քաւել անօրինակ կորստեամբ»։

Հրիտակների ստացուելու անյաջողութիւնն արգելք էր լինում նորա մի կարևոր ծրագրի իրագործման, այն է բանալու Նախիջևանում մի օրինաւոր հայ դպրոց ընդարձակ ծրագրով, որի գլուխ բերելու համար աշխատել էին Յովսէփ Արղութեանը, Ներսէս Աշտարակեցին և մասամբ Տէր Գաբրիէլ Պատկանեանը, բայց չէին յաջողել։ Նալբանդեանցի հէնց բոլոր ճիգն ու աշխատանքն էլ, որ նա գործ էր դնում եկեղեցական գումարներն ու հաշիւները կարգի բերելու և հրիտակները ստանալու գործում, այն էր, որ կարողանայ այդ ճանապարհով մի խոշոր գումար գոյացնել և ծրագրուած շատ կարևոր հաստատութեան հիմքը դնել։ Կալկաթայից

նորա իւր ընկեր Ս. Սուլթանշահին գրած նամակում մենք այդ մասին կարդում ենք։ «Առաջմ այստեղի ծայրագոյն դատարանի մէջ (Սուպրեմ-կորտ) երեք դատունիմ։ Քո մարգարէութիւնը միշտ կատարուում է թէ ես պրոցէսսից ազատուելու չեմ. բայց վերջը յաջող է և Նախիջևանի մէջ մի հոյակապ դպրոց տեսնելու յոյսը քաջալերում է ինձ և զօրացնում իմ ֆիզիկական թուլութիւնը պատճառուած դժոխային ջերմութիւնից. Ռ. ջերմաչափը պատուհանիս վերայ ցոյց է տալիս միշտ 48. ցնծա»։ [12])

ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ

(Վերջը հետեւեալ համարում)

---

[12]) Տես «Լուսայ» 1902 թ., էջ 165—166

ԿՈՏՐԱԾ ԳԴԱԼ

Մի օր առաւօտ վաղ զարթեցայ և ինձ, բաւական յաղթանդամ արարածիս, այնքան թեթև զգացի անկողնիս վրայ, որ տարակուսեցայ անձիս վրայ և կասկածեցայ, թէ մի գուցէ գիշերը փոխսընկած լինիմ։ Իսկոյն աչքերս դարձուցի սենեակիս անկիւնում կանգնեցրած հայելի փեղկերով պահարանին և դէմքս զննելուց յետոյ թէև անտեղի կարծիքս փարատեցաւ, բայց սիրտս կատարելապէս չը հանգստացաւ, մի տեսակ չփոթութեան և ցնորքի մէջն էի։ Չը գիտեմ բնազդմամբ թէ մի ուրիշ ոյժ ինձ վրայ վատ էր ներգործում և հոգիս ճնշում էր։ Ուղիղը չը կարողացայ դիտել, թէ ինչ եղանակ էր, որովհետև կինս լուսամուտների թանձր վարագոյրները չէր բացել։ Ես էլ չուզեցի բանալ, այսինքն կինս նեղանում է, չի սիրում առաւօտները ննջարանի վարագոյրները բաց անել, մինչև չորերս հագնուիլը, բայց ենթադրում էի, որ երկինքը ամպամած էր լինելու, քանի որ այդպիսի եղանակները միշտ վատ են ազդում ջղերիս վրայ։

Քովի սենեակից կնոջս խօսակցութեան ձայնը թէև լսում էի, բայց որքան ուշադրութիւնս լարեցի, չը կարողացայ ըմբռնել, թէ խօսակիցն ով էր։ Մի քանի անգամ հազացի, որ ձայնս լսէ, մօտս գայ, բայց այնքան տաք վիճաբանութեան մէջ էր, որ չը լսեց անգամ։ Մի քանի անգամ էլ ձայն տուի, կարծեմ բաւական բարձր, դարձեալ պատասխան տուող չեղաւ։ Երբ անհամբեր ականջներս սրած սպասում էի կնոջս վերադարձին, կամ պատասխանին, լսեցի կնոջս խօսակցի հետևեալ խրոհուրդը։

—Սարէթ, ասում էր այդ հիւղի աշակերտուհին իմ կնոջս, այս հինից ութ-տասը գդալ թանի մէջ լից, վրան էլ մի բաժակ, եղկումեղկ ջուր ածիր, մի կոտրած, ետ ընկած անպէտք գդալով լաւ սրիր, մինչև որ հինաի բոլոր հատերը լուծուին ջրի մէջ։ Յետոյ գլուխդ լուայ, բռով հինայից վեր առ ցեխի

նման մազերիդ հետ գլուխդ ամեն կողմից ծեփիր, կապիր շորով, դիշերս մնայ մինչև լույս։ Առաւօտ վաղ ես կը դամ. բաղնիս կը գնանք, կը լողանանք, գլխիդ ցաւն էլ կանցնի, սպիտակած մազերդ էլ կը սեւանայ, էլ չի թափուիլ, մորթդ կառողջանայ, քեզ էլ աւելի թարմ կզդաս։

Այս որ լսեցի, համբերութիւնս հատաւ, կրակ դարձայ ու գոռացի։

—Սարէթ, Սարէթ, մի՛ լսիլ այդ քաւթառին, նախ բժշկարանը բեր ինձ կարդամ. եթէ վնասակար չէ,... եթէ բժիշկն էլ խորհուրդ կը տայ, եթէ ուրիշներին՝ փորձողներին օգնել է, կը վկայեն, հարցնենք, իմանանք, այնժամանակ դու էլ կարող ես կատարել այդ պառաւի խորհուրդը։

—Ի՞նչ, «կոտրած-գդալ», ասաց խոժոռադէմ կինս ննջարան մտնելով, ինչ ես գլորուում ամեն մի ամանի մէջ ընկնում. թաթախւում ամեն տեսակ լպրծուն կեղտերի մէջ, «հինայի-գդա՛լ»։

—Ի՞նչպէս թէ «հինայի-գդալ», «կոտրած-գդալ»։

—Ձայդ կտրի՛ր, «կոտրած-գդալ», քեզ երբ հարց տան, այնժամանակ կարող ես խօսել, քու ի՞նչ բանդ է իմ գործերին միջամտել, կնոջ գործերի խառնուել։

—Ինչպէ՞ս թէ՝ խառնուել..,

—«Կոտրած գդալի» հետ խօսելու գլուխ չունիմ, ասաց և դուռը պինդ փակելով հեռացաւ սպառնալիքներ կարդալով, գնաց գտաւ դարձեալ իւր խօսակցին։ Կարող էք երևակայել իմ դրութիւնս այդ ժամին։ Շատ ու քիչ նախատական խօսքեր լսել էի կնոջից, (խօսքը մեր մէջ մնայ, շատ սխալուեցի սրա փայլով. մանաւանդ ժառանգութիւններով. քթիցս բռնել է անիծածը,) բայց արդէն չափն անցկացրեց վերջին արարքով... Հա, կարող էք երևակայել իմ դրութիւնը այդ րոպէին, իմ վիճակը, որ եօթը ըէալական ուսումնարան եմ փոխել՝ չատախօսութեան համար, ճեմարանի եօթը ուսուցիչների հետ կռուել, արտաքսուել եմ՝ այդ պակասութեան համար, համալսարանից կիսատ եմ վռնդուել՝ լեզուիս ծայրից, եօթը տարուայ մէջ եօթը քաղաքների հոգաբարձութեան հետ պայմանաւորուել, ուսուցիչ եմ մտել և եօթնից էլ, առանց վերջացնելու ուսումնական տարին ակամայ հեռացել եմ, մի խօսքով, կարգը վռնդել են ինձ ամեն տեղից։ Այս բնութեան տէր մարդու հետ, այսպէս վարուել... Կատաղութիւնիցս քիչ էր մնում, որ վեր կենայի և

կնոջս մի լաւ թակէի, թէ կուզէ ինձ վայրենի անուանէին։ Բայց, ինչպէս ասացի, սիրտ չունէի, մի անսովոր վիճակումն էի, տեղիցս շարժուել չէի ուզում։ Քիչ լռելուց յետոյ համբերութիւնս սպառեց։ կրկին ու կրկին անգամ նորից սկսեցի գոռալ կանչել։

—Սաբէթ, ա՛յ Սաբէթ, ա՛յ կնիկ, քեզ եմ ասում, մի՛ լսի՛ր այդ ջադուին, խնդրում եմ, ուշադրութիւն մի՛ դարձնի՛ր այդ քաւթառի խօսքերին։ Բժշկարանը բե՛ր, կարդամ, մի բժշկին էլ հարցնեմ յետոյ կը վճռենք, թէ ինչ պիտի անես։ Թո՛ղ, հոգիդ սիրես, թո՛ղ այդ պառաւի աջամական դեղերը և թրքուհու նման մի ներկի՛ ձեռքերդ ու գլուխդ։ Սաբէթ, ինձ լսի՛ր Սաբէթ...

Կինս փոխանակ պատասխանելու, անտարբեր շարունակում էր իւր խօսակցութիւնը դեղտուր պառաւի հետ։ Սիրտս ծակւում էր, նամանաւանդ երբ օտարների, այն էլ մի քաւթառի ներկայութեամբ կինս ուշադրութիւն չէր դարձնում իմ խօսքերին, արհամարհում էր ինձ իւր տնտարբերութեամբ։ Մեր մէջ մի կերպ ամեն բան կարելի է տանել, բայց օտարի, անծանօթի մօտ արհամարհուել կնոջից... ջղերիս դիպաւ։ Կրկին կանչեցի։—Սաբէթ, Սաբէթ։

Այս անգամ փոխանակ պատասխանի, կինս ներս մտաւ, վերմակս մի կողմ շպրտեց, երկու սրունքներս երեք մատի մէջ բռնելով, մի դդալի նման ինձ բարձրացրեց, տարաւ և գլուխս անմիջապէս կոխեց հինաի տոպրակումն։ Փոքր ժամանակ գետի մէջ լողանալիս խորասուզուելու համար, ականջներումս, աչքերումս, քթիս ծակերում, բերանում ջուր չը լցուելու համար, մատներովս ինչպէս որ կապում էի այդ ծակերը, իսկոյն նոյն դիրքը բռնեցի, այսինքն երկու բթամատներովս երկու ականջներս ծածկեցի, երկու ցուցամատներովս երկու աչքերս բռնեցի, երկու միջամատներովս քթիս ծակերը սեղմեցի և երկու մատնեմատերս բերանիս շարեցի և այդ դիրքով սպասեցի մինչև կնոջս բարկութեան ատիճաններին իջնելը։ Զարմանում եմ ինձ վրայ, թէ ինչպէս այդ բորբոքման և իրարանցման վայրկեանին չը շփոթուեցի, նոյն ակնթարթում այդ դիրքը միտքս ընկնելն ու գործադրելը բնազդաբար կատարեցի և պաշտպանուեցայ։ Ուղիղ է ասած. թէ հարկը մարդուն ստիպում է գիւտեր անելու։

Կինս առանց խղճահարուելու, սովորական դդալի նման

ինձ վերցրեց, ոլորեց տոպրակի մէջ։ Ինձ շատ չը փոքրացնելու համար տոպրակ եմ ասում. բայց հաւատացէք, որ սովորական հինայի քսակ էր։ Գլխիս, թեերիս ու կրծքիս մէջ լցուած հինայով դուրս հանելով տոպրակից, դատարկեց այդ անիծեալ փոշին լականում, այսինքն թասում։ Ուլթ-տաս անդամ մտայ և դուրս եկայ այդ քսակում, այսինքն կինս հինան ինձանով դատարկեց քսակից և ամեն անդամ կողերս այնպէս պինդ պինդ էր խփում թասի սուր սուր շրթներին, մազերիս, ականջիս, պնչիս, վզիս ու կրծքիս կպած հինան թասում թափտալու համար, որ կողերս մի քանի տեղով վիրաւորուեց, կաշիս քերծուեց, ըսկսեց արիւնել... Մի տեսակ ջարդոտուեցայ, կոտրտուեցի...

Ձար չունէի, եթէ էլի մի բան խօսէք, պէտք է էլ աւել ինձ տանջէր, այդ պատճառով տազ արի, սպասեցի վախճանին, Մի բան որ չէի կարողանում պարզել, մի բան որ մինչև այսրոպէին էլ ինձ համար մութ է, այն էր, թէ ինչպէս ինձ նման ահագին մարդուն այն թոյլ արարածը բոի մատների մէջ խաղացնում էր դգալի նման և անդադար ծաղրելով կրկնում—որտեղից գտայ ես այս «կոտրած գդալը»։ Եթէ մի քիչ նախապաշարում ունենայի, կասէի, թէ կինս կախարդ է, կամ խօսակիցը՝ վհուկ. թէև կախարդութեան զոյութիւն չունենալուն կասկած չունիմ, միայն կինս Իւր արարքով տարակուսանքներ բարձրացրեց իմ հոգու խորքերում և ես սկզբունքներիս վրայ էլ այնքան մեծ հաւատք չունիմ։ Թէ գիտութեան հետ ասեմ, գերբնական զօրութիւններ չը կան, հապա կինս ինչ է, թէ կնոջս արարքի վրայ հիմնուելով հաւատամ կախարդութեան, հապա գիտութեան ինչ պատասխան տամ։ Տատանւում եմ, այն էլ հաստատ է, քանի որ գիտութիւնն է քարոզում, այս էլ փաստ է, քանի որ ինքս փորձով տեսայ... մարդ մոլորւում է։ Բայց ես կարծում եմ այն էլ ճիշտ է, այս էլ իրաւացի... Գերբնականութիւն էլ կայ, բնական-գիտութիւններ էլ կան...։

Մի խօսքով, ես, ծնուած տաղանդս ու հանճարս, ես, գիտութեան և իմաստութեան հարազատ զաւակս, ես, հայրենիքիս համար փայլելի ամենալուսաւոր աստղս և ծննդավայրիս անփոխարինելի զարդս, դարձել էի այդ տկար, թուլակազմ էակի ձեռքում մի խաղալիք։ Մի թոյլ, չնչին արարածի ձեռքում խաղալիք դառնալը, «կոտրած գդալի» նման գործածուելը, եթէ կախարդութիւն չէք համարում, հապա ինչ էս կարելի է անուանել։

Ձեք կարող երևակայել, թէ ինչ անտանելի դրութեան մէջն էի, չէի կարողանում շնչել անգամ, հինայի փոշին բերանս լքցուեց և շնչիս հետ կուլ էր գնում։ Սարսափելի կերպով դանեցայ, քիչ էր մնում փսխէի, բայց իսկոյն յիշեցի մի օգտակար բան և համբերեցի։ Ուղիղ որ նեղութեան մէջ մարդ անչափ սրամիտ է դառնում, յանկարծակի մտքեր է ծնում, բոլոր անցեալը մտաբերում է ակնթարթում։ Մի ժամանակ ուսուցչական ժողովում մարդակազմութեան վարժապետը ինձ նկատեց, թէ-արիւնս սովորական մարդկային արիւնից նուազ կարմիր է։ Ուզում էր ասել արիւնս ճերմակ է։ Պէտք է իմանաք, որ ես մարդակազմութեան, ընդհանրապէս բնագիտական առարկաների մէջ միշտ մրցանակներ եմ ստացել, բայց հնար չէի գտնում արիւնս ներկելու։ Իսկոյն ուղեղումս մի միտք ծագեցաւ, մի հարց բարձրացաւ։ Եթէ կարելի է թոքերում զտուել, մաքրուել, ինչի՞ չի կարելի ներկուել։ Արիւնը թոքերում զտւում է, մաքրւում է, թող այնտեղ էլ հինայով ներկուի, ասացի մտքումս և սկսեցի աներկիւղ շնչել, ծծել օդը հինայի փոշիներով և բերանումս թրջուած հինան էլ կուլ տալ, որպէսզի ստամոքսի կողմից էլ նպաստեմ արիւնիս գոյնին, որ ուրիշ անգամ մասնագէտները չը կարողանան այդ պակասութիւնս զգալ և նկատել։

Հինայի քսակը ելումուտ անելիս, մի կերպ էլի դիմանում էի, որովհետև բաց օդից անցնելիս, կարողանում էի մի կերպ շնչել։ Բայց երբ ինձ գլխիվայր թողեց թասի հինայի մէջ, եղկումեղկ ջուրն ածեց գլխիս, շնչառութիւնս իսպառ կտրուեց։ Իսկ երբ արագ արագ ինձ պտտցրեց թասի մէջ հինան սրելու համար, ուշքս անցաւ մարեցայ։ Դրանից յետոյ ինչ խաղ խաղաց կինս գլխիս, ինձ յայտնի չէ, բայց երբ սթափուեցայ, գլխից մինչև ծնկներս հինայի մէջ կոլոլուած, ջարդուած. արիւնլուայ ընկած էի խոհանոցի ճենճոտ ամաններին կողքին։ Լաւ էր, որ ռուս աղախինն էլ այնտեղ չէր, թէ չէ ողջ քաղաքում պատիս գրոչի կը հասցնէր։ Իսկոյն գիշերնոցս գլխիս բաշեցի, փափուչներս հագայ վազեցի մեր տան կողքի բաղնիսը, ներս մտայ, բաղտիցս Մելիքենց Ենդրին էլ այնտեղ չէր և երբ չտապ չտապ նոմէր պահանջեցի, վերակացուն սովորական սառնութեամբ աթոռ առաջարկելով ասաց։

— Մի քիչ սպասեցէք, մինչև դուրս գան լողացողները։

Այն դրութեան մէջ ես ինչպէ՞ս կարող էի սպասել։ Մա-

նաւանդ որ աչքիս առաջ տեսայ երեք դատարկուած նոմէրներ, որոնք իմ բաղնիս մտնելու բոպէին տուին ուրիշների։ Մատով ցոյց տալով այդ նոմէրները ասի բաղնիսպանին բարկացած.

—Դրանցից մէկը կարող էք ինձ տալ, իսկ նրանցից խընդրել, որ քիչ սպասեն։ Իմ դրութիւնս տեսնում էք. չասպում եմ...

—«Կոտրած գդալ», ասաց ինձ ծաղրելով բաղնիսպանը զու ինչ իրաւունք ունիս մեր գործերին միջամտելու և թէ-լադրութիւններ անելու։ Նոմէրները հերթով սպասողներինն է, ոչ թէ «հինայի գդալինը»։ Չես ուզում սպասել, հրամեցէք, կարող էք ետ դառնալ, ասաց նա էլ դնչով դուռը նշան տալով։

Ուզում էի պատասխանել, յանկարծ բոլոր ծառաները միասին փռնկտացին և սկսան բարձրաձայն ծիծաղել։ Այնպէս բարկութիւնս բորբոքեցին, որ էլ չը կարողանայ ծպտուն հանել. թողի և դուրս ելայ։ Բարեբաղդաբար բաղնիսներն իրար մօտ են, իսկոյն մտայ ամենամօտ բաղնիսը և առանց ուշադրութիւն դարձնելու փողոցի լակոտների և բաղնիսի ծառաների հրհռոցին, «կոտրած-գդալ», «հինայի-գդալ» աղաղակներին, առանձնացայ նոմէրում և լաւ լողացայ։ Ոչ մի բոպէ մտքիցս չէր հեռանում կնոջս արարքը, անդադար ականջումս զժզժում էր լակոտների աղաղակը։ Մէկ մէկ էլ մտածում էի, չը լինի, որ ես հաստատ կոտրած գդալ եմ։ Բայց հայեացքս անձիս վրայ ուղղելով, հայելու մէջ ինձ զննելով, ինքս ինձ դիտելով համոզւում էի, որ ես՝ ինքս եմ, ես «հինայի-գդալ» չեմ։ Այնքան ներգործել էր իմ ջղերի և մտքի վրայ թէ կնոջս, թէ բաղնիսպանի, թէ փողոցի լակոտների խօսքերը, որ կասկածում էի նոյն իսկ աչքերիս վրայ, ուշքիս վրայ։ Բայց չնչառութիւնս, խօսակցութիւնս և մտածմունքս ինձ համոզում էին, որ ես անզգայ «կոտրած-գդալ» չեմ, անպէտք չպրտուած փայտի կտոր չեմ, այլ ես մարդ եմ, ես բանական արարած եմ...

Բաղնիսից դուրս գալուց յետոյ մտմտունքը ինձ արաւ, չէի իմանում, թէ ինչպէս տուն դառնայի, կնոջս երեսը ինչպէս մտիկ անէի, ինչպէս նորա հետ հաշտուէի, նորա հետ, որն իմ գլխին այս խայտառակութիւնը բերեց։ Մտախոհ քիչ առաջ գնալուց յետոյ, տեսայ մեր տան քահանայ Տէր-Եղիշէին, որ վիճում էր գործակալ Տէր-Խորէնի հետ։ Մտածեցի մօտենալ տաներեցիս, յայտնել բոլոր անցքը և խնդրել, որ, որպէս հոգևոր հայր, գնայ ու խելքի բերէ ինձ հարս տուածին, յիշեցնէ

կնոջս մեր սպասկուած ժամանակ կայացած պայմանը, նահապետական դիրքը, որ նա է ինձ հնազանդուելու, ոչ թէ ես նորան։ Այս խոհերով տարուբերուած նրանց մօտենալիս, լսեցի Տէր-Եղիշէի ձայնը, որ ասում էր.

—Տէրտէր, տուր ինձ երկու հարիւր ծուխ, էլ ոչինչ չեմ ուզում։ Ես ծխի կարիք ունիմ, ինձ փող պէտք չէ։ Ընտրիր ամենից աղքատ ընտանիքները և ինձ յանձնիր...

—Քաղաքի դիրքը ես չեմ կարող փոխել։ Ինչպէս կառավարուել են մինչև հիմա, այնպէս էլ կը կառավարուեն մինչև իմ մահս, ասաց Տէր Խորէնը ծանրութեամբ։

—Ախար, այդ անխղճութիւն է, խեղճ ժողովրդին ոտնատակ էք տալիս։ Ինչի հասարակութիւնը զրկում էք հոգեկան մխիթարութիւնից, պատասխանեց Տէր-Եղիշէն։

—Ես բան չեմ կարող տնել, դիրքը դրուած է, մեծաւորներից հաստատուած, նախորդներից սրբագործուած։ Ժողովուրդն էլ այդպէս է պահանջում։

—Սուտ ես ասում, ասաց բորբոքուած Տէր Եղիշէն, ժողովուրդը այդպէս բան երբէք չի կարող ցանկալ, իրաւունք էլ չունի մտածելու։ Այդ մի քանի աղաների մտածմունքն էր, որ ժողովրդի կամքը չի կարող դառնալ, ժողովի հրաւիրեցէք և մեծամասնութեան ձայնով վճռել տանք հարցը։

—Այդ իմ իշխանութիւնից բարձր է, կարող էք դիմել բարձր իշխանութեան։

Տեսայ, որ խօսակիցները ինձ վրայ ուշադրութիւն չը դարձրին. բարեւիս չը պատասխանելուց յետոյ, այնպէս էին վարւում, որ իբր թէ այնտեղ ներկայ չինէի. ուստի գլուխս ցոյց տալու համար խօսքի մէջ մտայ և իմ համոզմունքս պարզապէս առաջադրեցի ասելով.

—Տէր հայր, դուք սխալւում էք, հայ եկեղեցու կարգերի և ծէսերի համաձայն պէտք է ամեն մի քահանայ իւր ծուխն ունենայ, ամեն ծխական իր որոշ և մշտնջենական քահանան։ Այս աւտնդութիւնը անխախտ պահպանելը մեր բոլորիս նուիրական պարտականութիւնն է, իսկ դուք ցաւալի է, որ նոյն եկեղեցւոյ պաշտօնեայ էք, դուք ինքներդ ոտնատակ էք տալիս այդ հայրապետական կարգերը։

—Դու ինչ, դու ով, այ «կոտրած գդալ», ասաց Տէր Խորէնը, դու արդեօք հասկանում ես, թէ բանը ինչումն է, որ այդպէս խոչոր խոչոր բրդում ես... Սա հասարակական գործ է,

քիմիական աղեր չէ, որ խառնափշտորես։

—Տէր հայր, զսպեցէք ձեզ…

—Վա՛յ մեզ, որ «կոտրած գդալները» պիտի սովորեցնեն մեր պարտականութիւնները։ Ախար եթէ դու կարողանաս հասկանալ, ըմբռնել թէ՝ հարցը ինչ բանի վրայ է կայանում, ես հաւատացած եմ, որ երբէք այդպէս չես խօսիլ։ Դու չես ըմբռնում թէ նրա հեռաւոր նպատակը որտեղ է և ծխերը բաժանելուց յետոյ գործը ուր կը հասնի։ Այո՛, այսօր նա համաձայն է ունենալ երկու հարիւր ամենաղքատ ընտանիքներ իրեն յատուկ ծուխ, թողնելով հարուստները ուրիշներին. բայց էգուց հարուստ ծխերը նրանից դրդուած մի մի խնդրագիր կը տան թէմակալին, որ իրենք չեն ուզում իրենց ծխատէր այս ինչ քահանային, այլ ուզում են իրեն՝ Տէր Եղիշէին, կամ մի ուրիշին։ Թէմակալը իրաւունք չունի ժողովրդին ասելու.— Դու եղիր սրան ծուխ, կամ նրան ծուխ, այլ ծուխը պէտք է իրեն համար ծխական քահանայ ընտրէ։ Այդպիսով հարուստները, իւղալի օջախները կանցնին ճարպիկների ձանկը, իսկ տնանկները չունևորները կը մնան առանց ծխականի, կամ այնպիսի ծխականներ կունենան, որոնց երեսը տարիներով հազիւ թէ տեսնեն։

—Այդ էլ ուղիղ է, ասացի Տէր-Խորէնին, դու էլ ճիշտ ես ասում։ Բա՛յց չէ՞ որ նրա ասածի մէջ էլ ճշմարտութիւն կայ։

—Է՜հ, ասաց Տէր Խորէնը դէմքը թթուեցնելով և ուսերը շարժելով, միթէ՞ կարելի է «կոտրած-գդալի» հետ խօսել և միտք փոխանակել. երբ ամեն մի կողմին էլ կարող է պատասխանել, թէ ճշմարիտ է քու ասածն էլ, ու հեռացաւ։

Էլի «կոտրած-գդալ». քիչ էր մնում խելագարուէի։ Ախար ի՞նչ են իմացել սրանք, ի՞նչ է պատահել։ Բայց արդէն Տէր Եղիշէն հեռացել էր, մինչ Տէր Խորէնը ինձ հասկացնում էր կոլէգի հեռաւոր նպատակները։ Հետևեցի, բայց հետքը կորցրի։ Մոլորուած հրապարակի շուրջը ման էի գալիս, քայլերս տան կողմը չէի կարողանում ուղղել։ Շարունակ գլխումս գամուած էր մեխի նման «կոտրած-գդալը» «հինայի գդալը» և բացատրել չէի կարողանում։ Ծանօթներիս բարևներին անսիրտ պատասխանելով շարունակում էի քայլերս մեքենական շարժումներով։

Դէմից դիմաւորեցին ընկերակիցներս, որոնք քսան քայլ հեռուից արդէն սկսեցին քրքջալ և ծիծաղել։ Ցայտնի բան է այդ ժպիտներն ու խնդումները ինձ համար էին, բայց արդեօք

սիրոյ, յարգանքի, թէ ծաղրի նշան էր, չէ կարելի բացատրել։ Ինչպէս կարելի է մարդկանց հոգու խորքերը թափանցել, քննել և զգալ նրանց վիճակը, երբ հոգին չի անդրադառնում հայելու նման դէմքի մէջ, կամ կուրծքը թափանցիկ չէ, որ զննես ներքին աշխարհը։ Եթէ սիրտը թափանցիկ և տեսանելի լինէր, միթէ խորամիտ մարդիկ նրան էլ չը պիտի կարողանային շպարել և կեղծել։ Բայց քանի որ ինձ համար էին ինդում, ես միշտ սովոր եմ այդպիսի ծիծաղները ինձ նպաստաւոր կերպով բացատրել, կարծել որ նրանք դէպ ինձ ունեցած բարեսիրտ յարգանքն էին արտայայտում որոշ զուարթութիւններով։ Տասը քայլ հեռաւորութիւնից արդէն բարևները տեղացրին և ես չփոթուած չէի իմանում դէմքս, հայեացքս որ մէկի կողմը դարձնեմ, որին յայտնել ջերմ զգացումներս։

—Քէֆդ, հա՛լդ, որտե՞ղ էիր, ինչի՞ չես երևում, ինչի՞ տըխուր ես, ամեն բերան մի հարց էր տալիս, առանց իմ հոգեկան վիճակի մասին տեղեկութիւն ունենալու։ Ես լուռ մտեցայ, ձեռքերը սեղմեցի և դարձայ նրանց հետ ճեմելու, վրդովմունքս և վիշտս ցրուելու յոյսով. ընդհատուած խօսակցութեան կտրուած թելի ծայրը ձեռքից բաց չը թողնելով, Մարգարեանը շարունակեց.

—Շատ էլ մեր պապերը այս ու այն դիրքը դրել են, կարգը սահմանել են և դարերով կուրութեամբ հետևել են։ Ասացէք խնդրեմ, կարգը պապերն են դրել, թէ մի ուրիշ գերբնական զօրութեամբ է կազմուել։ Դրուած կարգը հասարակութեան չահի՞, թէ վնասի համար են սահմանել։ Հնում մեր պապերը իրենց չահերի համաձայն, այդպէս բարոք են համարել և տնօրինել։ Իսկ ներկայիս պահանջների համաձայն, քանի որ հինը վնասակար է, միթէ՞ մենք մեր պապերի նման իրաւունք չունենք կարգերը փոփոխել մեր կարիքների և պահանջների համեմատ։

—Կարծիք չը կայ, պատասխանեց նրա ընդդիմախօս Մելիք—Զօղալեանցը, որ կարգերը մարդիկ են սահմանել հասարակութեան բարու համար։ Բայց ներկայիս կարգերը փոփոխելու կարիքը դեռ չէ զգացուում և մի օրէնք որ սահմանուած է միլիոնաւոր ժողովրդի համար, այդ օրէնքը չի կարելի փոփոխութեան ենթարկել մի քանի անհատների հայեցողութեան համեմատ։ Մանաւանդ որ մի այդպիսի փոփոխութիւն կարող է առիթ դառնալ աւելի արմատական փոփոխութիւնների, որով

բոլորովին կարող է կործանուել այն չէնքը, որը քանդելով վերաշինելու միջոց, կարողութիւն—հնարաւորութիւն չունենք ներկայումս։

—Բայց եթէ այդ չէնքը թողնենք իւր խարխուլ վիճակի մէջ, նա յանկարծ այնպէս փուլ կը գայ, որ բոլոր ապրողները մէջը կը կործանուին։ Այս բանը աչքի առաջ ունենալով, ինչի՞ թողնենք, որ այդ աւերակներում մարդիկ ապրեն միչտ փլատակների տակ մնալու սոսկումով... Մենք մեր ամբողջ կեանքը դառնացնենք աւերակների մէջ, զրկուենք յառաջադիմական քայլերից և սոսկանք վիճակներիցս, թէ ինչ է, գուցէ չը կարողացանք վերանորոգել մեր ժառանգական սովորութիւններից ոչինչ չէք պահել կեանքի շրջանում։

—Էհ՜, զահլա տարաք ձեր պահպանողական և արմատական փիլիսոփայութիւններով, վրայ բերեց Նահ-Բուդաղեանցը։ Տէր Խորէնի և Տէր Եղիշէի հացի խնդիրը զբաղեցրել է բոլորիդ։ Ուրիշ ցաւ չունի՞ք, ինչ է, որ այդպիսի մի փոքր խնդրի առթով ամբողջ ժամեր դդում էք չինել մեր գլուխները։ Երկուսն էլ ժողովրդին մաչկելու հնար են մտածում, երկուսի էլ աչքը ուղղուած են մեր կաթին ու բրդին։

-Ամերիկան գտաւ, էլի՛, ասաց Մարգարեանը։ Հարցը չարիքի փոքրագոյն ընտրելն ու ժողովրդի չահերի նպաստող կողմն անցնելն է։ Տէր Եղիշէն մտածում է հովի նման ժողովրդին հօտի վերածել, բաժան բաժան անել ժեզվիտի նման էլ իւրացրած ոչխարի կաթն ու բուրդը արիւնի հետ ծծել։ Այն ինչ Տէր Խորէնի սիստէմով կղերի գերիշխանութիւնը ժողովրդի վրայ մասամբ չէզոքանում է, հասարակութիւնը աւելի սառնասիրտ հայեացք է ուղղում հոգևորականութեան ծիսակատարութեան վրայ, ընտելութիւնը թուլանում է, մտերմութիւնը դադարում և ժողովուրդը քննդատում է այն պատգամները, որոնց հպատակում էր մի ժամանակ ամենայն սրբութեամբ և հեզութեամբ։ Ահա թէ ինչի երիտասարդութիւնը պէտք է Տէր Խորէնին աջակցի, այնպէս չէ՞, հարցն ինձ ուղղեց Մարգարեանը ժպտերես։

Ճշմարիտն ասած ես չփոթուեցի։ Երկու սրի մէջն էի, երկու կողմից ոչ մէկի հետ ընդհարուել երբէք չէի ցանկալ։ Ուստի դանդաղ մտածումներով ասացի.

—Գիտէք, պարոններ, ինչ կայ, սա մի հարց է, որ շատ լրջութեամբ պէտք է քննադատել և ապա լուծել։ Պիտի ասեմ,

որ իմ կարծիքս նրանց համար մեծ նշանակութիւն ունէր, դիրքը պահպանելու համար պէտք էր հեռատես լինել։

—Այստեղ, պարոններ, շարունակեցի, կարծիքի խնդիր չը կայ, այստեղ սկզբունքի հարց կայ և ազնիւ մարդու համար ամենից գլխաւորն սկզբունքն է։ Ուստի ապագայ յոյսից աւելի պէտք է գերադասել այժմուէթիւնը։ Ապագայի ինչոր աղօտ յոյսի նշոյլի համար պէտք չէ այսօր կեանքերս խաւարեցնենք վտանգալի աւերակներում օրերս մթնացնելով և յաւիտենականապէս կործանուելու, կլանուելու վտանգին մատնել մեր կեանքը, գոյութիւնը և սեփականը։ Նոյնպէս անբարեխղճութիւն է մեր ներկայ վայելքների համար, առանց դրական փաստ ձեռքերումս ունենալու, ուրիշների յուսացած աղօտ ապագայ դամպարը հանգցնել։ Իմ կարծիքս այն է, որ մենք կարող ենք մեր աւերակների մօտ վրաններ խփել, ապրել, նրանց շուրջը քաղաքակրթական ապարանքների հիմքերը դցել, որմերը, կամարները հիւսել, կապել։ Իսկ մեր հակառակորդները ողբալով իրենց կործանուած փառքը, ներբողելով անցեալը, կսպասեն իրենց գուշակած դամպարի լոյսի յայտնելուն։ Մենք կարող ենք մեր գործն առաջ վարել մեր համոզումների համաձայն և բարեկամ մնալ թէ Տէր Խորէնին, թէ տէր Եղիշէին։ Այս ընթացքով, թէ կը վայելենք քաղաքակրթութեան բարիքները, թէ կը կռուենք առաջադիմական բանակի հակառակորդների հետ մեր խղճի թելադրման համաձայն և թէ չենք արագացնիլ այն վլատակի անկումը, որը վերականգնելու յոյս ունին շատերը, որտեղից ծագելիք արևը կարող է գուցէ ապագայում նպաստել և մեր պրոպագանդային...

—«Կոտրած-գդալ». ասաց դէմքը ծամածռելով Մարգարեանը։ Ցիմարը ես եմ, որ լսում եմ սրա դատարկաբանութիւնները։ Մի մարդ որ պատրաստ է ամեն րոպէ կշեռքի ծանրը թաթը թռչելու, միթէ՞ կարելի է նրանից համոզմունք գոյացնել։

—Իրար համոզումը չը յարգելու իրաւունք չունինք, ասացի յուզուած, հայհոյանքով չես կարող բռնաբարել իմ համոզմունքս։

—Համոզումները ես էլ եմ յարգում, բայց ոչ թէ «հինայի—գդալի» բարբաջանքները, որը կողմերին հաճոյանալու համար պատրաստ է ամեն գոյնից խառնուրդ շապիկ հագնելու։

—Զափաւորիր հայհոյանքներդ...

—Լաւ, լաւ, դադարեցէք, միջամտեցին ամեն կողմից և ես միքանի բոպէից յետոյ, նրանից բաժանուած, զբօսնում էի ծովափում։ Աչքերիս թւում էր, թէ ամբողջ աշխարհ այլակերպուել էր, ամեն բան տարբեր գոյներով էր ներգործում ջղերիս վրայ։ Մինչև անգամ մարդկանց յարաբերութիւնների մէջ ահաւոր փոփոխութիւններէի նկատում։ «Կոտրած—գդալը» աչքիս առաջից չէր հեռանում, մտապատկերներումս «կոտրած—գդալներ», հինայոտ գդալներ» էին դիզուած, ականջիս թաղանթին անդադար բախւում էր «Կոտրած—գդալ», «հինայի—գդալ» խօսքերը ճակատիս դրօշմողների արտասանութեամբ և առոգանութեամբ։ Միտքս ուր չէր թռչում, ինչեր չէի երևակայում Կասկածում էի, որ այն հինա բերող ջադու—քաւթառը կախարդել էր ինձ։ Ո՞վ կարող էր գուշակել, թէ ինչ հեռաւոր նպատակով։ Ո՞վ է իմանում, թէ ինչ թալիսիմա էր բերել այն աջամական հինայի հետ մեր տուն։ Հինայի փոշին մեր տունը ափռելուց յետոյ, կարծես ինձ կախարդական չապիկ հագցրին և ամեն պատահողի աչքում ես թւում եմ, նմանւում եմ «կոտրած—գդալի», «հինայի—գդալի։ Կարծես իմ աչքումս անգամ ընկաւ, (խօսքը մեր մէջը, առաջ էլ վրաս լաւ համարում չունէի) և համաչում եմ, որ սկզբունքներիս հակառակ կախարդութեան գոյութեան մասին համոզումներս արմատներ են գցում արտիս ջղերի մէջ։ Աչքովս անձս զննելով, ինքս ինձ եմ տեսնում, բայց օտարների աչքում այս ահագին իրանս մի կոտրած—գդալ է երևում։ Կատարեալ թալիսիմա էր այն անիծուած հինան, իսկ պառաւը ձեռում նստած կախարդ, որն օձը ձեռին մտրակ չինած ինձ հալածում է։

Գնացի նահանգապետի այգին և առանց տատանուելու մըտայ ակմբանոցի ընթերցարանը աչքից անցկացնելու, որպէսզի դառն մտածութիւններս ցրուեմ, կարդալու բոլորովին հաւաս չունէի, սկսեցի պատկերազարդ հանդեսները թերթել։ Զարմանալի է աշխարհը, միջնադարեան աղճատութիւնները, անհամաչափ անճոռնիութիւնները նորից ասպարէզ են եկել և գեղարուեստը, համաչափական սքանչելիները, նրբակազմ ձեռակերտները, ակնապարար վայելչաձև նկարները բացակայում են ամեն թերթից և հրէշաւոր պոչերով ու պոզերով խզմզուածքները տեղ են գրաւել։ Դարձրի թերթերը գրաւիչ մի պատկեր գտնելու յոյսով, բայց զուր, չինական, ժարոնական ծամածռութիւնների նման խազմզոցներ էին իրար հետևում, բուդայական,

մանդարինական այլանդակութիւններ էին միմեանց յաջորդում: Զը կարողացայ զգացումներս զսպել, ասացի գրասեղանը շրջապատուղներին.

—Կլուբի վարչութիւնը միթէ դատած փողեր չատ ունի, որ այս այլակերպ հրէշական նկարների վրայ ահագին ծախսեր է անում և ընթերցողների, յաճախորդների ճաշակն է բթացնում.

—Ի՞նչ է պատահել, ի՞նչ այլանդակութիւնների մասին է ձեր խօսքը, միջամտեց գրադարանապետը, որ գրքեր էր բաժանում ակմբանոցի յաճախորդներին և պարտաւոր էր նկատողութիւնները յատուկ մատեանում արձանագրելու: Դէմքս ծամածռելով հանդէսների թերթերը շրջեցի և պատկերները ուղղեցի աչքերը ինձ վրայ յառողներին. Ամենքը հետաքրքրական լուրջ դէմք ընդունեցին և զարմացական հայեացք ուղղեցին դէպ ինձ: Իսկ կլուբի վարիչներից մէկն ասաց.

—«Կոտրած—գդալը» միթէ կարող է դատել դեկադենտական նկարները: Ո՞ր տեղը հինայի թասն է, գնա՛, գլորուի՛ր և ինչքա՛ն ուզենաս դէլին տուր:

—Պարո՛ն..., պարո՛ն... պարո՛ն... մի քանի անգամ ընդհատեցի, բայց ո՞վ է լսողը: Վերջապէս գոռացի,—պարո՛ն, դուք չափն անցրիք...

—Դուք չափն անցրիք, ասաց հեգնաբար և յարեց, խնդրեմ իսկոյն հեռանաք, եթէ չէք ուզում, որ ձեզ դուրս շպրտեն ընթերցարանից, «հինայի—գդալ»:

—Դուք... դուք,... լեզուս էլ բռնուեց:

—Ես օրապահ վարիչ եմ այստեղ, ձեզ էլ հրամայում եմ, որ դուրս գաք, «կոտրած—գդալ», հակառակ սպասաւորները դուրս կը շպրտեն:

Էլ ճար չը կար, թէև դուրս եկայ, բայց չը կոտրուեցի, դռնից նրան վերադարձրի արժանաւոր պատասխանը

—Դուք բռնակալ էք, ես արհամարում եմ ձեր հրամանը: Դուք խեղդում էք անհատի ձայնը, ստորաբար կեղտոտ անուններ էք կնքում...

—Կորի՛ր, «հինայի—գդալ», քո տեղը...

Միւսը չը կարողացայ իմանալ, իսկ դուք կարող էք ըմբռնել, թէ ինչ կարող էր լինել: Ինչ էլ որ լինի հոգս չէ, այնպիսի բուրժուայի կարծիքը ո՞վ է բանի տեղ դնում, թէև քիչ առաջ դէմոկրատ վարժապետներն էլ այդ բառերը շպրտեցին երեսիս: Ասենք վարժապետներն էլ մի զատ չեն, բայց բանը

նրանումն է, որ ամենքը միաբերան ինձ «հինայի—գդալ» և «կոտրած—գդալ» են կանչում։ Թէև ուզում եմ արհամարել բոլորին, բայց այդ բառերը ծակում են ականջներս, որտեղից անդիկի նման լցուել են որտիս խորշերը և այնքան են այնտեղ կուտակուել, ծանրացել, որ զայրութիցս քիչ է մնում ճաքեմ։

Անզգայաբար առաջ գնալով հասել էի բնակարանիս դռանը ուչքս, միտքս բոլորովին ցրուած։ Երբ սենեակներից լսեցի կնոջս որոտման աղմուկը, իսկոյն չանթահարուածի նման սթափուեցի։ Բնակարանս շուր եկաւ գլխիս, կարծես մի դոյլ սառը ջուր ածեցին վրաս։ Սիրտ չարի կնոջս դիմաւորելու, առանց շշուկ բարձրացնելու դուրս եկայ թափառումներս շարունակելու։ Սրտադող տառաջ էի գնում մայթերից ամեն շւոց, ամեն ակնարկ, ամեն հեգնանք և ծիծաղ թւում էր թէ ինձ էին ուղղուած։ Ոչ միայն փողոցային լամուկները, կառքերի դղրդոցը տրամուայի հրճռոցը, քամին՝ խազրին անգամ «կոտրած—գդալ», էին սուլում եմ ականջիս։ Դուցէ կասկածիք, բայց հաւատացնում եմ, որ ականջներում բախուած ամեն մի ձայն «հինայի—գդալ» էր հնչում։ Ծովափից աննպատակ քայլերս մղեցի առաջ, մեքենաբար երկրորդ անգամ անցայ նահանգապետի այգուց, բարձրացայ մթերանոցների մօտով իջայ պարապետ, շրջան տուի, գնացի Մալականի այգին և էլ չեմ յիշում որ փողոցները։ Թուլութիւն եկաւ վրաս, ստամոքս բողոք էր բարձրացրել սրունքներիս դէմ, քաղցը քայլերս ուղղեց դէպի ածանագին—ճաշարան։

Մտայ սրահը, ուր ահաւոր բազմութիւնը որկորի սպասին էր ծառայում։ Կարծես թէ տօն լինէր, բանուոր, գործաւոր, մեքենավար իրարքով բոլորուած, կարծես միմեանց հետ գրազ մտած, աշխատում էին ստամոքսները բեռնաւորելու համար իրար դէմ մրցել։ Մէկը կերած ձկի խորոված ուզում էր գինիով լողացնել, երկրորդը կովի բիւֆշտէքսը գարեջրով յագեցնել, երրորդը խորոված գառը օղիով կենդանացնել և ամենքն էլ ագահաբար կանանչ էին կլանում, որ կլանած և ստամոքսներում զետեղած բուսակեր կենդանիները առատ արած են ու որոճան։ Այս մրցումը իմ էլ անկուշտ ստամոքս գրգռեց, (պէտք է խոստովանուեմ, որ ախորժակի կողմից իսկապէս տէրտէրացու եմ,) ես էլ աեղաւորեցի մի անկիւնում, պահանջներս կուտակեցի սպասաւորի ականջում. որը աջալրջութեամբ ընդունեց և սրամիտ քայլուացքով սլացաւ իւր գործին։

Սովորաբար ճաշելիս թէև ամբողջ աշխարհ մոռանում, մարտնչումեմ ատամներովս խորակների հետ, խոհարարի պակասորդը լրացնում եմ ջարդ ու փշուր անելով միս, ջիղ, ոսկոր, ամեն բան և միայն անձնատուր եմ լինում խաղողի հիւթին, որը նուաճում է ինձ, բայց այդ ճաշի սեղան նստելուց յետոյ, երբէք աչքիս առաջից չանհետացաւ այն անիծեալ կախարդական «կոտրած—գդալը»։ Կարծես ճակատիս սէջտեղը մխուած լինէր գդալի պոչը և քիթս հովանաւորում ձուաձև շըքով։ Ուտում էի, ատամներս երբէք չէին դադարում, բայց անընդհատ պարտաւորուած էի հայացքս կերակուրից դարձնել քիթիս վրայ կախուած գդալին և զննել ամբողջ անձս սրտիս խորքից հառաչանքներ արձակելով։ Այնպէս էի խրուել այս մտքերի մէջ, որ երբեմն երբեմն ամբողջ մարմինս «կոտրած—գդալի» ձևով էր երևում աչքերիս։ Թէև բանականութիւնս-չոչափելիքներս, լսելիքս փարատելու էին ձգտում այս կասկածներս, բայց սրտիս խորքերից իսպառ չէր անհետանում այդ սոսկալի չփոթութիւնը։ Վիշտս թմրեցնելու, սև մտքերս ցրուելու նպատակով, բաժակի գինին անվերջ մեծ հաճոյքով տեղափոխում էի ստամոքսս։ Թէ ինչքան տեսեց նախաճաշս և որքան լքցրի ամբարս չգիտեմ, միայն թէ յիշում եմ, որ իրար ետևից նոր յաճախորդներ էին մտնում ճաշարան, կշտացածները դուրս էին գնում։

Խօսակցութիւններից բան չեմ յիշում, միայն նկատեցի, որ դէմս նստած մի հաստափոր պարոն շատ հետամուտ է սառը գարեջրին։ Նրա առաջ չիշերը սեղանի վրայ այնքան խիտ էին շարուած, որ չէի կարողանում ազատ դիտել այդ թանձր մարմնի շարժումները։ Ցաւեցայ խղճալու վրայ, որը խոզի նըման մարմինը գարու հիւթով պարարտացնելու էր ձգտում։ Կարծես թէ այդ մսի բլուրից երշիկ ու ապուխտ էին պատրաստելու։ Գիտէք, որ լռել չէի կարող, մանաւանդ պարագային, ուստի անծանօթին մի բաժակ կարմիր կախէթի գինի առաջարկեցի ու ասացի.

—Պարոն, ներեցէք նկատողութեանս, թողել էք մարդավայել ազնիւ գինին, ստամոքսներդ բեռնաւորում էք խոզի ըմպելիքով։

—«Կոտրած—գդալ», ճչաց վրաս և մի չիշ հասցրեց ուղղակի ճակատիս։

—Դուրս տարէք այս «հինայի—գդալը», տարէք խոհանոց

և կեղտոտ ամանների ջրով մի լաւ լուացէք, չարունակեց հակառակորդս բորբոքուած։

Ճակատիս վէրքը, հոսող արիւնս, կսկիծը այնքան չը վրդովեցին հոգիս, որքան թունաւորեց սիրտս նրա արտասանած «կոտրած—գդալ» երկու խօսքը։ Բարկութիւնից աչքերս մթնեց և լեզուս կարկամեց։

Դուրս, տարէք խոհանոց այդ «հինայի—գդալը», գոռաց բիւֆէտի կառավարիչը, տարէք, գլխին սառը ջուր ածեցէք, գուցէ խելքանայ։ Գլխներիս փորձանք դարձաւ այդ «կոտրած—գդալը», կարող է ոստիկանութիւնը ներս մտնել, մեզ տուգանել, հիւրերիս դադաստանի մատնել։

—Սառը ջուր ափսոս է, լուացուած ամանների ճենճոտ ջուրն էլ չատ է այդ «կոտրած—գդալին», գոռաց դարձեալ հաստափոր հակառակորդս, մի քանի հայոյանքների յաւելուածով։

Ես սրբիչով գլուխս բռնած դուրս եկայ երկու լակոտների ընկերակցութեամբ, որոնք իրը թեերս էին մտել։ Անմիջապէս գլխիս սառը ջուր ածեցին, սառուցի կտորներ դրին։ Բայց այնքան մեծ էր վերքս, այնպէս հոսում էր արիւնս, որ պարտաւորուած վազ տուին, բժիշկ հրաւիրեցին։ Ուշքս անցաւ .....։ Սթափուելիս ինձ գտայ հիւանդանոցում, վիրաբոյժի և խնամատար քոյրի հսկողութեան յանձնուած։ Արդէն ճրագները վառուած էր, ինքս էլ մահճակալի վրայ զետեղուած։ Արիւնիս հոսանքը դադարել էր, վերքս կապուած, թէև ուժասպառ էի եղել, բայց ցանկալի չէր հիւանդանոցում գիշերել, կնոջս թողնել տարակուսանքների մէջ...։ Մանաւանդ զրկուել կնոջս պատրաստած կարկանդակից...։

—Խնդրում եմ՝ ինձ մի բաժակ սառը ջուր տուէք, ասացի խօսքս խնամատար քրոջն ուղղելով, որ կանգնած էր դիմացս աչքերը վրաս յառած, ծարաւ պապակել և շրթունքներս իրար է կպել։

--Բժիշկն արգելած է, պատասխանեց նա արձանի նման առանց տեղից շարժուելու։

—Բայց խեղդւում եմ, կոկորդս չորացել է, թքեմ ես դրանց գիտութեան վրայ ջուրը ինձ չի կարող վնասել։ Ես ջրով սնուած մարդ եմ։ Այդ գիտնականներն իրենց գիտութեամբ արդէն աչքիցս ընկան։

—Դուք դատելու և զրաբանելու իրաւունք չունիք, ա-

սաց միւս կողմից վերաբոյժը. մանաւանդ գիտութեան դէմ զառանցելու։ Այստեղ բժիշկի պատուէրի հակառակ անկարելի է վարուել։ Ցամբերեցէք, որ չուտով անցկացնէք ճգնաժամը։

—Ինչպէս թէ դատելու իրաւունք չունիմ, ինձ ի՞նչ է պատահել, ինչ ճգնաժամ է։

—Լա՛ւ, Լա՛ւ, լռեցէք, հանգիստ պառկեցէք, յետոյ, լաւանալուց յետոյ կարող էք վիճել։

—Ո՛չ կը լռեմ, ո՛չ էլ կը պառկեմ, ասացի խրտխուսուած խնամատար քրոջ զեղցողական պատասխանեց յետոյ։ Մի ջուր տուէք, ծարաւս յագեցնեմ, կազդուրուեմ, գնամ տուն։ Կինս այժմ մտատանջութեան մէջ կլինի։

—Լսի՛ր, հանդարտուի՛ր, համբերի՛ր։ Կնոջ մասին մտածողը ճաշարանում այնքան չէր լակիլ և այսպիսի խայտառակութեամբ հիւանդանոց չէր մտնի։ Քո մասին այժմ տնօրէնութիւն կարող է անել միայն բժիշկը, ասաց վիրաբուժը չինովնիկական տոնով։

Սրա խոսքորից սոսկացի, կարծեցի թէ ոստիկանութիւնը ինձ կալանաւորած և հիւանդանոց է ուղարկած մինչև ապաքինելս։ Մի սառն քրտինք վրաս թափեց այս միտքը և ես բորբոքուած ասի։

—Բռնութիւն է, ինչ է։ Պէտք չէ ո՛չ ձեր օգնութիւնը, ո՛չ էլ ձեր խստութիւնները։

—Լռի՛ր, «կոտրած—գդալ», ի՞նչ ես խառնում քեզ չը վերաբերուող հարցերում։

—Ինչպէս թէ ինձ չը վերաբերուող...

—«Հինայի—գդալ», լռի՛ր, բանակուիը աւելի կարող է քավիճակը ծանրացնել։

—Շնորհակալ եմ ձեր վարմունքից, մարդու բանտարկում էք, նախատում էք և ապա ստիպում, որ լռի։ Չեմ լռի, տուէք չորերս, ես գնամ, ասացի ու գլուխս բարձրացրի վերմակի վերայից։

—Ա՜յ «կոտրած գդալ», հանգիստ պառկիր, թէ չէ, կը հրամայեմ, քեզ խելագարի շապիկ կը հագցնեն, այնպէս կը կապոտեն, որ ոչ միայն անդամներդ, այլ լեզուդ էլ շարժելու կարողութիւնից կը զրկուես, ասաց զայրացած վերաբոյժը։

—Ուրեմն սա ոչ թէ մարդասիրական, այլ, բռնակալական հիմնարկութիւն է... Ես բանտումն եմ...։ Ճշմարիտը վերաբոյժի սպառնալիքն այնքան ազդեց, որ նստելու, խօսելու

հնար չունէի։ Բայց ծարաւը, պապակն այնքան չէր ճնշում, որքան տանջում էր վերաբոյժի նախատինքները, «կոտրած—գդալ», հինայի—գդալ», այն էլ խնամատար քրոջ ներկայութեամբ։ Աչքերս էլ պինդ խփեցի, որ այդ դահիճ վերաբոյժի երեսը չը տեսնեմ, բայց անհնար էր հանգստանալ։ Մտապատկերներուս խառնուել էին կինս, բաղնեսպանը, Տէր Խորէնը, փողոցի ստահակները, Մարգարեանը, ակմբանոցի վերատեսուչը, ճաշարանի կառավարիչը, գարեջրի հաստափոր սիրահարը, լակէյները, վիրաբոյժը, խնամատար քոյրը. անցորդները և կառապանները ձեռքերին բռնած կոտրած-գդալներ ինձ հալածում էին և ամեն կողմից կրկնում—«հինայի գդալ», «կոտրած գդալ»։ Այդ գդալների հալածանքից ուր որ փախչում էի, որքան որ թափառում էի, որ անկիւնը առանձնութեան քաշւում էի, կամ մտնում էի խոնուած ամբոխի շրջանը, ազատուելու հնար չէի գտնում։ Պատահող փողոցային ստահակը, շրջաններից դուրս գցուած սրիկան, անգործ ու հարբած բանւորը, մշակն ու մուրացկանը, խանութի աշկերտն ու ոստիկանը բոլորը միաբերան ծիծաղում, «հինայի գդալ» էին կրկնում և ամեն մէկը օդի մէջ ծածանում էր ձեռքին բռնած «կոտրած-գդալը»։ Այս երազներով որքան եմ տառապել չեմ յիշում, հիւանդանոցի մէջ որքան եմ մնացել չը գիտեմ, միայն առողջանալուց յետոյ էլ թէ բժիշկը, թէ վիրաբոյժը, թէ խնամատար քոյրը, երբ երեսիս էին նայում և ժպտում, կարծես թէ լսում էի նրանց մրմնջած «կոտրած գդալը»։

Ինչպէս ինձ պատմեցին, հիւանդութեանս ճգնաժամերին կինս յաճախ այցելել է հիւանդանոց, այնպէս վշտանում և լալիս է եղել, որ յաճախ ուշքը կորցրած հազիւ կարողանում է կառք նստել և վերադառնալ։ Չեմ հասկանում, թէ ինչ աստիճան կեղծաւորութիւն է, այն էլ ինչ նպատակով։ Թէ ինձ սիրում է, սէրը նրան ստիպելու է ինձ յարգել, որով իմ կամքս, ցանկութիւններս նորա համար սրբութիւն պիտի լինի։ Նորա ինձ յայտնապէս արհամարելուն կասկած չունիմ. ուրեմն այդ ինչ վշտի արտայայտութիւն է, ինչ արտասուք է, մարդ մտածելով մոլորւում է։ Եթէ նա ինձ սիրէր, ինչի պիտի ինձ այն աստիճան դառնացնէր, որ ես պարտաւորուած նորանից խոյս տայի և դիմէի էժանագին ճաշարան, ինչի պիտի գլուխս պատուէր և ես հիւանդանոց ընկնէի այսպիսի խայտառակութեամբ։ Քանի որ կինս ինձ արհամարհում է, հետևաբար և ա-

տում, էլ ինչ հարկ կայ ինձ փնտռելու, կեղծելու, և ողբերգական տեսարաններ ներկայացնելու...։ Եթէ ես հինայի դդալ եմ, ինձ ջարդ ու փշուր ես անում, թասի մէջ կողերս ջարդում, էլ ինչի՞ ես հետամտում ինձ արտասուքով...։

Վերջապէս առողջացայ, բայց վիրաբոյժի ծաղրին ու ներ հակութիւններին չը մատնուելու համար, էլ չառաջարկեցի, որ ինձ արձակեն հիւանդանոցից։ Բժիշկը յայտնեց, որ դեռ մի շաբաթ էլ չի կարող ինձ բաց թողնել, խնամքի և ոյժի կարիք ունէի։ Ամեն օր կինս գալիս էր, ինձ համար այլևայլ սննդարար քաղցրաւենիներ և կարկանդակներ բերելով։ Ես ընդունում էի այդ նիւթերը, խժռում, բայց իրար հետ քթով էինք, շատ քիչ էինք խօսում։ Զգուշանում էի, որ բժիշկը, վիրաբոյժը, խնամատար քոյրը, ծառայողները չը նկատեն մեր սառն յարաբերութիւնը։ Տուն դառնալ չէի ցանկանում, թէև հիւանդանոցը բանտ էր կատարեալ ինձ համար. ազատ օդը, բուլվարների մի պտոյտը կեանք էր, բայց քանի որ երևակայում էի մեր զնդան բնակարանը, դահիճ կնոջս շարժումները, մանաւանդ նորա անվերջ կրկնած «Խոտրած դդալ» տիտղոսը, կարծես սրտիս մէջ տէգ էր խրւում և անդադար խոցոտում ու կսկծացնում։ Բայց ճար չը կար, ժամանակը լրանալու պէս կօշիկներս առաջս դրին։ Պէտք էր հիւանդանոցի լաթերը հանել, հալաւս հագնել և ճանապարհ ընկնել։

Ուղղակի չէի գնալ բնակարանս, եթէ կինս վաղօրօք կառք վարձած և հիւրասենեակում ինձ չսպասէր։ Դարձեալ մտայ նոյն չարաբաստիկ ննջարանը, որտեղից տասնհինգ օր առաջ լսում էի կնոջս և հինայի դեղդիր վհուկի խօսակցութիւնները։ Կինս մի քանի ծանօթ տիկինների հիւրընկալութեամբն էր զբաղուած, որոնք շտապել էին աչքալոյսի գալ իմ ապաքինութեան և իրենց կարել տուած նոր շրջազգեստները և գլակները ցոյց տալու համար։ Ուտում էին, խմում և քահքահ ծիծաղում, իսկ հեռանալ և ինձ հանգիստ թողնելը անքաղաքավարութիւն էին համարում։ Երութիւնս կարող էք երևակայել, սենեակում փակուած, ոչ կարող էի քնել, ոչ աշխատել, ոչ էլ դուրս գալ։ Կնոջս քմհաճոյքներին, հիւրերի վայելչութիւններին բաւականացնելու համար պարտաւոր էի լսել, համբերել և տոկալ...։ Բայց դա իմ բնաւորութեան հակառակ լինելու համոզումը կարծում եմ, որ արդէն կազմած էք։ Նրանց ընթացքը ինձ արհամարել էր, ուղղակի ուզում էին վիրաւորել, ես ինչպէս

տանէր։ Դուռը կամաց բացի և կանչեցի.—Սաբէթ, Սաբէթ։

Ցայտնի բան է արհամարհանքը գագաթնակէտին հասցնելու համար, ձեացրին թէ չը լսեցին։ Նո հաստատամտութեամբ ձայնս բարձրացրի և կրկնեցի.—Սաբէթ, Սաբէթ։

Կինս դրան մէջ կանգնելով դէմքը ցոյց տուեց։

—Ախար ես հանգստութեան կարիք ունիմ, ինչի՞ աղմուկ էք բարձրացրել։ Ճաշի ժամանակ է, թուլութիւն եմ զգում։ Երբ են հիւրերդ հեռանալու։

—Առանց ուրիշի գործին միջամտելու կեանք չունես, «կոտրած գդալ», ասաց կինս աչքերը ոլորելով և ետեւից դուռը փակելով։ Ինչպէս հաճոյքիցդ չես ցանկանում զրկուել, մի՛ խանգարիլ ուրիշների վայելքը։ Հանգստանալ ես ուզում, պառկիր, տարածուիր, կամ քնիր։ Մեր խօսակցութեան աղմուկը խանգարում է, հեռացիր դրասենեակդ, ուր անդորրութիւնդ կատարելապէս ապահով է։ Ճաշին դեռ երկու ժամ կայ, բայց թէ սոված ես, մի կտոր աղանդեր վերցրու պահարանից կեր, մինչև կերակուրի պատրաստելը։ Խօսակից ես ուզում, սիրտդ նեղանում է, եկ, մեզ ընկերացիր, կամ հրաւիրիր ծանօթներիդ և կամ դնա ընկերներիդ մօտ։

Այնքան խրատներ խօսեց, այնպիսի ճանապարհներ ցոյց տուեց, որ գլուխս չչմեց։ Պիտի պատասխանէի, բայց հիւանդանոցից գուրս գալուս օրը տեսարան առաջացնել չը ցանկացայ։ Գլուխս առի և դուրս եկայ։

Մտայ ընթերցարանի տակի կաթնատունը և մի բաժակ սառը կաթ խնդրեցի։ Բարեբաղդաբար ծանօթներս այնտեղ էին. սկսեցինք դէսից, դէնից խօսել ու ծիծաղել։ Դեռ կաթնատանը սանդուխներից չիջած, ամեն կողմից սրախօսութիւններ տեղացրին ինձ վրայ, այնպէս որ մուտքս հեգնարաններին առատ նիւթ մատակարարեց և կենդանացրեց կաթնավաճառի տխուր ներքնայարկը։ Ինձ ուղղած հարցերին պարտաւորուած էի այնպիսի կարճ և երկդիմի պատասխաններ տալ, որ ծիծաղից թուլանում էին բոլորը և ոչ ոք չէր կարողանում պոչս բռնել և ինձ հալածել։ Ամենը ապուշ կտրած լսում էին ինձ և խօսքս չաւարտած բռնկում էր նրանց անվերջ ծիծաղը։

Այս միջոցին Տարօրինակեանը մի բաժակ կաթ և մի սիֆոն սէլթէրս պահանջեց։ Ճշմարիտն ասած այսպիսի անսովոր բարքերը դժարս են գալիս, դեռ առաջին բաժակը չը խմած, ասացի.

—Պարոն, ինչ էք անում, գիտէք, թէ ինչ սոսկալի բաղադրութիւն են կազմում կաթի հիւլէները այդ կաւճային դաղերի և աղերի հետ։ Դրանք կարող են ստամոքսդ խնոցու նման հարել և ջղերդ քայքայել։

—Է՜հ, ինչ էք ասում, պարոն Կոտ.... ասաց Տարօրինակեանը, ահա տասը տարի է, որ ես շարունակ այս ըմպելիքով եմ կարդի բերում իմ փչացած ստամոքսը և դուք այժմ ուզում էք հակառակը պնդել։

—Այդ անկարելի բան է, անհաւատալի է, խելքի մօտ չէ...։ Դուք մասնագէտ չէք և չէք կարող ըմբռնել. թէ կաթը ինչ բաղադրութիւնից է կազմուած, սէլթէրսի մէջ ինչ աղեր և ինչ դազեր կան։ Այդ բանը խնդրեմ թողնէք քիմիկոսներին գիտնալու, կաթնտնտեսներին բացատրելու... Համոզուեցէք և ինձ հաւատացէք, որ դա չարաչար կը քայքայէ ձեր ստամոքսը և ջղերը և դուք մի օր կը յիշէք խօսքերս, բայց արդէն ուշ կը լինի։

—Ախար ինչ է ասում, Հինի...։ Ի՞նչ էք պնդում, ես ձեզ ասում եմ, որ ահա ճիշտ տասը տարի է, ստամոքսիս միակ բժիշկը և պահապանը այս կաթն ու սիֆոնն է, սա է ինձ փրկել և ապրեցրել։

—Անհաւատալի է... տարօրինակ է, արտակարգ երևոյթ է, ասացի կակազելով և իսկոյն աւելացրի, անչափ զարմանալի է։ Բայց ինչպէս եղաւ, որ դուք սկսեցիք այս միջոցը գործածել։

—Անգլիայում, Լոնդոնումն էի, ստամոքսի սարսափելի թուլութիւն ստացայ։ Երկար տանջուեցի և վերջապէս բժիշկները ինձ այս միջոցով փրկեցին, ասաց Տարօրինակեանը։

Տեսայ, որ բանս փթուկ է, իսկոյն խօսքիս տօնը փոխեցի։

—Այդ տարբեր խնդիր է, ասացի, հարցը բոլորովին նոր կերպարանք ստացաւ։ Անպատճառ դուք անգլիական ստամոքսային հիւանդութիւն էք ստացել, որից երևի միայն այս միջոցով հնարաւոր է փրկել։ Այո, Ինգլիզի բժիշկներն էլ իրաւունք ունին, դուք էլ իրաւունք ունիք, կարող էք շարունակել, երբ արդէն տասը տարուայ փորձերով զդալի օգուտը տեսել էք։

—Ա՜խ դու, «կոտրած դդմ»، մէջ ընկաւ սեղանակիցներից մէկը և բերանը ափեղ-ցփեղ խօսքերով աղտոտելով վրաս յարձակուեց։

—Պարոն, չէք ամաչում, ում էք անպատուում, ասացի բա-

ժակս վերցնելով, քիչ էր մնացել, որ խփէի, բայց ընկերակից-ներիցս մէկը թեւս բռնեց։ Լաւ էր, որ մէջ ընկաւ, թէ չէ էլի պիտի գլուխս կոտրուէր և հիւանդանոցի կարիք ունենայի։

—Տօ, որտեղից էլ գտել ու կպցրել են այս անունը, ասաց Տարօրինակեանը, ճիշտ որ «կոտրած գդալ»։

—Պարոն, պարոն, ասացի, բայց արդէն ինձ քաշեցին ու դուրս հանեցին մտերիմներս և ուղղակի բերին տուն։

Կնոջս բարեկամները դեռ չէին հեռացել, ջիղերս դողում էր զայրույթից, լաւ էր, որ ինձ առաջնորդողները դրսի դռնից ետ դարձան, թէ չէ բոլորովին պիտի խայտառակուէի։ Ա՜խ, երանի՜ չէր լինի, եթէ կաթնատանը նորից գլուխս կոտրէին և կրկին ինձ առաջնորդէին հիւանդանոց, քան թէ բնակարանս, որը բանտից վատ է ներգործում վրաս։ Եղբա՛յր, դուք եղէ՛ք իմ տեղս և մտածեցէ՛ք, որ եթէ այս վիճակին ենթարկուած լինէք, արդեօք չէ՞ք խելագարուիլ, իրապէս չէ՞ք գժուիլ։ Ես Աստծուց մարդ ստեղծուեմ, էութեամբս, գոյութեամբ մարդ լինեմ, խելք, միտք, հանճար, տաղանդ, բարձր զարգացում ունենամ և ինձ ամենամտերմից, կնոջիցս սկսեալ, մինչև ամենաթշնամիս, անգամ դահիճս «Գդալ», «Հինայի գդալ», կամ «Կոտրած գդալ» անուանէն։ Ախար, այս խիղճ է՞, այս մարդկութիւն է՞։

Մտածմունքս ինձ այն աստիճանի հասցրեց, որ ես այժմ տարակուսանքի մէջ եմ, չը գիտեմ իսկապէս մարդ եմ, թէ գդալ։ Տատանւում եմ այս հարցը վճռելուց, թէ մարդ եմ, ինչի՞ աշխարհ ինձ «հինայի գդալ» է տնուանում, թէ գդալ եմ, ինչի՞ զգացմունք, հասկացողութիւն և լեզու ունիմ։ Կատաղութիւնս այն աստիճանի բարձրացաւ, որ այս հարցը լուծելու համար դիմում եմ Ձեզ, Մեծապատիւ խմբագիր և խնդրում, որ այս հարցը Ձեր հանդիսի միջոցով հրապարակ դնէք, թող Հայ հասարակութեան քննադատները ու գիտնականները հետազօտեն և ինձ բացատրեն, թէ արդեօք ես կատարելապէս մարդ եմ, թէ՝ «ԿՈՏՐԱԾ ԳԴԱԼ»

Թաւրիզ։

ՅԷԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժ.

Թորդան գիւղը, „Լուսաւորչու թոռներ“ և թէթիքիշ բլուրները։ Գիւղատնտեսական բերքեր։ Դարձ կրկին Քեօփրիքէոյ։ Պատիժվան, Միատուն-Սուրբ Յոհան և Օկոմի գիւղերը։ Վերջինիս պատմական անցեալը։ Սուրբ Աստուածածնի վանքը։ Նորա վանահայրը։ Աղբիւրը։ Արձանագրութիւններ։ Գրիգոր Մագիստրոսի մասին։ Արձանագրութիւններ։ Ձեռագիր մատեաններ։ Ֆարմաններ։ Հրաժեշտ։

Թորդա՛ն, Թորդա՛ն... Ահա և Թորդանը. բայց ի՞նչ կայ նորանում, որ ինձ քաշում, տանում էր դէպի այդ գիւղը։ Չէ՞ որ սա այն Թորդանը չէ, ուր ամփոփուեցին Սուրբ Գրիգոր Լուսաւորչի և նորա որդւոց ու թոռանց մարմինները։ Սակայն կար մի հանգամանք, որ քաշում էր այդ տեղ։ Դա այն տեղական աւանդութիւնն է, որ իբրև թէ Լուսաւորչի թոռները թաղուած են այստեղ։

Արդարև, գիւղի արևելակողմում, ընդարձակ բարձրադիր հին հանգստարանների մէջ, ցանուցիր ընկած են կանոնաւոր չինած և կոպտաչէն տապանաքարեր, անարձանագիր, սակայն մուրճի, զընդանի, աքցանի, ակիչի, մկրատի, գաւաթի, հացի նկարներով։ Կան և խոյանման և ձիանման՝ կանգուն տապանաքարեր։ Հանգստարաններից փոքր վեր առանձնակի կանգնած մի բլուր, որ ունի իւր լանջում հանգստարան, իսկ գագաթում մի փայտաչէն տնակ՝ մէջը հինգ միաչար խաչքարեր։ Ահա այս բլուրն և տնակը կոչւում են, ըստ տեղական աւանդութեան, *Լուսաւորչու թոռներ*»։

Խիստ կռանալով հազիւ կարելի է մտնել մատրան մէջ մի ցածրիկ դռնակով, ուր միաչար կանգնած են հինգ խաչքար, իսկ վեցերրորդը կողքի վերայ կանգուն՝ անարձանագիր, վրան միայն մուրճ, զնդան և աքցան։ Հինգ խաչքարերից միայն երրորդն (հիւսիսից հաշուած) ունի այս արձանագրութիւնը։ Ի

ԹՎԻՍ ՋԺ (910—1461) ԿԱԶՄԵՑԱՒ ՆՇԱՆՆ։» Ահա այն բոլոր գրաւոր յիշատակները, ինչ որ կարելի է գտնել «Լուսաւորչու Թոռների» վերայ։

Բլուրի գագաթը տափարակ է, լայնութեամբ 12, երկարութեամբ 35 քայլ և մատուռից դուրս ցանուցիր դասաւորուած են մինչև տասը հասարակ տապանաքարեր, անարձանագիր։ Իսկական սրբութիւնը ժողովրդի հաւատի համար յիշեալ մատուռն է, ուր շաբաթ և կիրակի օրերում ժողովւում են ուխտաւոր հայ կանայք, աղօթում են ջերմ եռանդով և ձէթ վառում, որից քարերն արդէն սևացել էին և ես անձամբ համարեցի տասներկու վառ ճրագներ, այն ինչ պարապ ճրագներին հաշիւ չկար։

Կանայք և աղջկունք խմբուած բլուրի վերայ, իբրև ուխտաւորներ, հետաքրքրութեամբ զննում էին իւրաքանչիւր իմ շարժումն և երբ կազակն եկաւ, հասաւ ինձ, նոքա կամաց կամաց անցան դէպի միւս, 25 քայլ հեռու, Թէթքիշ անուն բլուրի գագաթը։ Մօտեցան և մի քանի հայ գիւղացի տղամարդիկ, խոնարհութեամբ ողջունեցին և իմ հարցերին բացատրութիւններ էին տալիս։

Հրաժեշտ տալով Լուսաւորչու Թոռներին, մենք խմբովին կամաց կամաց, իջանք և թեքուեցինք դէպի գիւղը՝ Թորդան, որի յարմարագոյն դիրքից երևում էր Բասենի դաշտը՝ Արաքսի երկու կողմից տարածուած։ Հարաւի և արևելքի կողմերից բարձրացող լեռների անուններն ուղղակից գիւղացիները կոչում էին Ուռուտ, Ակներ, Ղռէք, Քոռ բերդ, Ղազանիք, Ալադին. իսկ հիւսիսային և արևմտեան դաշտավայրը կոչւում էին Հովիտ, Ըղտած էր, Գութներ, Աշուտ, Սուրբ Սարգիս։

Հետաքրքրութեան համար ես յիշատակում գիւղական անդերի կոչումը, որպէս զի ընթերցողն իմանայ թէ ինչպիսի անուններով է մկրտում հայ գիւղացին իւր շրջակայքը։ Ահա մօտեցանք փոքրիկ գետակին, որ սկիզբն առնելով յիշեալ Ակներից, անցնում է գիւղի միջով։ Գիւղի սահմանում սակաւ առ սակաւ բազմանում էր հետաքրքրուող ժողովրդի թիւը։ Հանգստացրին ինձ մի տան սրահում։

Թէև պատերազմի տարի էր (Յունիս 1878) և Բասենի ժողովրդի համար, նորանց թւում և Թորդանի բնակիչների համար, անսովոր երևոյթ չէր Ռուսաստանցի մի օտարական տեսնել, բայց անուամենայնիւ իմ, մի անծանօթ հայ մարդու գա-

լուստը հետաքրքրական էր թւում Թորդանցիներին, որոնք չուտով շրջապատեցին ինձ և ամեն մի ծեր մարդու երևալով երիտասարդներն իսկոյն իւրեանց տեղերն էին առաջարկում։ Ամեն մի մանող հասակաւոր մարդ նախ գլուխ էր խոնարհեցնում ինձ, ապա նստելուց և տեղաւորուելուց յետոյ գալուստս էր շնորհաւորում և առողջութիւնս էր հարցնում, առանց իմանալու թէ ես ով եմ, ուր եմ գնում, որտեղից եմ գալիս և այլն։

Երբ տիրել էր ընդհանուր լռութիւն և բոլորի աչքերը բեռած էին իմ վերայ, ես մտածում էի խօսակցութեան մի յարմարին նիւթ գտնել, մատչելի բոլորի համար ես և նորանով խզել լռութեան կապերը։

—Ասացէք խնդրեմ, դիմեցի բոլորին, ձեր Բասենի հողում ինչպիսի բանջարեղէն և հատիկներ կարելի է բուսցնել։

Մի բոպէ լռութեամբ, նայում էին իրար երեսի, իբրև լուռ արտայայտութիւն, թէ ո՞ր հասակաւորին աւելի վայել է պատասխանել, ըստ որում ուր կան ծերունիներ, այնտեղ երիտասարդներ ձայն չունին։ Այսպէս էր նշմարւում այն ժամանակ Թորդանում։

—Ծառադ եմ, պատասխանեց վերջապէս մի ծերունի, գաւազանի ծայրով գետինը գծելով, ցանում ենք ցորեն, գարի, բանջարեղէնից լախանա (կաղամբ), փրչլուղ (գազար), սոխ, բողկ, լոբի, բախլա, չաղկամ...

- Խիար (վարունգ), ձմերուկ, սեխ նոյնպէս ցանում ենք, բայց լաւ չէ հասնում, առաջ կտրուկ անելով վրայ բերին միւս ծերերը, համարեա միաբերան։

—Երեք տարի կեղնի, որ կարտոֆ էլ կցանենք, աւելացրեց մի ուրիշը։

—Բանջարեղէնը մեր ուտելու համար կեղնի, մի քիչ էլ անջաղ կարողանանք ծախել, փող չինել մեր ապրուստի համար, ասեց մի ոմն։

Ցորենն ու գարին ամենից էլ ձեռընտու է, չունքի (որովհետև) աւելորդ կտանենք կծախենք Արզրում, մեր պակսութիւնքը կենենք, ասացին ուրիշներն առանց հերթի սպասելուն։

—Քանիսով էք ծախում ցորենն ու գարին, հարցրի ես։

—Ո՞վ է խաբար, ժամանակ կեղնի էժան է, ժամանակ էլ կեղնի կթանգնայ, մազանդէն գիտէ... առաջկտրուկ անելով աշխատում էին պատասխանել միանգամից շատերը, ցորենի սոմարը կաժենայ 150—300 ղուշ, գարին 40—100 ղուշ

—Սողանլուի մէշից (անտառից) էլ գերաններ տանենք Արզրում 40—300—400 ղուշի կծախենք, Արաբով վառելու ցախ էլ կտանք 60—100 ղուշ։

—Վախտ էլ կեղնի եղ էլ կտանենք, մալ էլ (տնային անասուն)։ Մեր առուտուրը համեշայ (միշտ) Արզրումի հետ կեղնի, ասացին չատերը։

—Ե՞րբ էք ցանում և ե՞րբ հնձում ցորենն ու գարին, հարց առաջարկեցի ես։

—Աշնան ցորենը կցանենք սեպտեմբերի մէկից ու կհընձէք յուլիսի վերջին կամ օգոստոսի սկզբին, իսկ գարնան ցորենը ցանում ենք ապրիլի կիսից մինչև մայիսի վերջը, ու հընձենք կը մինչև օգոստոսի կէսը։ Գարին կցանենք ապրիլի սկզբից և կհնձենք մինչև յուլիսի վերջը։

—Քիօփրի քէօյը միևնոյնն է թէ Թորդանը, բարձր է ծովի երեսից 5976 ֆուտ, այսինքն Ալէքսանդրապօլից քիչ բարձրը, իսկ Կարսից ցածր և ձեր աշնան ցորենի հասունութեան չրջանը տևում է մօտ 10 ամիս կամ 300 օր, իսկ գարնան ցորենի հասունութեան չրջանն է 4 ամիս կամ 120։ Նոյնն է և գարու հասունութեան չրջանը, այսինքն 4 ամիս կամ 120 օր, բացատրեցի ես։

—Մենք էդ հեսաբները չգիտենք, համմա գիտենք, որ մեր ապրուստը հացէն կեղնի, եթէ հացն առատ է, ապրուստներս էլ լաւ կեղնի, եթէ տունը քեօմագ կունենայ վարուցանքսի համար, Աստուած էլ իր ժամանակին անձրև կտայ, կարկտից ու տեսակ տեսակ ցաւից ու չոռից կազատի, էն վախտ հացն էլ առատ կեղնի։

—Դուք ո՞ր քեօմագի մասին էք խօսում, հարցրի ես, մարդո՞ւ թէ ապրանքի (անասունի)։

—Ապրանքը, մալը խօ կայ ու կայ, համմա մարդու քեօմագն է գլխաւոր՝ թէ վարելում, թէ կալսելում և թէ ուրիշ չատ բաներում։ Քեօմագով տուն էղնի, ա՛յ, Իշխու գեղ տէրտերանց տան լման, 30 հոգի կան։

—Հրպը Ալիջագրակ գեղում Օհան քէհայ Վրրդոյենց տունը, 39 հոգի կան, վրայ բերաւ մի ոմն։

—Հրպը Տօդի գեղում Բոյաճոնց Եղոյի տունը չէք ըսի, 56 հոգի կան, աւելացրին ուրիշները։

—Հրպը Եաղան գիւղ Մադոյեանց տունը ուր կմնա՞յ։

Այսպէս սկսեցին իրար յետևից չարել զանազան գիւղե-

ում բակմանդամ գերդաստանները և գուցէ երկար չարու-նակուէր, եթէ տան տէրն ակնարկ չանէր՝ թէ բաւական է խո-սել, որպէս զի նորեկ հիւրը, (ես) փոքր ինչ կերակուր վայելի։ Գիւղացիք կամաց-կամաց հեռացան և սրահը դատարկուեց։ Բերին մածուն, պանիր և ձուաձեղ։

Այնուհետև տանս տիրոջից իմացայ որ հասարակաց վա-րելահողերը կառավարութեան կողմից տուած է իւրեանց թա-փիով, որ թափի տալու ժամանակ նոյն հողերը հայերի համար կամ թէ պատերազմի միջոցին Թուրք կառավարութիւնը հայե-րից աւելի շատ սայլ էր պահանջում, քան նոյնը Թուրքերից։ Պատմում էին նոյնպէս, որ Արզրումի շատ Թուրք վաճառական-ներ Ներքին բասենում ունին շատ հողեր, որ կապալով տալիս են քրդերին ձմերոցի (ղըշլաղ) համար, և այլն.

Արդէն երեկոյեան դէմ էր և ես մտադիր էի գիշերել Բեօփրի-քէօյում, սակայն Թորդանում խորհուրդ տուին մնալ և առաւօտ, լուսաբացին, ճանապարհ ընկնել դէպի Բասենի Սուրբ Աստուածածնոյ վանքն, ուր պատրաստւում էի գնալ։ Գոհ մնացի Թորդանցիներից նորանց հիւրասիրութեան համար և հէնց այժմ, տողերս գրելու ժամանակն անգամ չնորհակա-լութեամբ եմ մտաբերում Թորդանը, որից, սակայն 1671 Թուին, շատ դժգոհ էր մնացել Վարդան Ցովնանեանը։

Շատ զուարճալի մարդ է եղել այս պարոնը։ Սուրբ Աս-տուածածնի վանքի կողմից նուիրակ լինելով Բասենում, Վար-դան Ցովնանեանը ժողովելիս է եղել 1671 Թուին, Բասենի գիւ-ղերից վանքապատկան նուէրները և ըստ երևութին շատ էլ յօժարութեամբ չեն ընդունելիս եղել նորան գիւղերում և նա իւր դժգոհութիւնը գիւղերի մասին զուարճալի ոտանաւորի ձևով յայտնել է վանահօրն իւր հաշուէտուութեան մէջ։ Այսպէս Թորդանի մասին Ցովնանեանը գրել է։ [1])

«Մի յիշեր զԹորդան,
«Զի քան զԹթու Թան
«Զատամունս առան։»

Առաւօտ, արևը նոր ծագելիս ընկայ ճանապարհ։ Անցայ Բեօփրի քէօյի կամուրջն և մօտեցայ նոյն անուն գիւղին։ Դեռ ևս ձիուի վերայ, հարց տուի առաջս կանգնած մի քանի հայ գիւղացիների, Թէ կզտնուի արդեօք գիւղում հին ձեռագիր

---

[1]) Այրարատ, էջ 24.

մատեաններ։ Նոքա միմեանց երես նայեցին, մտածեցին և ապա մինը յիշեց, թէ գիրք չկայ բայց «ֆարմաներ» կան իւրեանց գիւղին տուած Սուլթաններէ կողմից։ Գնացին ու բերին 3—4 ֆարման թիւրք լեզուով գրած։ Ինձ համար հետաքրքրական էր նրանց բովանդակութիւնը բայց չգտնուեց կարդացող, ուստի ես խնդրեցի, որ տան ինձ վանքը տանելու և կարդալ տալու խոստանալով վերադարձնել իւրեանց հետեւեալ օրը։ Մարդիկ իսկոյն յօժարացան և զարմացրին ինձ իւրեանց միամտութեամբ որ չհարցրին անգամ թէ ով եմ, ինչ անուն և ազգանուն եմ կրում, որտեղից եմ գալի և այլն, միայն խնդրեցին վերադարձնել։ Ես սրբութեամբ կատարեցի նորանց խնդիրն և իմ խոստումս, սակայն առանց մանրամասն իմանալու ֆարմանների բովանդակութիւնը, միայն յայտնի եղաւ, որ նրանք տուած են գիւղին հասարակաց հողաբաժնի և նորանց սահմանների մասին։

Քեօփրի-քէօյից ճանապարհիս ուղղութիւնն էր դէպի արևմուտ, ուր հեռաւոր հորիզոնի վերայ բարձրանում էր Հասան-զալայի սարը, որ նախկին ժամանակներում կոչւում էր Մերանեաց լեռն։ Դաչտը դեռ ևս ցածր էր, բայց արևմտում սակաւ առ սակաւ նա բարձրանում էր և, խառնուր էր լեռան հետ։

Քեօփրի քէօյից յետոյ առաջին գիւղն ինձ հանդիպեց Պատիժվանը։ Պատմում էին որ ամենահին ժամանակներում սա եղել է բազմամարդ, մինչև 1500 տուն։ Հին գիւղատեղին այժմ աւերակ է և ունեցել է մեծադիր քարաշէն եկեղեցի սրբատաշ կապոյտ քարից, որից մնացել են այժմ կամարակապ առաստաղներով սեղանը և երկու խորանները։ Սորա մօտ, լայն հանգստարանում, դեռ ևս կանգուն է կարմիր քարից փոքր եկեղեցի 5 և 7 քայլ մեծութեամբ։ Միակ հարաւային դրան վերը, ներքուստ դրուած է, «Ցիշատակ է սուրբ խաչս և բարեխօս առ Աստուած վասն մեղաւոր Մկրտչի հոգւոյն և քրոջն Խանզատին ի թվ. Ռ. Զ. Բ։ (1082—1633)։ Եկեղեցին իւր արձանագրութիւնից աւելի հին է։ Նորա մօտ գտայ մի կոտրած խաչ քար կարմիր քարից, այս արձանագրութեամբ։ «Մկրտիչ քահանայ կազմող սուրբ խաչիս, յիշատակ է սուրբ խաչս Շահզադին և թոռին նորա Գրիգորին թվ. Ռ.Ճ. (1107—1658)։

Պատժվանի մօտ, 1671 թուին, գոյութիւն է ունեցել

Վաղժվան գիւղն, որի մասին վերոյիշեալ Վարդան Յովնանեանը աւելի լաւ է խօսում քան Պատժվանի մասին, վանքապատկան տուրքերը հատուցանելու վերաբերութեամբ։ Նա գրում է

«Օրհնեա զՎաղժվան,
«Որք տալ փութացան
«Զերիս քոռս ցորեան.
«Իսկ ի Պատժվան,
«Եռ մագի և եթ
«Հազիւ թէ փրծան»։

Ահա հասանք և Միադին թրքաբանակ գիւղը որի նախկին հայ բնակիչները 1830 թուին գաղթել են Ալէքսանդրապօլի գաւառը։ Ներկայ թուրք բնակութիւնը քիչ փոխել է գիւղի հայկական (Միատուն) անունը։ Գաղթած հայերի նախնիքները հանգստանում են գիւղի հիւսիսային կողմի գերեզմանատանը, ուր անտէր, անտիրական, դեռևս կանգուն և ամբողջ մնում է մի մատուռ իւր սեղանով, աւազանով և երկու անարձանագիր խաչ քարով։

Երբեմն հայաբնակ, այժմ թրքաբնակ Սրբահան գիւղը դրած է Ծիրանեաց լերան ստորոտում և դեռ ևս հին ժամանակներում ունեցել է գոյութիւն, որ առաջ կոչուելիս է եղել Ակսիգոմն, իսկ յետոյ, Ասողիկի օրով՝ Սուրբ Յոհան։ Վերջին անունը (Սուրբ Յոհան) շարունակւում է և այժմ և որից թուրքերը շինել են Սրբահան։ Այս գիւղի մասին յիշատակում է Ասողիկն, որ տասներրորդ դարու վերջում Յովհան գիտնական վարդապետն սպանուել է «ի մոլեալ աղգէն Վրաց» (Ասողիկ գլ Թ) և թաղուել է Ակսիգոմս վանքում, որ Ասողիկի օրով փոխուել է Սուրբ Յոհան։

Այստեղից աստիճանաբար բարձրանում էի դէպի Օգոմի գիւղն, որի բնակիչները խառն են հայեր և թուրքեր։ Այստեղ ես տեսայ գիւղական ուսումնարանը մասնաւոր տան մէջ, ուր հայ տղայք և աղջկունք սովորում էին միասին ոմն Կարնեցի Սարգսի առաջնորդութեամբ, որ երեք տարի էր, ուսուցչութիւն էր անում այդտեղ, ստանալով տարեկան վարձ 9—10 սոմար ցորեն, մինչև 80 ռուբլի արժողութեամբ, բացի սնունդը, որ երեխանցից էր լինում։ Դպրոցի մանկունները տօն օրերում երգում էին Սուրբ Աստուածածնի վանքում։

Այժմեան աննչան գիւղն ունեցել է շատ մրրկայոյզ և աբիւնալից անցեալ։ Լինելով հարուստ և փարթամ աւան, բազ-

մաթիւ բնակիչներով և վաճառաշահ տեղի, նա գրաւելիս է եղել շատերի ուշադրութիւնը և գրգռելիս է եղել ոմանց թագաւորների զայրոյթը:

Տասնե մի երրորդ դարու սկզբում այս կողմերը Վրաց տիրապետութեան ներքոյ էին և երբ 1021 թուին Յունաց Վասիլ կայսրը հանդիպեց այստեղ, Վրաց թագաւորը չարաւ նորան կայսերավայել ընդունելութիւն, որոյ պատճառով կայսրը բարկութեամբ հրամայեց կրակի և սրի զոհ դարձնել Օկոմի մեծ աւանը և նորա շրջակայ գիւղերն ու ագարակները և գերիներին տանել Խաղտեաց երկիրը:

Բայց որովհետև Օկոմի կամ Ոկոմի գիւղաքաղաքը շատ կարևոր տեղ էր բռնում, ուստի նորից բարձրացաւ, հարստացաւ և 30 տարու մէջ բնակիչների թիւը հասաւ 30, 000: Վասիլ կայսեր տուած աղէտը բաւական չէր Բասենի համար և դեռ շատերի յիշողութեան մէջն էր, որ յանկարծ վերայ հասաւ նոր և աւելի մեծ աղէտ: Արիստակէս վարդապետ Լաստիվերտցի պատմիչն իւր գրքի մէջ յիշատակում է [1]) որ հայոց դրացի և սահմանակից ազգերը (Սելջուկեան թուրքերը) մի գիշեր վառել են խոտերի տեղերը և նորա լուսով յարձակուել են չէն գիղաքաքաքի վերայ, կոտորել են ամենին և ինչքը տարել են իւրեանց երկիրը:

Հաւանական է, որ թշուառ Օկոմին սորանից յետոյ էլ ենթարկուած լինի աւերմունքների, բայց դորանց մասին պատմութիւնը չէ աւանդում ոչինչ: Այսպէս է Օկոմի անցեալն և ներկան: Թողնենք այժմ այդ վայրը և գնանք Բասենի Սուրբ Աստուածածին վանքը, Ծիրանեաց լերան լանջում կանգնած, որի անունը դեռ ևս երկիւղածութեամբ հնչւում է Կարինի և Բասենի 1830 թուականի գաղթական հայերի շրթունքների վերայ:

Ես ինքս, որ գաղթականներից չեմ, ուրեմն չունեմ նրանց զգացմունքները, բայց շատ լսելով նորանցից «եօթն վանք սուրբ Աստուածածնի» պատկերի նախկին բնակարանի մասին, ես անգամ, կրկնում եմ, առանձին ակնածութեամբ և երկուղածութեամբ էի մօտենում Ծիրանեաց վանքին, որ դէմս կանգնած՝ հրապոյր էր կարդում ինձ:

---

[1]) Լաստիվերտցի. Գ.Լ. ԺԸ. Էջ 119—120. Թիֆլիզ. Զամչեան, Հատոր Բ. էջ 960.

Հարիւրաւոր տարիների ընթացքում սոյն վանքն եղել է Բասենի եկեղեցիների գլուխ և նրա վանահայրերը կառավարել են Բասենի վիճակն, ստանալով բնակչութիւնից հոգևոր տուրքեր, նուէրներ և այլն վանքի օգտին: Եւ կարծես բնութիւնն ինքը կանգնեցրել է նորան գլուխ եկեղեցեաց, ըստ որում նորա տեղադրութիւնն այնքան բարձր է, որ մի հրաշալի և հիասքանչ տեսարան է բացւում նայողի առաջ Բասենի դաշտի վերայ, սեգաճէմ Արաքսի աւազանում, շրջապատուած ալեծածան լեռներով:

Վանքի անյայտ հիմնողը կարծես դիտմամբ է ընտրել այդ հրաշալի տեղը, մարդարէական զգացմամբ լի, որ իւր հիմնարկութիւնը գլուխ է կանգնելու բոլոր վիճակի համար: Գուցէ Օկոմի փարթամ գիւղաքաղաքի մերձաւորութիւնն էլ միւս կողմից լինէր պատճառ վանքի հիմնարկութեանը:

Կարծւում է, որ վանքի հիմնարկողն եղել է Գրիգոր Մագիստրոսն, որ մեռաւ մօտ 1058 թուին, երբ Բագրատունեաց հարստութեան շրջանում խաչիկը նստաւ կաթուղիկոս: Կարծւում է նոյնպէս, որ այդ, իւր ժամանակին նշանաւոր մարդը, մեծ իշխան Գրիգոր մագիստրոսը «թաղեցաւ ի վանս Սուրբ Աստուածածնի, մօտ ի կարին, որ և կոչի այժմ Բասենոյ վանք և ասի թէ մինչև ցարդ կայ գերեզման նորա անդ:» [1]) Բայց մենք փոքր ինչ յետոյ կտեսնենք, որ ոչ մի նշոյլ, ոչ մի ապացոյց չէ երևում՝ որ Մագիստրոսն ամփոփած լինի այս վանքում:

Վանքի անցեալից շատ փոքր բան է յայտնի մեզ: 1878 թուի վանահայրը ցոյց տուաւ ինձ մի քանի ֆարմաններ տաճիկ լեզուով թուրքիոյ Սուլթանների կողմից տուած, որոնց զօրութեամբ վանքին տրւում են ինչ ինչ արտոնութիւններ տասանորդների, յափշտակած հողերի ազատ ուխտագնացութեան վերաբերմամբ և այլն:

Ոլոր մոլոր ճանապարհով աստիճանաբար բարձրացայ սարալանջը, դէպի հիւսիս թողնելով հանգստարանը, նորա հայկական 1007 և 1034 թուականներից մնացած չիրմաքարերով այլ և Կալ, Կալասրահ, լճակ ուռենիներով շրջապատ և վերջապէս կանգ առայ վանքի քառակողմանի քարաշէն պարսպի ա-

---

[1]) Զամչեան. հատ. Բ. էջ 968 Ղ. Ալիշան. Այրարատ էջ. 21.

բևեբեան մեծ դրան առաջ, որ փակած էր երկաթածածկ երկփեղկ դռներով։

Լուր հասաւ վանահօրն անծանօթ օտարականի գալըստեան մասին։ Դռները բացուեցին, ընդունուեցի ներս, ձիանքն առան և տեղաւորեցին վանքապատկան գոսերի մէջ և առաջս եկաւ հոգևորականի հանդերձով, առանց վեղարի յաղթանդամ մի մարդ մօտ 40—45 տարեկան, մոխրագոյն աչքերով և խիստ հայացքով, որ տեսնողի վերայ տպաւորութիւն էր անում աւելի քիւրդի՝ քան վարդապետի...։

Ինչ և իցէ, ընդունեց ինձ արդէն 14 տարին այստեղ վանահայրութեամբ լրացրած, Կարնեցի, Տիմոթէոս վարդապետ Կարապետեան, մականուանեալն Վայինցեան։ Սակաւ հանգըստանալուց զկնի թոյլտուութիւն խնդրեցի վանահօրից զննութեան առնել վանքը։ Նա սկսեցի շրջանից գնալ դէպի կէդրոն, այսինքն դրսից դէպի վանքի եկեղեցու ներսը։

Պարիսպը բարձր է, քարաշէն և մի քանի անգամ կարկատած։ Մուտքը մի հատ է, որից ես մտայ։ Ուխտաւորների համար շինուած են մի քանի միաչար սենեակներ։ պարսպի մօտ, եկեղեցուց հարաւ, ներկայ վանահայրը շինել է 4 տարի առաջ, հին առաջնորդարանի տեղը մի շինութիւն դպրոցի համար, բայց չէ ունեցել երբէք և ոչ մի աշակերտ։ Բաւականին մութը նախասենեակից յետոյ մտնում էք մի ընդարձակ սենեակ տախտակամած յատակով և լուսամուտներով։

Հարաւային պարսպապատի մէջ, ներքուստ, կամարի տակ, երկու խողովակից, խիստ առատութեամբ հոսում է վըճիտ և սառնորակ աղբիւրի ջուր, բերած լերան վերին լանջերից, իսկ ոտքը խողովներով հասցրած հիւսիսային կողմի գոմերը՝ ձմեռը փակուած անասուններին ջրելու համար։

Աղբիւրակամարի տակ, պատի մէջ հագուցած փոքր մարմարիոն տախտակի վերայ փորագրած է հետևել արձանագրութիւնը։ «Ցիշատակ է աղբիւրս Նախնի Սապոնճի մահտեսի Խ«կանդերեանց և նոցին որդոցն և թոռանցն Սապոնճի մահտե«սի Կարապետին և որդոցն մահտեսի Իսկանդարին, որոց ձե«ռամբն Նորոգեցաւ. ով հանդիպողք, տուք զողորմի։» «եղև ի ՌՄԽԹ (1249—1800) թվին Նոյեմբերի իէ (27) ին։»

Կանգնած են այստեղից ոչ հեռի դէպի արևելք վանահօր երկու հոյակ սենեակները նորա բնակութեան համար։

Եկեղեցու հարաւային պատից ոչ հեռու տապանաքարի

ոտքերի կողմում ցցած խաչ քարի վերայ փորագրած է «Խաչս բարեխաս է առ Աստուած վասն հոգոյն Աւետիք վարդապետին, որ էր առաջնորդ Բասենու Սուրբ Աստուածածին վանքին թվին ՌՄԼԵ (1235 —1786) ԺԵ (15) ին։»

Ապա գալիս են եօթն միաչար կանգուն խաչարձաններ զանազան մեծութեան, ամրացած բարձր քարաշէն պատուան դանի վերայ, որ ունի ամեն կողմից վեց աստիճանների ձև։ Սկսենք հետևել հիւսիսից հարաւ։

Ա) «Ի թուին հայոց ՉԾԴ (754—1205) ես տի... կանգնեցի զսուրբ նշանս ի բարեխաւսութիւն աղախնոյ իմոյ Տէր Տիրացու ի սուրբ և ընտրեալ հայրապետ.....»

Բ) «Ի թվին ՌԽԲ (1042 —1593) կանգնեցաւ սուրբ նշան «ի յիշատակ Եղիազարին հոգոյն։»

Գ. Դ. Ե) Այս խաչարձանի գրութիւններն խպատ ջնջուած մաշուած են և անկարելի էր կարդալ։

Զ) «Թվին ՉԸ. (708—1259) Ես Շահս կանգնեցի զխաչս...»

Է) «Սուրբ խաչս բարեխաւս Տէր Սահակին թվին «ՌՀ (1070—1621). Ես անարժան Ղազար կազմող Սուրբ խաչիս։»

Ահա այն արձանագրութիւններն, ինչ որ ես գտայ միաչար և պատուանդանով խաչքարերի վերայ և ուր ոչ մինի վերայ չէ երևում Գրիգոր Մագիստրոսի անունը։ Բայց կան կարծիքներ, որոնք ընդունում են թէ այդ պատուանդանի տակն են ամփոփուած Մագիստրոսի ոսկերոտիքը։ Հայր Ղ. Ալիշանը գրում է «առ որոյ (եկեղեցւոյ) դրամբ ցուցանիր կարծեցեալ գերեզման Մագիստրոսի և խաչվէմ բաղմաստիճան, եղծ գրով։» [1]) Ցայտնի երևում է, որ Ալիշանը կասկածով է նայում, իսկ ով չէ կասկածում, նա չի էլ կարող ապացուցել Մագիստրոսի չիրիմի գոյութիւնն այստեղ։

Գուցէ հարցանող լինի, թէ ինչի՞ բազմաստիճան պատուանդանի տակ տեղ տեղ խոր փորուածների հետքեր են նշմարւում։ Սորա պատասխանն այն է, որ Բասենցիք ասում էին, թէ ներկայ վանահայր Տիմոթէոս հայր սուրբը, ուրթը տարի առաջ, փորձ է փորձել հետազօտել Մագիստրոսի գերեզմանը, Բասենցոց ասելով՝ գանձ գտնելու, իսկ հետազոտողի ասելով (նոյն բասենցոց կարծիքով) մի չիշ մեռոն հանելու, որ երազումն

---

[1]) Այրարատ էջ 21

էր տեսել ինքը։ Երևի այս լուրը հասել է նաև Հ. Ալիշանի ականջին, ըստ որում նա գրում է «զոր (խաչվէմ բազմաստիճան) ոմն ի յետին առաջնորդաց տեղւոյն ետ խախտել աւ ի քննութիւն ինչ»։ (Այրարատ էջ 21)։

Այժմ մտնենք եկեղեցոյ ներսը։ Եկեղեցին ունի իւրեան կից արևմտեան կողմում գմբէթաշէն սիւնազարդ գաւիթ՝ արևմտեան դռնով։ Կամարներն ամրացած են չորս բոլորիկ սիւների վերայ, որոց արևելեան երկուսն որմնակից են, կպած եկեղեցու պատին։ Գաւթի հէնց չէմում, պատի մէջ, փոքրիկ մարմարիոնի վերայ, փորագրած է «Ցիշատակ է սուրբ խաչս Կիւրղէ ի դուռն սուրբ Աստուածածնին թ. ՌՃՂԸ (1198 — 1749)։»

Գաւթի մէջ շարուած էին կաւէ պղուղներ մէջը ձէթ. և սորանց վերև բերանն ի վայր կախուած էին ձէթի տիկերը։ Այս ժամանակաւոր, թէ և տգեղ, երևոյթի վերայ ուշ չդարձնելով, ես դիմեցի արձանագրութիւններին սիւների վերայ։ Մինի վերայ «Կանգնեցաւ սուրբ խաչս Տէր Յակոբ եպիսկոպոսին թվին ՌԺԲ. (1012—1563)։» Միւս սիւնի վերայ «Կանգնեցաւ խաչս ի բարեխօսութիւն Մարուգէին. թվ. ՁԻԹ (929—1480.)

Սիւներից մինի վերայ «Աստուած ողորմի Կարապետ քարգործի։» Միւսի վերայ գրած է հետևեալ երկար արձանագրութիւնը։ «Ի տնօրինաճառն տեառն Աստուծոյ եղաւ զայս «չքեղազարդ շինուած ի թուականութեան հայոց ՌՄԿ.» «(1260 — 1811) առաջին ամս առաջնորդութեան Ճատարեան» «Ստեփանոս վարդապետին։ Արդ զպարտս կուտակեալ աւար-» «տեցան, որոց գումարն էր չորս հազար արշիլ. ապա զարդա-» «րեցաւ բոլոր զարդիւքն զսուրբ տաճարի խաչկալն հանդերձ» «սեղանօք և այլն որ ի տաճար անդր իսկ սուրբ ժամատունն» «զդուռն որ փոխեցաւ ի յարևմուտն և զլուսամուտն որ առաջ» «ոչ դոյր. նա ևս սպիտակացաւ բռամբ և գեղազարդ պատ-» «կերօք. և ևս յատակ ժամատանս որձաքար սալիւ հանդերձ» «արհաճօք ընդ մի շինեցաւ գաւիթն առաջնորդարանն բոլոր» «պարագայիւ ձեռամբ Ստեփանոս Նուաստ ծառայիս սուրբ» «Աստուածածնայ, արդեամբ հաւատացելոց, որոց հանդի-» «պողքդ տուք զողորմին։»

Այնուհետև հիւսիս-արևմտեան անկեան սիւնի վերայ երևում է այս արձանագրութեան մի կտորը, որի սկիզբը կամարաքարերի վերայ լինելով, կամարի վերանորոգութեան ժամա-

նակ դէն է ձգուել։ «..... ի կանտրէնի հետ մինչև ի գէրն-քաշն..... սպիտակ վանացն ողբերվաց բազում տանուտէրք ժողովեցան պարտատելիքն. ով հակառակ կայ այսմ անճինչ վրճռին, անիծեալ լինի. ամէն։»

Սորանից յետոյ մտայ սուրբ Աստուածածնի եկեղեցին, որ փոքր դիրքով կանգնած է չորս որմնակից սիւների վերայ։ Հիւսիսային պատի մէջ մկրտութեան աւազանը շրջապատուած է գեղեցկակերտ ծաղկահիւս քանդակով։ Նորա դէմ, հարաւային պատի մէջ, գեղատեսիլ խաչքար։ Բեմը բարձր է և առանց խորանի։ Սեղանի պատի վերայ կարդացի հետևեալ արձանագրութիւնը։ «Ես Շահ, ծառայ Աստուծոյ, որդի Նորկանն, միաբանեցայ այսմ ուխտիս և ետու յիմ հալալ արդեանցն Մ (200) դրամ ի տարին Բ պատարագ անխափան, ով (պակաս է) ՅԺԸ (318) դատի։»

Ես դիտմամբ արտագրեցի այստեղ վանքի բոլոր արձանագրութիւնը, նախ որ նոքա ոչ մի տեղ չեն տպագրուած, երկրորդ, նոքա կնպաստեն վանքի պատմութեանը։

Ինձ ցոյց տուին եօթվիրաց սուրբ Աստուածածնի պատկերի բազմած տեղը բեմ տանող հարաւային աստիճաններից վեր։ Որբացած է պատկերի նախկին բնակարանը, որբացած են նաև Բասենում մնացած հայ բնակիչները, որոնք չկամեցան հետևել 1830 թուին Շիրակ գաղթող իւրեանց պաշտելի պատկերի յետևից։ Բայց Բասենցի հայերը գիտեն արդեօք, թէ իւրեանց պաշտելի պատկերը քանի՞ տեսակ արկածների է ենթարկուել իւր նոր բնակավայրում այն օրից, երբ յանձն առաւ գաղթումը. ոհ, ծանր է գաղթողի վիճակը։

Հայր Ղ. Ալիշանը յիշատակում է՝ որ իւրեանց հայր Մխիթար Աբբան իւր սարգաւագութեան ժամանակ այցելել է այս սրբավայրը տասնեօթներրորդ դարու վերջում և տեսել է, որ երկու այսակիրք, ընկած եկեղեցու մօտ, արտասանել են այն բոլոր սրբերի անուններն, որոնց վաղուց մոռացել էր Բասենի հայ բնակչութիւնը անընդհատ պատերազմների շնորհիւ։

Հետախուզութիւնս վերջացնելով՝ ես գնացի վանահօր բնակարանը, ուր Տիմոթէոս վարդապետը սիրով կերակրեց։ Նախանձելի կեցութիւն ունէր վանահայրը. նա բնակւում էր իւր մօր հետ և իւր իրաւասութեան ներքոյ ունէր վանքում ծառայող մի տիրացու, երեք հայ կին, մշակներ տաւարածներ և այլն։ Ունէր վանքապատկան 80 սոմարի վարելահող, 30 կով՝

ժողովրդից նուէրներ. ոչխար և այլ։ Այս բոլորի վերայ աւելացնելով հրաշալի օդ, մաքուր ջուր, լաւ կացարան, ոքանչելի տեսարան, լիովին անհոգ կեանք, 14 տարի անշարժ կեանք և գուցէ այժմ էլ այն տեղ է, և այսքանից յետոյ նորան վայել էր կրկնել «կեր, արբ և ուրախ լեր։»

—Ունի՞ արդեօք վանքը ձեռագիր մատեաններ, դիմեցի ես վանահերը:

—Կան մի քանի գրեանք... պատասխանեց նա։

—Կարելի՞ է տեսնել նորանց.

Վանահայրը քիչ մտածեց, խոժոռուած դէմքով յոնքի տակով նայեց վրաս և ձայն տուաւ։

—Ծո, տիրացու, Մկո, ծօ.

Տիրացու Մկոն եկաւ կանգնեց դէմը։

—Ծո, չիդէս ուր են հին գրքերը... ձեռով գրած.

—Որը, Հայր սուրբ, ան օր թղթերով փենջարաները կը-ծածկէինք... Այսմաւուրքը կըսի՞ս. հարցրեց Մկոն.

—Ծո ի՞նչ դուս կուտաս, փինջարանների համար հօ Այսմաւուրքը չէ՞ր, էնիկ վենձ չարակտնն էր. ուղղեց վանահայրը։

—Կուզիս գնամ բիթտուն բերեմ, անոնք բիթտունն էլ ներքևումն է... սարդաֆումը... տսաց տիրացուն և անհետացաւ։ Քարորդ ժամից յետոյ Մկոն բերաւ ձեռագիր մատեաններ, այն է երկու Մաշտոց, մի Սաղմոս, երկու չարական և երկու ճաշոց։ Մաշտոցներից մինը 1575 և միւս 1758 թուականից։ Սաղմոսը-1462 թուից, Մի չարականը 1689 թուից և վերջապէս մի ճաշոցը 1690 թուականից։ Բոլոր մատեանները խոնաւութիւնից այնքան էին փոխուել, որ իրար կպած թերթերը առանց պատռտելու միմեանցից ջոկել և խիստ բորբոսի հոտ էին փչում։ Տիմոթէոս վարդապետի 14 տարուայ վանահայրութեան անխոնջ հոգսերից մինն էլ այս մատեանների բարգաւաճ դրութիւնն է եղել։

—Հայր սուրբ, վանքապատկան հողերը կառավարութեան կողմից հաստատուած են վանքի վերայ, հարցրի ես։

Մի քանի տարի առաջ կառավարութիւնը վանքերից պահանջեց ներկայացնել հողերի և կալուածների գրաւոր հաստատութիւնները։ Պօլսոյ պատրիարգը գրեց ս. Էջմիածին վեհափառ Հայրապետին, որ յետ տան այս վանքի բոլոր փաստաթղթերը, որ հայերը 1330 թուի տարել էին Ռուսիայ, եօթվերաց պատկերի հետ, բայց կարծեօք ոչինչ դուրս չեկաւ այդ

գրագրութիւնից։ Մեր ձեռք մնացել է միքանի ֆարման-ներ, 80 սոմար տեղն էլ հաստատուած է վանքի վերայ։

—Ուրեմն ֆարմաններ ունի՞ք, կարելի է տեսնել նորանց Խնդրեցի վանահօրը։

—Ծօ, Մկօ, ծօ, տիրացու, ուր տեղ էն ան ֆերմանները, ծօ, գիդե՞ս որը կոիմ, որ տտճկերէն է գրած, բացատրեց Տիմոթէոս Հայր սուրբը։

—Մի կապոց թուղթ ձգած է օդան թարաքի վերայ, վա՛յ թէ ան էղնի. մտածեց տիրացուն,

—Ծօ, գնա՛, բեր աչենք։

Տիրացուն բերաւ մի փաթեթ ծալծլած թուղթ։ Իմ խնդրանօք վանահայրը կարդաց մինը, որի պատճէնը դնում եմ այստեղ, ինչպէս որ նա թարգմանել է։ Սա հետաքրքրական է իւր ձևով, բովանդակութեամբ և կարևոր է վանքի պատմութեան համար։

«ՖԵՐՄԱՆ»

«Սուլթան Ֆաթի Օսման Ղազի»

«Բոլոր տիեզերաց տակ դտնուած թագաւորութեանց»
«առաջինը, Աբրահամ նահապետի միջնորդութեամբ և մեր»
«ներկրորդ մարգարէի բարձր հրամանովն ես այս արքայու-»
«թեան թագը ժառանգեցի։ Ուստի իմ ձեռքիս տակ եղած»
«բոլոր կուսակալացս, որ քաղաքականութեանս դէտն են, և»
«կարդացողներուս, որոնք արդար դատաստան տեսնելու իրա-»
«ւանց գլուխն են, ուստի երկնից կխնդրեմ, որ մեր արքայու-»
«թեան հաստատեղն է, փառաւոր է մեր թագը, Ձեզի էլ տայ»
«խոնարհութեան հոգի, որ բոլոր հպատակներուս վերայ օրհ-»
«նութեան անունս հաստատէք։»

«Վասնորոյ՝ այժմ՝ Յովակիմ պատրիկի (պատրիարգ)»
«խնդրանօք, Հասան ղալայ անուանեալ գիւղաքաղաքի մօտ»
«Աք Մէյրաժայ (Սուրբ Աստուածածին) հայոց հաւատքին հա »
«մեմատ սքանչելեաց տեղին՝ ոչ ոք արտոնութիւն չունէ մեր»
«կողմէն թէ արտորէիցը և թէ պարտէզներուն ու իր կողմը»
«գտնուած անտառներուն և ամեն մէկ ունեցած արդիւնքնե-»
«րուն, իրենց կրօնական արարողութիւններուն թէ հոգևորա-»
«կանաց և թէ մարմնաւորականաց վստահ կերպով պտտելնե-»
«րուն, ազատորէն եկեղեցիներն երթալուն գալուն, ահա հրա-»

«մայեցինք Ձեզ, ոչ ոք չհամարձակի այս իմ, մարգարէիս,»
«ընտրեալ հպատակներին նեղութիւն տայ, և այս մենաստա-»
«նին տասանորդ անունը բոլորովին վերցուած է։ Բացի այս»
«հրովարտակիս ծախքէն, որ 1000 աղճայ հրովարտակիս գինն»
«է, ահա երկրորդում եմ ասած խօսքս, որ ոչ ոք ինձ հպա-»
«տակած հայոց մի կերպով չհամարձակի վնասել։ Եթէ լսուե-»
«լու լինի վնասուիլները, մեծ պատժով պատժուելու է, ահա»
«այս հրովարտակիս գրած առաջին օրը ձեզ հրատարակութիւն։»
«Այս այսպէս գտնալներովդ հպատակութիւն արէք ինձ, որ»
«երկինքն էլ ձեզ պաշտպանէ։ 1046 թուին. Սուլթան Ֆաթի»
«հրովարտակը։»

Ապա Տիմոթէոս վարդապետը ցոյց տուաւ երկրորդ հրովարտակը Սուլթան Մուստաֆայի տուած 1056 մահմեդական թուականին, Յոհաննէս պատրիարգի ձեռքով, որով հրամայւում է Արզրումի փաշային, վերադարձնել վանքին բոլոր վարելահողերն, որ յափշտակել էին Սուրբ Յոհան գիւղի թուրք բնակիչները։

Երրորդ հրովարտակով Սուլթան Մուրադի 936 թուից հրամայւում էր Արզրումի կուսակալին որ վանքից տարեկան տասանորդ չառնեն, բացի այդ՝ *Ջրասունի, Ծառսի, Խորասանի, Բաշգեղի եւ Ղարաքլիսայի* տարեկան տասանորդներն անտրտունջ նուիրւում են մենաստանին։ Ֆերմանը ստացուած է Յոհաննէս Ա. պատրիարգի ձեռքով։ Այս տուրքը, վանահօր ասելով, չարունակուել է մինչև 1830 թուականը, այսինքն մինչև հայոց գաղթը։

Հասաւ երեկոն. գիշերելու մնացի վանքում։ Նախքան քնելը Տիմոթէոս Հայր սուրբը հաղորդեց ինձ իւր պատմական հմտութիւններից մի քանիսը։ Օրինակ՝ նա բացատրում էր վրստահօրէն՝ որ Օկոմի գիւղի անունը եղել է *Եկունի* այժմեան աւերակ եկեղեցին օծել է Սահակ Պարթևը, որ սկսել է ցոյց տալ հրաշագործութիւններ, որից ծագել է *եկ, ունի*։ Իբրև թէ Հասան ղալայում յանցաւորների կալանաւորելով յանձնում էին Իշխան (այժմ Իշխու) գիւղի ժողովին, որ դատելով՝ վճիռ էր կայացնում և ի կատար ածելու յանձնում էր Պատիժվան գիւղին, որից և *պատժոյ աւան* և այլ այսպիսի զրոյցներ...։

Առաւօտ, 1878 թուի յունիսի 20-ին հրաժեշտ տուի վանքին և նորա վանահօրն ու իջայ կրկին Օկոմի, անցայ Հասանղալայի տակով և ընկայ այն մեծ ճանապարհը, որ գալիս է

Կարինից։ Ես արդէն կամեցայ վերադառնալ, ըստ որում Սուրբ Աստուածածնի վանքը Բասենի համարեա արևմտեան վերջին կէտն է։ Իսկ իմ նպատակն էր ի մօտոյ ճանաչել Բասեն երկիրը, որ 1830 թուին տուաւ հայ գիւղական դաղթականների այնքան հոծ բաղմութիւն։

Այժմ մի քանի խօսք ևս վերջին պատերազմի ազետալի հետևանքների մասին թրքահայ ժողովրդի վերաբերութեամբ, որով, և կվերջանան սոյն յիշողութիւններս։

ԳԱՂԹԵՐՈՒՆԻ

(Վերջը միւս անգամ)

ՆԵՐՍԷՍ Ե-ՐԴԻ ԿՈՆԴԱԿՆԵՐ

Ներկայումս, երբ ճանապարհների հաղորդակցութիւնը շատ դիւրացած է և առևտրական գործեր կատարելու համար շատ անգամ կարևորութիւն անգամ չկայ, որ վաճառականներն անձամբ գնան զանազան տօնավաճառանոցներ (եարմարկա) իրենց պէտք ապրանքները գնելու կամ իրենց ձեռքի ապրանքը վաճառելու համար, գուցէ դժուար լինի հասկանալ, թէ ի՞նչ կարիք կար, որ առաջները հայ վաճառականները տօնավաճառանոց գնալիս իրենց հետ տանէին նաև հայ քահանաներ։ Սակայն մի քանի տասնեակ տարի առաջ հանգամանքները բոլորովին այլ էին։ Ճանապարհների հաղորդակցութիւնը չափազանց դժուար ու ծանր լինելով, իւրաքանչիւր վաճառականի համար մի մեծ դէպք էր տօնավաճառանոց գնալը։ Ճանապարհ գնալուց առաջ նրանք պատարագ էին անել տալիս, մատաղներ մորթում, ծանօթ բարեկամների հետ ուրախութեան սեղան նստում, քահանաներին «Տէր ուղղեա» ասել տալիս...։ Մի խօսքով դա մի նշանաւոր գործ էր։ Եւ արդարև, հայ վաճառականները շաբաթներ, նոյն իսկ ամսով ճանապարհ էին գնում իրենց եղան սայլերով բեռնաւորած ապրանքները արտահանելու համար տօնավաճառանոցներում, ուր ամիսներով մնում էին թէ՛ ապրանք ծախելու և թէ իրենց հարկաւոր ապրանքը գրնելու համար։ Երբ ամեն գործ վերջացնում էին և գնած ապրանքները սայլերի վրայ բարձելով ճանապարհ ձգում, նոր իրենք նստում էին պոստային կառք ու վերադառնում հայրենիք, Նոր-Նախիջևան։ Հասկանալի է, որ այդ վերադարձն ևս մեծ տօն էր համարւում։ Կեանքի պայմանները լրացնելու համար պէտք է այս էլ ասել, որ սրանից 20—25 տարի առաջ Հիւսիսային Կովկասում, Դոնի շրջանում և համարեա թէ Հարաւային Ռուսսիայում էլ նշանաւոր առևտրական կեդրոններ չը կային. չկային նոյն իսկ այժմուայ այն քաղաքներից շատերը որոնք ներկայումս մրցելով Ն.-Նախիջևանի հետ նրան իւր ա-

ռաջնակարգ դիրքից իջեցրին ներկայ աննախանձելի դրութեան։ Հէնց Ն. Նախիջևանի քթի տակ հսկայական տռաջադիմութեամբ մեծացաւ ու շէնացաւ Ռաստովը, Տագանրոգը և այլ քաղաքներ։ Էլ չենք ուզում յիշել այն բազմաթիւ աւանները, կայարաններն ու գիւղերը, որոնք երկաթուղիների և հաղորդակցութեան ուրիշ միջոցների բազմանալով առևտրական և արդիւնաբերական վայրեր են դարձած։ Եւ հէնց այդ պատճառով էլ Ն. Նախիջևանի հայերը նորկայուս ցրուած են զանազան կողմեր և քաղաքի քահանաները ստիպուած են շարունակ դէս ու դէն թափառել իրենց ցրուած հօտը հովուելու համար։ Եւ մինչ 40-ական թուականներին Ն. Նախիջևանի քահանաները տարին մի անգամ գնում էին Նիժնիյի և Խարկովի տօնավաճառանոցները, ներկայումս նրանք ստիպուած են տարաբնակ ժողովրդականներին բաժանել 8 շրջանի և կանոնաւոր հերթակալութեամբ գնալ հովուել նրանց մեծ պասին, Ծննդին և Զատկին։ Աւելացնենք նաև սա, որ այդ տարաբնակ հայերի մէջ են ոչ միայն Նոր-Նախիջևանի հայեր, այլ և բազմաթիւ պանդուխտ և գաղթական հայեր Կովկասի, Պարսկաստանի և Թիւրքիայի զանազան կողմերից։

Մենք աւելորդ չհամարեցինք առաջ բերել սոյն համառօտ ծանօթութիւնը, որպէս զի պարզ լինի Ներսէս Ե-դի կոնդակի գրութեան առիթը։

Կոնդակի վերևում դրած է Հայրապետի կնիքը քառակուսի՝ հատած անկիւններով. կարմիր ստուերի վրայ կարդացւում է. «Ի.—Ներսէս եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն հայոց.— ԹՄՂԲ. 1843»։ Ապա հետևում է կոնդակը։

1. «Ներսէս ծառայ Քրիստոսի և անհասանելի կամքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք արարատեան նախամեծար համաշխարհական Աթոռոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի»։

Այս վերնագիրը գրած է կարմիր թանաքով՝ մեր ներկայ տպագիր տառերի նման, իսկ ապա շարունակած է սև թանաքով և երկաթագիր։

«Ի Հոգևոր կառավարութիւն Հայոց Նախիջևան քաղաքի առաքեալ զնամակ տէր Գաբրիէլ քահանայի Պատկանեանց գրեալ ի 16 ապրիլի այսր ամի, հրամայեմ Հոգևոր կառավարութեանդ, զի մի՝ այսուհետև միջնորդերսցէ որ զառաքմանէ ուրուք ի տօնավաճառն Մակարիոյ, այլ Հոգևոր տեսանել ինքնին

խորհրդակցութեամբ ոմանց մտերիմ հարպատագ՝ նշանակեսցէ և զքահանայ պարկեշտակրօն—քաջահմուտ ծիսից և արարողութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ, տալով մեզ զկանխադէտ ծանօթութիւն զառաքմանէ նորին ի յիշատակեալ տօնավաճառն։ Եւ զի մի՛ այսուհետև ըստ օրինակի ամաց անցելոց միևնոյն քահանայ ամի ամի շարունակարար կատարեսցէ զայս պաշտօն հոգևոր, այլ փոփոխակի իւրաքանչիւր ոք ի նոցանէ ըստ նշանագրութեան Հոգևոր կառավարութեանդ լցուսցէ զպէտս եկեղեցւոյ և զկարիս ժողովրդականաց»։

Իւր ձեռքով ստորագրուած է «եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն հայոց ՆԵՐՍԷՍ»։

Համար 114
ի 21 յունիսի 1844 ամի
ի Մոսկով.

Այն կոնդակին կցած է նաև Գաբրիէլ քահանայ Պատկանեանի խնդիրը Ներսէս Ե-րդի անունով 1844 թ. ապրիլի 6-ին, որի մէջ խնդրում է իւր նիւթական նեղսակիր դրութեան պատճառով (աղջիկ է նշանել) թոյլ տալ իրեն գնալ Մակարիայ տօնավաճառանոցը։ Առաջ ենք բերում այդ գրութեան միայն վերնագիրը:

«Գերաստիճանեալ Սրբազան Հայրապետ, Տիեզերական քահանայապետ, Ծայրագոյն Պատրիարգ Սուրբ Աթոռոյն Էջմիածնի, արժանընտիր եպիսկոպոսապետ և թագադիտակ կաթողիկոս ամենայն հայոց, Պայսերապսակ ասպետ և հոգևոր Տէր»։

2. Նոյն խնդրի մասին Ներսէս Ե-րդը 1845 թուին գրել է նաև մի ուրիշ կոնդակ, որի կնիքը նոյնն է, վերնագիրը նմանապէս, բայց կարմիր թանաքով տպած. կոնդակը ինքնագիր է ամբողջովին. ահա դա.

«Ներսէս ծառայ Լայն։ Հոգևոր կառավարութեան հայոց ի Նոր Նախիջևան ծանուցանեմ, զի ընկալեալ ի գրութեան կառավարութեան ի 5 յունիսի համարաւ 135, զխնդրագիր վաճառականաց Մակարիոյ մատուցելոյ ի հոգևոր կառավարութիւն ի 1 ամսոյս յաղագս հրաման տալոյ Գաբրիէլ քահանային Պատկանեան գնալ ընդ ինքեանց ի Մակարեայ զրեմ հոգևոր կառավարութեան ո՛չ տալ յիշեալ քահանային զայնպիսի հրաման, քանզի նա հարկաւոր է մեզ ի ժամանելն մեր այդր ի Նախիջևան, և յայտ-

նել յիշեալ վաճառականացն մերով բանիւ զի մի ևս միւս անգամ վստահասցին վասն ինքեանց աղաչաւոր քահանայից լինել խնդրամատոյց առ հոգևոր կառավարութիւն, քանզի արժանաւորութիւն քահանայից լաւ ևս քան զվաճառականն կարէ գիտել հոգևոր կառավարութիւն և վեճակաւոր արք եպիսկոպոսն. և հայեսցին յօրինակս զինուորութեան ռուսաց, զի քահանայ վասն նոցա նշանակէ օրեր-պրոտօերն անդամ Սինոդի ռուսաց՝ և ոչ ոք ի զօրապետաց գտանի միջնորդ վասն այս կամ այն ոք կարգելոյ ինքեանց քահանայ։ Եւ այդ միջնորդութիւն ժողովրդական է առիթ որ քահանայք հայոց անզգամացեալ ի դարուց ժամանակաց՝ գտանին հեստեալ և օտարացեալ յամենայն արժանաւորութեանց, որպիսի է և Գաբրիէլ Պատկանեան կոչեցեալն քահանայ առանց ծանօթութեան արժանաւորացն քահանայութեանց։ Այլ և օրէն յաւիտենական տամ այսու հոգևոր կառավարութեան որ ոչ երբէք չունիցի յանդգնիլ հոգևոր կառավարութիւնն յայսմհետէ զինղիր վաճառականաց վասն որ և իցէ քահանայի տալոյ ինքեանց յաղագս գնալոյ ի վաճառատեղիս։ Եւ հրամայեմ հոգևոր կառավարութեան զի ինքն զարժանաւորն ի քահանայից ըստ կացութեանց նոցին և վարուց և բարուց, և ամենայն հանգամանօք քահանայական արժանաւորութեանց, զորն և արժանաւոր դատել ունիցի, զնա առաքեսցէ, զի և այժմ բազմութիւնք քահանայից ծանիցեն և հաւաստի լինիցին թէ արժանաւորութեան իւրեանց, նաև պատիւ նոցա և անպատուութիւն, և օգուտ նոցա և վնաս՝ կախի ի հոգևոր կառավարութենէ իւրեանց, և ոչ ի ժողովրդականաց կամ ի վաճառականաց համոզելոց ի շողոքորթութենէ իւրեանց կամ յորոց և իցէ իւրեանց կամարարաց։ Եւ եթէ լինիցի զի թուլութեամբ հոգևոր կառավարութեան զի յառաջ քան զընկալնուլն այսմ հրամանագրութեան մերոյ իցէ Պատկանեանն ուղևորեալ, հրամայեմ հոգևոր կառավարութեան յատուկ շտապ վետաւ ի վերայ մերում հաշուոց յետս կոչել զնա ի Նախիջևան և մեք վասն վաճառականաց թէ դժուարին իցէ հասուցանել ի Նախիջևանայ քահանայ, փութացուսցուք առ նոսա ի Մոսկովայ զքահանայ։ Յունիսի 15, յԱղբիրման.

Կաթողիկոս ամենայն հայոց ՆԵՐՍԷՍ։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ հոգևոր կառավարութիւնը սոյն կոնդակի ժոքի համաձայն էլ ցուցակ է կազմում տօնավաճառանոց գնացող քահանաների։

3. Կայ նաև մի երրորդ կոնդակ Պատկանեան քահանայի մասին։ Տ. Գաբրիէլը 1843 թ. մայսի 21-ին գրութեամբ դիմում է խնդրելով, որ իրեն թոյլ տան փոխադրուել իւր հայրենի քաղաքը՝ Թիֆլիս։ Սինոդը հրամայում է կոնսիստորին յայտնել, թէ «պարտ է նա դիմել խնդրանօք առ թեմական իշխանութիւնն, յորոց առաւելապէս կախեալ է արձակելն նորա ի վիճակէն ուստի կամի փոխադրել, և ընդունելութիւն նորա ի թեմն, ուր մտադրեալն է ծառայել, ընդ այնմ յանձնէ կոնսիստորին յայտնել նմա ևս թէ որքան յայտնի է ինքեան սիւնհոդոսին ի գործոցն նորին, ի վիճակին վրաստանու չիք պարապորդ տեղի քահանայութեան վասն խնդրատուին»։ Սինոդի այն հրամանը կոնսիստորը յայտնում է Նախիջևանի Հ. Կառավարութեան սեպտ. 16 ին 1844 թուին։ Այդ առթիւ ստացւում է նաև հետևեալ կոնդակը.

«Ներսէս ծառայ Քրիստոսի ևայլն... «Հոգևոր կառավարութեան Հայոց ի Նոր-Նախիջևան գրեմ, յայտնել գրութեամբ կառավարութեան տէր Գաբրիէլ քահանային Սերօբէեան Պատկանեանց՝ զի ըստ որում խնդրեալ էր ինքն ի Սինոդէ Էջմիածնի արձակել զինքն ի Նախիջևանայ և տալ հրաման գնալ ի Թիֆլիզ, և ընկալեալ էր ի Սինոդէ զվճիռ այն՝ թէ պարտ է զայնպիսի իւր խնդրագործութիւն համաձայն օրինաց կառավարութեանց մատուցանել նախ իւրումն կառավարութեան, մեք գոլով նախաթոռ ի նմին սինոդական կառավարութեան՝ համանգամայն և իշխան վիճակային կառավարութեան վիճակի Նոր-Նախիջևանայ արձակեմք ահա զինքն ի քահանայագործութեանց այսմ վիճակի Նախիջևանայ, և հրամայեցաք գնալ ընտանեօք իւրովք ի Թիֆլիզ ուր գուցէ յաջողեսցի ինքեան զընտանել զհանգիստ իւրոց կամաց։ Նոյնպէս և յայտնել գրով տէր Ղուկաս քահանային Գալուստեան գնալ ի Թիֆլիզ, զի ոչ ևս կարէ տանիլ զնա յինքեան Նոր-Նախիջևան քաղաք Հայոց։ Նոյեմբերի 13. յամի 1845, և ազգական մեր 1294, ի Նոր-Նախիջևան։ Կաթողիկոս ամենայն Հայոց ՆԵՐՍԷՍ։

4. Երևանի Ս. Զօրաւոր եկեղեցու քահանայ Յարութիւն Կաքայեանը դիմում է Ն. Նախիջևանի Հ. կառավարութեան խնդրելով, որ իրեն նպաստ տան, որովհետև Աստրախանու վիճակաւոր Սերովբէ Սրբազանի երեսից փախչելով եկել է այստեղ ընտանեօք, որովհետև նրան կանվոյով սպառնացել են վերադարձնել Երևան, և անցագիր չունի։ Այս առթիւ եղած գործե-

րի մէջ կայ երկու կոնդակ, որոնցից մէկը պատճէն է, իսկականը պէտք է որ Բեսարաբիոյ թեմի կոնսիստորում գտնուելիս լինի, իսկ միւսը ինքնագիր է։ Այդ կոնդակներով մի գեղեցիկ պատկեր է ներկայանում մեր առաջ մեր այն ժամանակուայ բարքերից։ Ահա առաջին կոնդակը, որ գրուած է 1845 թ. Հունվար 21 և փետրուարի 23-ին (երևի յունուարի 23 ին պէտք լինի, որովհետև կոնսիստորի գրութիւնը գրուած է փետրուարի 22-ին, որ անհեթեթութիւն կդուրս գայ)։

Կոնսիստորի Հայոց Նոր-Նախիջևանայ և Բեսարաբիոյ ծանուցանեմ, զի Ցարութիւն Առաքելեան Կաքայեանց սանձակոտոր քահանայ յամին անցելոյ ի սեպտեմբերի 4, գրեալ առ մեզ ի Վլադիկաւկայէ՝ յայտնէ յետ բանի ամայ ընկեցեալ լինելոյն ի կարգէ քահանայութեանց հրամանաւ սինոդի Էջմիածնի թոյլատրեցեալ է ինքեան քահանայագործել յԵրևան քաղաք ի Զօրաւոր կոչեցեալ յեկեղեցւոջ, այլ որպէս թէ ստիպեալ ի պատճառաց վախճանելոյ ծնող հօրն իւրոյ և եղբօր, չորս ամսեայ ժամանակաւ արձակեցեալ հանդերձ ընտանեօք եկեալ ի Մոզդոկ, այլ վասն հիւանդութեան կնոջն զոլով տակաւին ի Վլատիկայ (Վլատիկաւկաղ) քաղաքի։ Գրեալ առ մեզ խընդրեալ էր տալ տեղի քահանայութեան ինքեան ի Նոր Նախիջևան կամ յայլուր ի վիճակի Նոր-Նախիջևանայ և Բեսարաբիոյ, որում անարժան համարեալ զմեր թղթակցութիւն, ոչինչ պատասխանեալ ակն ունէաք դառնալոյն ի յուշ իւր ի լրանալ չորս ամսեայ ժամանակի արձակմանցն իւրոց, վերադառնալ ուստի եկեալն է, այլ յաղագս անարժան բնաւորութեանց կենցաղավարութեան նորա անծանօթութեամբ։ իւրում կոչմանց և կարգի բարեկարգ կառավարութեանց վայելչականաց համեստ կենցաղավարութեանց ընկալայ ի 22 այսմ ամսոյ զայլ միւս գիր նորա գրեցեալ ի Նոր-Նախիջևանայ ի 10 ամսոյս, որով ոչ անարժան ճանաչէ զրել առ մեզ, թէ անդէն ի Վլադիկաւկայ սպասելով ինքն մերում տնօրէնութեանց համաձայն իւրումն յառաջագրութեանց առաջին գրութեամբն իւրով վերադարձեցեալով, վիճակաւորն այնոցիկ սահմանաց Հայոց, հրամայեալ է կարգապահ Յովհաննէս քահանային Թումանեանց որ ի Մոզդոկ, գրել կոմենդանտին Վլադիկավկայի հանել զինքն հանդերձ ընտանեօք ի սահմանաց Աստրախանու վիճակի, և ի ձեռն զինուորաց առաքելոյ յԵրևան՝ առանց պահանջողութեանց կոնսիստորի Երևանայ վիճակէ յինքենէ, այլ կին իւր զոլով յղի

մերձ ի ծնանիլ արդելեալ է այնմ հրամանաց վիճակաւորի կատարումն, յետ որոյ ի 23 հոկտեմբերի ծնեալ կին իւր, եկեալ է ղաւակօք ի Մօզդօկ և խնդրեալ է կարգապահի տեղւոյն, զի ծանուցէ վիճակաւորին Աստրախանայ կամ որոց հարկ է վասն անկարելութեանց ճանապարհորդութեան իւրոյ ի ժամանակի ձմռան հանդերձ ընտանեօք, մանաւանդ ևս, զի սպասէ ընկալման պատասխանւոյ գրութեան առ մեզ վասն փոխարկելոյ զինքն ի վիճակ Նոր-Նախիջևանայ և Բեսարաբիոյ, զոր ապադաւ ցասուցեալ Սերօբէ Առաջնորդն Աստրախանայ գրեալ է առ կուսակալնատօրն Ստաւրափոլոյ զի հրամայեսցէ քաղաքապետին Մօզդօկայ հանել զինքն ի վիճակէ Նորին, յորմէ զարհուրեալ ինքն ի 17 յունվարի ճանապարհորդեալ հանդերձ ընտանեօք հասեալ է ի Նախիջևան ի փետրուարի 8, և սպասէ մերում ողորմած տնօրէնութեան։ Եւ ըստ այսոցիկ հանգամանաց, զի նա իւրով անզուսպ վարուք ոչ կարէ ողորմել անձին իւրոյ արժանաւորութեանց և կամ իւրոց ընտանեաց, այլ ի քանի ամաց հետէ բազմագիմի անարժան կամապաշտութեամբ իւրով, ողորմած տնօրէնութիւն մեր ի վերջին յայսմ նուագի վասն Նորա այս է, զի թէ ամենևին լուռ լուռ չունիցի նա վերադառնալ յԵրևան ի Զօրաւոր եկեղեցին ուր թոյլատրեցեալ է ինքեան քահանայանալ, ունի գնալ ինքն մինչ յԵրևան հետևակ, զի էանց անդր քան զսահման անզուսպ բնաւորութեանց Նորա։

5. Կաքայեան քահանան թէպէտ ստորագրութեամբ խոստանում է յաջորդօրինակեթ հեռանալ քաղաքից իւր վիճակը վերադառնալու համար, բայց խոստումը չէ կատարում։ Այդ հանգամանքը հաղորդում է ում անկէ և ստացւում է Ներսէս հինգերորդի սոյն ինքնագիր կոնդակը։

«Ներսէս ծառայ Լայն» Հոգևոր կառավարութեան Հայոց ի Նոր Նախիջևանի. զի Յարութիւն քահանայ Կաքայեանց գոլով կորուսեալ ի վաղուց զարժանաւորութեանց քահանայական՝ նա իսկ և մարդկային համեստ կենցաղավարութեանց՝ այս քանի ամք են ահա զի նա փորձեալ զամենայն անհանդիստ բարոյ իւրոց զվնասն, չէ թողեալ զտեղի ուր չէ հրատարակեալ զիւր անարժան կենցաղավարութիւն, և անցեալ զհազար ծակ բազում անպատուութեամբ իւրով վերստին յետ արժանաւորելոյն զինքն այնքան մարդասիրութեանց և դարձուցանելոյն զքահանայութիւն, մոռանալով զամենայն նախանցեալսն կրկին ևս որ-

սացեալ զկամս ռամիկ կառավարչաց կոնսիստորի Հայոց յԵրեւանայ՝ թողեալ զեկեղեցին ուր կարգեցեալն էր եկեալ է Վլատիկաւկայ, և անտի ևս փախստեայ հասեալ այդր ի Նախիջևան, համարելով զկառավարութիւն եկեղեցական իբրև խաղալիք իմն անզգամաց՝ վստահացեալ է զրել առ մեզ ի 10 մարտի և 9 ապրիլի յետ լսելոյն յատենի կառավարութեան զզրութիւն մեր վասն վերադարձի իւրոյ և վասն այլ պատշաճելոցն ինքեան: Առ որ հրամայեմ հոգևոր կառավարութեան զի յիշեալ անարգանք Հայոց քահանայութեանց Ցարութիւն Առաքելեան Կաքայեանց քահանայ կոչեցեալ՝ չիցէ տակաւին ըստ տնօրէնութեանց կոնսիստորի Նոր-Նախիջևանայ և Բեսարաբիոյ Հայոց դարձուցեալ ուր զրեցեալն է, ասել նմա որ չհամարձակեսցի միւս անգամ գրել առ մեզ, զի չեմք պարտաւոր ամենայն անզգամաց լինել կամարար. և ի յանդգնելն միւս անգամ եղիցի այնուհետև սալդատ կայսերական և ոչ քահանայ եկեղեցւոյ Հայոց: 1845. և ազգական մեր 1294. ապրիլի 25: Ի Կիշինև. Կաթուղիկոս ամենայն Հայոց ՆԵՐՍԷՍ»:

Սրանից յետոյ գործը հասնում է տեղական մագիստրատին և Տագանրոգի գրագանաչալնիկին և վերջապէս, ինչպէս մագիստրատի թղթից երևում է, Կաքայեան քահանան «ի ձեռն զինուորական պահապանաց», ուղարկւում է Երևան:

6. Հետաքրքիր է Ներսէս Ե-դի կոնդակը ննջեցեալների համար սուգ չանելու մասին: Կոնդակը ինքնագիր է:

«Ներսէս և այլն...» Հոգևոր կառավարութեան Հայոց ի Նոր Նախիջևան, պատմեցաւ մեզ թէ ի վախճանել մարդոյն կին նորա չունի ելանել ի տանէ իւրմէ և գնալ ուրեք, և ոչ իսկ յեկեղեցի մինչև ցլրումն տարւոյն: Այլ զի հեթանոսական է այս սովորութիւն, հրամայեմ հոգևոր կառավարութեան պատուիրել ամենայն քահանայից, զի ի հանդիպել վախճանի ումեք ի տանելն զդագաղ վախճանելոյն յեկեղեցին՝ կին նորա ևս գնասցէ ընդ դագաղի առն իւրոյ յեկեղեցի. և յետ թաղման առն՝ յառաջնումն կիւրակէի ընդ առաւօտն ի ժամ սկսանելոյ զփրկական սուրբ պատարագն գնացեալ քահանայն տան հանգուցելոյն՝ հրաւիրեսցէ զկին նորա ի սուրբ եկեղեցի և պարտաւորեսցէ զնա անխափան յայնմ հետէ գնալ ի սուրբ եկեղեցի և խնդրել զօգնականութիւն Աստուծոյ ինքեան և զաւակաց իւրոց և հոգւոյ հանգուցելոյն. զի քրիստոնէութիւնն ո՛չ ներէ ումեք վասն վախճանի առն իւրոյ կամ որոց և իցէ իւրումն

սիրականի, խոովել յԱստուծոյ և հեռանալ յեկեղեցւոյ սրբոյ կամ թողուլ զիւր հարկաւոր աշխատութիւն վասն պահպանութեան տան և. զաւակաց հանգուցելոյն։ Եւ ի չՀնազանդելն ուրուք խրատուց և յորդորանաց իւրումն քահանայի, սաստել զնա որպէս հակառակող օրինաց քրիստոնէութեան իւրոյ։ 1845 և ազգական 1294. Նոյեմբերի 3. ի Նոր-Նախիջևան։

Կաթողիկոս ամենայն Հայոց ՆԵՐՍԷՍ։

7. Եօթներորդ կոնդակը նոյնպէս հետաքրքիր նիւթի մասին է—նշանօրհնէքի մասին։ Ս. Էջմիածնի սինոդը 1838 թ. դեկտեմբերի 31-ին համար 1803 «Հրամայէ սաստիկ արգելել հոգևորականութեան հայոց զի ի ժամ նշանադրութեան ոչ կատարել զորպիսի և իցէ զեկեղեցական պէտս, քանզի ի հրաժարելոյ յոմանց նշանադրելոց մտանել յօրանաւոր ամուսնութիւն գոյանան բաղում անարգութիւնք ի պատճառս կատարմանցն քահանայից զեկեղեցական պէտս ի ժամ նշանադրութեան»։ Քահանաները ստորագրութեամբ պարտաւորւում են կատարել այս հրամանը։ 1845 թուին Ներսէս կաթողիկոսի Ն. Նախիջևան եղած միջոցին քաղաքի նշանաւոր անձինք մի խնդիրք են ներկայացնում յայտնելով, թէ քաղաքի շինութեան օրից իրենք սովորութիւն են ունեցել նշանախօսութեան միջոցին քահանայի ձեռքով օրհնել տալ նշանը, որից յետոյ խօսեցեալներն իրաւունք չունէին միմեանցից բաժանուելու։ Թէ-պէտ, ասում են նրանք, նշանօրհնէքի սովորութեան խափանումը մի առանձին նշանակութիւն չէ ունեցել «յառաջադաս և միջակային» ժողովրդականների վրայ, բայց ստորին դասը, «առ որս ոչ այնչափ բնաւորեալ է մաքրութիւն վարուց և հաստատութիւն բարուց» շատ անգամ հարսնախօսութիւնից յետոյ հրաժարւում են, շնչին պատճառներով, իրենց խօսքից և նշանւում են երկրորդի կամ երրորդի հետ, որով և հարսնացուի աղքատ ծնողները աւելորդ տեղը ծախսերի մէջ են ընկնում, իսկ աղջկերք անուանարկուած՝ տանը մնում։ Ուստի խնդրում են փոխել այդ կարգադրութիւնը։

Այս խնդրի վրայ տրւում է հետևեալ ինքնաձեռագիր կոնդակը.

«Ներսէս և այլն...» Առաքեմ ի հոգևոր կառավարութիւնն օրհնութեանց արժանաւոր Նոր-Նախիջևան քաղաքի հայոց զբազմաստորագիր թուղթ միաբան խնդրագործութեան նոցին յառաջարկութեամբ օգտի ժողովրդեան հասարակութեան իւ-

բեանց՝ զոր յուսան լինիլ Նորոգութեամբ օրհնութեանց Նշանի ի ժամանակի Հարսնախօսութեանց կուսից ընդ երիտասարդաց։ Եւ ըստ որում միաբանական հասարակութիւն ճանաչեն օգտակար ինքեանց և բաղմութեան ժողովրդոց և խափանիչ վնասուն զրկանաց որդւոց և դստերաց բաղմաց. առաքելով ընդ այսմ ի հոգևոր կառավարութիւն այն բաղմաստորագիր խնդրադրութիւն, և հրամայեմ վերանորոգել զօրհնութիւն Նշանի երիտասարդաց ընդ կուսից, և ի հանդիպիլ ընդդէմ օրհնութեանց Նշանի դիմադարձութիւն ինն յանդուգն անձանց, յառաջարկել գրութեամբ հոգևոր կառավարութեան, Գումրի քաղաքական և Գոլովայի քաղաքական կառավարութեան, զի նոքա միաձայնեալ ընդ հոգևոր կառավարութեան՝ վայելչական արժանադատութեամբ հնազանդեցուցեն զանհնազանդսն ազգական քրիստոնէական կանոնաց իւրեանց։ Ցամի 1845, և ազգական 1294. ի Նոր-Նախիջևան։ 30 Նոյեմբերի։

Կաթողիկոս ամենայն հայոց ՆԵՐՍԷՍ։

Նշանագրութիւնը քահանայի օրհնութեամբ և օրինադրեալ ծէսով կատարելու և մինչև պսակի խորհուրդը կատարելու միջև երկար ժամանակ անցնելու պատճառով, ինչպէս երևում է, դժուարութիւններ են ծագած նաև ուրիշ թեմերում՝ Աստրախան, Շամախի... այնպէս որ Ս. Էջմիածնի սինոդը հարկադրուած 1855 թ. յուլիսի 15-ին համար 580 հրամայում է նշանօրհնէքը՝ համարելով դա պսակի օրհնութեան անբաժան մասը՝ կատարել պսակի օրը, ինչպէս որ հրամայած է եղել նաև 1850 թ. յուլիսի 21 ին համար 1013։ Այս խնդիրը զեկուցում է նաև Սինոդի Ատենակալ Ներսէս Ե.-դին, որը յայտնել է, թէ ինքն էլ առաջները գրաւոր կերպով արգելել է այդ սովորութիւնը՝ բացի Ն. Նախիջևանից։

8. Ներսէս... և այլն։ Հոգևոր կառավարութեան հայոց Նոր Նախիջևանայ առաքեմ գպատճէն գրութեան Նորուն պայծառափայլութեան փոխարքայի Կովկասեան սահմանաց կնեալ Միխայէլ Սիմոնիչ Վորոնցովի վասն երևելի յաղթանակի զօրաց Ինքնակալ Կայսերութեան ամենայն Ռուսաց ի Սալտայ անուանեալ ամրոցի լեզգեաց լեռնականաց՝ օժանդակութեամբ Տեառն Աստուծոյ յաւուր հրաշահանդէս տօնախմբութեան վերացման Սուրբ Խաչի ի 14 այսմ սեպտեմբերի և գրեմ, զի ընդ ընկալնուլ պատճէնի առ մեզ գրութեան Նորուն Պայծառափայլութեան վասն Աստուածապարգև յաղթանակի հկօր զօրաց Կայ

սերութեան՝ յերեկոյէ ծանուցումն առնել ժողովրդեան և հրաւիրել զամենեսեան ընդ յառաւօտն ի սուրբ եկեղեցին, և յաւարտ պատարագին միաբանութեամբ ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց հայոց մատուցանել զգոհացողական մաղթանս վասն օգնականութեանց Նորա զինուորութեանց օծելոյն իւրոյ և մաղթել զմշտնջենաւոր օգնականութիւն Նորա և զերկարութիւն կենաց Ինքնակալ Կայսեր և զհաստատութիւն Աթոռոյ ամենասղոցման թագաւորութեան Նորա։

Կաթողիկոս ամենայն Հայոց ՆԵՐՍԷՍ։

Համար 359
1847 և ազգական 1296
Սեպտեմբերի 30. ի Թիֆլիս։

Ի հարկէ այդ կարգադրութիւնը ճշտիւ կատարուում է։

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ [1])

Կանանց շարժումը Գերմանիայում *)

Ոչ մի երկիր բարձրագոյն կրթութիւնը կանանց առաջ այնչափ փակ չպահեց, ինչպէս այդ եղաւ Գերմանիայում։ Այս կողմից Գերմանիան ոչ թէ Անգլիայից, Ֆրանսիայից, Ամերիկայից, Ռուսաստանից, Շվեցարիայից յետ մնաց, այլ և Շվեդիայից, որտեղ 1870 թ. թագաւորի հրամանով կանանց թոյլ է տրւում բժշկական ասպարէզ մտնել, և բարձրագոյն դպրոցների դռները նրանց համար բացուեցին։ Գերմանիան յետ մնաց նոյն իսկ Դանիայից, Հոլանդայից, Բելգիայից, Իտալիայից, մինչև անգամ Ռումինիայից։ Իտալիայում կանայք աւելի շատ են Բոլոնիայի համալսարանում։

Ճշմարիտ է 1868 թ. Բեռլինում հիմնուեց Վիկտորիա անունով լսարանները, որտեղ նոյն իսկ պրոֆեսորները դասախօսում էին, բայց այդպիսի հիմնարկութիւններ նախ քիչ էին, և երկրորդ՝ իր պահանջներով աւելի ունևոր դասակարգի համար էր, և երրորդ՝ այդ հիմնարկութիւնը ոչ մի ժամանակ բարձրագոյն դպրոցի կրթութիւն և իրաւունք չտուեց։ Որովհետև այս աշխարհում կանանց հարցը շատ խոչընդոտների և դժուարութիւնների պատահեց, դրա համար աւելորդ չենք համարում մի քանի խօսքով պատմել այս տեղի կանանց ազատութեան հարցի ծագումն ու վախճանը։ Դեռ 1814 թ. Լուիզ Օտտո Պետերս տաղանդաւոր և եռանդուն կինը Լայպցիգում հրատարակուող «Vaterlandsblätter» թերթում ջերմ կերպով կանանց պաշտպա-

---

[1]) Տես «Լումայ» № 3.

*) Տես նոյնպէս «Реформы женскаго образованія въ Германіи» Вѣстникъ Европы,—յունիս։

նեց և հրաւէր էր կարդում գերմանուհիներին կուռել իրանց անկախութեան համար և տղամարդկանց հաւասար իրաւունքներ ունենալ։ 1849 թ. այս կինը հրատարակեց «Frauenzeitung» անունով մի լրագիր, որի մէջ նոյն ոգով և ոյժով կանանց դատը պաշտպանում էր և նրանց ամենափոքր յաջողութիւնն անգամ գրուատում։ Այն ժամանակ այդպիսի կանանց թիւը համեմատաբար շատ քիչ էր և մեծամասնութիւնը սահմանափակուած էր միմիայն իր ընտանեկան շրջանով, այնպէս որ Լ. Պետերսի թերթը երկար ժամանակ յաջողութիւն չունեցաւ և երեք տարի յետոյ դադարեց։

Ահա այս էր Գերմանիայում կանանց առաջին փորձը։ Պետերսի քարոզածն անհետ չկորաւ, այլ մի քանի տարի յետոյ առաջաւոր կանանցից մի փոքրիկ ընկերութիւն կազմուեց, որի նպատակը թէև սահմանափակ, բայց օգտակար էր, — ինչպէս ուշք դարձնել գերմանուհու տնտեսական դրութեան վրայ։ Այն ինչ այդ միևնոյն ժամանակներում Ֆրանսիայում ազատամիտ կանայք իրանց հարցի գլուխն անցած ժողովներ էին գումարում, դասախօսութիւններով, փքուն ճառերով երևակայում էին, որ կանայք էլ ամեն բանի մէջ տղամարդու հետ հաւասար են լինելու։ Միևնոյն միջոցներին էր, որ Անգլիայի նշանաւոր կանացի ոյժերը գլխաւորապէս պարապում էին մարդասիրական գործերով և խօսքի հետ միասին մամուլի և գրականութեան միջոցով այս բանի համար էր կռիւ մղում։ Սրանց հակառակ՝ գործնական գերմանուհիք կարծես այդ բաների լուծումը վաղաժամ համարելով, իրանց նպատակն էին դրել միմիայն կանանց տնտեսական ապահովութիւնը։ Նուտով նոյն նպատակի համար՝ մեծ մասամբ միջին դասակարգի կանանցից, կազմուեցաւ երեք նոր ընկերութիւն։ Սրանք գերմանական կանանց շարժման համար մեծ դեր կատարեցին, դրա համար անհրաժեշտ է թեթև կերպով ծանօթանալ։

I. - *Հետտէ ընկերութիւնն* այսպէս սկիզբն առաւ։ Այն ինչ աչքի ընկնող կանայք իրանց աշխատանքի ընդլայնացումն էին տարածում, երբ յանկարծ ցնծութեամբ լսեցին Ֆրիդրիխ Ֆրոբէլի հրաւէրը՝ կանանց

աշխատանքի մի նոր, բայց վեհ կոչման ու գործունէութեան համար. այսինքն նա յանձնում էր փոքրիկ մանուկների խիստ փափուկ և երաշխաւոր դաստիարակութեան գործը նրանց. այլ խօսքով՝ խորհուրդ էր տալիս իր ստեղծած ծաղկոցներում գործել։ Այս ծաղկոցների համար շատ կարճ միջոցում տասնեակ ընկերութիւններ կազմուեցան։ Պրուսայում էլ կազմուեց «Central Verein fur das Wohl der Arbeitenden Classen» 1844 թ. որն զբաղուեց կանանց գործունէութիւնն ու ասպարէզը լայնացնելով. այս բանին նախաձեռնող հանդիսացաւ դր. Վ. Ա. Լեոտէն։

Սա առանձնապէս զբաղուեց կանանց նեղ դրութեամբ, այնպէս որ 1865 թուին իր տնձնական զբաղողութեան արդիւնքը դիտողութիւնների հետ միասին ընկերութեանը ներկայացրեց։ Այդ զեկուցման մէջ նա իմիջի այլոց մատնացոյց էր անում կանանց դրութիւնն Անգլիայում, Միացեալ Նահանգներում և Ֆրանսիայում։ Ահաւասիկ նրա տեղեկութիւններից մի կտոր. Անգլիայում, գրում է Լեոտէն, արդէն վիճակագրութեամբ հաստատուած է, որ երկու միլիոնից աւելի տնուրի կանայք կան, Նրանք իրանք են իրանց աշխատանքով ապրում, և Լօրդ Շէֆտսբիւրի շնորհիւ մի ընկերութիւն կազմուեց, որի նպատակն էր կարիք ունեցող կանանց համար աշխատանք գտնել, օգնել վարժուհու պաշտօն ստանձնող կանանց և նրանց կարելոյն չափ մտաւոր կերպով բարձրացնել, որպէսզի ապրելու միջոց ձեռք բերեն։ Այս նպատակի համար անգլիական կանանց այդ ընկերութիւնը մի ինստիտուտ հիմնեց, որտեղ կանայք ստենոգրաֆիա, նկարչութիւն, հաշուապահութիւն և այլ այսպիսի բաներ էին սովորում։ Ինստիտուտի մօտ կայ և տպարան, որտեղ ցանկացողներն այդ գործով էլ զբաղւում են։ Ապա նրանց հետ միասին, շարունակում է Լեոտէն, կանանց հարկաւոր է այդպիսի կրթութիւն տալ և նրանց գործնական կեանքի համար պատրաստել. դրա համար բացի վերոյիշեալներից յարմար է համարում Լեոտէն նոյնպէս գրքերի տպագրութիւն, կազմարարութիւն, ժամագործութիւն, հաշուապահութիւն,

գանձապահութիւն, գրավաճառութիւն, գրադարաններում, վաճառատներում ծառայել։ Տեխնիկական մասերից՝ կենդանաբանական, բուսաբանական և այլ սրանց նման մանրացուցական (միկրոսկոպիկական) պրեպարատներ պատրաստել, փոստային, հեռագրատան և հեռախոսական ծառայութիւններ անել, նոյնպէս քանդակագործութիւն, փայտերի, ստուարաթղթերի (կարտոնների) վրայ ծաղկանկարներ այրել, թեթև փորագրութիւններ անել։ Գիտութիւններից՝ գործնական բժշկութիւն, հիւանդներին խնամել, վիրակայ դնել և այլն, և այլն։ Լետտէի տուած զեկուցման հիման վրայ, 1865 թուին դեկտեմբերի 12-ին մի նոր դաշնակցութիւն հիմնուեցաւ, որը կոչւում էր «Verein zur Förderung der Erwerbsfähigkeit des weiblichen Ceschlechts»։ Այս դաշնակցական ընկերութեան բանալու ժամանակ Լետտէն ուրախանալով՝ ասաց. «մենք առայժմ կանանց քաղաքական ազատութիւն չենք ուզում և ոչ էլ կանանց տղամարդկանց հետ հաւասարութեան խնդիր ունենք, այլ միայն կանանց յառաջադիմութեան ճանապարհի վրայ գտնուած տեսակ-տեսակ նախապաշարմունքները ոչնչացնել, պաշտպանել կանանց ինքնուրոյն աշխատանքը, նրանց բարոյականութիւնը, պատիւը կեղեքողներից ազատել, թոյլ ընկածների համար ապաստանարաններ հիմնել, օգնել կանանց գործ, տեղ գտնելու, նրանց ձեռագործների համար ժամանակ առ ժամանակ ցուցահանդէսներ, վաճառանոցներ պատրաստել, միջնորդ լինել գործ տուող և աշխատող կնոջ մէջ, դպրոցներ հիմնել, որտեղ կանայք հաշուապահութիւն սովորեն, մի խօսքով աշխատել կանանց նիւթական դրութիւնը բարւոքել։ Ահա որոնք են լինելու մեր նպատակը և մեր առաջիկայ խնդիրները»։

Այս ընկերութեան կազմակերպութեան առաջին տարին անդամների թիւը 332 էր, 1877-ին սրանց թիւը հազարից անցաւ, լետոյ աւելի շատացաւ. նորակազմ ընկերութիւնն իր գործն սկսեց մի քանի ինստիտուտներ պահելով, որտեղ երիտասարդ, որբ և անխնամ աղջիկները գանազան գործնական բաներ էին սովորում, նոյնպէս հիմնեց մի գրասենեակ (бюро), որի նպատակն էր

կանանց համար գործեր գտնել և միջնորդ էր լինում գործատիրոջ ու կանանց մէջ։ Այսպէս 1869 թուին 1073 կանանց համար աշխատանք գտան, իսկ 1890 թ. 3000-ից աւել առաջարկութիւն եղաւ այդ գրասենեակին և գործաւորներ էին խնդրում։ Կանանցից էլ նոյն թուին 4000 աւել դիմողներ եղան, որոնցից 3000-ից աւել կանայք ընկերութեան միջոցով գործ ստացան։ Ապա ընկերութիւնը կանանց ձեռագործի համար բաց արեց մի առանձին վաճառանոց, և 1886 թուին կանանց ձեռագործի ցուցահանդէսին 1200 կտորից աւելի ձեռագործներ կային։

Այդ ընկերութիւնը ներկայումս Բերլինում իր գործը շարունակում է և հիմնադրի անունով Լետտէ է ասւում։ Այս հիմնարկութիւնն իր գոյութեան ընթացքում բազմաթիւ դպրոցներ, հաշուապահական դասընթացներ, արհեստանոցներ և հիւանդանոցներ բաց արաւ. նոյնպէս առանձին ուշք դարձրեց փոստ-հեռագրատան վերաբերեալ գիտելիքներ սովորեցնելու վրայ, և աղջիկներին իրանք էին այնտեղ տեղաւորեցնում։ Արհեստագիտական դպրոցները զանազան էին. ինչպէս կարի, ձևի, սպիտակեղէնի, ասեղնագործութեան և այլն։ Երբ ընկերութիւնը որոշ չափով առաջ գնաց, դրութիւնը բաւականին լաւացրեց, սրա հետ միասին նա ուզեց իր սաների դրութիւնը ևս բարձրացնել. այդ պատճառով ամեն միջոց գործ էր դնում, որ իր դպրոցներում սովորողներն ընդհանուր կրթութիւն ևս ստանան, որպէս զի ոչ թէ միայն գործող լինեն, այլ և սովորեցնող. օրինակի համար ձեռագործ, գեղարուեստ, նկարչութիւն սովորողները բացի իրանց աշխատանքից, պիտի կարողանային մասնաւոր և ընդհանուր դպրոցներում ուսուցչուհու պաշտօն ևս վարել։ Այս բանն ընկերութեանը բաւականին յաջողուեց և օրէցօր այստեղից դուրս եկած վարժուհիների թիւը որոշ տեղ էր բռնում, մանաւանդ աւելի յայտնի եղան իրենց գործնականութեամբ։ Այնպէս որ երբ 1889 թուին Բեռլինում ցուցահանդէս եղաւ, Լետտէ ընկերութեան ներկայացրած ձեռագործները և դաստիարակութեան վերաբերեալ նիւթերը մասնագէտ մարդկանց կողմից մեծ գո-

վասանքի արժանացան։ Այսօր Լետտէ ընկերութիւնը Բեռլինում այդ մասերի մէջ պատուաւոր տեղ ունի. ընկերութիւնն ունի մի ահագին, չորս յարկից բաղկացած բազմաթիւ սենեակներով տուն, որտեղ գտնւում են նրա ձեռքի տակ գտնուած բոլոր հիմնարկութիւնները։ Այդ տունը Բեռլինում յայտնի է «Cetthaus» անունով։

Որովհետև նոյն ընկերութեան նպատակներից մէկն էլ վարժ, ճարպիկ տանտիկին պատրաստելն է, դրա համար ընկերութիւնը ներկայումս ունի՝ հարթելու, օսլայելու առանձին բաժիններ, որոնք այնչափ ընդարձակուեցին և այնչափ հետևողներ ունեցան, որ այժմ առանձնացնելով այդ անունով մի ուրիշ ընկերութիւն կազմեցին։ 1896 թ. նոյն ընկերութիւնը բացեց լուսանկարչութեան բաժին. այստեղ աղջկներին ամեն նիւթ տրւում էր և հմուտ առաջնորդների միջոցով մասնագիտաբար սովորում էին և տպա առանձին գործում։

Այս սկզբնական և բնական քայլերն անելուց յետոյ, ընկերութիւնը նոր մտածեց կանանց բարձրագոյն կրթութեան մասին, որի համար առանձին օրէնքներ մշակեց և լուսաւորութեան նախարարութեանն առաջարկեց, որ աղջիկները որոշ քննութիւնից յետոյ հասնութեան վկայական ստանան և համալսարան յաճախեն. կարճ ժամանակից յետոյ իմացուեց, որ այս առաջարկութիւնը մերժուեց.

II. 1865 թուին Լայպցիգում կանանց մի ուրիշ ընկերութիւն կազմուեց. սա համարեա Լետտէի ուղղութիւնն ունէր։ Այս ընկերութեան ջանքերով Լ. Պետերսի եռանդուն աշխատութեամբ կանանց Ա. ժողովը կազմուեցաւ Լայպցիգում. դրա նպատակն էր կուռել կանանց նախապաշարմունքների դէմ, քանդել նրանց սընոտիապաշտութիւնը, օգնել նրանց զանազան դպրոցներ բանալով և աշխատել ընդհանուր կրթութեան հետ մտաւոր կերպով նրանց բարձրացնել, հիմնել բարձրագոյն կրթութիւն տուող ինստիտուտներ և այլն։ Այս ընկերութիւնը կոչուեց «*Ընդհանուր գերմանական կանանց ընկերութիւն*»։ Նոյն ընկերութիւնը շուտով հրատարակեց իւր օրգան «Neue Bahnen» վերնագրով ամսա-

թերթը։ Այդ թերթի նպատակն էր կանանց բարձրանալուն ամեն կերպ նպաստել և իրա՝ — ով այս թերթով հետաքրքրուել է, նա շատ պարզ կերպով նկատած կըլինի նրա մէջ հետաքրքիր դաստիարակչական առօրեայ խնդիրներ, որոնք ներկայ գիտութեան վրայ հիմնուած, մատչելի կերպով յարմարեցրած են ընտանեկան և դպրոցական կեանքին։ Այսպիսով Լայպցիգի կանանց ընկերութիւնը Բեռլինից զանազանուեց նրանով՝ որ գործնական աշխատանքի հետ տեսականն էլ կապեց։

III.—Գերմանական կանանց երրորդ ընկերութիւնը կազմուեց աւելի ուշ, որ Վայմարում 1888 թ. և սաւում է «Կանանց կատարելագործութեան բարեկարգումն», շուտով այդտեղից տեղափոխուեց Հաննովէր. այս ընկերութիւնն իր նպատակների մէջ աւելի առաջ գնաց քան միւսները, այսինքն սրանք ասում էին, որ արդէն կանանց նիւթականի բարձրացնելու, նրանց տնտեսականի հոգալու, գործեր գտնելու համար ընկերութիւններ կան և օրէօր աճում են դրանք։ Ուրեմն մեզ մընում է կանանց միջնակարգ համարող դպրոցները, ինստիտուտներն աւելի լաւ հիմքերի վրայ դնել և չբաւականանալ միմիայն ընդհանուր կրթութեամբ, այլ այդտեղ աւարտողները հասունութեան վկայագիր ձեռք բերեն, որ դրանց առաջ բացուեն բարձրագոյն դպրոցների դռները և կանանց ընդհանուր մտաւոր հորիզոնը բարձրացնել։ Այս նպատակին հասնելու համար, ընկերութիւնն աշխատում էր Ա. ընդհանուրի կարծիքի վրայ ազդել խօսքով, լրագրով, մատչելի գրքոյկներով և ժողովներով, Բ. աշխատել բոլոր գերմանական պետութիւնների մէջ կանանց բարձրագոյն կրթութեան գործին համակրողներ, նպաստողներ գտնել, որ հարկաւոր դէպքում մեծամասնութեան ձայնը և մամուլի ոյժն իրանց կողմն ունենան, Գ. փող հաւաքել, օգնել եղած դպրոցներին և իրանց ցանկացած բարեփոխութիւններն անել, և վերջապէս աշխատել արտասահմանեան կանանց գիմնազիոնների նմանները բանալ և նրանց թիւը բազմացնել։

Այս ընկերութիւնը հէնց իր գործունէութեան առաջին քայլում խնդրագիր կազմեց և ուղարկեց Պրուս-

սիայի, Բաւարիայի, Վիւրտեմբուրգի թագաւորութիւն-ներին, լուսաւորութեան նախարարներին, խնդրում էր թոյլտուութիւն տալ, որ կանայք որոշեալ քննութեամբ իրաւունք ունենան հասունութեան վկայական ստանալ գիմնազիօնից և բէալ ուսումնարանից, ապա թոյլ տալ համալսարան և այլ բարձրագոյն դպրոցներ մտնել։ 1889 թուին նոյն բովանդակութեամբ խնդրագիր ուղարկեց բոլոր գերմանական պետութիւններին, և նոյն խնդրագրի մի օրինակն էլ ներկացրեց բայխստագին (1890 թ.)։ Մի տարի յետոյ բայխստագն այդ հարցով զբաղուեց և ի նկատի ունենալով ներկայ գերմանական համալսարանական կազմը և որ նրանց փոփոխելն իրանց իրաւունքից վեր է, մերժեց այդ խնդիրը։

Երկրորդ անգամ էլ բայխստագն զբաղուեց նոյն հարցով, հակառակորդների թւում կային և ձախակողմեան կուսակցութիւնից, միւսներն այդ բանը սոցիալական հարցի հետ կապելով, ջերմաջերմ պաշտպանում էին, մանաւանդ կանանց համար բժշկական մասը շատ յարմար էին համարում։ Զնայելով համակրողներին, բայց և այնպէս այդ հարցը մի քանի անգամ բայխստագում մերժուեց։ Նորից դիմումներ եղան նոյն ընկերութեան կողմից, նորից հակառակորդներ դուրս եկան, վերջապէս 1899 թ. յունուարին ներքին գործոց նախարարի ելևմտից հաշիւը քննելու ժամանակ Պրինց Շեօնաուխ Կարոլամը կանանց հարցի մասին մի շատ լաւ ճառ արտասանեց, որով կանանց հարցը նորից արծարծուեց, նորից հերթական խնդիր դարձաւ։ Պրինցն ի միջի այլոց նկատեց, թէ երբ այստեղ նոր քաղաքական օրէնքները քննուեց, այն ժամանակ շատ պատգամաւորներ այն կարծիքին էին, թէ կանանց տնտեսական դրութիւնն այն ժամանակ հնարաւորութիւն կունենան բարելաւել և դրանց հետ էլ նրանց իրաւունքը լայնել ընտանիքում, եթէ կանայք մտաւոր կերպով առաջ գնան։ Եղան մի շարք պատգամաւորներ էլ, որոնք կանանց մաւոր բարձրանալուն համակարծիք էին և նրանց յառաջդիմութեան բարեկամ։ Ի նկատի ունեցէք պարոններ, ասում է ճառախօսը, որ Գերմանիայի շատ տեղերում, ինչպէս և Բեռ-

լինում այնպիսի հիմնարկութիւններ կան, ուր աղջիկները գիմնազիական պատրաստութիւն են ստանում և այդ տեղերում աւարտողները հասունութեան քննութիւն են տալիս։ Նոյնպէս գիտէք, որ նրանցից շատերը նախարարութեան նշանակած քննութիւնը տալով՝ յաջողութիւն ունեցան։ Ուրեմն սրանից յետոյ մի՞թէ նրանք իրաւունք չունեն ոչ թէ զիջում, այլ հաւասարութիւն պահանջելու. այնպիսի հաւասարութիւն, որով օգտւում են նոյն քննութիւն տուող տղաները, այսինքն նրանք էլ լինեն պրոֆիզորներ, բժիշկներ, միջնակարգ դպրոցներում վարժուհիներ և այլն։

Այս ամենից յետոյ մի՞թէ մեր վարմունքը կարող ենք արդարացի համարել, երբ նրանց առաջ համալսարանի դռները փակւում են, երբ նրանք ազատ ունկընդիր լինելու համար պէտք է այս կամ այն պրոֆեսսորին դիմեն, իսկ մերժում ստանալու դէպքում ի՞նչ անեն։ Այսպէս, մենք նրանց ոչ պաշտպանուելու և ոչ էլ կռուելու իրաւունք ենք տալիս։ Ես կարծում եմ այս հարցին վերջ պիտի տրուի, և նրանց պիտի տալ այն իրաւունքները, ինչ որ ունեն հասունութեան իրաւունք ստացող երիտասարդները։ Այս հարցին անտարբեր կերպով չպիտի վերաբերուենք և պարտաւոր ենք լսել ժողովրդի ձայնը, մանաւանդ ամեն տեղից այդ հարցի մասին համակրական կարծիքներ է լսւում. ուրեմն աւելի յարմար չի՞ լինի այդ հարցը վաղօրօք ի նպաստ նրանց վճռենք»։

Նոյն Պրինցը մի ուրիշ անգամ 1899 թուին կանանց հարցը պաշտպանելով, այն կարծիքը յայտնեց, թէ «ճշմարիտ որ կինը տանն է պատկանելու, նրա ասպարէզն այն է, բայց սրա հետ միասին աչքի առաջ ենք ունենալու այն կանանց, որոնց համար այդ շրջանը նեղ է. ահա այդպիսիներին պիտի ճանապարհ տանք առաջ գնալու։ Կանանց խնդրի նկատմամբ գերմանուհին շատ երկրներից յետ է. իսկապէս մենք կանանց ազատութիւն չենք քարոզում, այլ մեր ասածը շատ սահմանափակ և նեղ պահանջ է, այսինքն ընդունակ կանանց յառաջ գնալուն միջոց և յարմարութիւն տալ՝ ուրիշ ոչինչ։ Անգլիայում այս բանին ինքը թագու-

հին է օգնում։ Ռուսաստանում բաւականին գումար է ծախսւում, Ֆրանսիայում, Իտալիայում, Շվէդիայում և Նորվէգիայում, ամեն տեղ էլ կանանց պահանջներն իրաւացի գտնելով՝ բաւարարութիւն են տալիս»։

Պրինցին պաշտպանեցին շատերը և այդ հարցը հերթական դարձաւ։ Պրոֆեսսոր Մաքս Միւլլերն Օքսֆորտում սկզբում կանանց կրթութեանը հակառակ էր, բայց յետոյ նա ինքն էլ իր կարծիքը փոխեց, առաջարկելով, թէ կանայք տղամարդկանցից աւելի աշխատաւոր են և թէ տղամարդիկ նրանցից օրինակ պիտի առնեն։ Նոտ տեղերում երկիւղ կայ, թէ կանայք իրաւունք ստանալով՝ իրենց պաշտօնները ձեռքերից կը խլեն. այն ինչ 1877—95 թուին, այսինքն 18 տարուայ ընթացքում Անգլիայում բժշկութեան աստիճան ստացող կանանց թիւն ընդամենը 250 է։

Ուրեմն թող այդպիսիները չկարծեն՝ թէ բոլոր կանայք բժիշկներ են լինում, մանաւանդ նրանցից քըչերն են այդպիսի աշխատանքների ընդունակ։

Երբ մի անգամ պրուսական պատգամաւորների պալատում կանանց հարցի մասին խօսք եղաւ, հռչակաւոր Վիրխովն առարկեց, թէ ինչու համար համալսարանի դռները մինչև օրս կանանց առաջ բաց չէ։ Նա յայտնեց, որ ինքն այդ գաղափարին համակարծիք է և աշխատում է դրա համար մի նոր ճանապարհ, նոր ելք գտնել. այսօր համալսարաններն այդ չեն կարող անել, քանի որ առանց այն էլ այնչափ ուսանողներ կան, որ դրանց համար ևս հարկաւոր յարմարութիւններն ու պիտոյքները չեն բաւականանում։ Այստեղ հարցն սկզբունքի համար չէ, այլ գործնականի, այդ պատճառով էլ համալսարանն անտարբեր կերպով է վերաբերում դէպի այդ հարցը. եթէ այս հանգամանքում կանանց տեղ տանք, ահագին դժուարութիւն պատճառած կը լինենք, աղմուկն էլ անպակաս։ Ահա մեր անտարբերութեան պատճառն այստեղ պէտք է որոնել, ոչ թէ բացատրել՝ թէ նրանք անընդունակ և անկարող են»։

Այս ամենից յետոյ գերմանական զանազան թագաւորութիւնների, իշխանութիւնների և քաղաքների մէջ հարց ծագեց կանանց գիմնազիոններ բանալու, որպէս-

զի այնտեղ աւարտողները համալսարանում կարողանան շարունակել։ Այս առթիւ Բրեսլաուից խնդիր ուղարկեցին Պրուսիայի լուսաւորութեան նախարարին և կանանց գիմնազիօն բանալու թոյլտուութիւն խնդրեցին։ Նախարարութիւնն այս բանը մերժեց, պատճառաբանելով, թէ կանանց այդպիսի նոր հիմնարկութիւնները հիմնելու կարիք չկայ, քանի որ վիճակագրութիւնն այդ է ցոյց տալիս։ Ինչպէս օրինակ՝ 1895—6 թուին ամբողջ Պրուսիայում հասունութեան քննութիւն տուին ընդամենը 8 կին, 189⁶/₇ թուին 4 կին, 189⁷/₈ թուին 6 կին։ Կամ թէ Բրեսլաու մի՞թէ կարիք կայ, երբ ընդամենը գիմնազիա մտնելու համար 24 աղջիկ են պատրաստականութիւն յայտնել։ Այս բաներն ի նկատի ունենալով նախարարը պահանջ չի համարում այդ առաջարկը, այլ լոկ մի քանիսի ցանկութիւն, իսկ սրանց քննութիւն բռնելու միշտ թոյլ տրւում է։ Գերմանական կանանց շարժման ընդհանուր հետևանքն այն եղաւ, որ վերջիվերջոյ բայխստագի անդամներից շատերին, ինչպէս և համալսարանում դասախօսող ուսուցիչներին համոզեցին, որ կանանց խնդիրը բնական կարիքից է յառաջացած, որի հետևանքը եղաւ այն, որ ներկայումս բոլոր գերմանական համալսարաններում կանանց թոյլ է տրւում լսելու, գործնական կերպով աշխատելու և դոկտորութեան աստիճան ստանալու։

Մնում է բուն ուսանողուհի գրուելու և պետական քննութիւն տալու հարցերը, որոնք ամենահաւանօրէն մօտիկ ապագայում գերմանուհիները ձեռք կը բերեն։ Այս ամենից ընթերցողը շատ պարզ կերպով կը տեսնի թէ իրօք Գերմանիայում այս հարցը դրական և հիմնական քայլերով առաջ գնաց և թէ իր ապագայ կատարելիքների մէջ անյողդողդ դիրք կը բռնի։

Ա. ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ

(Վերջը հետևեալ համարում)

ԱՌՈՒՆ ԱՆՑԱԻ...

Առուն անցաւ խոր-խոր ձորեր,
Ընկերի հետ միացաւ,
Սիրով գրկած՝ սեր երգելով,
Դաշտ ու արօտ պտտցաւ։

Ամպը իջաւ ժեռուտ սարից,
Առուի ջուրը գուրգուրեց,
Իւր դարդերը նորա ծոցում
Արցունք չինեց, հանդարտուեց։

Ախ, ես էլ շատ խար—խար ընկայ,
Քեզ փընտրեցի, ա՜յ ընկեր.
Քեզ ուզեցի սիրտս բանալ,
Քեզ հետ քաժնել իմ ցաւեր։

ԱՐՇԱԿ ԿԱՑՈՒՆԻ

«ԳՐՈՂԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ» [1])

—

(ՊԱՏԿԵՐ)

I

ԵՐԻՏԱՍԱՐԴ. Նա նոր է աւարտել իւր ուսումը։

Գլուխը տաք, սիրտը բաբախում է կիզող եռանդով, երևակայութիւնը վառ, ստեղծում պատկերներ...

Այդպիսի մինին բանաստեղծները տուել են մի ողբերգական անուն։

Իսկ ո՞վ է նա.—

—Մի աղքատ ընտանիքի որդի, նորա հօր թողած ժառանգութիւնը է ընդամենը յիսուն թուման *պարտք*...

Եւ ո՞վ պէտք է վճարի։

—Մեր երիտասարդը։

Բայց պարտք վճարելու համար դեռ հարկաւոր է փող աշխատել գիտենալ։

— Փող աշխատե՞լ։

«Այո՛, ասում է նա, առանց հօրս թողած պարտքը վճարելու, առանց փող ևս ունենալու ազատութիւն չկայ...»

Իսկ փող աշխատելու համար հարկաւոր է այլ տեսակ *քանքար*։

Նա չունի այդ քանքարը, միայն փորձում է ձեռք բերել։

«Ուրեմն վաճառական դառնամ» վճռում է նա և դիմում Պ. Պէդօին։

---

[1]) Այս գրուածքը հասել է մեզ հանգուցեալ Աբգար Յովհաննիսեանի թղթերից, նորա որդու ձեռքով։ ԽՄԲ.

II

«Ամիսը 5 մանէթ. թէ վուր լաւ կու ծառայիս 6 էլ կու չինիմ»։

Համաձայնում է մեր երիտասարդը.

Նա գոհ է իւր ռոճկով.

«Տարէնը 60 մանէթ»—մտածում է նա.

«Ուրեմն 9 տարումը պարտքս վճարած կըլինիմ...»

—Ահա՛ շչոտը. ասում է միւս օր պ. Պէդօն. էս, էն, էն բասպրեժէնիէքը թամամ կու կատարիս. հասկացար։

«Այո՛, պարոն,» պատասխանում է նոր պրիկաշչիկը։

Աւաջն է դնում խանութի հաշուէտումարը և գրում է.

«Ցունվարի 3-ից մինչ փետրվարի 13ը՝ մուտք 4865 ր. 59 կոպէկ»

«Ցունվարի 3-ից մինչ փտրվարի 13-ը՝ ծախք 18 ր. 27 կ.»

Պատրաստում է ֆորմուլան 486559 մուտքից

—1827 ծախքը հանած

«Դրամարկղին հասաւ 484732»

—Օ՜հ. ասում է նա, այս ինչ դիակութիւն է գործ ունենալ մեռած թուերի հետ»...

Եւ ճակատը ձեռքին դրած մտածում է.

Իսկ գրիչը հաշուետետրի վրայ շարունակում է գրել...

Բաց է անում աչքերը և ինչ տեսնում.—O, Per Dio

Տումարի մէջ գրվել է «Ձմեռն էլ ունի իւր զվարճութիւնքը... ևն»

Շուտով գրիչն առնում է և ջնջում...

Բայց հաշուետումարը ոչնչացաւ, է...

III

Առաւօտեան դէմ վաճառականների անքակտ և ընդհանուր սովորութեամբ պ. Պէդօի նոր պրիկաշչիկը բիւրօի մօտ նստած լրագիր է կարդում ահագին կիտուկ էլ գրքեր միւս կողմում դիզած։

«Պէտք է, պէտք է գրել. մերոնք քնած են...» մտածում է նա։

—Հը՛ բասպրիժէնիէքը վերջացրի՞ր. հարց է անում պ. խանութատէրը։

Պ. պրիկաշչիկը կարմրում է.

—Է՛. դուն մագազինի խարջ օնքմին չիս, ասում է պ.

Պեդոն. կարդալ դուքնի մէջ — էդ մահացու միղք է։ Էդ խեր չի անիլ մեր մագազինի բարաքաթին. առավուտ առավուտ ով սիվթայ է անում դուն մի թիզ մօլա դառար մեր գլխին...

«Ոչ ոք դեռ չէ եկել, պ. Պէդօ, ասում է մեր պրիկաշչիկը. իսկ ես ժամանակս չուզեցի զուր կորցնեմ»...

—Իս ժամանակ չիմ իմանում. թէ դուն գիտիս խնթրիմ հայդէ. դէ, հայդէ...

Պ. Պեդօն կատակ չէր անում։

Վաճառականն ու կատակ...

Հեռանում է մեր պրիկաշչիկը։

IV

Անցել էր մի ամիս՝ անընդհատ գրելու, կարդալու ամիս մեր երիտասարդի համար։

Ցանկարծ մի քաղաքի հոգաբարձութիւնից նամակ է ստանում նա.

300 ռուբլ տարեկան թոշակ, շաբաթական 30 դաս, դասն էլ 1¹/₄ ժամ.

«Գնա՛լ» վճռում է նա և այս գլխից յիսուն ծախսելով ճանապարհ ընկնում։

Դասախօսութիւնն սկսվում է։

Եղանակը դժնդոտ, մառախլապատ երկինք, բայց պարզ մեր *ուսուցչի* սիրտը։

Նա նայում է անծանօթ շատերի երեսին որոնց հետ գործ պիտի ունենար իւր պաշտօնավարութեան ընթացքում.

Նա կարդում է շատերի երեսին իւրեանց գաղտնիքը.

Նա տեսնում է՝

Մինը տգէտ, ձևանում է գիտուն, միւսը արժանաւոր, բայց ատելի ամբողջ քաղաքին, այլը ազնիւ, բայց բռնաբարված, երրորդը անպիտան, բայց կառավարում է ազգի գործերը։

«Գրի՛ր, նկարիր դորանց պատկերը, ասում է նորա զգացմունքը։

Նա զսպում է իւրեան։

Ի՞նչպէս գրել. մինն աղա է, միւսը հարուստ, այլը իշխան, Չորրորդը հոգևոր...

Բայց զգացմունքը հեշտ չէ սանձահարվում...

Նա գրում է, և զզված այդ արիւնոտ պատկերների կենդանատիպերից աւելի ևս սիրահարվում դասախօսութեան ամբիօնին որի հանդէպ նստած են մանուկ աշխարհի դեռ անմեղ անարատ հոգիները... Եւ նա բոցակիզված կարդում է նորանց առաքինութեան դասեր, երջանկութեան հասցնող ճանապարհի պատմութիւնը...

Օրական 4–5 դասից յետոյ, երեկոյեան նա նուիրվում է իւր դասերին.

Բայց ահա—մոմ չկայ, ճաշը անպիտան, փայտը հատել է, ձմեռը խիստ, նոր գրքեր է հարկաւոր, տաքակն էլ խօսք չկայ ինչպէս է կարեոր.

Եւ ինչ.

25 ր. ռոճիկը վաղուց է ցամաքել...

«Աղա Մարկոս, խնդրեմ մի բուբլ ձեռնափոխ տուր. լրագրին նիւթ ուղարկելու փոչի փող չունիմ...» ասում է նա և աւելցնում «Ազգային լրագիր է, պէտք է օգնենք...»

– Մի մանէթ կտամ, բայց ամսի վերջին ռոճկիցդ կհանեմ։

«Լաւ»։

Մօտենում է տարվայ վերջը։

Նա տալիս է չքեղ քննութիւն, որի համար վկայում է ամբողջ հասարակութիւն։

Բայց անտէր լրագրի թերթերը ստացուել են, որոնց մէջ շատերը իւրեանց գոյնով օրինաւոր նկարված ու ներկված...

«Է՞։ Դա հուպլի ա» ասում է ներկվածի բիձէն։

«Ոչինչ աշխատանք չի ցոյց տվել. զուր մեր փողերը կորել են» կցում են առաջվայ գովող, այժմ պախարակող ներկվածի քեռիները։

«Ուղիղ է. դա մեզ *ծեռնտու* չի» շարունակում են ներկուած աղաները։

«... Վասն որոյ խնդրեմ այսուհետև ազատ ճանաչէք ինձ ուսուցչութեան պաշտօնից» յայտարարում է մեր ուսուցիչը և և թողնում, հեռանում...

V

Անցնում են տարիներ։

Նա մօտացվում է։ Ո՞ւր է, չգիտեն։

Բայց նորա գրվածները խօսում են մամուլի տակից։

Շատերը կարդում են և զվարճանում։

Շատերը նորան գովում են, երկինք հանում (ի հարկէ լոկ խօսքով)։

Շատերը ոչ միայն ցեխը կոխում մկրտում, այլ և դաւադրում...

Իսկ կասկածոտ անձինք, գուցէ իւրեանց նմանակը այդ գրվածների մէջ տեսնելով, խեղճ գրողի դէմ շանթեր արձակում...

«Ո՛ւհ, ինչ անճոռնի, խարդախ, երախտամոռ տղայ է՞» ասում են մեծերը։

«Իրան աչքի գերանը թողած, օտարի աչքի շիւղն է նշմարում» պնդում են միւսները։

—Էնքան կծեծեմ, եթէ ձեռքս ընկնի, որ սատկի. հաւատացնում են այլերը։

VI

Գրպանը փողից փարատ, հալածված, աչքերը խոր ընկած, նիհարացած, նա այժմ թափառում է քաղաքի փողոցներում. թափառում այս կարիքներով բեռնաւորված...

Նա, ինքն էլ կարօտ մտաւոր կերակուրի, դիմում է գրավաճառին.

—Ի՞նչ էք կամենում։

«Հօկէի այս ինչ գրվածները որքա՞ն արժեն. հարցէ անում նա։

—...Sieben und einen halben Rubel...

«Եօթ մանէթ ու կէ՞ս...» թուքը սառած նա մտնում է մի ուրիշի մօտ.

—Խնդրեմ Գէորգ Բօրնի այս ինչ գրվածքը։

«3 ր. 90 կ. կարժենայ» պատասխանում է գրավաճառի գ. գործավարը։

Ի՞նչ անել, առանց կարդալու խու չի կարելի մնալ...

«Ախ, պարոն, եթէ իմանայիր իմ դրութիւնը»... նայելով գործավարի երեսին իւր մտքում ասում է նա և հանում վերջին հինգանոցը...

—Է՛հ կեանք, կեանք... մտածելով շտապում է նա դէպի սենեակ.

Բայց ո՞վ է նայում տիկիններից ու պարոններից թէ նա է իւրեանց ընթերցանութեան կերակուր տվողներից մինը...

«Դէ, լաւ. կը մեռնի, ով է իմանում, ապագայ սերո նդը գուցէ Նրա վրա գերեզմանաքար կձգի.—պրծաւ, գնաց... տսում են (այն էլ քչերը հասկացողներից)։

VII

Հոկտեմբերի վերջին օրերն է, այն օրերը, երբ ամեն մարդ ամեն ջանքով ձմրան դիմաւորելու պատրաստութիւնք է տեսնում.

Մի մութ սենեակում նստած է նա...

Փայտ չունի, ճրագլիս չկայ. թուղթ, գրիչ, ծխախոտ...

Նա դուրս է գալիս փողոց.

Տեսնողը կարծում է նորան ապահով։

«Էդ ինչո՞ւ էլ չես գրում. հը՞. գրի էլի՛, ի՞նչ կայ՝ որ...» ասում է նորան իւր ընկերներից մինը «էլ չէ՞ք շարունակում գրել... «վրա է բերում միւսը։

—Ի՞նչու այդ պէս շուտ գրելուց դադարեցիք... հարց է անում կաբինետի ժառանգը, հարստութեան որդին...

—Ի՞նչ պատասխան տայ։

Բայց ի՞նչ դրութեան մէջ է նա. ի՞նչպէս օգնենք նորան, այս մասին ոչ ոք չի մտածում. Խեղճը այդքան գրկանքների մէջ, ի՞նչ կլինի եթէ յանկարծ հիւանդանայ...

Այդ ոչոքի հոգսը չէ. մեռնելուց հաղիւ մի ամսից յետոյ գուցէ իմանան, լոկ խօսքով ցաւեն մի քանիսը—այդ է։

Բայց և ի՞նչպէս են նայում Նորա վրա.

Շատերը՝ կասկածաւոր աչքով.

Շատերն էլ այդ՝ վատթարութիւնք հարուածողին վատ ու վտանգաւոր են ճանաչում, իսկ պաշտօնների վրայ տիրացածները, Նորանց օգնականները և այլք «իշխանք հայոց փափկասունք և փսփսան հայկազունք» Նորա երեսին էլ չեն նայում, ինչ թէ մօտ կանչում, Նորան օգնում...

«Ա.ն.ց.ա.ւ ա-յ-ս.օ.ր է՞-լ»... մտածում է նա.

Բայց ոչ մի տեղից յոյս չկայ...

VIII

Միւս օրը ամսի 20.ն է.

«Եւ ի՞նչն է այս ամենի պատճառը. ասում է նա ինքն իրան. ուրեմն վե՞րջ տալ բոլորովին գրելուն. Նորից վերցնե՞ր-

պատկերահանի գործիքս ու ընկնել քաղաքից քաղաք բա-
կան ապրուստ հայթհայթելո՞ւ...»

—Այո՛:

Եւ նա երդվում է իւր հաւատարիքի էական մասնի անու-
նով. նստում է ու գրում վերջին, վերջին իւր պատկերը։

Նրա կուրծքը տրաքում է. նա ամաչում է ճշմարտու-
թիւնները գրել։

«Բայց ո՛չ, պէտք է գրեմ վերջին անգամ. սա իմ վերջին
գրվածքն է լինելու».

Մտածում է նա և ձգտում վերջացնել իւր պատկերը...

IX

«Բարի լո՛յս». ներս է մտնում ահաւոր դէմքով տանտէրը՝
պ. Մոսէսը։

—Ասծու բարին. սպասի՛ր, սպասի՛ր. այս է վերջացնում
եմ իմ վերջին գրվածքը...

«Է՜, ի՞նչ գրածք, ի՞նչ բան, հէր օխնած. փող ասա, փող...»

—Ա՛յս րոպէիս, այս րոպէիս...

«Ամսի քսանն է, պարո՛ն. քսան, քսան ռուբլի ամսական
տան քիրահը խնթրեմ...»

—Վաղը, վաղը—համեցէ՛ք...

«Վաղը. մեր սովորութիւնը. մենք քիրահ ստա-
նում ենք վերջին օրում և ոչ թէ վաղը... խնթրեմ...»

—Օ՜խ. ընդհատեցիր, պարոն...

«Փո՜ղ շնորհեցէք, փո՛ղը... Անցեալ ամսինն էլ հետը 40
ռուբլ...»

X

«Իրա՛. ի՜նչքան թշուառ է գրողը հայերի մէջ...»

Պ. Ե.

ՏՈՒՐԻՆԻ ՊԱՍՏԱՌԱԿԱԼԸ

Տուրինի պաստառակալը քրիստոնեայ կաթոլիկ աշխարհի ամենաթանկագին մասունքներից մէկն է։

Թէև եղան մարդիկ, որոնք այդ պաստառակալը կեղծ համարեցին, և ցոյց տուին, որ Նրա վրայ մարդկային կերպարանքի նման նկատուած պատկերը մի ինչ որ խարեբայ նկարչի գործ է, բայց և այնպէս այդ պաստառակալը համարւում էր և համարւում է այն իսկականը, որ տուեց Յովսէփ Արեմաթացին Քրիստոսի թաղման համար։

Պատմութեան մէջ այդ մի կտոր սրբազան կտաւի մասին կան մութը ակնարկութիւններ։

Յայտնի է, որ Կոստանդնուպօլսում ԺԲ դարում այսպիսի մի կտոր յարգի էր, բայց ԺԳ դարում մէկի ձեռքով գողացուեց և անհետ չքացաւ։

1352 թուին ոմն Վիլհէլմ Վիլլերսեկսէլ արևելքից բերեց Շամպայն ինչ որ մի պաստառակալ, որը ձեռք ձգեցին Լիրիայի կրօնաւորները և սկսեցին ցոյց տալ այն իբրև սրբութիւն։

Դրա պատճառով մի տաք վէճ բարձրացաւ, որ իր վրայ առաւ լուծելու Կլէմենտ Է պապը։ Բայց և այնպէս վէճը չը-լուծուեց։

Սավոյեան իշխան Փիլիպոս Էմմանուէլի հրամանով տեղափոխուեց այդ պաստառակալը Տուրին քաղաքը և պետեղուեց առանձին պահարանի մէջ, որի բանալիները պահւում են մէկը՝ պապի, միւսը Տուրինի եպիսկոպոսի, երրորդը՝ Սավոյեան իշխանի՝ այժմեան Իտալական թագաւորի մօտ։

Այս ժամանակից յայտնի է նա Տուրինի պաստառակալ անունով։

Այդ պաստառակալը մի դեղնած կտաւի կտոր է 4 մետր 10 սանտիմետր երկայնութեամբ, 1 մետր 40 սանտ. լայնութեամբ։ Մի ծայրը թեթև խանձուած է և վրան երևում են հետքերն

պն ջրի, որի մէջ նետուեց 1532 թ. հրդեհի ժամանակ, երբ քիչ մնաց այրուի։

Այդ պաստառակալի վրայ արդարև կան ինչ որ նկար ձեւացնող մութ բծեր։

Պաստառակալը պահուում է իբրև ամենամեծ սրբութիւն և միայն բացառիկ հանդիսաւոր դէպքերում ցոյց է տրուում ժողովրդեան, որ շատ հազիւ է պատահում։

Բայց ահա 1896 թուին, Տուրին քաղաքում կայացաւ ծիսակատարական առարկաների ցուցահանդէս և թագաւորը թոյլ տուեց ի ցոյց դնել թանկագին պաստառակալը։ Նրանից նոյն ժամայն մի շարք լուսանկարչական պատկերներ հանեցին. լուսանկարի վրայ պարզ երևաց մարդու կրկնակի պատկեր՝ երեսի եւ մէջքի կողմերից։ Այս փաստը անմիջապէս յայտնի դարձաւ ամբողջ կաթոլիկ աշխարհին, բայց վրան ուշ չդարձրին, որովհետև մեծամասնութիւնը համոզուած էր, որ պաստառակալը «իսկութիւն» չէ, և շատերը գիտէին վրան նկարներ ձևացնող նկարչի մասին եղած աւանդութիւնը։

Այսպիսի տեղեկութիւններ կային Տուրինի պաստառակալի մասին մինչև վերջին ժամանակս, երբ բոլորովին պատահմամբ Նրա լուսանկարչական պատկերները ընկնում են Սորբոնի կենդանաբանութեան պրոֆէսսորի օգնական Պօլ Վինեոնի ձեռքը, որ և հետաքրքրուում է նրանցով։

Նրանում մի միտք է ծագում—այդ նկարները վերլուծութեան ենթարկել խիստ գիտնական տեսակէտից և, իրեն գործակից առնելով ֆիզիկոս դնդապետ Կոյլսոնին, փայլուն կերպով կատարում է այդ խնդիրը, լոյս ընծայելով երկու տարուց յետոյ իր հետազօտութիւնների արդիւնքը Le Linceul du Christ վերնագրով։

Այս գիրքը գիտնական և կղերական աշխարհներում առաջ բերեց ահագին իրարանցում։

Ինչի՞ մէջ էր Վինեոնի հետազոտութիւնները և ո՞րպիսի հետևանքների է հասցրել նրան։

—

Վինեոնը սկսեց դիտել իր ձեռքին եղած նկարի վրայի մութ բծերը։

Արդարև կար ինչ որ բան, որ յիշեցնում է մարդկային

կերպարանք, բայց սրա հետ միասին նկարի մէջ ստարօտին հէնց այդ բծերի դասաւորութիւնն է։ Արդեօք սա ի՞նչ կարող էր լինել։

Եւ Վինեօնի մէջ մի միտք է փայլում. գուցէ սա նեգատիւ (ժխտական) պատկեր լինի, այսինքն սպիտակը դուրս եկած սև, սևը սպիտակ։

Նա դրանից հանում է պոզիտիւ (դրական) պատկեր եւ ստանում է մարդու բոլորովին մի պարզ նկար, կարմանալի իր նրբութեամբ ու ճշտութեամբ մարդակազմական բոլոր մանրամասնութիւնների կողմից։

Հրա՞շք։ Բայց ի՞նչպէս է առաջացել այս նեգատիւ պատկերը. կեղծիք չէ՞ արդեօք։

Վինեօնը դրականապէս հաստատում է-ո՛չ, սա չէ կարող մարդու ձեռքի գործ լինել և բերում է բոլորովին պարզ ապացոյցներ։

1. ԺԴ. և մանաւանդ ԺԲ. դարում, որին վերագրում են պաստառակալի մասին եղած տեղեկութիւնները, լուսանկարչութեան մասին նոյն իսկ գաղափար չկար, հետևապէս չէր լինի պատկերի նեգատիւի գաղափարը։

2. Եթէ այդ գործը ձեռնարկէր նոյն իսկ մեր ժամանակում մի խոշոր նկարիչ, հազիւ թէ կարողանար գլուխ բերել մի այդպիսի խնդիր։ Պատկերի նեգատիւը արտադրելու ամեն մի փորձում նկարիչը անշուշտ սխալմունքների մէջ կընկնէր։

3. Վերջապէս, մարդակազմական այն ապշեցուցիչ ճշտութիւնը, որ երևան է հանել լուսանկարչութիւնը, վկայուս է որ դա մեքենայական արտադրութիւն է։ ԺԴ. դարի, Նամանաւանդ ԺԲ դարի, նկարիչները ոչ այդ աստիճան կատարելութեամբ իմանում էին մարդակազմութիւնը, ոչ այդ աստիճան ճարտարութեան էին հասցրած արուեստը իրականութեան կողմից։

Դրանից զատ՝ մի շարք մանրամասնութիւններ պարզ և անհերքելի կերպով Վինեօնին բերին այն եզրակացութեան, որ այստեղ խօսք անգամ չէր կարող լինել այդպիսի մի գործ մարդու ձեռքով շինուած լինելու հնարաւորութեան մասին։

Բայց ի՞նչպէս կարող էր ստացուիլ այդպիսի մի նկար։

Վինեօնն սկսեց պաստառակալի մէջ առարկաներ փաթաթել, մտածելով, որ այդ միջոցով թերևս ստացուի ար-

տատպուածի նման մի բան։ Նա ինքն իր վրայ փորձեր կատարեց և արդարև ստացաւ արտատպուածի նմանութեան բայց խիստ անճոռնի, աւելի հասարակ ըծերի նման, այնպէս որ, չէր կարելի համեմատել անգամ Տուրինի պաստառակալի վրայ եղած նկարի հետ։

Եւ նորից Վինեօնի գլխում ծագում է մի փայլուն ենթադրութիւն. արդեօք սա ներգործութեան արդիւնք չէ՞ տարածութեան վրայ. արդեօք ինքը մարմինը չէ՞ ներգործել իրենից արձակած ճառագայթներով կտաւի վրայ, ինչպէս ներգործում է լոյսը զգայուն թիթեղի վրայ։

Հէնց այստեղ նրան օգնութեան է հասնում ֆիզիկոս Կոյլսոնը, որ յայտնի է իր գիտնական աշխատութիւններով լուսանկարչութեան վերաբերմամբ։

Նա վաղուց նկատել էր, որ մետաղեայ քանի մի փոշի ընդունակ են տարածութեամբ ներգործելու զգայուն թիթեղի վրայ։ Ինչպէս օրինակ ցինկը ներգործում է արծաթի աղի վրայ։

Վինեօն և Կոյլսօն միասին փորձեր են անում։ Նրանք վերցնում են Քրիստոսի գլխի գիպսից նկարը, ծածկում են ցինկի փոշիով և դնում են Լիմիերի զգայուն թիթեղի վրայ մի մութ արկղի մէջ։ Երկու օրից յետոյ դուրս հանուած և յայտնի կացուցուած թիթեղը տալիս է Քրիստոսի գլխի փառաւոր նեգատիւը։ Թիթեղին մօտ դիպած մասերը տուել էին սուր արտատպումներ, աւելի հեռու եղածները՝ թոյլ։ Դրանից յետոյ ստացուած պոզիտիւը տուել է Քրիստոսի գլխի բոլորովին պարզ պատկերը։

Բայց սրանից ի՞նչ է դուրս գալիս։ Քրիստոսի մարմինը չէր կարող արծաթի աղերի մէջ թրջուած լինել։

Բայց չկա՞ն արդեօք քիմիապէս ներգործող եւ անմիջապէս մարմնից դուրս եկող ուրիշ ազդեցութիւններ եւ պաստառակալը արդեօք այդպիսի ներգործութիւն հակազդող որ եւ իցէ հիւթ չէ՞ր պարունակում։

Վինեօնը դիմեց Աւետարանին, սրբազան աւանդութիւններին և ամեն տեղ գտաւ ցուցմունք, որ պաստառակալը խընկոտ ու հալուէոտ էր եղել։

Կոյլսոնի հետ Վինեօնը խնկի և հալուէի վրայ փորձեր է կատարում և շուտով գտնում է, որ վերջինը՝ շատ լաւ հակազդում է։

Հալուէի մէջ պարունակում են երկու հիմունք՝-ալօին և

ալօէտին—որոնցից ալօէտինը արագ թթւում է բուսաղերի (շոռ) ներգործութեան տակ կազմելով մութ գանգուած։

Այս հիման վրայ նրանք սկսում են կատարել իրենց փորձերը։ Սկզբից առնում են մի կտոր կտաւ իւղոտ-հալուէոտ են անում և ներգործում են նրա վրայ անուշադրի շոգիով։ Կտաւը մրգ-ւում է, պահելով իր բոլոր յատկութիւնները՝ փափկութիւնը և կակղութիւնը առանց վնասելու գործուածքը։

Կոյլսոնը և Վինեօնը բարդում են փորձը։ Նրանք վերցնում են գիպսից (գաձ) շինուած մի ձեռք, ածում եմ անուշադրի շաղաղ, յետոյ հագցնում են երկայն շվեդական ձեռնոց, փաթաթում են ամբողջովին կտաւի մէջ և այս կերպով թաթախում են կտաւի շաղախի մէջ։ Հետևանքը՝ կտաւի վրայ ստացւում է ձեռքի փառաւոր նեզատիւ նկարը։

Անուշադրի շոգիները անցնելով ձեռնոցի կաշու միջով, ներգործում են հալուէի մէջ թրջուած կտաւի վրայ և թողնում են ձեռքի կաշուէ մասի արտատպութիւնը կտաւից։

Ամենագժուար քայլն արուած էր։

Այժմ պէտք էր վճռել արդեօք մարդկային մարմինը (կամ նրա նշխարները) թէկուզ յայտնի պայմաններում արձակո՞ւմ են իրենից անուշադրային շոգիներ։

Այս խնդիրն արդէն վճռած է բժշկութիւնը։

Հիւանդ մարդու մարմինը ընդունակ է արտադրելու ահագին քանակութեամբ հիւանդոտ քրտինք, որի մէջ կայ անուշադիր պարունակող մէզմիտ։

Մահուան քրտինքի մէջ մէզմիտի քանակութիւնը լինում է շատ մեծ և աւելանում է՝ համապատասխան մեռնողի քաշած տանջանքներին։

Ամենքին յայտնի մահուան մածուցիկ քրտինքը պարունակում է մէզմիտի այնպիսի քանակութիւն, որ երբեմն բիւրեղանում է մարմնի մակերևոյթի վրայ։

Ուրեմն պարզ է որ մածուցիկ քրտինքով ծածկուած մեռնողի դիակը ընդունակ է արտաթորելու անուշադրային շոգիներ, որոնք ներգործելով հալուէոտ գործուածին՝ հակազդեցութիւն կգործեն հալուէի խառնուրդի վրայ։

Այստեղից եզրակացութիւն. Տուրինի պաստառակալը անկասկած պատած է եղել ցաւ կրած մարդու մի դիակ։

Ծագում է մի նոր խնդիր. նրա մէջ փաթաթուած է եղել Քրիստոսի՞ թէ մի ուրիշի մարմինը։

Վինեոնը սրան պատասխանում է դրական կերպով. Քրիստոսի եւ ոչ ոք ուրիշի:

Լուսանկարչութիւնը ոչ մի կասկած չէ թողնում այս բանի մէջ: Քրիստոսի մահուանից առաջ քաշած բոլոր տանջանքների հետքերը դրոշմուած են այս պատկերի վրայ ապշեցուցիչ մանրամասնութեամբ և ճշտութեամբ:

Գլխի շուրջը, մազերի մէջ և ճակատի վրայ կան մի շարք բծեր-ակներև հետքեր փշեայ պսակի: Քրիստոսի դիրքը բոլորովին մեռելային է. կրում է վրան Կայիափայի բակում կոպիտ զինուորների տուած հարուածների հետքերը: Այդ ոսկրներն ու թշերը ուռած են, ուռոյցքը խանգարում է քթի ուղղութիւնը. մի աչքը ծածկուած է ուռած կոպի տակ, միւսը կիսաբաց է. կրծքի ձախ կողմում-ցածում սևին է տալի մի բիծանտարակոյս գեղարդով խոցուածի հետք է այն, ձախ ձեռքը (աջը չէ երևում) և ոտքերի գարշապարները վէրքեր ունին-մեխերի տեղերն են:

Այս ամենի հետ կայ ոչ օքին յայտնի մի մանրամասնութիւն:

Դատելով ձեռքի վրայի եղած վէրքից՝ Քրիստոսը զամուած էր եղել խաչին, ոչ թէ ափերի, այդ ձեռքերի դաստակների միջով:

Սա բացատրւում է պարզ կերպով: Մարմնի ծանրութիւնից ափերը կպատառոտուէին, այն ինչ դաստակների միջով մեխուած մարմինը չի կարող պատառոտել դաստակը:

Այնուհետև լուսանկարը տալիս է ամբողջ մարմնի վրայ եղած մուրթ բծերի առանձնատեսակ գծերի շարք, որ դառն ծաղկանքի-մտրակահարութեան պարզ հետքերն են:

Գծերն ունին ծայրերը պարզ փոսերով ցիրուցան անցած փնջերի տեսք:

Յայտնի է, որ հռոմէական մտրակը բաղկացած էր մետաղեայ գնդակներով վերջացող կաշեայ շերտերից:

Ի վերջոյ լուսանկարի վրայ երևում են սրունքների մսի ջարդոտուած ոտները: Մի խօսքով կան մեր Աստուածային վարդապետի այնքան մանրամասնօրէն նկարագրուած տանջանքների բոլոր հետքերը:

Ֆիզիքօ-քիմիական զննութիւնը քսան դարուց յետոյ հաստատեց աշխարհիս ամենամեծ անցքի բոլոր վկաների ցուցմունքները:

Արդեօք սա գիտութեան յաղթանակը չէ կամ նոյն իսկ մեր, անհաւատների առաջ մեծ ճշմարտութիւնը հաւատացող Աստուածային Նախախնամութիւնը չէ՞։

Այս ամենը չէ՛ ենթարկւում կասկածի, երբ փաստ է հանդիսանում, որ պաստառակալը հալուէոտ հալակի խառնուրդի մէջ թրջուած է եղել և որ Յիսուս Քրիստոսի մարմինը ծածկուած է եղել մահուան մաշող քրտնքով։ Աւետարանից յայտնի է, որ Քրիստոսի մարմինը չլուացին, այլ ուղղակի փաթաթեցին զմռոտ ու հալուէոտ կտաւով և դրին գերեզմանի մէջ։

Այս ամենն այսպէս. բայց ահա ծագում է մի նոր հարց. ինչո՞ւ չէր կարող այդ կտաւի մէջ փաթաթուած լինել մի այլ ոք նոյնպիսի տանջանքներ քաշած, նոյնպիսի քրտնքով ծածկուած։ Հնում սովորութիւն է եղել պաստառակալը թրջել հալուէի խառնուրդով։

Ճշմարիտ է. բայց սակայն մինչև այժմ միայն մի պաստառակալ է գտնուել վրան նկարի դրոշմով։

Եւ Վինեօնը պատճառը բացատրում է, միաժամանակ ջնջելով հակառակորդների թերահաւատ հակաճառութիւնները։

Ժամանակակից լուսանկարչութեան մէջ յաջող նկար ստացւում է միայն այն դէպքում, երբ լոյսի ներգործութիւնը թիթեղի վրայ տևել է յայտնի ժամանակամիջոց։

Պակաս ժամանակ պահուած նկարը տալիս է պղտոր պատկեր, շատ պահուածը՝ կարող է բոլոր հետքերը ոչնչացնել։

Այս յայտնի է ամենքին։

Ներկայ դէպքում նոյնն է առաջանում։

Փորձերի մի շարքով Վինեօնը համոզուեց, որ հալուէոտ կտաւի վրայ անուշադրի շոգիների ազդեցութեամբ ամենալաւ նկարը ստացւում է երկու օր անցնելուց յետոյ եւ բոլորովին փչանում, ոչնչացնում է երեք շորս օրուայ ազդեցութիւնից յետոյ։

Սրանից աւելի ապացուցող ի՞նչ կարող է լինել։

Երրորդ օրը ս. Զատկին պաստառակալը ազատուած է եղել Յարուցեալի մարմնից։

Եւ այսպէս, գիտնական անհերքելի հետազօտութեամբ Վինեօնը ապացուցեց, որ քրիստոնեայ ամբողջ աշխարհի համար Տուրինի պաստառակալը մեծ և անտարակուսելի մասունք է։

Հակաճառութիւնների միջոցում, Փարիզի գիտութեանց

ՀեմարանԻ մէջ, Վինեոնը ահագին ժամանակ գործադրեց կեղծիք լինելու հնարաւորութեան մասին ենթադրութիւնները հերքելու համար։ Եւ արդարև կտաւի վրայի նկարն այդպէս կեղծելու համար նկարիչը պիտի գիտենար բացի նկարչութիւնից ու տեխնիկայից, մարդակազմութիւն, բնախօսութիւն, պիտի լինէր կենսաբան, յանդուգն բէալիստ, և վերջապէս պիտի համարձակուէր աշխարհի մեղքերի համար մեծ Նահատակի մարմինը նկարել մերկ և ծածկել սպիներով ու խոցերով։

Ակնյայտնի է, որ այս ամենը ենթադրել դժուար՝ աւելի ուղիղը՝ անկարելի է։

Այսպէս է Վինեոնի—գիտնական հետազօտութիւնների արդիւնքները, որ ահագին դղրդոց է հանել Ֆրանսիայի մէջ։

Մի քանիսը հետազօտելու բուն փաստը համարում են մի տեսակ յանցանք, բայց մեծամասնութիւնը ապշած է, թէ այս գիտնական հետազօտութեան մէջ ինչպէս ներդաշնակօրէն միացած են հաւատը և բանականութիւնը ճիշդ գիտութեան բանաստեղծական աւանդութեան հետ։

Թարգմ. ՀՐԱՆՑ ՄԵԼԵԱՆ

ՄԵՐ ՈՒԺԻՑ ՎԵՐ [1])

Դրամա երկու գործողութեամբ

Բէօրնստէյրնէ Բեօրնսօնի

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Մի փոքրիկ սենեակ, գերաններից չինուած պատերով. Բեմի խորքում դուռ, որ միշտ բաց է և տանում է դէպի փոքրիկ նախագաւիթը, որտեղ մի անկիւնից երևում է մերկ ժայռերով շրջապատուած բնութեան մի տեսարան: Ձախ կողմը մի մեծ պատուհան. աջ կողմը՝ դուռ: Դէպի նախագաւիթը տանող դրան վրայ կախուած է ոսկէզօծ խաչ, խաչեալ Քրիստոսով՝ ապակու տակ: Բաւականին դէպի ձախ՝ մի բազմոց, առաջը սեղան, որի վրայ դարսած են մի քանի գրքեր: Պատերի մօտ շարուած են աթոռներ:

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻԼ

Էլիասը շտապով և անհանգիստ նախագաւթից ներս է մտնում. հագին կտաւէ շապիկ և թեթև ոտնամաններ: Սովորաբար շապկանց և առանց գլխարկի: Նա լուռ կանգնած է, ապա մօտենում է պատուհանին և ականջ դնում: Հեռուից, բայց պարզ լսւում է տղամարդկանց ձայն, որոնք եկեղեցական երգ են երգում: Էլիասը շատ յուզուած է:

Ռահիլը յեղարած աջ դռնից կամաց ներս է մտնում և նորից ծածկում դուռը: Նրբայրը նորան նշան է անում, որ որքան կարելի է հանդարտ կանգնի և լսի:

Ռահիլ. (*Նոյնպէս յուզուած. կամաց ասում է*). Թող մայրիկի սենեակի դուռը բանամ:

---

[1]) Տես «Լումայ» № 3.

Էլիաս. Մի՞թէ մայրիկն արդէն զարթել է։

Ռահիլ. Ո՛չ, բայց նա ականջ է դնում հայրիկին. (*Ռահիլն աջ կողմից դուրս է գնում, կրկին հանդարտ ներս մտնում, դուռը յետեւից բաց թողնելով եւ յետոյ կամաց ասում*). Նա ծիծաղում էր։

Էլիաս. (*նոյնպէս կամաց*). Ա՜խ Ռահիլ։

Ռահիլ. (*յուզւում է*) Էլիաս, — մի խօսիր, — տանել չեմ կարող։

Էլիաս. Ռահիլ, մի դուռս նայիր—դորանից գեղեցիկ բան կարող է լինել։ Հարիւրաւոր մարդիկ սուս ու փուս եկեղեցու շուրջն հաւաքուած. իսկ նա ներսում երգում, աղօթում է, առանց տեղեակ լինելու, որ դրսից մէկը ականջ է դնում։ Թէպէտ լուսամուտը բաց է, բայց նա չի կարող տեսնել, որովհետեւ պատուհանը շատ բարձր է։ Որպէս զի նորան չխանգարեն, մարդիկ մեռելային լռութիւն են պահում։

Տե՛ս, Ռահիլ, նա խօսում էր աղօթքէ շղթայի մասին. այս բոլոր մարդիկ որ եկեղեցին շրջապատեն—աղօթքէ շղթան հենց այդ է։

Ռահիլ. Այո՛. (*երկուսն էլ ականջ են դնում երգին, բայց երգը շուտով դադարում է*). Այսօր նա յաճախ է երգում։

Էլիաս. Դռները փակիր, ես քեզ շատ բան ունիմ պատմելու։ Արդէն երկու անգամ այստեղ եմ եղել և քեզ էի փնտրում։

Ռահիլ. (*Կամաց դուրս է գնում աջ կողմից, նորից վերադառնում եւ ետեւից դուռը ծածկում. յետոյ բարձր ձայնով ասում*). Այսօր նորից շատ մարդիկ են եկել ճաշից յետոյ։

Էլիաս. Եւ դեռ շարունակ գալիս են—հեռու մղոնաւոր տեղերից. նոցա բոլորին դու չես կարող տեսնել. որովհետեւ մեծ մասը հեռու ծառերի տակ են գտնւում և այնտեղ իրանց ժողովրդական քարոզչին են լսում։ Նոքա այնտեղ հայրիկին չեն խանգարիլ։ Գնում-գալիս են ծառերից դէպի եկեղեցին և ծառից ծառ։—Բայց հապա նայիր այնտեղ՝ ծովի ափին։

Ռահիլ. Այդ ինչ է. ափը մարդկանցով բոլորովին սեւացել է. այդ ինչ է նշանակում։

Էլիաս. Քարոզչական նաւ է եկել։

Ռահիլ. Քարոզչական նաւ։

Էլիաս. Մթթէ չգիտես, որ հեռու արեւելքում ապրողները նաւ են վարձել եկել, որ քաղաքում տեղի ունենալիք քարոզչական ժողովին ներկայ լինեն։ Այժմ նաւը Ֆիորդումն է։

Ռահիլ. Այստեղ։

Էլիաս. Այո, այստեղ։

Ռահիլ. Բայց ինչու՞ այստեղ են եկել։

Էլիաս. Որպէս զի հրաշքը տեսնեն։ Երբ մեր ներկայացուցիչները՝ պաստօր Կրոյէրն և մի ուրիշը—ափից նոցա համախմբուած նաւն էին հասել...

Ռահել. Ցետոյ։

Էլիաս. Եւ տեղեկացրել էին, ինչ որ երէկ այստեղ տեղի ունեցաւ, մանաւանդ այն, որ հայրիկն այդ ժամանակ մենակ է եղել եկեղեցում և աղօթելիս...

Ռահիլ. Հիմա հասկանում եմ։

Էլիաս. Այն ժամանակ նոցանից և ոչ մէկը չէ կամեցել ճանապարհը շարունակել, այլ ուղղակի ցանկացել են այստեղ գալ։ Եպիսկոպոսն և պաստօրները խօսք էին տուել, որ յետոյ կգան, բայց նոքա լսել անգամ չեն կամեցել. այլ ուղղակի այստեղ գալ էին կամեցել։ Եւ եպիսկոպոսն ու պաստօրները ստիպուած զիջել էին։ այժմ արդէն այստեղ են։

Ռահիլ. Հոգևորականնե՞րն էլ։

Էլիաս. Ի հարկէ. եպիսկոպոսը և իւր պաստօրները։

Ռահիլ. Նոքա մեր տուն չե՞ն գալ։ Լաւ կլինէր որ մի այլ շոր հագնէիր։

Էլիաս. Բայց այլ շորերի մէջ չեմ կարող դիմանալ։

Ռահիլ. Ձե՞ս կարող դիմանալ։

Էլիաս. Նոքա ինձ այրում են. և բացի դորանից ինձ տիրում է մի այնպիսի զգացում, կարծես թէ օդը պէտք է թրուչեմ։ Խօսքերով չեմ կարող նկարագրել քեզ այդ։

Ռահիլ. Բայց, Էլիաս։

Էլիաս. Ահա նա գնում է այնտեղ։

Ռահիլ. Ո՞վ, ում մասին ես ասում։

Էլիաս. Տես, մթթէ նա չէ. նա ինքն է։ Նորան այս առաւօտ հիւանդ բերին այստեղ. ախ, ինչպէս հիւանդ և այժմ իւր ոտքով է գնում, տեսնում ես, ա՛յ այնտեղ։

Այսօր, երբ հայրիկն առաջին անգամ երգել սկսեց, ոչ ոք չէր սպասում, որ երգելու է. և այս այնպէս մեր սրտով էր, որ սկսեցինք լաց լինել։ Այդ ժամանակ հիւանդն առանց

ուրիշի օգնութեան կանգնեց, և մենք չնկատեցինք, մինչև որ նա մեր մէջ չրջել սկսեց։

Մայրիկն էլ այդպէս ոտքի է կանգնելու, Ռահիլ. ես արդէն աչքիս առաջ նորան տեսնում եմ։

Ռահիլ. Նա՛, վեր կենա՛յ. թէպէտ ամեն րոպէ սպասում եմ դորան, բայց սարսափից դողում եմ։

Էլիաս, դու նայում ես ինձ։

Էլիաս. Այո՛, շատ անգամ, երբ դու կամ ուրիշները խոսում էք, ինձ թւում է թէ մի անբաղդութիւն է տեղի ունենում։

Ռահիլ։ Ինչո՞ւ, Էլիաս։

Էլիաս. Երբեմն էլ—ինչպէս հենց այժմ—լսում եմ միայն հնչիւն, ձայն, բայց միտքը չեմ հասկանում, որովհետև միաժամանակ մի բան եմ լսում, որ չի ասուիլ։

Ռահիլ. Չի ասուի՞լ։

Էլիաս. Յաճախ պատահում է, որ իբր հայրիկն ինձ կանչում է—ուղղակի անունս է տալիս, ինչպէս երեկ առաւօտեան նա դիտմամբ է այս անունը ինձ տուել, որ մի տեսակ հընչում է և մեղադրում ինձ— ախ և իւր ձայնով. . . ։

Լինում են ժամանակներ, երբ այդ ձայնն ինձ ամեն կողմից հետևում է և մեղադրում. երբեմն էլ զգում եմ ինձ աւելի մեծ վտանգի մէջ ձգելու մի ձգտում. թէպէտ գիտեմ, որ այդ վտանգից անվնաս եմ դուրս գալու։ Չէ, մի՛ վախենար, այդպիսի բան չկայ։

Ռահիլ. Էլիաս, արի իրար հետ ներս գնանք մայրիկի մօտ նստենք, որտեղ խաղաղութիւն է տիրում։

Էլիաս. Չեմ կարող—։ Ռահի՛լ, պատասխանիր ինձ Աստուծոյ առաջ. աւաջ բեր քո զոհած կասկածները և պատասխանիր ինձ. արդեօ՞ք հրաչք չէր, ինչ որ մենք տեսանք։

Ռահիլ. Ա՜խ Աստուած իմ, Էլիաս—ինչո՞ւ միշտ նոյնն ես կրկնում։

Էլիաս. Բայց մի՞թէ սարսափելի չէ, որ միակ կասկածողները հենց նորա որդիքը պէտք է լինեն։

Ռահիլ. Էլիաս, բաւական է, խնդրում եմ։

Էլիաս. Ասա ինձ միայն, ինչ որ իսկապէս հաւատում ս. քարէ կոյտերի այդ հեղեղները գիտես որ չի՞ կարելի որպէս հասարակ դիպուած համարել. ճիշտ չեմ ասում։ Նոյնպէս և մայրիկի քնելը—հենց այն ժամանակ, երբ նա զանգատարել սկը-

սեց չնայելով այն աղաղակներին—քնած էր մինչև որ նա աղօթում էր։ Միթէ այս հրաշք չէ. և ինչու միւս բաներն էլ հրաշք չը պէտք է համարել. այն էլ մեծ հրաշք։

Ռահիլ. Էլիա՛ս, ես համարեա հաւատում եմ։

Էլիաս. Հաւատում ե՞ս։

Ռահիլ. Բայց և այնպէս բաւականին վախում։

Էլիաս. Վախենում, երբ դա հրաշք է։ Ուրեմն չես հաւատում, որ հրաշք է։

Ռահիլ. Այո՛։

Էլիաս. Չէ՞ որ դա որպէս հասարակ մագնիսական բժշկող կամ լոկ անձնական ոյժ չի՞ կարող լինել։ Ո՛չ, աւելին է. միթէ հրաշք չէ՞։ Զգում ե՞ս այդ։

Ռահիլ. Ես չեմ կարող նորից յիշել այն։ Որպէս զի հանգիստ լինեմ, գնում եմ մայրիկի մօտ. նորա անարատութիւնն և ազնւութիւնը լցնում է ամբողջ սենեակը և այդ տեսակ խնդիրները ցիր ու ցան անում։

Այժմ խնդիրն այդ չէ, այլ ի՞նչ որ մի ուրիշ բան։

Էլիաս. Ուրիշ բա՞ն։

Ռահիլ. Այո՛, ինչ կլինի եթէ նա վեր է կացել, չէ՞ որ դորանով բանը չի վերջանալ։ Վերջապէս...

Էլիաս. Վերջապէս ի՞նչ...

Ռահիլ. Ա՛յն, որ այստեղ մայրիկի կեանքի խնդիրն է (*լաց է լինում*)։

Էլիաս. Ռահի՛լ, Աստուած իմ։

Ռահիլ. Մայրիկն այլ ևս ոյժ չունի դիմանալու. իսկ հայրիկն առանց տատանման պէտք է շարունակէ իւր դործը մանաւանդ այժմ։

Էլիաս. Ի՞նչպէս։

Ռահիլ. Ինչպէս ինքը կկամենայ։

Էլիաս. Եթէ այդ իսկապէս հրաշք է, ինչու պէտք է վախենալ, Ռահիլ։

Ռահիլ. Ես չեմ կարողանում նախատեսել այն հետևանքը, որ տեղի կունենայ հայրիկի, մայրիկի և մեր բոլորիս վերաբերմամբ։

Ա՜խ, դու ինձ բոլորովին չես հասկանում։

Էլիաս. Ո՛չ։

Ռահիլ. Ինձ թւում է, որ միևնոյն է ինչպէս և լինի սա մեզ ոչնչացնում է, մեզ գլխավեր է անում։

Էլիաս. Հրաշքը։

Ռահիլ. Ի հարկէ. սա չնորհ չէ. այլ մի անտանելի բան։ Ա՜խ Էլիաս։ (*Ռահիլը նորան դէպի սենեակի խորքն է տանում*)։

Էլիաս. Ի՞նչ կայ։

Ռահիլ. Այնտեղ պատուհանի մօտ մի մարդ է կանգնած և ուղղակի ներս է նայում— մի տարօրինակ մարդ— խիստ գունատուած։

Էլիաս. Վերնագգեստի կոճակները վերեից մինչև ներքև ձգած։

Ռահիլ. Այո. (*կամաց ճիչ արձակելով*) նա արդէն սենեկումն է. (*Ռահիլը յետ յետ է գնում, կարծես թէ մի երեւոյթից վախենում է եւ իսկոյն մօր սենեակը մտնում*)։

Էլիաս. Սենեկումն է, այստեղ. (*մէկ անծանօթ գալիս է նախագաւթի ծախ կողմից, ոտքը շէմքին դնում, հանդարտ կանգնում եւ շուրջը նայում*)։

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼ

Էլիաս. (*Նայելով անծանօթին*). Ահա և նա։

Անծանօթ (*Բրատտ*). Թոյլ կտաք։

Էլիաս. Ո՞վ էք դուք։

Անծանօթ. Մի՞թէ ձեզ համար միևնոյն չէ։

Էլիաս. Ես ձեզ դեռ երեկ տեսել եմ այստեղ։

Անծանօթ. Կարող է պատահել։ Ես սարերումն եմ եկել այստեղ։

Էլիաս. Սարերո՞վ։

Անծանօթ. Ուղղակի վերևն էի կանգնած, երբ հեղեղը ցած էր թափւում։

Էլիաս. Ճի՞չտ։

Անծանօթ. Եւ լսում էի զանգակի ձայնը։ Եւ այսօր էլ տեսայ այն հիւանդին, որ ձեր հօր աղօթքի ժամանակ ոտքի կանգնեց։ Այժմ ուզում եմ իմանալ, թէ այնտեղ է ձեր մայրը քնած։

Էլիաս. Այո, բայց ոչ առաջին, այլ միւս սենեակում։

Անծանօթ. Հիմա, երբ վեր կենայ—կգայ այստեղ—այստեղով կանցնի կերթայ եկեղեցի ուր ձեր հայրն է—ճիշտ չէ՞—նա կգայ չէ—այստեղով կանցնի, չէ՞։

Էլիաս. Այո՛, ինքներդ էք ասում։

Անծանօթ. Այժմ ձեզ հարցնում եմ, ոչ, խնդրում եմ—կհամարձակու�եմ այստեղ մնալ—նորան սպասել—տեսնել։ Ես ջերմ ցանկութիւն ունիմ այդ բանի, որին երկար դիմադրել անկարող եմ։ Ես ներս չեմ գնալ մինչև կզգամ, որ պէտք է ներս գնամ։ Եւ այստեղ էլ ճանապարհի վերայ չեմ նստիլ։ Բայց երբ ըզգում եմ անդիմադրելի տենչ ներս գնալու և այնտեղ սպասելու ու տեսնելու՝ կհամարձակուեմ։

Էլիաս. Այո՛։

Անծանօթ. Շնորհակալ եմ—մէկ էլ ուզում էի ասել, որ այս օրն իմ կեանքի վճռական օրն է. *(աջ կողմից դուրս է գնում դէպի նախագաւիթը)*։

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ

Էլիաս. Այսօր իմ կեանքի վճռական օրն է։ *(Պաստօր Կրոյէրը տերրասից գալով, աջ դռնից ներս է մտնում)* Կրոյէր, տեսար այն մարդուն, այնտեղ աջ կողմում։

Կրոյէր. Այո՛, ո՞վ էր նա։

Էլիաս. Չեմ ճանաչում։

Կրոյէր. Ո՛չ,

Էլիաս. Ցամենայն դէպս մի տարօրինակ մարդ։—Այս օրն իմ բաղդի վճռական օրն է— Աստուած իմ այդ խօսքերն իմ սրտից էր։

Կրոյէր. Ես ևս այդ էի սպասում, Էլիաս։ Այսօրուան օրը քեզ համար մեծ օր է լինելու։ Ո՞վ կարող է հակառակը պընդել այն բոլորից յետոյ, ինչ որ այստեղ կատարուում է։ Հարիւրաւոր ապօթողներ եկեղեցին չրջապատել են. իսկ նա ներսում՝ առանց տեղեակ լինելու այդ բանին. սորանից գեղեցիկ բան չեմ կարող երևակայել։

Էլիաս. Ճիշտ չէ՞—ես կամենում եմ ամեն մի վախ, ամեն մի կասկած ինձնից հեռացնել։ Այսօրուան օրն ինձ համար վճռական օր է լինելու։ Որպիսի մխիթարիչ խօսք։ Ես սորա համար կռուել, տանջուել եմ, առանց նպատակիս հասնելու հիմա ինձ պիտի *տրուի.* չուտով ինձ խաղաղութիւն կտիրէ։—Կրոյէր, խօսեանք այդ մասին։

Կրոյէր. Ո՛չ, այժմ ոչ։ Ես մի յանձնարարութիւն ունիմ

քեզ հաղորդելու։

Էլիաս. Ի՞նչ, ումնից։

Կրոյէր. Ես քարոզչական նաւովն եմ վերադարձել։

Էլիաս. Այդ գիտեմ։

Կրոյէր. Այժմ եպիսկոպոսն ու պաստօրներն ուզում են իմանալ. արդեօք այս տունը մի երկու ժամով կարող են իրանց տրամադրութեան տակ ունենալ։

Էլիաս. Ինչո՞ւ համար։

Կրոյէր. Ուզում են այստեղ ժողով անել և պարզել իրանց համար այն բոլորը, ինչ որ այստեղ տեղի է ունենում. և մենք մի ուրիշ տեղ չգիտենք, որտեղ մենակ լինել կարող էինք։ — Շատ մի զարմանար, մեր արուեստաւորներիս, մանաւանդ քարոզիչ արուեստաւորներիս վերայ պարտաւորութիւն է դրուած այս բոլորի վերայ աւելի հանգիստ և սառը նայել, քան ուրիշները — հասկանում ես։

Էլիաս. Բայց դա երկար ու բարակ, անյարմար աններդաշնակութիւն կլինէր։

Կրոյէր. Նա կարող է ներդաշնակութեան մէջ լուծուել։ Ո՞վ կարող է հրաշքին դիմադրել։

Էլիաս. Ճիշտ ես ասում։ Բայց այնտեղ ներսում։ Կարծես մենք մէջ ենք մտնում հոր և մոր մէջ։ Որովհետև երբ հայրս նորից սկսի երգել, այն ժամանակ մորս սենեակի դուռը չենք կարող բանալ։

Կրոյէր. Ի՞նչ ես կարծում, քո ծնողները նրանց ինչ կը-պատասխանէին։

Էլիաս. Անպայման դրական։ Ճիշտ ես ասում. այս տունը նոցա է տրուում — ես ինքս կհոգամ —։

Կրոյէր Ե՛ս բոլորը կկարգադրեմ. բայց մորդ սենեակի դռները փակ են. չէ՞։

Էլիաս. Այո։

Կրոյէր. Երբ նոքա արդէն ներսում կլինեն, դռներն ու պատուհանները ես կփակեմ։

Էլիաս. Կարող էք նոյն իսկ փակուել։ Ես ուզում եմ դուրս գնալ, մասնակցել նրանց, որոնք յոյսով, հաւատով սպասում են, որ այսօր մեծ բան պէտք է կատարուի և նոքա ճիշտ որ ի զուր չեն սպասում։ (*Էլիասը գնալով*)։

Կրոյէր. Մենք էլ աղօթենք, Էլիաս։

Էլիաս. Այո, են գոնէ պէտք է փորձեմ (*դուրս է գնում*)։

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ

Կրոյէր. (*Ձախ կողմից զալով*) բարի եղէք. (*առաջ է անցնում եւ պատուհանը փակում: եւ այդ ժամանակ եպիսկոպոսը եւ պաստօրները ներս են մտնում: Կրոյէրը նորից յետ է գնում եւ դուռն էլ փակում*).

Բլանկ. (*Կրոյէրին*). այս տանը ծանօթ էք. չէինք կարող մեզ համար ուտելու բան գտնել։

Եպիսկոպոս. Դիտեմ, որ մենք այստեղ ծիծաղելի դեր ենք խաղում, բայց բանն այն է, որ մենք ծովային հիւանդ էինք։

Բրայ. Եւ մեզ մօտ ուտելու բան չի մնացել:

Եպիսկոպոս. Վերջապէս խաղաղ տեղ հասանք և հենց որ պատրաստւում էին մեզ համար բան եփել ու տապակել...

Բրայ. Հրաչքն եկաւ։

Փալկ. Ես չափից դուրս քաղցած եմ։

Կրոյէր. Հազիւ թէ այստեղ մէկը մեր ուտելու մասին մտածած լինի. բայց դարձեալ գնամ տեսնեմ. (*Դուրս է գնում*)։

Իենզեն. Ես ձևական ինքնախաբէական քաղցածութեան հիւանդ եմ և թէպէտ այդ մասին կարդացել եմ—բայց չէ՞ որ կարդում ես շատ բան, որին չես հաւատում։

Առանձին բաւականութեամբ նայում եմ դաշտի կաքաւներին։

Փալկ. Կաքաւներին։

Իենզէն. Այո, տապակած կաքաւների հոտ եմ առնում։

Բլանկ. Կաքաւների։

Մի քանիսը. Ուրեմն կաքաւներ կստանանք։

Կրոյէր. (*Որ վերադառնում է եւ դեռ դռան մօտից պատասխանում*). Ցաւօք սրտի ոչ։ Ես արդէն խոհանոցում, նոյնպէս և ճաշարանումն էի, բայց դատարկութիւն։ Ոչ մի բան, ոչ մի մարդ։

Բրայ. Ո՞չ մի մարդ։

Փալկ. Բայց իմ փորը վեց-վեց է անում։

Եպիսկոպոս. Ընկերներ, թողնենք ծիծաղացնելու դերը. պէտք է անհրաժեշտին ձեռնարկել։ Խնդրում եմ նստել (*ինքը նստում է բազմոցի վերայ, իսկ միւսներն՝ աթոռների*)։ Որքան կարելի է կարճ և հանդարտ խօսենք, որովհետև այս տանը հիւանդ կայ։ Պէտք է նախօրօք պայմանաւորուենք, թէ մեզ ինչպէս պահենք։

Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ հոգևորականն ամեն մի այսպիսի դէպքում—ըստ օրինաց—պէտքէ իրան անկողմնակալ պահէ. ոչ հակառակի և ոչ էլ համաձայնի, մինչև որ չարժումն այնտեղ հասնի, որ կարողանայ խաղաղ և հանգիստ կարծիք յայտնել:

Այսօրուայ իմ ցանկութիւնն էլ այն էր, որ ափ չիջնէինք, այլ մատով անցնէինք: Բայց ցաւում եմ, որ մեզ այդ չյաջողուեց:

Պաստորները. Մեզ այդ չյաջողուեց, մեզ այդ չյաջողուեց:

Եպիսկոպոս. Այստեղ, որտեղ մարդկանց հաւատի չնորհիւ այսպէս ասած հրաչքը տանն է, նոքա կամենում էին այստեղ գալ և նրանց դորա համար չեմ մեղադրում: Բայց որովհետև մենք նրանց հետ էինք և մինչև անդամ միևնոյն նաւում, այդ պատճառով կկամենային մեր կարծիքներն ևս այս հրաչքի մասին լսել: Ցետոյ, երբ մենք քարոզչական ժողովին գնանք, այնտեղ ևս կցանկանան մեր հայեացքն այդ բանի վերաբերեալ լսել: Բայց ինչ է այդ հայեացքը:

Կրոյէր. Եթէ ինձ թոյլ տրուի ամենահամեստ կերպով կարտայայտեմ. կամ մենք հրաչքին հաւատում ենք և ըստ այնմ վարւում և կամ չենք հաւատում և դարձեալ ըստ այնմ վարւում:

Եպիսկոպոս. Հմ, կայ և մի երրորդ բան, երիտասարդ ընկեր:

Պաստորները (իրար հետ փսփսալով). Կայ մի երրորդ բան: Օ, կայ մի երրորդ բան:

Եպիսկոպոս. Քանի մարդս ծերանում և փորձւում է, այնքան դժուար է իւր համար համոզմունք կազմում— մանաւանդ բնութեան ուժից վեր բաների մասին: Հաղիւ թէ այս դէպքում ժամանակն ու հանգամանքները թոյլ տան մեզ հետազօտութիւն անել: Ընդունենք մի բոպէ, որ մենք տարբեր կարծիքների ենք գալիս. ինչպիսի ընդունելութիւն կգտնէր հրաչքի մասին հոգևորականների այդ իրարանցումը. մանաւանդ այս կասկածաւոր ժամանակին. այն մասին, թէ հեռու մի որև է տեղում, հիւսիսում հրաչք է կատարւում, թէ ոչ:

Ես տեսնում եմ, որ պաշտօնակից ծերունի Բլանկը խօսել է ցանկանում:

Բլանկ. Եթէ ես ձեր սրբազնութեան ճիշտ հասկացայ,

այն ժամանակ կարծեմ մեր գործը չէ հենց սկզբից վճռել— թէ այստեղ հրաչք գոյութիւն ունի թէ ոչ. որովհետև սա բացառապէս Աստուծոյ գործ է։

Եպիսկոպոս. Այո՛, Աստուծոյ գործ է։ Այդ է ճշմարիտ խօսքը։ Շնորհակալ եմ քեզնից, հին ընկեր։

Բլանկ. Ես այն կարծիքին եմ, որ ինչպէս ամեն բան բնութեան մեծ օրէնքներին է ենթարկւում, այնպէս և հրաչքը, թէպէտ մենք այդ օրէնքը չենք տեսնում. ես ընդհանրապէս նոյն հայեացքը ունիմ, ինչպէս պրոֆէսոր Պետերզոնն է ենթադրում։

Ֆալկ. Հենց այն գրքում, որ լոյս չի տեսնում։

Բլանկ. Բայց որ մտածում է մի երկու տարուց յետոյ հրատարակել։

Եթէ այդ այդպէս է, ինչ նշանակութիւն կունենայ հրաչքը ինքնըստինքեան—թէ մենք կարճատեսներս այդ տեսնում ենք թէ ոչ։ Եթէ հասարակութիւնը հաւատում է՝ որ նա այդ տեսնում է, այն ժամանակ մենք նորա հետ Աստուծուն կփառաբանենք։

Եպիսկոպոս. Ուրեմն դու այն կարծիքին ես, որ մենք հրաչքը պէտք է ընդունե՞նք։

Բլանկ. Ոչ ընդունել և ոչ չընդունել։ Մենք միայն ժողովրդի հետ միաբանութեամբ կփառաբանենք Աստծուն. ահա բոլորը։

Եպիսկոպոս. Ո՛չ, իմ հին ընկեր. լոկ փառաբանական երգերով բանը չի վերջանալ։

Պաստորներ. (*Իրար հետ փսփսալով*). Լոկ գովաբանական երգերով բանը չի վերջանալ։

Եպիսկոպոս. Խօսքը պատկանում է պաշտօնակից ընկեր Բրային։

Բրայ. Ես իսկապէս հրաչքը իսկոյն չընդունելու ոչինչ հակառակ բան չեմ տեսնում. մի՞թէ սա մի հազուագիւտ բան է։ Ես ամեն տեղ և միշտ հրաչք եմ տեսնում. իմ ծխի մէջ այնպէս ընտելացել ենք այդ բանին, որ հենց արտաքոյ կարգի բան կլինէր, եթէ այդ չտեսնէինք։

Ֆալկ. Բրայն այնքան բարի չէր լինիլ, եթէ մեզ իւր ծըխում կատարուող հրաչքի մասին պատմէր։

Եպիսկոպոս. Ո՛չ, այդ մեզ ճանապարհից կշեղէր։ Դուք կանգնեցիք, ցանկանում էք խօսել։

Հենզէն. Այո, խնդրում եմ։ Այս դէպքում բոլորը կախուած է այն իրողութիւնից, որի առաջ կանգնած ենք. միթէ սա հրաշք է.—եթէ ոչ հրաշքներ։ Թէ հրաշք գոյութիւն չունի։

Կրոյէր. Անտարակոյս։

Հենզէն. Ամեն մի հրաշք պէտք է հետազօտուի, ստուգուի. բայց դորա համար հարկաւոր են տեխնիկական հետազօտութիւն, արտակարգ բժշկական հեղինակաւոր համարում և հարկաւոր դէպքում վկաների ցուցմունք, որ վերցրած լինի հեղինակաւոր, վստահելի իրաւաբաններից. այդպիսի կանխատեսութիւնից յետոյ միայն հոգեսրականութիւնը կարող է հաստատապէս հոգևոր վճիռ տալ։ Բայց հոգևորականութիւն ասելով, չեմ հասկանում այն, որ մենք այստեղ տեսնում ենք և շրջող քարոզիչներին կամ, այսպէս ասած, հոգևոր կոչման կամ լուսաւորող դասակարգին։ Ես այժմ, ինչպէս և միշտ, հասկանում եմ ամուր, չոր ու ցամաք «ճշմարտութիւն» որչափ պարզ, խտացած և ամուր է։

Ֆալկ. Լսեցէք, լսեցէք։

Հենզէն. Գուցէ և պարզուի, որ ոչ այստեղ և ոչ այլ տեղ հրաշք չի կատարւում ոչ այժմ և ոչ երբէք։ Որովհետև հրաշքը չի գալիս ողջունելով հարիւրաւորներից, գուցէ և հազարաւորներից, որոնք հետաքրքրութեամբ սպասում են։ Ո՛չ, ճշմարիտ հրաշքը գալիս է ճիշտ, ուղիղ, սուս ու փուս և դէպի համեստները, հանդարտները և չոր ու ցամաքները։

Ֆալկ. Բոլորովին իմ սրտից է խօսում։

Կրոյէր. Ձեր թոյլտուութեամբ ուզում եմ մի նկատողութիւն անել։ Այն ժամանակ, երբ ես որպէս հոգևոր հովիւ այստեղ պաշտօն էի՝ վարում, տեսայ, որ շատ անգամ հենց չոր ու ցամաք մարդիկ աւելի հեշտութեամբ են սնահաւատութեան գիրկն ընկնում։

Բլանկ. Բոլորովին իմ փորձած տեսածը—արդարև։

Կրոյէր. Նոքա այնքան անվստահ են, որ շատ անգամ այն, ինչ որ բոլորի համար պարզ է, չեն ընդունում։ Բայց նոցա մի անբացատրելի երկիւղ է տիրում և այնպիսի բաների ազդեցութեան տակ են ընկնում, որ մեզ բոլորովին անծանօթ են։ Ես շատ անգամ մտածել եմ, որ ուժից վերին ձգտելը մարդկանց համար այնպիսի մի ժառանգական պահանջ է դառել, որ եթէ նոքա մի կողմից դիմադրում են...

Բլանկ. Միւս կողմից էլ առաջ գալիս. բոլորովին իմ հայեացքը։

Ֆալկ. Այո, չոր ու ցամաքների մօտ է գնում, թէ պարարտների, այդ թողնենք։ Ես ուզում եմ ուղղակի ձեր կարծիքն իմանալ։ Մի՞թէ բանն այնտեղ է հասել, որ մենք պէտք է հրաժարուենք այն բոլորից, ինչ որ եկեղեցու կանոնաւորութեան և պարզութեան վերաբերեալ ձեռք ենք բերել։ Մի՞թէ նորից պէտք է սկսենք մոլեռանդութեան ետևից ընկնել, ինչպէս օրդինական չղջիկներ։

Բրայ. Ինձ չէ՞ք ակնարկում այդ ասելով (*պաստօրները բարձր ծիծաղում են*)։

Եպիսկոպոս. Սս, սս, չմոռանանք որ ներսը հիւանդ կայ։

Ֆալկ. Հրաչքի պահանջը հաւատի ծառի վերայ առատ հիւթով լցուած այնպիսի մի ելունդ է, ինչպէս և ամբողջ ժողովրդական քարոզչութիւնը—մի անկանոնութիւն, մի հիւանդութիւն, մի արտավիժում (*ներկայ եղողները ծիծաղում են. մի քանիսը հազում էլ են*)։

Եպիսկոպոս. Սս, սս, սս։

Ֆալկ. Հրաչքը որ հոգևորականներից չի ճանաչուած, այսպէս ասած, նախագահութեամբ բարձր հոգևոր իշխանութիւնից չի հաստատուած և օրինականացրած, այդպիսի հրաչքը ինձ համար լոկ դատարկաշրջկութիւն, դատարկապորտութիւն, դուռը կոտրել գողութիւն է։ (*Եպիսկոպոսը եւ պաստօրները կամաց քթի տակ ծիծաղում են, աչքերը դէպի նա ուղղելով*)։

Շատ լաւ է պարզամիտ և բարի լինել։ Ես ևս մի ժամանակ այդպէս եմ եղել։ Բայց որպէս հոգևորական մի մեծ քաղաքում, պէտք է ժամը մէկին յուղարկաւորութեան ժամանակ միւսների հետ տխուր լինես, յետոյ ժամը երեքին հարսանիքին ուրախ զուարթ՝ խնդացողների հետ. ժամը չորսին գուցէ և անմիջապէս դորանից յետոյ մեռնողի անկողնի մօտ և վերջապէս ժամը հնգին պալատում ճաշի լինել, այն ժամանակ իրօք որ կարողանում ես մարդկային դիւրաբեկութիւնը ճանաչել։ Դու սովորում ես աւելի շուտ իրաւագիտութեան սկզբունքներին վստահանալ, քան մարդկանց։

Իսկ որտեղ հրաչքն է երևում, այնտեղ ամեն մի իրաւագիտութեան սկզբունք կրքերի անկարգութիւնների զոհ է դառնում։

Կաթոլիկ եկեղեցին փորձեց, հէնց այդ պատճառով հրաշքից մի իրաւագիտութեան սկզբունք կազմել, բայց դորանով բոլոր հասկացողների առաջ իւր վարկը ձգեց և գոյութիւն ունի միմիայն ընկածների, չահասէրների համար:

Մի անգամ ես գտնուում էի կանանց մի ընկերութեան մէջ, որտեղ բացի ինձնից կային և քսան կին (*ուրախութիւն, հրճուանք*). մէկը նորանից ջղաձգութիւն ստացաւ. իսկոյն և երկրորդը և էլի մի ուրիշը. մի խօսքով թուով 6 հոգի (*սաստիկ զուարթութիւն, զուարճանք*). ես իսկոյն վերցրի ջրամանը, սկզբում այս վեցի վերայ ջուր ածեցի, յետոյ մնացածներից մի քանիսի վերայ. որովհետև այդ բանը տարափոխիկ է. (*սաստիկ ծիծաղում են*):

Եպիսկոպոս. Սս, սս (*ինքն իրան զսպելով. բայց նորից սկսում է, միւսները նոյնպէս։ Նորից իրան զսպելով*) Սս, սս։

Ֆալկ. Ա՛յ այդպէս և կարծում եմ ջուրը դորա համար չատ նպատակայարմար է (*պաստօրները ծիծաղում են, թաշկինակները բերաններին հազում, մի երկուսն ի նշան շնորհակալութեան Ֆալկին ձեռքով նշան են անում*):

Կրոյէր. Մենք Ֆալկին ճանաչում ենք, որպէս մի լաւ մարդ—չնայելով նորա տարօրինակութիւնների։ Բայց կարծում եմ, որ եթէ այրի պառաւ տիրուհին—որ արդէն մօտ 100 տարեկան է—այնտեղ լինէր, Ֆալկը ամենից վերջը նորա գըլխին ջուր կածէր, թէպէտ նա մեր մէջ որպէս մի կենդանի հրաշք ապրում է և իւր հաւատով բոլորին վարակում։ Նոյնպէս և այն երիտասարդ աղջիկը՝ Ագաթիա Ֆլորվոգէնը, որ պառաւին խնամում է։ Հրաշքը, որ նորան կենդանացրեց, ինքս և ինձ հետ չատերը տեսանք։ Եթէ մենք մեր աչքերին և ձեռքերին հաւատայինք, նա մեռած սառած էր։ Զանգն աղօթեց նորա մօտ, ձեռքին առաւ և աղջիկը ոտքի կանգնեց։ Կարծում եմ, որ մի հաւատացող մարդու վկայութեան կհաւատաք։ Նորա երկուսն էլ այժմ այստեղ են։

Շատերը. Այստեղ են։

Կրոյէր. Նորա գուցէ այստեղ են գալիս։ Այո, այստեղ են գալիս. թէպէտ չատ դանդաղութեամբ։ Պառաւն ուզում է տիրուհի Կլարային տեսնել, նորան, որին նոյն իսկ փլուածքի, լաւանների ձայնը չզարթեցրեց։

Նայեցէք ինքներդ այդ պառաւին, խօսեցէք նորա հետ,

ինչպէս և նորան հետևող աջջկայ հետ և դուք այնպիսի պարզ և համոզեցուցիչ պատասխան կստանաք, ինչպէս իրանց տեսքը և կերպարանքն է արտայայտում:

Եւ աւելի շատ բան է ուսուցանում այս մէկը, քան մեր, դոկտորական հետազօտութիւնները:

Ես այս մէկիդ մեղադրելու նպատակով չեմ ասում։— Մինչև իմ այստեղ, որպէս հոգևոր հովիւ գալս, ես էլ այդպէս էի մտածում, ինչպէս դուք: Ոչ՝ ոք այն ժամանակ ինձպէս վիշտ չէ զգացել, որ այդպիսի չնչին վարդապետութիւնների և սահմանափակ մեկնաբանութիւնների դիմաց ենք գտնուում: Մենք առանց հրաչքի անչափ աղքատ ենք և հրաչք խնդրելու արիութիւնից զուրկ: Եւ մեզ այնպէս ենք ձևացնում, իբր թէ կարող ենք արհամարհել և կամ կարիք չենք զգում այդ բանին:

Կարծեմ ձեզանից իւրաքանչիւրին այնքան ճանաչում եմ, որ կարող եմ ասել թէ՝ եթէ դուք համարձակուէիք, կարողանայիք հաւատ ընծայել որ այստեղ հրաչք է կատարուում, այնպիսի մի հրաչք, ինչպիսին Սուրբ գիրքն է ասում «բոլորը, ովքեր այս տեսնում էին, հաւատում էին», ասում եմ ինչքան էլ ձեզանից մէկը թուլասիրտ լինէր, ձեր աւելորդ օրերը կզոհէիք դորան, որպէս զի հրաչքը ուրիշներին քարոզէիք, ծանուցանէիք: (Շարժում մանաւանդ ծերերի մէջ):

Ինչ կմնար քրիստոնէութիւնից, եթէ եկեղեցին այդ հրաչքից զրկուէր:

Էլիաս. (ներս գալով) Ներեցէք ինձ—այստեղ մի պառաւ այրի տիրուհի կայ որ իմ մօրը տեսնել է ուզում.

(*Բոլորը ոտքի են կանգնում, դրսում երեւում է այրի տիրուհին եւ Ազաթիան։ Էլիասը քանում է աջ դուռը եւ ինքն էլ նրանց հետեւում. պաստօրները բռնում են աթոռներն եւ յարգանքով յետ քաշում*):

Այրի տիրուհին. (Շէմքն անցնելուց յետոյ) Թող ինձ, Ազաթիա—ես կամենում եմ մենակ մնալ—միայնակ—որովհետև այնտեղ, որտեղ Տէրն է եղել, սուրբ է: Այստեղից աչքս աչքին է ընկնում—աւելի լաւ է միայնակ մնալ:

(*Պառաւը կանգնում է այնպէս, որ կարող է Կլարայի սենեակի ներսը տեսնել. յետոյ կռանում, խոնարհում, ծեռքերը բազկատարած բարձրացնում, նորից ներս նայում, նորից խոնարհում՝ շուտ գալի եւ յետ գնում*):

Նա սպիտակ էր—փայլուն սպիտակ—այդպէս էլ ընդունում էի—փայլուն սպիտակ և քնած է որպէս մի երեխայ. ես աչքերով հետևեցի—լուսաւորուում էր—ախ ինչպէս լուսաւորուում էր։ Շնորհակալ եմ, որ ինձ մենակ թողիր։

Ազաթիա. Մի՞թէ մենակ էիր։

Այրի տիրուհի. Բոլորովին մենակ. ոչ ոք բացի ինձնից։ Նա սպիտակ է ճառագայթազարդ։ (*Երկուսն էլ դուրս են գնում*)։

Էլիաս. (*Աջից գալով*). Երկու դռներն էլ կրկին փակուած են։ Հիմա էլ ուզում եմ այս դուռը փակել։ (*Դուրս է գնում*)։

(*Պատուհանները դեռ անշարժ կանգնած են*)։

Կրոյէր. Խօսեցէք նորա հետ։

Նպիսկոպոս. Ոչ։

Կրոյէր. Կարծես թէ բոլորի դէմքերին մի տեսակ լոյս էր շարժուում։ Եւ ես կասեմ թէ ինչու։—Մարդիկ, որոնց վերայ հրաչք է ցոլացել, լոյս են արտացոլում։

Հիսուսենք նորից այդ մասին։ (*Հաւաքուում են եւ նորից նստում*)։

Ռենզէն. Վստահանում եմ մի հարց առաջարկել—դարձն ևս ընդունում էք որպէս մի հրաչք, թէ ոչ։

Կրոյէր. Այն՝ ինչ որ մենք համարում ենք դարձի հրաչք, հոգեբանօրէն հետևենք նորան քայլ առ քայլ։ Ուրեմն հրաչք գոյութիւն չունի. միւս կրօնքերումն էլ գոյութիւն ունին դորա նման դէպքեր, ինչպէս և պարզ բարոյական դարձը. թէպէտ դա խաղաղութեան—լռութեան մէջ է կատարուում։ Իսկ քրիստոնէութիւնը, որ հիմնուել է հրաչքի չնորհիւ և ժամանակի ընթացքում կորցնում է իւր հրաչքի ուժը--ուրեմն էլ ինչ հրաչք—ուրեմն լոկ բարոյական հրահանգներ։

Փալկ. Քրիստոնէութեան յատուկը հրաչքը չէ՝ այլ Ցարութեան հաւատալը։

Կրոյէր. Մի՞թէ բոլոր կրօնքերն էլ այդ չունին։ Մի՞թէ բոլոր մարդիկ դորան կրօնական զգացմամբ չեն հաւատում։

Փալկ. Բայց ոչ երեխայի անմեղութեամբ։

Կրոյէր. Շատ ճիշտ է. առանց դորան։

Փալկ. Եւ հէնց այդ պատճառով՝ ոչ ամբողջ անձնուրացութեամբ։

Կրոյէր. Ո՛չ. այդ արդէն ճշմարտութիւն չէ։

Մթթէ հաւատացեալների նահատակութիւնը քրիստոնէութեան հետ աշխարհ եկաւ։ Մթթէ սիրած բանի համար ապրել և մեռնելը, այդ անսահման բաղդաւորութիւնը — մենք նախ քրիստոնէութիւնից սովորեցինք։ Դա երկրիս վերայ կար թէ՝ քրիստոնէութիւնից առաջ և թէ այժմ գոյութիւն ունի մտածողութեան ամեն մի ձևով։

Եպիսկոպոս. Ի՞նչ ես հասկանում քրիստոնէութիւն ասելով։

Կրոյէր. Ինձ համար քրիստոնէութիւնն անվերջ, աւելի քան մի բարոյագիտական հրահանգ է։ Բայց այդպիսին աւելի մանրամասն և նուրբ գտնում ենք և այլ տեղերում, քան Նոր Կտակարանում։ Ինձ համար դա անձնատուր լինելու ոյժից էլ վեր է։

Կամ քրիստոնէութիւնը կեանք է Աստծու մէջ, հեռու երկրից և նորա բոլոր նախասահմանութիւնից, կամ թէ նա գոյութիւն չունի։ Կամ սա առաւել է մի որևէ գաղափարի համար անձնուրացութիւնից, այսինքն մի նոր աշխարհ, նոր հրաշք կամ թէ չկայ քրիստոնէութիւն։ (Ինքն իրան տատանւում է, շարժւում է և թուլացած խոնարհում անզօր)։

Նատ բան պիտի ասէի,—բայց այլ ես չեմ կարող։

Եպիսկոպոս. Իսկոյն. երբ դու այսօր տախտակամած եկար, սիրելի Կրոյէր, ես տեսայ, որ ուժից վեր աշխատած և վշտահար ես։ Բայց այդպէս պատահում է այն բոլորին, որոնք պաստօր Զանդի շաւղովն են ընթանում։

Անծանօթ. (Նախագաւթի դուռը բանում է, առանց նորից ծածկելու և նահանջելով մօտենում) համարձակւում եմ խօսք խնդրել (բոլորը յետ յետ են դառնում և ոտքի կանգնում)։

Եպիսկոպոս. Դու՞ ես, Բրատտ։

Մի քանիսը. Պաստօր Բրատտը։

Միւսները. Մթթէ Բրատտն է։

Եպիսկոպոս. Չէ որ դու մեզ հետ չեկար, ինչպէս է որ այստեղ ես։

Բրատտ. Ես սարերով եկայ։

Եպիսկոպոս. Սարերո՞վ—ուրեմն ոչ քարոզչական ժողովին։

Բրատտ. Ոչ, ես այստեղ էի ուղում գալ։

Եպիսկոպոս. Հասկանում եմ։

Բրատտ. Հրաշքի պատճառով եմ եկել.—երեկ ես գալիս էի, որ ձիւնակոյտ թափուեց, կանգնած էի սարերի վերայ և

տեսայ թէ ինչպէս սարի մի մասը փուլ եկաւ և լսում էի զանգի ձայնը։ Եւ մինչև հիմա այստեղ եմ։ Այսօր էլ ճաշից առաջ տեսայ, թէ ինչպէս մի հիւանդ եկեղեցի էին տանում, ինչպէս նա պատօրի երգելու ժամանակ ոտքի կանգնեց, չնորհակալ եղաւ Աստծուց, փառաբանեց և գնաց։—Թոյլ կըտաք չարունակել։

Եպիսկոպոս. Ի հարկէ։

Բրատտ. Որովհետև ես վշտահար մի մարդ եմ, եղբայրներ, եկել եմ ձեզնից օգնութիւն խնդրելու։

Եպիսկոպոս. Խօսիր, սիրելիս, խօսիր։

Բրատտ. Ինքս ինձ ասում եմ. վերջապէս այստեղ մի հրաշքի առաջ եմ կանգնած։ Այո, բայց միթէ սա հրաշք է։ Որովհետև այս միակ տեղը չէ որ ես փնտրել եմ, որպէս զի այս տեսնեմ, սրան հասնեմ։ Եւրոպայի բոլոր հրաշատեղերից, որտեղ ես եղել եմ, միշտ հիասթափուած եմ վերադարձել։ Հաւատն այստեղ աւելի մեծ է և ակներև. այս մարդը մեծ մարդ է։ Իմ տեսածը գերբնական ուժով կաշկանդեց ինձ։ Բայց նորից կասկածեցի։ Տես, սա ինձ համար մի անէծք է։ Ամբողջ եօթ տարի այդ մեղքն ինձ վրայ եմ կրել, որովհետև որպէս հոգևորական հաւատացեալներին հրաշք եմ խոստացել։ Նոցա խոստացել եմ, որովհետև այդպէս է գրուած, թէպէտ ինքս կասկածել եմ, կասկածել եմ, որովհետև չտեսայ որ գոնէ մի հաւատացողի բաժին լինէր։ Եօթ տարի քարոզել եմ այն, ինչ որ ինքս չեմ հաւատացել։

Եօթ տարուայ ընթացքում, երբ դժուար օրեր էին գալիս (որ յաճախ են գալիս, ինչպէս և անքուն գիշերները) հէնց դորա համար ջերմեռանդ աղօթքիս ժամանակ հարցնում էի. ո՞ւր է հրաշքի ոյժը, զօրութիւնը, որ դու քո հաւատացեալներին խոստացել ես։ (*Լաց է լինում*)։

Եպիսկոպոս. Ճիշտ ես ասում, սիրելիս, դու միշտ այդպէս ես վարուել։

Բրատտ. Կապակցուած խօսքերով մէկը միւսից զօրաւոր նա մեզ ասաց. «հաւատացողին այս ոյժը տրուած է, այո, կարողութիւն աւելի մեծը կատարելու՝ քան մարդու որդին։

Ո՞ւր մնաց այդ։ Միթէ 18 դար անսահման հաւատոյ աշխատանքից յետոյ դեռ այն 'աստիճան հաւատացող չի եղել, որ կարողանար մեր մէջ մի հրաշք կատարել։ Աստծու խոստացածը դեռ չարունակ մնում է չկատարուած, չիրականացած։

Հաւատալու յատկութիւնը չի կարող նուազել, ա. դ զօրութիւնը չի կարող անցած դնացած համարուել։ օհ, ոչ։

Աւելի քան 18 դար հին խոստումը պէտք է շատ բանեբի մէջ, այս հազարաւոր տարիների շատ սերունդների մէջ աճելով՝ բազմապատկած դաստիարակութեամբ ժառանգութեան բաժին եղած լինի։

Եւ միթէ այդ դեռ բաւական մեծ չէ հրաշք տալու համար։ Միթէ բոլոր հաւատացողների փափագը միանալով դարձեալ չի կարող մի ինդիվիդիում առաջ բերել, որ իւր հրաշալի զօրութեամբ բոլոր տեսնողներին հաւատացողներ դարձնէր, ուղիղ այնպէս, ինչպէս Սուրբ Գիրքն է ասում «բոլորը ովքեր այս տեսնում էին, հաւատում էին»։ Ուրեմն մի հրաշք, որ բոլոր նայողներին հաւատացող է դարձնում։ Բայց հազար-հազարաւորներն ուրանում, ընկնում են, որովհետև ինչքան էլ խոստանում են, հրաշք չի երևում։

Մի տղամարդ այժմեան գիտութեամբ, մեր ժամանակի մի ուսեալ կին, գոհ չեն նրանով, ինչ որ սկզբում մի մարդ կամ մի կին առանց այլևայլութեան հաւատում էին։ Ոչ թէ այն պատճառով, որ իրանց հաւատի ոյժը նուազ է, ոչ, նոցա անձնուիրութիւնը պէտք է մի տնսակ աւելի խոր և սրտանց լինի, քանթէ բնական է և իրաւացի և ձեռք բերելն էլ շատ դժուար։ Ով այս ունի, նորան է վիճակուած ամենալաւ բաժինը, ինչ որ երկիրը կարող է մեզ ընծայել։

Մարդկութեան համար միակ բարձր իդէալը կրօնը չէ։ Իսկ եթէ բարձրագոյնն է ցոյց տալիս, մարդ կարող է ապրել և մեռնել այն բոլորի համար, ինչ որ ինքը սիրում է, օրինակ՝ իւր հայրենիքի, ընտանիքի, համոզմունքների համար և այլն։ Բայց քանի որ դա ամենից բարձրն է, որը մարդկային կեանքի բնական սահմանների մէջ գոյութիւն ունի, իսկ դու քո հայեացքը դեռ քիչ էլ բարձրին պիտի ուղղես—այն ժամանակ՝—*դուրս այդ սահմաններից*՝ դէպի հրաշքը։ (Մեծ շարժում պաստօրների մէջ։)

Ֆալկ. (կանգնելով) մի տեղ մի բարկացկոտ խօսք կայ այն սերնդի համար, որ չի ուզում հաւատալ. այն ժամանակ տեղի են ունենում հրաշքներ և նշաններ։

Բրատտ. Եւ գիտէք թէ ինչ է պատասխանում այդ սերունդը «մենք խնդրում ենք միայն նշաններ, որ Աստուած խոստացել է—խոստացել է նրանց, որոնք հաւատում են. միթէ

դուք ձեր մէջ մի հաւատացող չունիք: Ուրեմն ինչ էք ուզում մեզնից». ահա նորա պատասխանը:

Իսկ ցոյց տուէք այդ մարդկանց մի հրաշք, մէկը, որին կասկածանքի ամենասուր գործիքներն անգամ անկարող լինէին անդամահատ անել, որի համար կարելի լինէր ասել «բոլորը, ովքեր այս տեսնում էին՝ հաւատում էին», այն ժամանակ յիրաւի կտեսնէք, որ ոչ թէ հաւատի զօրութիւնն է, որ պակասում է, այլ հրաշքը: (Շարժում հոգևորականների մէջ):

Հարկաւոր չէ, որ խոստումը թեթևամիտ հասկացողներից ներքուստ դրուատուի: Հաւատի վերաբերմամբ կասկածողները, որ կազմում են մեծամասնութիւնն և ուժեղագոյնը, հենց դոքա իրանք ամեն սրամիտ կասկածանքի մէջ են: Մի՞թէ կայ մէկը, որ քաղաքակրթուած աշխարհը ճանաչելով հանդերձ այս չգիտենայ:

Շատերը. Որքան իրաւացի է:

Բրատտ. Եթէ մեր մէջ մի հրաշք երևար, այնպիսի մեծ— որ «բոլորը ովքեր այս տեսնէին հաւատային»...

Նախ և առաջ միլիոնաւորները խուիկ տալով կգային. բոլորը, որոնք կարօտութեան և տենչանքի մէջ են ապրում, օրինակ՝ տարագրեալները, ճնշուածները, տանջուող մաշուողները, մի խօսքով նոքա բոլորը, որոնք արդարութեան են ձգտում:

Կլսեն, որ Աստուծոյ բարիքն, այս խօսքի հին նշանակութեամբ կրկին աշխարհ է եկել—միևնոյն է թէ որտեղ, արտասուքի կամ ուրախութեան վայրերում: Եթէ նոյն իսկ չատերը նրանցից գիտենային որ ճանապարհին մեռնելու են, դարձեալ կգերադասէին այս ճանապարհի վերայ մեռնել, քան մի այլ ճանապարհի վերայ ապրել: Նոքա քաջ գալով կգային. իւրաքանչիւրն իւր գիւղից, խրճթից, բնակավայրից և տեղից. իսկ հիւանդները առաջ: Բոլորը կգային դէպի Աստուծոյ յայտնութիւնը:

Բայց մենակ չեն մնալ Նոքա, որոնք երկրիս վերայ ճշմարտութիւն են փնտրում, բոլորը կհետևեն նրանց, նախ և առաջ նոքա՝ որոնք ճշմարտութեանն աւելի են տենչում. այն է՝ խոր և անկեղծ հնարագէտները, մեծագոյն մտածողները: Նոցա ջերմեռանդութիւնն ամենից փառաւորը կլինի և հաւատն ամենից զօրաւորը: Որովհետև նոցա չէ պակասում դրդում դէպի ճշմարտութիւն և ոչ էլ հաւատալու կարողութիւն. ոչ, միայն հրաշքն է պակասում:

Նոքա բոլորը կամենում են ստուգութիւն և ճշմարտութիւն, ինչ որ աշխարհիս այն մեծ հարցին է վերաբերում։ Նոյն իսկ թեթև վերաբերուողները, որոնք որև է կարևոր կամ անկարևոր բան մի կողմն են հրել, բոլորը առանց բացառութեան, հաւատի վերաբերմամբ փափագում են աւելի քան գիտեն, որովհետև այդպէս են դատիարակուել։ Բայց արդեօք նոցա տրւում է այդ գրաւականը։

Գրաւական, ապահովութիւն այն մասին, որ խոստումը ճշմարիտ է. երբ կտեսնեն այդ, այն ժամանակ կհաւատան և այն բանի՝ ինչ որ չեն տեսնում։

Այսպէս է եղել հենց սկզբից։

Ովքեր իրանց անձնական փորձառութեամբ շատ քչով են գոհանում, վարւում են ինչպէս մահմեդականները, հրէաները և բուդդայականները, որոնք բոլորն էլ իւրեանց անձնական փորձառութեան են ապաւինում։

Ամենից առաջ ահա մի գրաւական, որ այդ անձնական փորձառութիւնը մի ընդհանուր ճշմարտութիւն է. հենց այն՝ ինչ որ պակասում է։

Բայց ես հենց այդ եմ փնտրում, քան թէ խոստացածը։

Տէր իմ Աստուած, ես կանգնած եմ իմ վերջին փորձի առաջ։

Եպիսկոպոս. Բրատտ, Բրատտ։

Բրատտ. Իմ վերջին փորձի առաջ, որովհետև ներքին կուիւն իմ ուժից վեր է բարձրանում։ Ես, որպէս հոգևորական, հրաժեշտ եմ տալիս, հրաժարւում եմ եկեղեցուց, հրաժարւում եմ հաւատից-եթէ, եթէ, եթէ. (*լաց է լինում*)։

Եպիսկոպոս. Սիրելի որդի, դեռ առաջ...

Բրատտ. Ո՛չ, ինձ մի ասէք— խնդրում եմ միայն օգնեցէք ինձ, որ կարողանամ ջերմեռանդ աղօթել։ Որովհետև, եթէ այստեղ հրաչք չկայ, չկայ և ոչ մի տեղ։ Չէ՞ որ այս մարդն առաւել է, քան երկրիս վերայ եղող մեր ապնուագոյնները։ Չկայ, և ոչ ոք չի տեսել սրան հաւասար մի այլ հաւատացող. և ոչ ոք էլ այնպիսի մեծ հաւատ, ինչպէս սա ունի։

Բոլորը. Այո՛, ճիշտ է։

Բրատտ. Միթէ պարզ չէ։ Սա մեծ հարստութեամբ, մեծ կարողութեամբ այստեղ եկաւ. իւր ունեցածը սորան նորան բաժանեց։ Կարիք չկայ թուել այն դէպքերն, երբ սա իւր կեանքը վտանգի էր ենթարկում, որպէս զի ուրիշին օգնու-

թեան հասնի։ Եւ ոչ էլ թուել այն հրաշքները, որ մարդկանց հաւատով կատարել է։ Դոցա ես չէի հաւատում, որովհետև շատ էին։

Պաստորներ. (*Կամաց*) Ինձ հետ ես նոյն է կատարուել

Բրատտ. Բայց գուցէ մենք հակառակը պէտք է մտածենք. այսինքն՝ այստեղ այն է կատարուում, ինչ որ մենք «հաւատալ» ասելով հասկացել ենք։ Այս հաւատն առաջ է գալիս որպէս հրաշք տեսիլքի մէջ։ Նա պէտք է հրաշքի վերայ ներգործի, գուցէ այդպէս պէտք է մտածենք։

Իսկ ինչ որ մենք մտածելու ենք, այդ բանի վերայ չը պէտք է այնպիսի կասկածով նայենք, ինչպէս ցաւօք սրտի ես այժմ արտայայտեցի։ Սորա սէրը, սորա հաւատն ինձ հնազանդեցնում էին. ինքս ինձ մեղադրում եմ և սորանից խորապէս նորոգութիւն խնդրում։

Բոլորը. (Առանց բացառութեան) ես ես. ես ես։

Բրատտ. Մենք չենք ճանաչում մի այլ լաւ մարդ, քան նա է. այլ լի հաւատ, քան նորանը, ոչ մի զօրաւոր՝ քան նա. միթէ հրաշքի մասին դեռ կասկածում ենք։ (*շարժում*)։

Իենզէն. (*շշնչալով*) Նայեցէք դռան վերայի խաչին. սա երեկոյեան արևն է թէ մի ուրիշ բան։

Բրատտ. Զգիտեմ։ Բայց վստահ եղէք, որ եթէ հրաշք կատարուի՝ հազարաւորներն այստեղ են. թէկուզ մենք չը տեսնենք էլ։

Եթէ կարողանայինք լոկ ներկայ գտնուել—այո, մասնակցել. մտածեցէք թէ ինչ ասել է այդ. մի զօրաւոր հանդիսատեսութիւն որ «ամենքը, ովքեր տեսնում էին այս՝ հաւատում էին»։

Եւ միթէ մենք ևս իսկապէս կը համարձակուենք վկայ լինել... դու, դու. ես, չափազանց է, չի կարող լինել...

Բայց կարելի է։—Չէ՞ որ մեզ նման շատ ժամանակակիցներ կան, եղբայրներ—այո, որոնք նոյնքան թոյլ, թերահաւատ և սիրոյ աղքատ են, որչափ և մենք։

Բոլորը. Այո, այո...

Բրատտ. Բայց որոնք հաւասար չեն պարգևատրած. միայն մենք անարժաններս ենք դորա համար կոչուած (*խորին յուզմունք, շարժում*)։ Եւ երբ նայում եմ այս նեղ ծովային տեսարանին, որտեղ բացի ուրուրների ձայնից ուրիշ բան չէ լսում, ինձ թւում է, թէ Աստծու թագաւորութիւնը մի

հարուստ երկրում, մեծ ճանապարհի վերայ արեգակնային տեղում սկիզբն առաւ—մտածում եմ՝ ինչ վկայութիւն կլինէր, եթէ այդ թագաւորութիւնը նորից երևար այս հեռու ընկած, աղքատ, մշտական ձիւնապատ երկրում։

Ֆալկ. Այո, այո։

Բրատտ. Ինձ թւում է, որ այս բոլորը կմիաւորուին և հրաչք տեղի կունենայ։ (*Բոլորը ոտքի են կանգնում*)։

Եպիսկոպոս. Օ՜հ, եթէ ծերիս վիճակուած լինէր այս տեսնել։

Բլանկ. Այո, եթէ միայն մեծ հաւատին կարող լինէիք մասնակից լինել։ ոչ թէ այն պատճառով, որ մենք դորան արժանի ենք, այլ որ կարօտ ենք դորան։ (*Ընկնում է ծնկների վրայ. նոյնպէս եւ միւսները*)։

Բրատտ. Որովհետև ամբողջ սերունդը դորան կարօտ է և քանի գնում՝ այնքան աւելի։ Որովհետև այս խոստացուել է, պիտի կատարուի՝ եթէ միայն գոյութիւն ունի. (*չոքում է*)։ Նորա հաւատի համեմատ՝ այս կլինի։ Նորա հաւատը զօրաւոր հաւատն է երկրիս վերայ և հաւատն այս կարող է կատարել. նա այս կարող է կատարել։

Բոլորը. Կարող է կատարել։

Բրատտ. Եթէ չկատարուի—ուրեմն բոլորն էլ անկարելի է. ուրեմն միւս բաներն էլ ճշմարիտ չեն, բոլորի մէջ էլ մի անհասկանալի բան կայ։

Մի բան որ ուժից վեր է—։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԻԼ

Ռահիլ. (*Միւս սենեկից լսւում է նրա խղճալի ձայնը*). Էլիաս. (*գալիս է աջ կողմից ուղղակի դէպի պատուհան եւ վերան յենւում, բանում է եւ ամբողջ ուժով կանչուս*). Էլիաս։ (*Ցետոյ յանկարծ յետ է ուզում դառնալ, բայց քիչ է մնում վայր ընկնի, բայց Կրօյէրը բռնում է. լաց է լինում, նորից կանգնում եւ դէպի մօր սենեակի դուռը ցոյց տալով*). Այնտեղ, այնտեղ, մայրս միայնակ չէ. նայեցէք միայն, նայեցէք (*բոլորը ոտքի են կանգնում։ Էլիասն երեւում է նախասրահում։ Ռահիլը շտապում է դէպի նա*) մայրիկը, մայրիկը։

Էլիաս. Վեր է կացել։

Ռահիլ. Այո՛, այո։

Էլիաս. Եւ չրջում է։

Ռահիլ. Այո՛. բայց միայնակ չէ։

Էլիաս. Թող բոլորն իմանան։

Ռահիլ. Մի գնար հայրիկի մօտ։

Էլիաս. Ո՛չ, գնում եմ զանգակատան գլուխը բոլոր աշխարհին իմաց անելու։

Ռահիլ. Բայց սանդուխք չունես, (*պատասխան չը ստանալով՝ զայրութով*) այնտեղ սանդուղք չկայ։

Կրօյէր. (*ձեռքով նշան է անում. կամաց*) Սսս։

Եպիսկոպոս. (*նոյնպէս կամաց*) Ա՜խ լսեցէք։ (*Եկեղեցուց լսւում է երգի ձայն*).

Ալէլուիա, Ալէլուիա, Ալէլուիա։

Բոլորը. (*ընկնում են ծնկների վերայ*) Նա այժմ այս գիտէ. նա այս գիտէ։

(*Այդ ժամանակ Կլարան գիշերային սպիտակ վերնազգեստ հագին դանդաղ գալիս է. աչքերն ուղղակի դէպի եկեղեցին ուղղած։ Լուռ կանգնում է, ձեռքերը մեկնում դէպի այն կողմը, որտեղից երգի ձայնն է գալիս*)։

Բոլոր հոգևորականները մեղմ ձայնակցում են՝ Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

Ռահիլ. (*դրսից*) Հայրիկը դուռն մօտ է կանգնած։

Ժողովրդի ձայնը միանալով եկեղեցու զանգակի ձայնի հետ, լսւում է մի այնպիսի ցնծալի ուժով, որ թւում է, թէ հազարաւոր մարդկանց ձայն է լսւում։ Քանի գնում ուժեղանում է, որովհետև մարդկանց միւս խմբերն էլ գալիս միանում են։ Մի քիչ ժամանակ այնպէս է թւում, կարծես այդ «ալէլուիա»ն ամբողջ տունը վեր է բարձրացնում։

Զանգն երևում է չէ՛մքի վերայ. դէմքը լուսաւորուած մայր մտնող արեգակի ճառագայթներով։ Բոլորը ոտքի են կանգնում և յետ յետ գնում։ Նա իւր ձեռքերը դէպի Կլարան է մեկնում. վերջինը, որ սենեակի կենդրոնում է կանգնած, նոյնպէս մեկնում է ձեռքերը։ Զանգը մօտենում է նորան և գրկախառնւում։ Նոցա չրջապատած երգում են։ Սենեակը մարդկանցով լիքն է, նոյն իսկ ելումուտքերը։ Մի քանիսը յենւում են պատուհանին և իրար վերայից դէպի դուրս նայում։ Կլարան հետզհետէ սահելով յենւում է Զանգի ուսերին։ Երգեցողութիւնը դադարում է։ Միայն ե-

կեղեցու զանգակի ձայնն է լսւում։ Կլարան աշխատում է իրան հաւաքել, բայց հազիւ է յաջողում. գլուխը բարձրացնում է և Զանգին նայում։

Կլարա. Դու, իմ սիրելի, իմ ուրախութիւն——երբ դու գալիս էիր—իմ սիրելի (*գլուխը խոնարհում է, ձեռքերն անզօր ներքեւ թողնում. ամբողջ մարմնով թուլանում է*)։

Զանգ. (*Կանգնած է եւ պահում է նրան. իւր ձեռքը դնում է Կլարայի սրտին, զարմացած դէպի նա կռանում, յետոյ վերեւ նայում եւ երեխայի ձայնով ասում*) Բայց սա չէր մտադրուած aber das war ja nicht die Absicht. (*նորից կռանում, մի ոտքի վրայ չոքում եւ Կլարայի գլուխն իւր ոտքի վրայ է դնում, ուշի ուշով դիտում, զգուշութեամբ պարկեցնում Կլարային եւ նորից կանգնում միաժամանակ նրան նայելով*) Բայց այդ չէր aber das war ja nicht die Absicht։ Կամ, —կամ— (*ձեռքը սրտին է դնում եւ վայր ընկնում*)։

Ռահիլը, որ այդ բոլոր ժամանակ քար կտրած նայում էր, բարձր ձայնով կանչում է և ծնկների վերայ ծնողների առաջ ընկնում։

Կրոյէր. Ի՞նչ էր կամենում այս «կամ» ով ասել։

Բրատտ. Ես չեմ հասկանում—բայց այդ ասելով նա մեռաւ։

Ռահիլ. Մեռաւ—անկարելի է։

(*Զանգերի ձայնը դեռ շարունակւում է*)։

(ՎԱՐԱԳՈՑՐ)

Գերմ. բարգմ. Ն. ՏԷՐ-ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1. «Ամուսնութիւն. Ամուսնալուծութիւն և քաղաքացիական պսակ». 2. «Միջազգային իրաւունք». գրեց Արսէն վարդ. Ղլդճեան:

Այս օրերս լոյս տեսաւ Հ. Արսէն վարդապետի վերոյիշեալ երկու գրքոյկները։ Խարդախութեան և խաբեբայութեան մեր դարում, երբ լուսամիտ Եւրոպան սրբագործում է մարդասպանութիւնը, երբ օրէնքը և իրաւունքը օր ցերեկով ոտնակոխ են լինում, երբ Եւրոպան իւր ահռելի նիւթական զարգացման հետ զուգընթացաբար կարծես յետադիմում է բարոյական խնդիրների ասպարէզում, ամեն մի գիրք և ամեն մի խօսք օրէնքի և իրաւունքի մասին օգտաւէտ կարող է լինել ընթերցողին։ Այս տեսակ գրքերը գէթ մարդկանց հոգու մէջ կպահպանեն լաւագոյն գաղափարների գիտակցութիւնը։

Առաջին գրքոյկը պարունակում է մի քանի ընդհանուր տեղեկութիւններ ամուսնութեան, չհասութեան, ամուսնալուծութեան մասին, որպէս և առաքելական կանոններ Հայոց եկեղեցական կանոններից և Ռուսաց օրէնսգրութիւնից քաղուածներ։ Շատ մանրամասն կերպով Հ. Արսէնը գծագրում է ճիւղագրութեան օրինակներ, որոնց հիման վրայ պարզ կարելի է որոշել արենակցական և խնամիական բարեկամութեան աստիճանները։ Այս գրքոյկը «Ամուսնական խնդիրներ» և նոյն խնդրին վերաբերեալ «Ամուսնական տարակուսանքներ» վերնագրով գրքերի հետ միասին լրացնում է յայտնի չափով այս խնդրի վերաբերեալ տեղեկութիւնների պակասը։

Գիրքը շատ հետաքրքրական է հայ ընթերցողի համար և այն ընդհանուր տեղեկութիւնների շնորհիւ, որ Հ. Արսէնը բերում է հասարակական գիտութիւններից քաղած առ-

հասարակ ամուսնութեան, ամուսնալուծութեան և մինչև անգամ քաղաքացիական պսակի մասին։ Գրքի մէջ չէր կարող մըտնել այս տարուայ Մայիս ամսին հրատարակուած ռուսաց նոր օրէնքը, որով ամուսնական անհաւատարմութեան համար պսակից արձակուած ամուսինը իրաւունք է ստանում ժամանակի ընթացքում պսակուելու, որ առաջ չէր կարող։ Այս գրքում կարող էին տեղ գտնել և հայ ժողովրդական սովորութիւնները որդեգրութեան վերաբերեալ, որպէս և պետական օրէնքները օրինացման (узаконеніе) և որդեգրութեան մասին։ Ցաւալի է սակայն, որ այս անպայման օգտաւէտ գրքի լեզուի վերայ քիչ է խնամք տարել հեղինակը և լի է երկար և ծանրամարս պերիոդներով։ Ահա մի քանի նմուշ այն հանգամանքի, թէ ինչ երկար նախադասութիւններով է Հ. Արսէնը ժողովրդականացնում գիտնական գաղափարները.— «Ամուսնութիւնը, միակին լինի «թէ բազմակին, իր զարգացման յաջորդ, աւելի բարձր աստի-«ճաններում, կեանքի մէջ փոփոխութիւն առած բարոյական «հասկացողութիւնների ազդեցութեան տակ, ենթարկուեց մի «շարք կարգերի, որոց խախտման դէպքում ամուսնութիւնը «տեղի չէր կարող ունենալ» (երես 9)։ Յետագայ գլուխներում պատահում են այնպիսի պարբերութիւններ, որ շատ մեծ շնչառութիւն պէտք է ունենալ մի նախադասութիւն բարձր ձայնով կարդալու համար։ «Քաղաքացիական պսակ» վերնագրով յօդուածի մէջ հետևեալ կտորը կարող էք գտնել. «Այդ զուտ քաղա-«քացիական գործերի համար պահանջում են ոչ միայն պսակի «օրինապէս կատարուելու համար անհրաժեշտ վկայագրեր, «այլ և ապացոյցներ, որ գործի տէր անձը յատկապէս այդ «ծնողներից է, կամ ծագում է ժառանգութիւնը թողած ան-«հատներից և այլն և այլն, մի շարք բարդ պայմաններ, ո-«րոնք այնքան վճռական նշանակութիւն ունին, որ անհրաժեշ-«տարար կարիք են առաջ բերում գրի առնել և պահել ոչ «միայն ծնունդն ու ամուսնութիւնը, դոցա մանրամասն ար-«ձանագրութեամբ, այլ և մահը»։

Երկրորդ գրքոյկը, որ կրում է «Միջազգային իրաւունք» վերնագիրը, մի համառօտութիւն է այս խնդրին վերաբերեալ ձեռնարկների և հայ միջակ ընթերցողի համար ընթերցանութեան գեղեցիկ նիւթ կարող է լինել, բայց նոյնպէս լեզուի կողմից կազում է։ Առհասարակ գիտութիւն ընդհանրացնող և ժողովրդականացնողը ոչ միայն պիտի հասկանալի,

թեթև և պարզ լեզուով գրէ, այլ և գեղեցիկ ոճով պիտի լինին այս տեսակ գրքերը։ Առանց այս յատկութեան վերոյիշեալ երկերը դժուար մատչելի են լինում ընթերցողին, ուստի և հարկաւոր ենք համարում հրաւիրել մեր թարգմանիչների և հեղինակների ուշադրութիւնը։

Ցամենայն դէպս յանձնարարում ենք մեր ընթերցողներին յիշեալ երկու հետաքրքրական գրքոյկները։

ԸՆԹԵՐՑՈՂ

Die Beziehungen der Armenischen Kirche zu den syrischen bis zum ende des 6 Jahrhunderts. Von Erwand Ter-Minassiantz.

Ս. Էջմիածի միաբան շնորհ. Երուանդ սարկաւագը անցեալ յուլիս ամսին աւարտեց Լայպցիգի համալսարանը փիլիսոփայական դոքտորութեան աստիճանով։ Մենք ստացանք նորա դիսերտացիայի մի օրինակ, որ իբրև ժառանգաւորաց աշխատութիւն գնահատուած է Լայպցիգի փիլիսոփայական ֆակուլտէտի կողմից և որ կազմում է ամբողջ աշխատութեան միայն $^1/_3$ մասը։ Ամբողջը լոյս կտեսնէ պրոֆ. Հարնակի և Ֆոն Գերհարդի աշխարհաչէն «Texte und Untersuchunder zur geschichte der altchristlichen Literatur» ժողովածուի մէջ մինչև առաջիկայ հոկտեմբեր ամիսը։

Ամբողջ աշխատութիւնը կրում է հետևեալ վերնագիրը. Die Armenische Kirche in ihren Bezichungen zu den Syrischen Kirchen (1—13 Jahrhundert)» և բաժանւում է 6 գլուխների, մի յաւելուածով, ուր առաջ են բերուած զանազան կարևոր հայերէն բնագրեր։

Առ այժմ առաջ բերելով այստեղ ամբողջ գործի համառօտ բովանդակութիւնը՝ մի այլ անգամ մենք կխօսենք գրքի մասին աւելի մանրամասնաբար։

Ա. Գլուխ։—Հայոց Եկեղեցին սկզբից մինչև միաբնակութեան վէճերի մուտքը Հայաստան (Զ. դարու սկիզբը).—Համառօտ սկզբնական պատմութիւնը մինչև Լուսաւորիչ և ապա շարունակութիւնը։ Փորձուած է ապացուցանել, որ Հայաստանի քրիստոնէութեան դառնալու գործը պէտք է գլխաւորապէս Ասորի քարոզիչներին վերագրել և ոչ թէ յոյներին, ինչպէս սովորութիւն է. յատկապէս լուսաւորչի ժամանակ օրի-

նակ հեղինակը փորձել է ցոյց տալ, որ Դանիէլ Ասորին, որը ըստ Փաւստոսի, Լուսաւորչի աշակերտը պիտի լինի, Լուսաւորչից անկախ Ասորի քարոզիչ է եղել Հայաստանում, այնպէս էլ ուրիշները: Բայի այդ փորձել է այս գլխում ցոյց տալ, որ Հայ. եկեղ. պատմ. 4. և 5. դարերում իսկապէս երկու խոշոր կուսակցութեան կռիւ է, ասորական ազդեցութեան և յունական ազդեցութեան. յունական ազդեցութեան պարագլուխներն են Լուսաւորչի զաւակները, որոնք և ըստ հսգևորին յաղթութիւնը տանում են, Հայոց եկեղեցին վերջը մեծ ազդեցութիւններ է ստանում յունականից: Ասորական ազդեցութեան պարագլուխներն են Աղբիանոսի զաւակները, որոնք Լուսաւորչի տոհմի հակառակորդներն են կաթողիկոսական գահի վրայ: Վերջիններիս գործունէութեան վայրն է գլխաւորապէս հարաւային (արևելեան և արևմտեան հարաւային) Հայաստան, իսկ Լուսաւորչի տոհմինը Այրարատ և շրջակայք: Քաղաքականօրէն ասոր. ազդեցութիւնը յաղթում է. Հայոց եկեղեցին կապը կտրում է Կեսարիայի հետ. Սոյն ձևով է հասկացել հայ եկեղ. պատմութիւնը մինչև Ե. դարու վերջը:

Բ. գլուխ. Զ. դարու եկեղ. կուսակցութիւնները արևելքում և նրանց յարաբերութիւնը Հայոց եկ. հետ, Գիրք թղթոցի և այլ հայերէն և ասորերէն աղբիւրների համաձայն: —Նախ Նեստորականների հետ, որոնց նղովում են և ապա միաբնակների հետ. Քաղկեդոնի նղովումը: Ներսէս Բ-ի յարաբերութիւնը Յուլիանիտ ասորիների հետ. Հայոց եկեղեցին իբրև զուտ միաբնակ եկեղեցի, որ իրեն հաւատակից է համարում Յուլիանիտ ասորիներին. այս է այս գլխի ամենանոր և ամենածանրակշիռ նիւթը և ապացոյցը:

Ապացոյցներ, որ Ալդիշոյ ասորին միակը չէ Հայ կաթողիկոսներից ձեռնադրուած: Ասորական տեղեկութիւններ այդ մասին Ասորական աղբիւրներից:

Գ. գլուխ. Հայոց եկ. յարաբերութիւնը ասորական Յակոբիկների հետ: Պարսից ժողովը և Կոմիտասի Թուղթը: Գէորգ Ասորոց եպիսկոպոսի Թուղթը Ճգնաւոր Յեշուային Հայոց եկ. մասին:

Մանազկերտի ժողովը 726-ին Հայ և ասորի աղբիւրների համաձայն—ժողովի կանոնները և նրանց բովանդակութիւնը դաւանական տեսակէտից (ըստ Էութեան Յուլիանիտ): Հեղինակը փորձել է ապացուցանել, որ այս ժողովում, Հայերը նղովել

են Ցուլիանիտներին շնորհիւ Ցակովբիկների հետ ունեցած յարաբերութեան, բայց միայն խիստ ծայրայեղ Ցուլիանիտներին, թէ էէ Ցուլիան Հալիկարնացու վարդապետութիւնը նոյնն է, ինչ որ Ժողովի կանոններն են քարոզում։

Ցովհան Օձնեցու վարդապետութիւնը։ Խոսրովիկ և իւր վարդապետութիւնը։ Մանակերտի Ժողովի արդիւնքը և հետևանքը։

Դ. գլուխ. Նոր յարաբերութիւններ. վէճեր ծիսական խնդիրների պատճառով։ Գրիգոր Մագիստրոսի յարաբերութիւնը Ասորոց Պատրիարք Ցովհաննէս X ի հետ։ Վերջինիս նամակները Հայոց կաթողիկոս Գէորգին (մի նամակը չհրատարակած Ասորերէն բնագրով Բերլինի մատենադարանից է օգտուել) և վերջինիս պատասխանը (ապացուցուած, որ Գիրք թղթոցի մէջ պահուած է այն՝. վէճերի անախորժ և վիրաւորական կերպարանք ստանալը ըստ վկայութեան ասորի աղբիւրների (Բարհեբրէոս և այլք)։ Ներսէս Շնորհալու ծիսական նամակները Ասորոց. Ասորի Դիոնիսոս Բարսալիբի վարդապետի յարձակումները Հայոց եկեղ. վրայ։

Ե. գլուխ. Ներսէս Շնորհալի և Ասորոց պատրիարք Միքայէլ Մեծ։ Երկուսի համախորհուրդ գործունէութիւնը յունական միութեան փորձերի դէմ։ Հայկ. և Ասորական տեղեկութիւններ այս խնդրի մասին։ Հայոց եկեղեցու ալդեցութիւնը Ասորոց վրայ 12 դարում և յետագայում. Խառանի եկեղեցու մասին եղած անախորժ վէճը Հայոց և Ասորոց պատրիարքների մէջ. Հեթում թագաւորի միջամտութիւնը ըստ Ասորական աղբիւրների։ Բարհեբրէոսի ձեռնադրութիւնը իբրև արևելքի Մաֆրիան և Հայոց մասնակցութիւնը այդտեղ։ Վերջ յարաբերութեանց։

Զ. գլուխ. Իբրև լրացում։—Հայոց Հարց վարդապետութիւնը Քրիստոսի մարմնոյ և կրից մասին. —Սահակ կաթողիկոս, Ստեփաննոս Սիւնեցի, Խաչիկ կաթողիկոս, Ներսէս Շնորհալի։ (Օձնեցի և Խոսրովիկ Գ. գլխում) փորձուած է ցոյց տալ, որ Հայոց Հարք սկզբում նոյն վարդապետութիւնն են ունեցել, ինչ որ յուլիանիտները. յետոյ ինչ ինչ փոփոխութիւնք են մտցրել, թէև անհետևողական կերպով։ Ապացոյցի համար բերուած են նաև մի Ասորի Ցուլիանիտի, Մաբուգի եպիսկոպոս Փիլոքսենոսի կամ Քսենայասի վարդապետու-

թիւնը ըստ իւր գրուածոց և համեմատուած Հայերէնի հետ։ Ցաւելուածում զանազան կտորներ թարգմանուած են գերմաներէն գերմ. գիտնականների համար։

Х. А. Вермишевъ. Матеріалы для исторіи грузино-армянскихъ отношеній. С.П.Б. 1904

Իշխ. Իլիա Ճավճավաձէն, որ իւր ազգի մէջ հռչակուած է իբրև բանաստեղծ-հրապարակախօս, հասարակական գործիչ—ափազանց զայրացած է հայ հոգևորականութեան, հայ ինտելիգենցիայի, հայ հեղինակների, հայ գիտնականների, հայ մամուլի, հայ վաճառականների, արհեստաւորների, բժիշկների, իրաւաբանների դէմ։ Այս ամենքին նա ատում է իւր սրտի խորքից, հայհոյում, զրպարտում և այսուամենայնիւ հաւատացնում է, թէ հայ ազգի դէմ ոչինչ ոխ չունի։

Պ. Ճավճավաձէն մի ժամանակ վրաց ազգամոլական «Իվերիա» լրագրի խմբագիրն էր և այդ լրագիրը դարձրել էր իւր ձեռքում զէնք միմիայն հայերին հարուածելու համար։ Ինչեր ասես չէր հնարւում այդ լրագրում հայերին ստորացնելու համար. ինչ ստեր, երևակայական տեղեկութիւններ, փողոցային զրոյցներ։ Պայծառափայլ խմբագիրը իւր հայատեցութիւնը այնքան հեռու էր տարել մի պահ, որ չէր խնայում թշուառ տաճկահայերին անգամ։ Նա ծաղրում էր թշուառների արիւնը, չը կարողանալով թագցնել իւր ուրախութիւնը։ Գոնէ այսպէս են ասում այն հայերը, որ մերթ ընդ մերթ կարդում են վրացերէն։ Պայծառափայլ խմբագիրը կոկորդ էր պատռում իւր ընթերցողներին հաւատացնելու համար, թէ հայերը ազգ չեն, այլ վաչխառուների համայնք, թէ նրանք լեզու չունեն, գրականութիւն չունեն և եթէ ունեն որև է լաւ յատկութիւն, գողացել են... վրացիներից։

Եւ այսպէս տարիներ շարունակ, զեկավարուելով եղբայրատեցութեան զազրալի ոգով, բանաստեղծ-խմբագիրը կատաղում էր ու փրփրում, երբ որև է օտարազգի մի նպաստաւոր խօսք էր ասում հայերի մասին։ Իսկ հայերը տեղեկութիւն անգամ չունէին ոչ պայծառափայլ իշխանի և ոչ նրա երևելի լրագրի գոյութեան մասին։ Նոյն իսկ հայ մամուլը, որ ի պաշտօնէ պէտք է ճանաչէր իւր ազգի վրայ մութ անկիւնից քարեր արձակողներին, նոյն իսկ, ասում ենք, հայ մամուլը հազիւ տա-

բէնը մի երկու անգամ յիշում էր, թէ կայ աշխարհի երեսին վրացիների մի խմբակ, որ ատում է հայերին։ Ճավճավաձէի և նրա արբանեակների վրայ ուշադրութիւն դարձնելու կարիք չը կար, քանի որ նոյն իսկ վրացիների մեծ մասը զզուում էր իշխանի եղբայրասպան սկզբունքներից։ Վրաց ինտելլիգէնցիայի լաւագոյն մասը հանդուցեալ Գիորգիյ Մերեթելիի ղեկավարութեամբ ամեն անգամ արժանաւոր կերպով քօքում էր Ճավճավաձէի ականջները աւելի լաւ, քան կարող էր անել որև է հայ հրապարակախօս։ Բայց չար գործի սիրահարներն երբեմն աւելի անխոնջ են լինում, քան բարի գործին ծառայողները։ Մերեթելին բռնում էր Ճավճավաձէի մի սուտը, Ճավճավաձէն մի նոր սուտ էր հնարում։ Մերեթելին ջախջախում էր Ճավճավաձէի բոլոր ասածները, Ճավճավաձէն իւր ազնիւ հակառակորդի հարուածներին պատասխանում էր ստոր զրպարտութեամբ. թէ իբր նա կաշառուած է հայերից. կարծես, հայերը կարիք ունէին որև է մէկին կաշառելու միջատի խայթոցներից պաշտպանուելու համար կամ Մերեթելու պէս ազնիւ հրապարակախօսներին կարելի էր կաշառել։

Ճավճավաձէի ամբողջ ջանքը հայ ինտելլիգենցիայի կամ գրողների ուշադրութիւնը իւր վրայ դարձնելու— անցաւ ապարդիւն։ Տարիներ շարունակ նա հայհոյեց ու զրպարտեց հայերին և ոչ ոք նրա բարբաջանքի վրայ ուշ չը դարձրեց, ոչ ոք չը կամեցաւ նրան լուրջ թշնամի համարել։ Այսպիսի մի անողոք արհամարհանք, հարկաւ, պիտի զայրացնէր պայծառափայլ բանաստեղծին, որ անկասկած իւր մասին մեծ գաղափար ունի։ Իրաւ, ինչպէս չը կատաղէր մի մարդ, որ տարիներ շարունակ կուրծք էր ծեծում և կոկորդ պատռում և շատ շատ արժանանում էր հայ սեմինարիստների սրախօսութեան։ Նա, որ իւր ազգի մէջ առաջնակարգ բանաստեղծ է համարւում և հասարակական կարծիքի ղեկավար, յանկարծ այնքան ուշադրութեան է արժանանում իւր ատած հայերի կողմից, որքան լուն իւր թռիչքով։ Պէտք էր, վերջապէս, խայթոցն աւելի զգալի դարձնել։ Եւ ահա Ճավճավաձէն գտնում է իւր նման եղբայրատեաց մէկին, ոմն Մեսխիեվին, որ յանձն է առնում թարգմանել վրացերէնից ռուսերէնի նորա մի ստոր գրութիւնը և հրատարակել «Армянскіе ученые и вопіющіе камны» վերնագրով։ Այրուած սրտի ջերմ փափագը, վերջապէս, կատարւում է։ Մի քանի հայեր, որոնց թւում և՝ մենք, կարդում ենք նրա գրութիւնը

և, օհ երջանկութիւն, վայելում ենք նրա բանաստեղծական հանճարի արտադրութեան բարձրագոյն հաճոյքը։

Ճշմարիտն ասած, պ. Մեսխիևը և մեկ էլ այն հայ պարոնը, որ հայերէն թարգմանել է Ճավճավաձէի «Մարդ է արդեօք» վէպը, իսկապէս առջի ծառայութիւն են մատուցել Ճավճավաձէին։ Քանի որ մենք ծանօթ չէինք Ճավչավաձէի գրականական ընդունակութիւններին, հաւատում էինք նրա սեմինարիստ երկրպագուներին, թէ նա վիպասան է, բանաստեղծ է, հրապարակախօս է, հասարակական գործիչ է, էլ չը գիտենք ինչ է։ Բայց երբ կարդացինք հայերէն լեզուով նրա վէպը և ռուսերէն լեզուով նրա հրապարակախօսական շարադրութիւնը, խոստովանում ենք, բաւական չփոթուեցինք։

Բայց Տէրը Ճավճավաձէ վիպասան-բանաստեղծի հետ։ Համեմատաբար աւելի հետաքրքրական է նա որպէս հրապարակախօս։ Եւ ահա այստեղ հանդիպում ենք մի վերին աստիճանի անբարեխիղճ դրչի, որի համար եթէ կայ մի սրբութիւն, այդ կոյր հայատեցութիւնն է։ Նորերս Պետերբուրգում լոյս տեսաւ պ. Քրիստափոր Վերմիշեանի մի ընդարձակ պատասխանը հայութիւնը կրծող իշխանին՝ այս երկար վերնագրով. «Матеріалы для исторіи грузино-армянскихъ отношеній; отвѣтъ на книжку кн. И. Г. Чавчавадзе: «Армянскіе ученые и вопіющіе камны»։ Կարդացէք այս գրքոյկը և տեսէք, թէ հեղինակը որպիսի ջախջախիչ փաստերով է ապացուցանում պայծառափայլ իշխանի զրպարտութիւնները հայերի մասին և կլասսիքական ստախօսութիւնը։ Մարդ միանգամայն ապշում է կարդալով պ. Վերմիշեանի գրքոյկը. թէ ինչպէս մի՝ իւր ազգի մէջ հռչակ վայելող՝ բանաստեղծ, որի մի ոտն արդէն գերեզմանի մէջ է, թոյլ է տալիս իրան մի ամբողջ ազգի դէմ այնքան լուտանքներ։ Մենք կարծում ենք, եթէ Ճավճավաձէն անգամ լինէր մարմնացած ատելութիւն դէպի հայերը, պէտք է գոնէ մի սագի չափ խելք ունենար ինքն իրան չը ստորացնելու այդչափ զրպարտութիւններով։ Պ. Վերմիշեանը յանձն է առել մի չատ անախորժ գործ. նա ցոյց է տալիս քառասուն տարի գրականութեամբ պարապող մի ալեզարդ ծերունու ստախօսութիւնը և, երևի, իւր գիրքը գրելու ժամանակ, քիչ անգամ չէ կարմրել պայծառափայլ իշխանի փոխարէն։

Մենք առաջ չենք բերիլ այստեղ պ. Վերմիշեանի գրքոյկի բովանդակութիւնը և աւելորդ էլ է։ Երևակայեցէք ձեզ

այսպիսի անախորժ դրութիւն։ Մի ամուր ձեռք չատ ամուր բռնել է մի բեմական ստախօսի օձիքից և, ուղիղ նայելով նրա աչքերին, մէկ մէկ երեսովն է տալիս նրա ստերը բազմաթիւ հանդիսականների ներկայութեամբ։ Ընթերցողը ամաչում է Իշխ. Ճավճավաձէի փոխարէն, խղճում է նրան և պատրաստ է խընդրել պ. Վերմիշեանին խնայել խեղճ ծերուկին, բայց պ. Վերմիշեանը լաւ ճանաչելով իւր դիմացինին, ամենայն սառնասրտութեամբ շարունակում է իւր գործը և վերջ ի վերջոյ ձեր ականների տակ է ձգում մի բարոյական դիակ։ Այս է պ. Վերմիշեանի գրքոյկի տպաւորութիւնը։

Ցաւալի է, չատ ցաւալի իշխ. Ճավճավաձէների գոյութիւնը երկու հարևան և միմեանց հետ պատմական ամուր կապերով կապուած ազգերի մէջ։ Բայց մենք հայերս, որ միշտ թէ խօսքով և թէ գործով ցոյց ենք տուել մեր անկեղծ համակրանքը դէպի մեր դրացի ազգը, ժողովուրդը, դէպի այդ ազգի ինտելիգենցիան, այնքան թեթևամիտ չենք, որ մի ինչ որ Ճավճավաձէի և սրա արբանեակների նախանձը դէպի մեզ վերազրենք ամբողջ վրաց ինտելիգենցիային։ Մենք գիտենք, որ ատելութեան սերմեր ցանողներն երբէք չեն կարող ոչ մի քիչ թէ չատ խելացի հասարակութեան հաւանութեանն արժանանալ և որովհետև մի պատմական դրացի ազգի նորագոյն ներկայացուցիչ ինտելիգենցիան աւելի բարոյական հիմունքների վրայ է կըրթուած, ուստի համոզուած ենք, որ հէնց նա իսկ բարոյապէս կը պատժի իւր անարժան հայրենակիցներին։ Մեզ, հայերիս համար Ճավճավաձէների թշնամութիւնը մոծակի կծոցի չափ էլ ոյժ չունի և այս տողերը, որ մենք համաձայնուեցինք գրել, ինքն ըստ ինքեան մեծ վարձ են այդ տեսակ ոչնչութիւնների համար...։

Ե.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Ռ. Ց. Պէրպէրեան. խոհք և յուշք. 1903. Վիեննա 1904.

Պրոֆ. Հոլզէր Պետերսըն, Նպաստ մը Հայ. լեզուի պատմութեան. թարգմ. Հ. Գարեգին Գարանֆիլեան, Վիեննա 1904.

Ա. Տ.—Պ. Ակնարկ հայ բանահիւսութեան վրա. Ս. Պ. Բ. 1904

Գ. Անանեան. Կորածներ. պիես 5 գործ. Թիֆլիս 1904

Մեսրոպ վ. Օտար փունջեր. Ա. հիւսք. Շիլլերից. Դաւրէժ 1904 թ.

Ս. Ծոցիկեան. Տարածուած խօսք. Բագու 1904.

Մկրտիչ Պէշիկթաշլեանի քերթուածներն ու ճառերը, ծան հրատ. Արշակ Չօպանեան. Փարիզ 1904.

Բժ. ուս. Գ. Մաղաքեան. բժշկականութիւն և հասարակութիւն. Թիֆլիզ 1904

Վ. Փափազեան. Պայտառի հոգին և անկեղծ ընծայ. Թիֆլիզ 1904.

Ա. Ահարոնեան. Կեանքի դասը. բ. տպ. Թիֆլիզ 1904.

Մ. Գօրկիյ. Դանկօի սիրտը, թարգմ. Գ. Անանեան, Թիֆլիս 1904.

Բժ. Ա. Բուդուղեան. Գոյութեան կռիւ. Ս Պ. Բ. 1904.

Х. А. Вермишевъ, Матеріалы для исторіи грузино—армянскихъ отношеніи. отвѣтъ на книжку И. Чавчавадзе „Арм. ученые и воп. камни“ С. П. Б. 1904.

Ց. Մանանդեան, Դաւիթ անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ. Վաղարշապատ 1904.

Արսէն վ. Ղլտճեան, Ամուսնութիւն, ամուսնալածութիւն և քաղաքացիական պսակ, Ալէքս. 1904.

Խաչ. Բաբայեան, բանաստեղծութիւններ. Ա. հ. Թիֆլիս 1904.

Ց. Սուրխաթեան. Փարոսի վրա. Ս. Պ Բ. 1904.

Նոյն. Մելքոն աղային սթոռիան. Ն. Նախիջ. բարբառով, Բագու 1903.

Նոյն. Մելքոն աղային վերջաբանութիւնը (Ղրիմի բար.) Ս. Պ. Բ. 1904.

Գեօթէ. Հերման և Դորոթէա. գերմ. թարգ Ցար. Պետրոսեան. Վաղարշ. 1904.

Դուտու Մէզրէլի Անմեղ զոհ, վրաց. թարգմ. Ղ. Կ. Թիֆլիս 1904.

Ցար. Եսայեան. Արբեցողի զատիկը. Թիֆլիս 1904.

Սիմ. Բաբիեան, Բանաստեղծութիւններ. Ս. Պ. Բ. 1904.

Каталогъ газетъ и журналовъ на 1904 г. изд. конт. объявл. „Герольдъ“.

Die Beziehungen der Armenischen kirche zu den Syrischen bis zum ende des 6 Iahrhunderts Leipzig 1904.

Ֆ. Նիկ. Ֆինկ. Ցուցակ Տփխիսեցի Արզար Յովհաննիսեանի հայ ձեռագրերի. Լայպցիգ 1903.

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

—

ՓԱՑԾԱՂԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ՐԵՕՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ինչպէս երևում է Ռեօնտգէնեան ճառագայթները մեծ դեր են խաղալու փայծաղի և առհասարակ աւշային գեղձերի բժշկութեան ժամանակ։

Ռեօնտգէնեան ճառագայթների ներքին գործարանների վրայ ունեցած ազդեցութիւնը որոշելու համար, բժիշկ Գէյնիկէն զանազան փորձեր է կատարել կենդանիների վրայ. արդէն վաղուց նկատել էր նա, որ այն մկները և ծովախոզերը, որոնք ենթակայ են լինում օրուայ ընթացքում մի քանի ժամ շարունակ Ռեօնտգէնեան ճառագայթների ազդեցութեան, սատկոտում են 1—2 շաբաթուայ ընթացքում։ Գէյնիկէն, հետազօտելով ընկած կենդանիների կազմուածքների մէջ եղած փոփոխութիւնները, նկատեց երկու սուր փոփոխութիւն փայծաղի մէջ. առաջին՝ ներկանիւթի չափազանց շատանալը և երկրորդ՝ փայծաղի փշտիկի follicule անհետանալը։ Աւելի ուշ Գէյնիկէն գրտաւ, որ նոյնպիսի երևոյթներ են տեղի ունենում և բոլոր աւշային գեղձերում, իսկ մատաղ կենդանիներին և վահանաձև գեղձում։ Անցնելով շներին և ճագարներին, Գէյնիկէն նկատել էր և նրանց աւշային գեղձերում միևնոյն քայքայող գործողութիւնը Ռեօնտգէնեան ճառագայթների ազդեցութեան տակ։ Այդ փորձերը ցոյց են տալիս, որ մարմնի ներքին հիւսուածքները հակազդում են Ռեօնտգէնեան ճառագայթների վրայ աւելի խիստ և արագ քան կաշին։ Գէյնիկէն ուզում է այդ հետազօտութիւնները գործադրել և մարդու վերայ, օգտուելով իւր գիտով ախտաբանութեան բոլոր այն դէպքերում, երբ աւշային գեղձերը և փայծաղը ախտաբանօրէն չափազանց սննդուած են։ Հաւանական է, որ նոր գիտը կարող կլինի օգուտ բերել և վահանաձև գեղձի բժշկման ժամանակ։

ԴԻՖՏԵՐԻՏԻ ՄԱՆՐԷՆ ԱՌՈՂՋ ԵՒ ԱՑԴ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԻՑ ԱՌՈՂՋԱՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԷՋ։ Այն բժիշկների մեծագոյն մասը, որ զբաղուած են իմանալու թէ դիֆտերիտի մանրէն որքան ժամանակ է մնում այդ հիւանդութիւնով հիւանդ անհատների մէջ, այն եզրակացութեան են գալիս, որ նրա տևողութիւնը լինում է ոչ աւելի չորս շաբաթից. եղել են այնպիսի բացառիկ դէպքեր, երբ դիֆտերիտի մանրէն գտել են

ամիսների ընթացքում։ Ինչ վերաբերում է առողջ մարդկանց, չի կարելի հերքել, որ նրանց մէջ բոլորովին չեն գտել դիֆտերիտի մանրէներ, բայց և այնպէս այդ եղելութիւնը պէտք է բացառական համարել, մանաւանդ այն մարդկանց վերաբերմամբ, որոնք ոչ մի շփում չեն ունեցել հիւանդի հետ։ Աւելի յաճախ դիֆտերիտի մանրէն կարելի է գտնել այնպիսի մարդկանց մէջ, որոնք շփուել են հիւանդի հետ, բայց այստեղ էլ զանազան բժիշկների ստացուած միջին թիւը մեծ չէ։

Մոտերս բժիշկ Բուրկարը, ինչպէս հաղորդում է պ. Գէօգորովը «С. Петр. Врач. Вѣд.» ում, մի շարք փորձեր կատարեց վերոյիշեալը ստուգելու համար և եկաւ հետևեալ եզրակացութեան. Վէֆֆերի մանրէն պատահում է, ինչպէս բացառութիւն, բոլորովին առողջ և հիւանդի հետ շփում չունեցող մարդկանց մէջ։ Համարեա նոյն բացառութեամբ կարելի է գտնել և այնպիսի անձանց մէջ, որոնք գործ են ունեցել դիֆտերիտով հիւանդի հետ, մանաւանդ հասակն առած մարդկանց մէջ (բժիշկների, ուսանողների). քիչ յաճախ երեխաների մէջ. այն անձանց մէջ, որոնք ստացել են այդ հիւանդութիւնը և ենթարկուել են շիճուկով բուժման, մեծ մասամբ (65 %) մանրէները անհետանում են թեփի հետ միասին և միայն 15% դէպքում, նրանք մնում են աւելի երկար ժամանակ։

ՆՈՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Դրէզդէնի բժշկական ընկերութեան մէջ դր. Կէլլինգը երկու զեկուցում արեց խլրդային հիւանդութեանց ծագման մասին։ Բժշկ. Կէլլինգը ապացուցանում է, որ Վիրխովի տեսութիւնը իբր թէ խլրդային հիւանդութիւնները բջջային ծագում ունին, ճիշտ չէ։ Մանրադիտական և քիմիական հետազօտութիւնները բժշկ. Կէլլինգին այն հետևանքի հասցրին, որ խլրդային հիւանդութիւնը մարմնի մէջ օտար բջջի ներմուծման հետևանք է և որ խլրդային ուռուցքների գոյացութիւնը առաջանում է այս օտար բջիջների պարազիտային գոյացութեամբ։ Այս օտար բջջային գործարանաւորները ներմուծուում են լուերի, մոծակների, ճանճերի կծելով, երբեմն հում ձուի միջոցով, որոնցում յաճախ նկատուում է հաւի բջջի սաղմը։ Հետագայ քիմիական գննութիւնները ցոյց տուին բժ. Կէլլինգին, որ խլրդային ուռուցքները բաղկացած են հաւի ձուի սպիտակուցի սաղմերից։ Հիւանդների ցուցումներից յիրաւի երևաց, որ նոքա կանոնաւոր կերպով կերել էին հում ձու, որից և դր. Կէլլինգի կարծիքով, նոքա ստացել էին ստամոքսի խլրդ (рак). (Ռ. Մ. Ե.)

ՁԵՌԱԳԻՐՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՀԵՌԱԳՐՈՎ։ Ձեռագիրների, պատկերների փոխանցումը ելեքտրական հոսանքով նոր միտք չէ։ Արդէն 1858 թուին Կապելլէն արտօնութիւն ստացաւ այսպէս կոչուած հանրահեռագիր (պանտելեգրաֆ) գործիքի, որի միջոցով կարող էր ուղած գծերը հաղորդել հեռագրով։ Բայց այդ գործիքը

պիտանի չեղաւ։ 1897 թուին Ամերիկայում երևաց Գումմելի գործիքը, որ փոխանցում էր նկարները էլեկտրականութեամբ 2500 վերստ հեռաւորութեամբ. մի ուրիշ նման գործիք, որի մասին շատ խօսակցութիւն է եղել վերջին տարիներս Ամերիկայում, Կլիվելինդի էլեկտրա-ինքնագիր կոչուած Ամսուացի գործիքն էր։

Այժմ առանձին ուշադրութեան արժանի է Միւնխէնի պրոֆէսոր Զերեբօտանի գործիքը. այդ գործիքն արդէն մի քանի տարի է գոյութիւն ունի։ Սկզբում դա շատ պակասութիւններ ունէր. նորերս կատարելագործուած գործիքներով եղած փորձերի շնորհիւ, այդ գործիքը նորից ամենքի ուշադրութիւնը գրաւեց։

Էլեկտրականութեամբ պատկերների, նկարների և այլն փոխանցումը բաժանւում է, ինչպէս ասում է «Почт. Телегр. журн.» երկու համակարգութեան - նկարների անմիջական փոխանցում և էլեքտրա-քիմիական ընդօրինակելի հեռագիր. ընդօրինակելի հեռագիրը իսկապէս երկու համակարգութիւններն էլ է ներկայացնում—միայն այն զանազանութեամբ, որ առաջին դէպքում պատճէնը ստացւում է անմիջապէս նոյն տեսքով, ինչպէս որ կար բնագրի մէջ, իսկ էլեքտրա-քիմիական ընդօրինակելի հեռագրի մէջ օգտւում են քիմիական կերպով պատրաստուած թղթով. որոնք տեղաւորում են ընդուրանանում և տեղ-տեղ փոփոխութեան են ենթարկւում էլեկտրականութեամբ։ Զերեբօտանի գործիքը պատկանում է առաջին համակարգութեան, այսինքն անմիջական փոխանցման ձևին։

Զերեբօտանի գործիքը շատ բարդ է. այդ պատճառով հասկանալի է միայն մասնագէտներին։

Այս գործիքի կազմակերպութիւնը մօտաւորապէս հետեւեալն է. փոխադրելի գործիքի վրայ դնւում է նկարը, որ և միացրած է լծակի համակարգութեան հետ, որը ճշգութեամբ կրկնում է բարակ սլաքի բոլոր շարժումները։ Փոխադրելի գործիքի տախտակի վրայ դրուած թղթի վրայ այս սլաքի օգնութեամբ գրում են ինչ որ ուզում են։ Այդ սլաքի կամ լծակի շարժողութեան շնորհիւ, որոնք միացրած են ընդունարանի հետ, միւս կայարանում ստացւում են դրական և կամ բացասական էլեկտրական հոսանքներ. վերջինները ազդում են այդ կայարանում գտնուող երկու էլեկտրամագնիսների վրայ, որոնք իրանց կողմից այնպէս են ազդում այդ տեղ գտնուող սլաքի վրայ, որ նա սկսում է շարժուել աջ կամ ձախ, վերև կամ ներքև։ Ընդունարանի սլաքը նոյն շարժողութիւններն է անում ինչ որ փոխադրել են։ Այդ պատճառով ընդունարանի սլաքը միևնոյն գծերը, նկարները և տառերն է նկարում։

Զերեբօտանին կարողացաւ էլեկտրամագնիսները զարմանալի դիւրազգացութեան հասցնել. նրանք հակազդում են մինչև անգամ ամենաթոյլ հոսանքների վրայ։ Զերեբօտանի հե-

ռադիրն արդէն փորձել են Միլանի, Տուրինի ու Միւնխենի և Բերլինի մէջ։

ՐԱԴԻՒ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԽԼԻՐԴԱՑԻՆ ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ։ Գերմանական ախտաբանական ընկերութեան ժողովին Բերլինի ախտաբանական ճեմարանի պրիվատ-դոցէնտ Նեյբերգը զեկուցեց բադիի ճառագայթների ախտաբանական ազդեցութեան մասին խլիրդի գոյացութիւնների վրայ։

Մինչև այժմ չէր որոշուած այն քիմիական գործողութիւնը, որ առաջացնում են բադիի ճառագայթները վնասաբեր ուռուցքներում։ Զեկուցանողը ապացուցանում է, որ այնտեղ տեղի է ունենում այսպիսի գործողութիւն,—բադիի ճառագայթները ներգործում են խլիրդի (carcinome, cancer, ракъ) ցանցի վրայ և ամբողջապէս ոչնչացնում են այն, նրա տեղ մնում է միայն մի տեսակ ցանց, որը բոլորովին ապահով է բադիի ճառագայթներից. նա վերլուծում է բադիի ճառագայթներով ոչնչացած խլիրդի ցանցը և այդպիսով օգնում է վնասաբեր գոյացութիւնների ոչնչացնելուն։

ՄՕՐՖԻՏ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ։ Այս տարուայ յուլիսի 6 ին (19) լրացաւ մորֆիտը գտնելու հարիւր տարին։ Դորա գտնելու պատիւը պատկանում է դեղագործ Զէրտիւրներին, որ 1799 թուից մինչև 1806 թիւը աշխատում էր Պատէրբորնում Կրամէրի արքունական դեղատանը։ Այստեղ նա, ափիոնը վերլուծելու ժամանակ, յայտնագործեց մորֆիտը և նորա բժշկական նշանակութիւնը։

ՄԵՌԵԱԼՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԱՑՆԵԼՈՒ ՓՈՐՁ։ Ամերիկացի բժշկապետ Բօրերտ Կէմպը, «С. П. Б.» թերթի ասելով, արդէն գտել է մեռեալներին յարութիւն տալու եղանակը։ Դիակի երկու կողմերի մէջը կտրելով՝ նա երկու մատը ներս է տանում, որոնցով սիրտը սղմելով դէպի կողերը, սովորական շարժողութեան մէջ է դնում նորան։ Միևնոյն ժամանակ նա ներս է սրսկում ալի լուծուածք, իսկ շնչառութիւնը վերականգնում է առանձին գործիքի օգնութեամբ։ 23 սպանուած շներից այս միջոցով կարելի եղաւ 11-ին կենդանացնել, որոնք կենդանանալուց յետոյ կերան, խմեցին, վազվզեցին, բայց միայն մի օր ապրեցան։ Վերջին հանգամանքը նա բացատրում է նորանով, որ շներին չի կարելի պահել այն հանգստութեան մէջ, որ այդ միջոցին անհրաժեշտ հարկաւոր է։ Կէմպը հաւատացած է, որ իւր միջոցը եթէ մարդոց վերայ գործ դնէ՝ լաւագոյն հետեւանքներ կստանայ։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱՐԱՐ

Թագաւոր Կայսեր Բարձրագոյնս բարեհաճութեամբ Ներքին Գործոց Նախարար է հաստատուած իշխ. Պ. Դ. Սվեատօպոլկ Միրսկիյն, Վիլնայի նախկին ժեներալ-նահանգապետը։

Փարիզի «Echo de Paris» լրագրի Պետերբուրգի թղթակից պ. Մարսէյլ Գիւտէն հնարաւորութիւն է ունեցել զրուցել նորահաստատ նախարարի հետ Վիլնայից դուրս գնալուց մի քանի ժամ առաջ։ Կարևոր ենք համարում քաղուածօրէն առաջ բերել „Нов. Время"ից այս հետաքրքրական խօսակցութեան բովանդակութիւնը։

Թղթակցի հարցին, թէ արդեօք պ. նախարարը իւր պաշտօնավարութիւնը կըսկսի՞ մեծ փոփոխութիւններով, իշխանը բարեհաճել է պատասխանել, թէ ոչ, բայց, աւելացրել է. ես մըտադիր եմ հետևել Թագաւոր կայսեր 1903 թ. փետրուարին հրատարակուած հրովարտակի մէջ արծարծուած ծրագրին։ Հիմնուելով Կայսեր ցոյց տուած սկզբունքների վրայ, ես պիտի աշխատեմ իմ գործունութիւնները ճշմարիտ և ընդարձակ առաջադիմութեան ոգուն համաձայնեցնել գոնէ այնչափ, որչափ այդ ոգին չի հակասիլ տիրող կարգ ու կանոններին։ Ինչպէս մի գաւառացի, որ սիրում է գաւառը, ուր անցել է իմ պաշտօնավարութեան մեծ մասը, ես ապակենտրոնացման դրական կողմնակից եմ։ Ես կարծում եմ, որ ամեն խնդիր Պետերբուրգում չը պիտի վճռուի։ Ուստի ես կը լինիմ Կայսեր ցանկութեան արտայայտիչ, թոյլ տալով քաղաքային և համայնական (земскія) հիմնարկութիւններին կարելոյն չափ աւելի հեղինակութիւն, համաձայն ազգաբնակութեան ցանկութեանց, որոշել այն գործերը, որոնք վերաբերում են դպրոցական, տնտեսական, ճանապարհների հաղորդակցութեան և այլ խնդիրներին։ Մենք համայնքներին (земство) կտանք ամենաընդարձակ ազատութիւն, որպիսին միայն կարելի է տալ այդ ժողովներին, որոնք այնքան նման են ձեր conseils genéraut—ներին։ Տեղական ինքնավար համայնական և քաղաքային հիմնարկութիւնների լաւ կազմակերպութեան միջոցով մենք կարող ենք մեր ներքին կեանքում շատ բան առաջացնել։

Անցնելով կրօնական խնդիրներին, պ. Նախարարը ասել է հետևեալը.

Ես թշնամի եմ կրօնական հալածումների և կողմնակից խղճի կարելոյն չափ կատարեալ ազատութեանը, բայց որոշ վերապահութեամբ։ Սակայն, Ռուսաստանը վերջին տարիներն այս ուղղութեամբ շատ է առաջացել։ Ես կը շարունակեմ բոլոր ջանքերս գործադրել, որպէս զի մեր ընդարձակ Պետութեան մէջ խաղաղ ապրեն բազմապան դաւանութիւնները։

Նոյնպիսի համակրելի կարծիք յայտնել է պ. Նախարարը ե՛ւ հրէաների վերաբերմամբ։

Ընդհանրապէս ֆրանսիացի թղթակիցը իւր բարձրաստիճան խօսակցին նկարագրում է ոգևորութեամբ, հիացած նրա լուսամիտ ուղղութեան վրայ։

ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ

Հեռագիրը ամսոյս 25-ին հաղորդեց, որ Սանահնի վանքի վանահայր գերապատիւ Տ. Գարեգին եպիսկոպոս Սաթունեանցը Բարձրագոյնս հաստատուած է Վրաստանի և Իմերեթի Հայ Լուսաւորչական թեմի միաձակաւոր Առաջնորդ։

Նորին սրբազնութիւնը ծնուած է 1853 թուին Աշտարակ գիւղում։ Վարդապետ է ձեռնադրուել 1876 թուին և այն ժամանակից յաջորդական և առաջնորդական պաշտօններ է վարել բազմաթիւ տեղերում, այն և Գօրի, Նուխի, Ալէքսանդրօպոլ, Գանձակ և Շուշի քաղաքներում և ամեն տեղ թողել է բարի յիշատակ. իւր պաշտօն վարած ժողովրդի մէջ սրբազան Սաթունեանը յայտնի է որպէս հաստատամիտ և դրական մարդ, դպրոցական գործը սիրող, եկեղեցու և եկեղեցականների բարեկարգութեանը նախանձախնդիր, խաղաղարար և մանաւանդ իբրև չինարար։ Ուր և պաշտօնավարել է նորին սրբազնութիւնը՝ ամեն տեղ էլ նորա հեռանալիս անչափ ցաւել են և մինչև վերջ էլ ամենքի իղձն է եղել, որ նորից վերադառնայ իրանց մօտ։ Իսկ Հայ. եկեղեցու արդի Վեհապետից եպիսկոպոս ձեռնադրուելով 1901 թուին, սրբազանը կարգուեց վանահայր մեր հինաւուրց և հռչակաւոր, բայց վերին աստիճանի աւերակ և մոռացութեան մատնուած Սանահնի վանքի, որը, ինչպէս յայտնի է վերջերս Սանահին այցելող բազմաթիւ ուխտաւոր հայ ժողովրդեան, ներկայումս, չնորհիւ սրբազան Գ. Սաթունեանի անձնուէր և սրտացաւ աշխատութեան, այնպէս է վերաշինուած և բարեկարգուած հիմնովին, որ կարելի է ասել, յիշեցնում է իւր անցեալ փառքը։

Ցոյս ունինք, որ նորին սրբազնութեան անցեալի փորձառութիւնը և Հայ եկեղեցու բազմաթիւ կենդրոնավայրերի մօտիկ ծանօթութիւնը առհաւատչեայ կլինի Տփխիսի բազմապահանջ թեմի բարոյական չինութեան։

† ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ

Ռուս արդի գրականութիւնը մի գգայի կորուստ ունեցաւ։ Ծաղկած տաղանդի մէջ անժամանակ վախճանուեց ռուս ժողովրդի սիրելի գրագէտներից մէկը՝ Ա. Չեխովը։

Անտոն Պաւլ. Չեխովը ծնուել էր 1860 թուի յունուարի 17-ին Տագանրօկ քաղաքում. տեղական գիմնազիայում աւարտելով իւր ուսումը, մտաւ Մոսկուայի համալսարանի բժշկական ֆակուլտէտը, ուր և աւարտեց։

Չեխովն սկսեց գրել տակաւին ուսանող ժամանակից. 1872 թուի յունուարին նա գրեց իւր առաջին ծաղրական վէպիկը Պ. Բուրգի գաւեշտական թերթերից մէկում, որին հետևեց մի շարք պատկերներ, որտեղից և սկսաւ յայտնի լինել նորա անունը։ Գրական աշխատութեան առաջին օրերում ապագայ յայտնի գրողը զբաղւում էր և լրագրական յօդուածներ գրելով։ Բայց շուտով նա զգաց իւր կոչումը և սկսեց նուիրուել գեղեցիկ գրականութեան։

Տարիներ շարունակ Չեխովի վէպերն ու պատկերները տպւում էին «Нов. Вр.»ի ֆէլիէտօնում, մինչև նորա հեռանալն այդ թերթից։ Այնուհետև նորա երկասիրութիւնները հետզհետէ աւելի լրջութիւն ստանալով, տպւում էին առաւելապէս «Русс. Мысль»-ի մէջ, որի խմբագրի հետ սերտ յարաբերութեան մէջ էր և ուր մի տարի առաջ՝ գեղարուեստական բաժնի խմբագրի պաշտօն էր ստացել։ Անցեալ տարի Չեխովի երկերը լոյս տեսան ահագին քանակութեամբ առանձին գրքերով։

Նորա թատերական գրուածները հետզհետէ ներկայացուեցան ռուս բեմի վերայ, որով նա հռչակուեցաւ նաև իբրև բեմական գրող։

Չեխովի բոլոր գրուածները թարգմանուած են օտար լեզուներով, ինչպէս նաև հայերէն. միմիայն «Լուսայի» էջերում հրատարակուած են նորա 7 վէպիկներ՝ 1. Դրաց, 2. Դրամա, 3. Զարհուրելի գիշեր, 4. Իշխանուհի, 5. Փոխանորդը, 6. Առանց վերնագրի և 7. Խնդիր

ՕՐ. ԱԼԻՍ ՍՏՕՆ ԲԼԱԿՈՒԷԼԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՄՆԱՄԵԱԿ

Արտասահմանի թերթերից տեղեկանում ենք, որ տարւոյս մայիսի 30 ին Ամերիկայի Բոստոն քաղաքում Հայ հասարակութեան նախաձեռնութեամբ կատարուել է «Լուսայ»ի ընթերցողներին լաւ ծանօթ ամերիկացի օրիորդ Ալիս Ստոն Բլակուէլի Հայագիտական գործունէութեան տասնամեայ յօբելեանը Ամերիկայի Հայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Սառա-

ճեանի նախագահութեամբ։ Հանդիսին մասնակցել են մօտ 200 հայեր և ամերիկացիներ, ուր տեղի են ունեցել բազմաթիւ ատենախօսութիւններ։ Ամերիկական հայ գաղութը մատուցել է շնորհալի օրիորդին՝ նորա իւղաներկ մի գեղեցիկ պատկեր։

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Կ. Պոլսից մեզ գրում են հետևեալը.

Այս օրերս Սանասարեան վարժարանի հրատարակութեամբ լոյս տեսաւ նոյն վարժարանի քսանամեայ տեղեկագիրը 1881—1901, որ պարունակում է իւր մէջ վարժարանի հիմնադիր Մկրտիչ Սանասարեանի և վարժարանի լուսատիպ պատկերները և կենսագրական ծանօթութիւններ։ Տեղեկագրից իմանում ենք, որ Սանասարեան վարժարանի առաջին ընթացաւարտներն եղած են 1891 թուին, իսկ մինչև 1901 թիւը, ունեցած է 110 շրջանաւարտներ, որոնցից 94-ը ուսումնական բաժնից, 4-ը ուսման և արհեստի և 12-ը արհեստագիտական բաժնից։ Այդ քսան տարում վարժարանի դրամագլխի եկամտից տրուած է ուսումնարանին 2,472,000 ղրշ (մօտ 210,000 ռուբլի), իսկ 1,100,666 ղրշ. ևս իբրև արտասովոր նպաստ (մօտ 93,000 ռուբլի), ընդամենը 303,000 ռուբլի։ Կտակակատար վսեմ. Կ. Եկեանցի մօրաքոյրը 1893-ին կտակած է 10,925 ռուբլի, որի տոկոսը նոյնպէս գործ է ածւում վարժարանի վերայ։ Վարժարանը վերջերս գնել է Սիրքէճիի կողմը մի կալուած 19,000 ոսկւով (մօտ 170,000 ռուբլի), որ կոչւում է «Սանասարեան խան» (քարվասարայ) և որ տարեկան մօտ 13000 ռուբլի եկամուտ է բերում. բացի սորանից գնել է նաև զանազան հողեր Կարնոյ մէջ։ Վարժարանի դրամագլխի 10% յատկացուած է Սանասարեանի ընթացաւարտներից ուսուցիչներ պատրաստելու Եւրոպայում։ Վարժարանը 20 տարում մուտք է ունեցել 7,131,701 ղրուշ (մօտ 642,000 ռուբլի)։ 1900—901 շրջանի աշակերտաց թիւն էր 193. առհասարակ աշակերտների թիւը 200-ից աւելի չէ եղած և ոչ 75-ից պակաս։ Գրիգոր խան Շամտանճեանը տարեկան մօտ 200 ռուբլի է նուիրել 5 տարի շարունակ Հայ լեզուի մասնագէտ ուսուցիչ պատրաստելու վարժարանում պաշտօնավարելու նպատակով։

ՆԱՄԱԿ ՎԵՆՆԱՅԻՑ

10 օգոստոս 1904

Եւրոպայում այս տարի ընդհանրապէս սաստիկ չորային է, անձրևների երկարատև բացակայութեան պատճառով։ Ուս-

տի և բերքերի պակասութիւն է։ Մեծ գետերի ջրերը բաւական պակասել են, փոքր գետերից և գետակներից շատերը ցամաքել։

Ամեն հարիւր տարի մէկ կամ երկու անգամ Էլբա գետի ջուրը սաստիկ պակասում է և այդ լինում է ամենաչոր տարիները։ Այդպիսի տարիներ են եղել 1616 և 1746 թուականները, ինչպէս որ այդ երևում է Աուսիգի կամրջի տակը մի ժայռի վերայ փորագրած «1616—1746» արձանագրութիւնից. այդ ժայռը միշտ գտնւում է գետի տակ և դուրս է երևում միայն երբ ջուրը չափազանց պակասում է։ Այս տարի 1746 թուականից յետոյ առաջին անգամ է նորից երևացել այդ ժայռը, որ նշան է, թէ տնտեսական կողմից վատ տարիներից մէկն է լինելու այս տարին տեղական ժողովրդի համար։

Հորութիւնից շարունակ հրդեհներ են լինում գիւղերում և ապահովագրող ընկերութիւններն ահագին վնասներ են կրում ապահովութեան գումարների վճարումից։

«Neues Wiener Tageblatt»ի № 231ում հրատարակուած էր մի յօդուած ոմն հայազգի Յովսէփ Գրիգորեանի մի կորստի մասին։ Պարոնը Հարեշստանցի է, ակնեղէնի վաճառական և ունենալով իւր հետ 80,510 կրոնի (15,700 ռուբլու) անպատրաստ-անտաշ ակնեղէններ մի սնդուկի մէջ, գալիս է եղել Յունաստանի վրայով Տրիեստից Վիեննա, որտեղից պէտք է գնար Փարիզ մի վաճառականի միջոցով ակնեղէնը ծախելու։ Սնդուկի մէջ բացի 550 հատ 1500 կառաթ (24 կառաթը մի մսխալ է) կշռող ակնեղէնից, ունեցել է և ֆրանսական ու Հարեշստանի դրամներ և իւր լուսանկարը։ Գրիգորեանը Պէտէր կայարանում կորցրել է երկաթուղու տոմսը, ուր կոնդուքտորը ստիպել է նորան իջնել և նորն առնել. մինչև նա տոմսը կառնէր՝ երկաթուղին սկսել է տեղից շարժուել, փորձում է նորից վագոն նստել, բայց կոնդուքտորը չի թոյլ տալիս, ապահովացնելով որ նորա սնդուկը չի կորչի, կստանայ վերջին կայարանում։ Գրիգորեանը Վիեննա է գալիս մի այլ գնացքով և իմանում է, որ իւր սնդուկը կորել է։ Անմիջապէս նա բողոքում է Վիեննայի դատարանին և պահանջում է երկաթուղու վարչութիւնից իւր կրած վնասը՝ 80,000 կրոն։ Դատը դեռ շարունակւում է։

Վիեննայի հայոց «Անի» ընկերութիւնը նոր փոփոխութիւններ կրեց. այժմ կոչւում է «Վիեննայի հայոց բարեգործական ընկերութիւն» և անցաւ նոր վարչութեան ձեռքը. ընկերութեան նախագահն է պ. Դէօդատ Գարրի (նախկին Կոյլաւ վարդապետը). ընկերութիւնը վերջին տարիները տալիս է հայկական երեկոյթներ, որոնցից այժմ կազմուել է մի փոքրիկ դրամագլուխ։

Այստեղի տպարանական հաստատութիւնները դիտաւորութիւն ունին արձան կանգնացնել արագատիպ մեքենաների կատարելագործող Լէո Միւլլէրի յիշատակին։

Այստեղ նկատւում է մի հայ եկեղեցու անհրաժեշտութիւն։ Ո՞վքեր պէտք է մտածեն այդ մասին։

ԴՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ.

„Кавказъ" լրագիրը հաղորդում է, որ ներկայ օգոստոսի 19-ին Բարձրագոյն բարեհաճութեամբ Ս. Էջմիածնի Սինօդի անդամութիւնից արձակւում են գեր. Տ. Մակար եպս. Բարխուտարեանց և Տ. Մխիթար վրդ. Տէր-Մկրտչեան համաձայն իրանց խնդրի հիւանդութեան պատճառով. և նշանակւում են նոր անդամներ գեր. Տ. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունի, Տ. Յուսիկ վրդ. Զոհրաբեան, Տ. Մատթէոս վրդ. Մատթէոսեան և Տ. Բարգէն վրդ. Աղաւելեան։

ՏԵՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ Պ. ԲՈՒՐԳՈՒՄ։

Մեզ խնդրում են հաղորդել, որ այս օգոստոս ամսից Ներքին Գործոց Նախարարութեան թոյլտուութեամբ բացուել են Պ. Բուրգում Ս. Աբրակումովի «Տեսական երաժշտական դասընթացներ»։ Ցիշեալ դասընթացները բացի տեղական նշանակութիւնից նպատակ ունին հնարաւորութիւն տալ գաւառացիներին, օր. դպրոցական ուսուցիչներին, խմբապետներին, երաժշտական խմբերի դեկավարներին, երաժշտութեան ուսուցիչներին, նոյնպէս և աշխարհիկ և կրօնական երաժշտութեան սիրողներին և ձայնագրագէտներին, առանց իրանց գործին վնասելու, դասընթացների հետ գրագրութեամբ անցնել կամ լրացնել իրանց երաժշտական տեսական զարգացումը. ուղարկելով իրանց աշխատութիւնները դասընթացներին ստուգելու և սխալները ուղղելու։ Դասախօսութիւնները ուսանողներին ուղարկւում է ձրի։ Ուղղուած աշխատութիւնները ուղարկւում են վերադիր վճարով։ Ուսուցման վճարը նշանակուած է բաւական արժան, օր. ժողովրդական ուսումնարանների ուսուցիչները ամսական վճարում են 2 ռուբլի։

ՎԱՆՔԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՑՓՈԽԱՆ

Անցեալ յուլիս ամսին Վանքի ծխականների բազմամարդ ժողովը գրեթէ միաձայն երեցփոխան ընտրեց նոյն եկեղեցու

համար՝ քաղաքային յայտնի և գործունեայ իրաւասու ինժեներ-մեխանիկ Արշակ Ս. Բաբեանին։ Վաղուց է, որ Վանքի եկեղեցին կարօտում էր մի այդպիսի հռանդուն և չնորհալի երեցփոխանին։ Ճշմարիտ է, մի երկու տարի առաջ եկեղեցին յայտնի բարեգործ պ. Ա. Մանթաշեանի առատաձեռն նուիրաբերութեամբ ներսից չքեղապէս նորոգուեցաւ, բայց ներկայումս դարձեալ կարօտ է նա մեծ նորոգութեան և մեծամեծ պակասութիւններ ունի։ Մխականները այդ ծանր պարտաւորութիւնը դրին նորընտիր երեցփոխանի վերայ և չսխալուեցան։ Պ. Բաբեանը, թէպէտ և մինչև այժմ ոչինչ չէ ստացել իւր նախորդից, սակայն կազմել է կարևոր նորոգութիւնների նախահաշիւը և արդէն կատարել է մի քանի կարևոր և անհրաժեշտ նորոգութիւններ, մինչև հիմնական նորոգութեան ձեռնարկելը, վերացրել է եկեղեցում գանձանակադրամներ շրջեցնելը, կարգի է դրել եկեղեցու արդիւնքների ստացումը և այլն և այլն։ Ցանկանում ենք նորան ամենայն յաջողութիւն։

ՆԱՄԱԿ ԶՈՒԼՈՒԷՐԻՑ

Մեր գիւղը իւր հիմնուելու օրից ոչ մէկի այնքան պարտական չէ, որքան Ռոմանոս Նազիրեանցին, որ դեռ 1859 թ. իւր ծննդավայրում առաջին անգամ դպրոցի շէնք կառուցեց և երեք ուսուցիչների ծախքը հոգալով երկար տարիներ պահեց։ Դասական իրերն անգամ աշակերտներն ստանում էին ձրի։ Գիւղի զրագէտները ամենն էլ նրա սաներն են, որոնցից մի քանիսը Թիֆլիսում այժմ յայտնի են իբրև առևտրականներ և գրագէտներ։ Ռոմանոսը իւր գործունէութեամբ իբրև զրագէտների մեկենաս նշանաւոր էր իւր ժամանակ. իւր առատաձեռնութեան պատճառով յայտնի էր Թիֆլիսում բարերար մականունով. Ներսիսեան դպրոցի եռանդուն հոգաբարձուն էր և 60ական թ. հայ թատրոնի հիմնադիրներից մինը։ Այդ նշանաւոր ազգայինը 1882 թ. վախճանուած և թաղուած է տեղիս Ս. Մեսրոպ եկեղեցու բակում, ուր մի ժամանակ կանգնած էր նրա դպրոցի շէնքը։ Մինչև օրս, այսինքն ողջ 22 տարի այդպիսի հանգուցեալի գերեզմանը մնացել է անշիրիմ, ոտների տակ տրորուելիս, այն ինչ նրա ամուսինը յայտնի է իբրև Թիֆլիսի հարուստներից մինը և այժմ այդ քաղաքի մի եկեղեցու վերաշինութեան համար մտադիր է վեց հազար ծախսելու, բայց չգիտենք ինչո՞ւ կլանում է իւր անուանի ամուսնու գերեզմանի վրայ մի հասարակ քար դնելու։ Տեղիս երիտասարդութիւնը այժմ նորա սաներից մէկի դրդմամբ ուզում է հանդանակութիւն անել և ողջ գիւղի կողմից մի համեստ արձան կանգնեցնել Ռոման Պաւլիչի գերեզմանի վրայ։

որ անչափ մեծ ծառայութիւն է արել իւր ծննդավայրին և ջերմ սրտով սիրել Նրա հողն ու ջուրը։

ՄԽԻԹԱՐԻՆ.

3 սեպտ. 1904 Շուլաւէր.

ԵԱԼՏԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Բագուաբնակ մեծ. պ. Պօղոս Ց. Ղուկասեանը դիտաւորութիւն ունէր իւր հանգուցեալ դստեր յիշատակին Հայ եկեղեցի կառուցանել Եալտայում և նորա յատակագծի պատրաստութիւնը յանձնուած էր յայտնի ճարտարապետ պ. Տէր Միքէլեանին, որ առանձնապէս ուսումնասիրել է Հայկական ճարտարապետութիւնը երկար ճանապարհորդութեամբ Գուգարաց աշխարհի և Անւոյ աւերակներում։ Մենք տեսանք արդէն պատրաստի յատակագիծը, որ մի շատ հոյակապ գործ է և Կովկասի արդի հայ եկեղեցիներից գերազանցում է բուն հայ ճարտարապետութեամբ։ Այժմս, ինչպէս մենք իմացանք հաւաստի աղբիւրներից, արդէն ձեռնարկել են այդ փառաւոր եկեղեցու շինութեան։

Գ. ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ ՄԻ ՆՈՐ ՊԻԵՍ.

Մեր աշխատակից Շիրվանզադէն գրել է մի նոր դրամ «Պատուի համար» վերնագրով, որ պիտի ներկայացուի առաջիկայ ձմեռը Թիֆլիսի և Բագուի հայ բեմերի վրայ։ Նիւթը առնուած է մեր նորագոյն բուրժուազիայի կեանքից։ Գործողութիւնը կատարւում է Բագուում։ Բովանդակութիւնը առաջ չենք բերում, քանի որ պիեսը պիտի տպագրուի «Լումայի» էջերում։

Վերջերս պ. Շիրվանզադէն մի քանի հանգամանքների պատճառով գրեթէ հեռացել էր գրական աշխարհից։ Բայց ներկայումս նա սկսել է գրել նախկին եռանդով և պիտի շարունակի աշխատակցել «Լումային» կանոնաւոր։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։

ՀԱԼԼԷ. ուս. Ճ. Բոզիեան.—«Էմմանուէլ Կանտ» ստացանք և կը տպենք։

ՈՒՐՄԻ. Եր. Ցովասափեան.—Ստացել ենք Ձեր «Գարա- դաղ» յօդուածը և լոյս կտեսնի միւս համարում։

ՄՈՍԿՈՒԱ. Ա. Կ.—Ձեր «Դէպի Մաքենեաց վանք» յօդուածը ուշ հասաւ խմբագրութեան՝ խմբագրի երկարատև բացակայութեան պատճառով. ուստի և մնաց միւս համարին։

ԲԱԳՈՒ. Մ. Բարխ.—«Հնոց և Նորոց» նոյն պատճառով լոյս կտեսնի միւս անգամ։

ՄԱՐԲՈՒՐԳ. ուս. Մ. Խոստիկեան.—Ստացանք Ձեր «Խետացուց կամ Խետիտների երևան գալը» հետաքրքրական յօդուածը և կտպենք միւս համարում։ Մենք շատ ուրախենք, որ Եւրոպայի հայ ուսանողներն առհասարակ պատրաստակամութիւն են ցոյց տալիս մեր հանդիսին աշխատակցելու։

ՀԱԼԼԷ. ուս. Ն. Տէր Ցովհաննիսեան.—Ստացանք Իսկայիի «Մէկ շախպարտի» պատկերը և կտպենք առաջիկայում։

ԱԽԱԼՑԽԱ. Ճ. Բայբուրդցի.—Ուղարկածդ և ուղարկելի «Դիւանի» նիւթերի համար յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը։

ԹԻՖԼԻՍ. օր. Գլորա-Անահիտ. —Կեօրների «Ցովսէփ Հայդրիխ» պատկերի Ձեր թարգմանութիւնը ուշ հասաւ մեր ձեռքը, ուստի և տպագրութիւնը մնաց միւս անգամին։

ՓԱՐԻԶ. Ն. Ցարոյ.—Կարող էք ուղարկել Թիֆլիս։ Թղթակցութիւնը մեզ չէ հասել։

Կ. ՊՕԼԻՍ. Քննասէր.—«Առաքեալներէն մինչև Լուսաւորիչ» ստացանք, որով լրանում է Հայ. եկեղեցու առաջին վեց դարերի քննական պատմութիւնը։ Ցօդուածը կտպուի։

միւս համարում։ Իսկ ամբողջը մի հատորով կհրատարակենք առանձին։

ԲԱԳՈՒ. Արշակ.—Այո՛, Ձեր ուղարկած ոտանաւորների մէջ երևում է քանքարի նշոյլ, բայց խորհուրդ ենք տալիս առ այժմ միայն մշակել այն։

ԱԽԱԼՑԽԱ. Ե. Մ.—Ձեր անձնականի վերաբերելով ուղարկածդ յօդուածները չենք կարող տպել։

ԳԱՆՁԱԿ. Ա. Ֆ. Շ.—Ոտանաւորը գրաբար լինելով՝ անյարմար է «Լումայ»-ին։

ԲԱԳՈՒ. Վ. Գ.—Ձեր Նամակը օրաթերթի նիւթ լինելով չկարողացանք հրատարակել։

ՄՈՍԿՈՒԱ. Հ. Խ.—Բանաստեղծութիւններ սովորաբար չենք տպում, ուստի և Ձեր ուղարկածները մնացին անտիպ։

ՇՈՒԼԱՒԷՐ. Գ. Բ.—«Սասունցի Դաւիթ» ընդարձակ պոէման չենք կարող տպել, որովհետև խմբագրութեան մէջ ներկայումս այնքան տպագրելի նիւթ կայ դիզուած, որ հապիւ թէ շուտով հերթ հասնի մի նոր երկար զբրուածքին։

ԲԱԳՈՒ. Ն. Ֆ.—«Դիւանի» է գիրքն ուղարկեցինք Ձեզ։ Յօդուածը շուտ պիտի ուղարկէք որ № 5 ին հասնի։ Շլու�բերժէն նորից կապսպարենք։

Խմբագիր-Հրատարակիչ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պատրաստ է և շուտով լոյս կը տեսնի

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Նոր ժողովածուն

Շրեղ տպագրութիւն, 380 միջադիր երես. գինը 1 ր.

Տպագրուած 1903 թիւ ապրիլ 12-ի Աստրախանում կայացած Հայկական երեկոյթի արդիւնքով։

Դիմել Астрахань Ивану Мелкумовичу Турпаеву *կամ Թիֆլիզ —«Գուտենբերգ» գրախանութին.*

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ“

ԺՈՂՈՎԱԾՈՒ VI—XV ՀԱՏՈՐՆԵՐԻ

—

Ցանկալով օր առաջ հրատարակութեան տալ մեր ժողոված պատմական հարուստ նիւթերը և չունենալով միջոց մեր սեփհական ծախքով լոյս ընծայել նոցա, սորանով բաց ենք անում «**ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**» *ժողովածուի առ այժմ հետևեալ* 10 *հատորի համար բաժանորդագրութիւն.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիրք Զ. ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ *մասն* I

» **Է. ԴԱՒԻԹ** » II(*մամուլի տակ*)

» Ը. ՍԻՄԷՕՆ » II (I տպուած)
» Թ. ՂՈՒԿԱՍ » II (» »
» Ժ. ՂՈՒԿԱՍ » III
» ԺԱ. ՂՈՒԿԱՍ » IV
» ԺԲ. ԵՓՐԵՄ » I
» ԺԳ. ՄԱՆՈՒԷԼ ԿԻՒՄԻՒՇԽԱՆԵՑԻ
» ԺԴ. ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ ԺԶ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։

1. Յովհաննէս Արճիշեցի։ 2. Դրիգոր դպիր։ 3. Դաւիթ Բաղիշեցի։ 4. Բարսեղ Վարագեցի։ 5. Բարգուզիմէոս Ձուշանցի։ 6. Վարդան մեծ Բաղիշեցի։ 7. Յովհաննէս Սեբաստացի պատմիչ։ 8. Իսահակ Սահրատեան։ 9. Յարութիւն Խալֆայեան։ 10. Յովհաննէս Ձահխաթունեան։ 11. Ղևոնդ Տոսպեցի։ 12. Անդր Վասպուրական աշխարհի։ 13. Յաջորդութիւնք Վանայ բդեշխից։ 14. Ժամանակագրութիւնք անյայտ պատմչաց։

» ԺԵ. ՅԻԶԱՏԱԿԱՐԱՆՔ ԺԵ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։

—

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Այս 10 հատորներից իւրաքանչիւրը բաղկացած կը լինի 600—900 էջերից տպուած «Դիւանների» դիրքով։

Վեցերորդ հատորը լոյս տեսաւ արդէն։

Մնացեալ հատորները միաժամանակ մամուլի կյանքնուին, երբ բաժանորդների թիւը կհասնի ՀԱՐԻՒՐԻ։

10 ՀԱՏՈՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 30 ՌՈՒԲԼԻ։ Տպագրութիւնից յետոյ ամեն մի հատորը կարժենայ 4—5 ռուբլի։

Լոյս տեսան «Լուսայ»-ի երեսի նկարով շքեղ ՊՈՍՏԿԱՐՏԵՐ, տպուած Լայպցիգում։ Հատը արժէ 5 կպկ. 100 ով գընողին 3 ռուբլի 50 կոպ։ Դիմել «Լուսայ»ի խմբագրութեան։

«ԼՈՒՄԱԾ» Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ՍԱՂԱՆԵԱՆՑԻ

աշխատութիւնները.

1 Աղօթատետր ե. տպ. 1903. . . . . — 10
2 Կրօնի դասագիրք տ. ա. 1889 (սպառուած) . . — 15
3 « » բ. տ. գ. տպ. 1891 . . — 25
4 « « գ. տ. գ. տպ. . . . — 25
5 Տօմար և տօնացոյց Հայաստ եկ. բ. տպ. 1894 . . — 50
6 Կարնոյ գաղթը. պատմական տեսութիւն. 1891 . . — 10
7 Դիւան Հայոց պատմութեան. գիրք Ա. — Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893. . . 2 —
8 Դիւան Հայոց պատմ. գիրք Գ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը, կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսրոպեան մրցանակին արժանացած. 1894. 7 —
9 Դիւան Հայոց պատմ. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800 I (լուսանկար պատկերով և վիմատիպ կոնդակով) 1899. . 4 —
10 Դիւան Հայոց պատմ. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. (մի վիմատիպ կոնդակով) 1902 . . . 4 —
11 Դիւան Հայոց պատմ. գիրք Զ. Դաւիթ կաթ. մ. I.1801—2 մի վիմատիպ կոնդակով. 1904. . . . . 4 —
12 Կարգ աստուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 35 նկարով, Ե. տպ. 1904 , ... — 50
13 Հնից-նորից, հնախօս. ուղղագր. պրակ Ա. 1900 . . — 30
14 Պատի օրացոյց 1902 ամի. ժամանակագր. ԺԴ'Ի տարի. . — 50
15 Նամակագիրք. 1902. . . . . — 50
16 Ծոցի օրացոյց 1902 ամի և յաւելուած.—Առողջապահական խոհարարութիւն (սպառուած.) . . . . — 15
17 Զաքար Ղարղաշեանցի կտակը և Մշակի զառանցանքները (սպ.) — 5

թարգմանութիւններ.

18 Հաւատարմութիւնը ամեն արգելքների յաղթում է Ֆ. Հոֆմանի 1877 . . . . . — 40
19 Խաւարից դէպի լոյս Ֆ. Հոֆմ. 18 8. (սպառ.) . . — 40
20 Դօն Քիշօտ լամանշեցի, Մ. Սերվ. 1878 (սպառ.) . . — 70
21 Գէորգ Ռօլլէստօն, 1879 (սպառուած) . . . — 60
22 Երրորդ ոսկի, առակ. Լակիդէի բ. տպ. 1893. . . — 10
23 Ռօբինզօն (հրատ. Թիֆլ. տպագր. ընկերութ.) (սպառ.) . — 60
24 Զէստերտոնի ժառանգը, պատկերազարդ, 1882. (սպառ.) . 1 —
25 Ակուեա. տ. Սիսօեվայի. 1885 (սպառուած) . . . — 50
26 Եան Էրնստ Սմօլէար. Ն. Եանշուկի, 1885 (սպ.) . . — 20
27 Արծուի մոռամոնքը, պրօֆ. Մ. Բոգդան. 1892. . , — 5
28 Գիւղի սուրբը. Սվեատոպոլկ Զէբի, 1892 . . . — 10
29 Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892 . . . 1 —
30 Դէպի Ամէնը, Հ. Սենկեվիչի բ. տպ. 1901. . . . — 15
31 Մի կտոր հաց, Պօտապէնկոի բ. տպ. 1901 . . . — 10
32 Որսորդ, Օ. Շրայների . . . . — 10
33 Մատուռի աւերակներում, Օ. Շրայների . . . — 10
34 Կարա . . . . . — 5
35 Անտառապետ Ֆրեդերիկ. Էրկման Շատրիանի. 1903, . — 40
36 Տնային բժշկարան, պրակ Ա. (թարգմ. ընկերութեամբ Իո. Ցար. և

	հրատ. բժշկ. Գ. Բաբեանի)	1	—
37	„ „ պրակ Բ. թարգմ. և հրատ. նոյն. . .	1	60

Հրատարակութիւններ

38	Ի. Ցարուբիւնեան, Հայոց գիրը 1893 . . .	1	50
39	Իշխ. Կ. Բեհրուդեան, Ծուխ, 1893	—	15
40	Ռանգաբե, Էմաէ, վէպ թարգմ. Ց. Լալայեանի . .	—	25
41	Ալբեր Անոս, Քուրդի լեառն, 1893 . . .	—	20
42	Ճաղարբեգեան Ց, Հայոց լեզու ա. տ. 1904. . .	—	30
43	Խրիմեան Հայրիկ, ժամանակ 1895	—	15
44	Սպիրի, Այծարած Մօնի թ. Ի. Ցարուբիւն. 1885 . .	—	15
45	Բակ. (Բարգէն վ.) Կիլիկիա 1896	—	10
46	Պեստալոցցի, Լինհարդ և Գերտրուդ· 1896.. . .	1	50
47	Մելքիսեդեկ տրքեպ. Մուրատեան, Պետրոս Շանշեան պատկերով. 1897	—	50
48	Թ. Ա Խոհարարուհի, բ. տպ. Ճոխացրած 1904 . .	—	50
49	Լումայ, գրական հանդէս 1896 Ա. գիրք .	2	—
50	Լումայ » » 1896 բ. գիրք. . .	2	—
51	Լումայ » » 1897 ա. գիրք . .	2	—
52	Լումայ » » 1897 բ. գիրք . .	2	—
53	Լումայ » » 1898 ա. գիրք . .	2	—
54	Լումայ » » 1898 բ գիրք . ,	2	—
55	Լումայ » » 1899 ա. գիրք . ,	2	—
56	Լումայ » » 1899 բ. գիրք . .	2	—
57	Լումայ » » 1900 ա. գիրք . .	2	—
58	Լումայ » „ 1900 բ. գիրք . .	2	—
59	Լումայ » » 1901 ա. գիրք . .	2	—
60	Լումայ » » 1901 բ. գիրք . .	2	—
61	Լումայ երկամեայ հանդէս 1902 տարեկան . .	6	—
62	Լումայ » » 1903 տարեկան , .	6	—
63	Լումայ „ „ 1904 տար. բաժնեգին .	6	—
64	Ց. Պարոնեան, Ծիծաղ պատկերով, 1899 . . .	1	25
65	» Արևել. ատամնաբոյժ կատակ. 1901 . .	—	50
66	„ Քաղաքավար. ժամները, 1901. . .	—	75
67	Ի. Ցարուբիւնեան, Ստեփանոս Պալասանեան . .	—	25
68	Ն. Տէր-Կարապետեան, Խաչատուր Աբովեան. սպառ . .	—	60
69	Ի. Ցարուբիւնեան, Աշակերտի յուշատետրը . .	—	30
70	„ Զգացմունքների աշխարհ. . . .	—	30
71	Ցարուբիւն Թումանեան, Մելիք Իսսուփ . . .	—	25
72	Մ. Եօկայի, Ուրացողը, թարգ. Իս. Ցարուբիւնեան . .	—	20
73	1901 Ս. Էջմիածնի ԺԶ դարադարձը. . . .	—	25
74	Եր. Շահազիզ, Մկրտիչ Էմին.	—	60
75	Կարալենկո, Կոյր երաժիշտը թարգմ. Մուշէ վրդ. . .	—	60
76	Զորբորդ դարու հայ եկեղեցին	—	20
77	Եր. Շահազիզ, Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը . .	—	40
78	Ի. Ցարուբիւնեան, Իմ օրագիրը.	—	20
79	Մեծ Ներսէս.	—	25
80	Դ. Խաչկոնց, Հայոց կրօն. բանաստեղծութիւնը . .	—	60
81	Ի. Ցարուբիւնեան, Կին վիպագիր Ե. Սպիրի . .	—	10
82	Օր. Ն. Աղանեանց, (թարգմ.) Սև հացեր. բ. ա. . .	—	5
83	Կարալենկո. Դատաստանի օրը· թարգմ. Մուշէ վրդ. .	—	40
84	Կ. Կոստանեանց. Շարժի տարեգրութիւնը հայոց ՌՂ. 1902.	—	20
85	Գարեգին վ. Յովսէփեան Մանրանկարչութեան արուեստը հայոց ՌՂ 1902		

86 Ներսէս Մեծի յաջորդներ 1902 . . . . — 25
87 Մ. Գոյրկի. Զէլկաշ. Թարգմ. Մուշէ վրդ. . . , — 20
88 Քուչակ Նահապետի երգերը. Ցով. Թադէոսեան . . — 15
89 Սահակ Պարթև . . . . . — 25
90 Ապուշը, ժորժ Էսպարբի. Թարգմ. օր. Նուարդ Աղանեանց. բ. տպ. — 5
91 Վարժապետը. Թարգմ. Լ. Մ.-Ա. . . . . — 5
92 Հազարան Բլբուլ. Ե. Թումանեանց . . . . — 30
93 Պատմական պատկերներ. Եր. Շահազիզի 1903 . . — 60
49 Ժ. Ժ. Ռուսսո. Էմիլ. I. Թ. Խ. Ցարութիւն. 1904. . — 50
95 Խորէն արք. Գալֆայեան Ա.Նալբ. Աղցմիքը. Եր. Շահազիզի. 1904. — 60
96 Հերոստրատ. Լուդվիգ Ֆուլդայի. Թարգմ. Տ. Վ. 1904. . — 50
97 Կանոնք ժողովոց. Մ. Ա. 1904 . . . . — 55
98 Ուղեղի նորոգումը. Ֆ. Դիկմէլի Թարգմ. Օր. Նուարդ Աղանեան. 1904 — 0
99 Գթութիւն „ „ „ „ . 1904 . — 5
100 Գ. Ե. Սրուանձտեանցի երկասիրութիւններ. I. Համով—Հոտով 1904. . . . . 1 25
101 Ալէմդիր. վէպ Վ. Փափազեանի. 1904 . . . — 50
102 Սուտի հոգեբանութիւնը. Գար. Ենգ. 1904 . . — 10
103 Հայրեր և զաւակներ. Ի. Տուրգենևի. Թարգմ. Մուշէ. վ. 1904 — 75
104 Կօնան Դոյլ. Բանակն ինչպէս ազատեցի. Թարգմ. Տ. Վ. 1904 — 15
105 Աղերֆէզա. վէպ Վ. Փափազեանի. . . . . — 50

Մամուլի տակ են

106 Դիւան Հայոց պատմութեան. Գիրք Է.
107 Եղիշէի պատմութեան քնադիրը.
108 Հայ Գրչագիրներ.
109 Կանոնք ժողովոց Մ. Բ.
110 ս. Լուսաւորչի իւղաներկ մեծադիր պատկեր.

Պատկերներ

Պետրոս Շանշեան . . . . . — 10
Յակոբ Պարոնեան . . . . . — 10
Աբգար Յովհաննիսեան . . . . . — 10
Աւետիք Ղուկասեան . . . . . — 10
Գարեգին եպս. Սրուանձտեանց . . . . . — 10
Լումայի պոստկարտ. . . . . — 5

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԼՈՒՄԱՅ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Ներկայ 1904 թուին հրատարակւում է նոյն ծրագրով և հետևեալ աշխատակիցների մասնակցութեամբ. Պ. Պոլշեան, Շիրվանզադէ, Մուրացան. Վ. Փափազեան, Իս. Յարութիւնեան, Գ. Ենգիբարեան, Ն. Քարամեան, Ն. Ցպրոյ, Քաջբերունի, Ե. Շահազիզ, Մ. Բերբերեան, Ա. Չիլինկարեան, Մուշէ Վ., Տ. Վ. եւ ուրիշներ։

Տարեկան բաժանորդագինն է Ռուսաստանում 6 ռուբլի ճանապարհածախսով եւ տուն հասցնելով, իսկ արտասահմանում 20 Ֆրանկ։

Բաժանորդագրութիւնն ընդունւում է Թիֆլիսում «Լումայ»ի խմբագրատանը, Պոլիցէյսկի փողոց, 13 և կենտրոնական գրավաճառանոցում։

Մեր գաւառական գործակալները

ԲԱԳՈՒ. Արժ. Եղիշէ ա. ք. Գեղամեանց
» Ներսէս ք. Տէր Կարապետեան
պ. Արմենակ Յակոբեան
» Գաբրիէլ Մխիթարեանց
Վ. ԱԳՈՒԼԻՍ. Արժ. Մելքիսեդեկ ք. Թումանեանց
ՋՈՒՂԱՑ. պ. Գէորգ Աղամալեանց
ԵՐԵՒԱՆ պ. Յովհաննէս Շամխարեան
ՆՈՐ ՆԱԽԻՋ. արժ. Պողոս ք. Բեղելեան
ԳԱՆՁԱԿ. պ. Յովսէփ Խօջայեան
արժ. Յուսիկ ք. Վերդեան.
ԿԱՐՍ. » Մինաս ա. ք. Տէր-Պետրոսեանց
ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. պ. Հայկ Սարոյեան
ՇԱՄԱԽԻ. արժ. Տաճատ ա. ք. Մարաղեան
ՄՈՍԿՈՒԱ. պ. Ղուկաս Քեմեչէճեան.

Յայտարարութիւնների տողը արժէ 10 կոպէկ։

Խմբագրութեան հասցէն. Тифлисъ, Редакція журнала „ЛУМА“, արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal armenien „LOUMA“.

Խմբագիր-Հրատարակիչ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ